Ս. Մ. ԴՈՒԼՅԱՆ. Լ. Հ. ՎԱԼԵՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՄՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

„ՀԱՅԱՍՏԱՆ"

ԴՈՒՎՅԱՆ Ս. Մ., ՎԱԼԵՍՅԱՆ Լ. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

15965

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

33С5(С43)

Д 92

ДУЛЬЯН С. М., ВАЛЕСЯН Л. А.

Очерк экономической географии Армянской ССР.

2—8—4 (На армянском языке)

Издательство «Айастан».

Ереван, 1967

Ա. Ռ Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը երկրագնդի այն աննկյուններից է, ուր գոյություն ունի բնական պայմանների ու ռեսուրսների՝ արտադրության օբյեկտիվ հիմքի բացառիկ բազմազանություն։ Այդ հիմքի պլանաչափ ու նպատակահարմար օգտագործումը սոցիալիստական հասարակարգի պայմաններում ապահովեցին հանրապետության էկոնոմիկայի աննախընթաց վերելքը։ Սովետական իշխանության անցած տարիների ընթացքում Հայկական ՍՍՀ բնակչությունը աճեց ավելի քան 2,8 անգամ, տասնյակ անգամ ավելացան հասարակական ամբողջական արդյունքն ու ազգային եկամուտը։ Ներկայումս ընդամենը մեկ տարվա ընթացքում ավելի շատ արտադրական կարողություններ են ստեղծվում, քան Սովետական Հայաստանը ժառանգել էր ցարական իշխանությունից։

Հանրապետության արտադրողական ուժերի բուռն աճը ուղեկցվում էր նրանց տերիտորիալ տեղաբաշխման արմատական տեղաշարժերով։ Սոցիալիստական շինարարության անցած տասնամյակների ընթացքում ձևավորվեց տնտեսության նոր աշխարհագրություն։ Նախկին 4 քաղաքային բնակավայրերի փոխարեն ներկայումս զարգանում են 50 քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ։ Եթե մինչև հեղափոխությունը ամբողջ արդյունաբերությունը կենտրոնացված էր տասացիորեն մի քանի մանր ու միջին մեծության բնակավայրերում, ապա այսօր հանրապետության տերիտորիայով մեկ սփռված են 9 տասնյակից ավելի արդյունաբերական կետեր ու կենտրոններ, որոն-

ցից շատերն առանձին վերցրած ավելի շատ արտադրանք են տալիս, քան նախասովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը։

Աշխարհագրական կարևոր որակական տեղաշարժերից պետք է համարել այն, որ հասարակական արտադրության զարգացման սոցիալիստական օրենքներին համապատասխան ու կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության շնորհիվ ձեռք բերվեց հանրապետության ամբողջ տերիտորիայի տնտեսական միասնություն։ Ներկայումս Հայկական ՍՍՀ սահմաններում ձևավորվել և հաջողությամբ զարգանում է մեկ ամբողջական տերիտորիալ-արտադրական կոմպլեքս, որը, ինքնուրույն տնտեսական օրգանիզմ լինելով հանդերձ, հանդիսանում է Սովետական Միության ժողովրդատնտեսական կոմպլեքսի բաղադրիչ մասը։

Սովետական Հայաստանը, չնայած տերիտորիայի փոքրությանը, աչքի է ընկնում տնտեսության ճյուղային ու տերիտորիալ բարդ կառուցվածքով։ Բնորոշ է նաև բնակչության համեմատաբար բարձր միջին խտությունը, ինչպես նաև տերիտորիայի տնտեսական յուրացման պայմանների խիստ ընդգծված շրջանային տարբերությունները։

Այս բոլորը հատկանիշներ են, որոնք Հայկական ՍՍՀ-ն դարձնում են տնտեսա-աշխարհագրական տեսակետից բացառիկ հետաքրքիր ու բազմաբովանդակ շրջան։

Հանրապետության տնտեսության ծավալման ու բարդացման հետ մեկտեղ փոխվում են նրա տնտեսա-աշխարհագրական հետազոտության կոնկրետ խնդիրները, հանդես են գալիս նոր երևույթներ ու հարցեր, որոնց ուսումնասիրությունն ու գիտական բացատրությունը դառնում է կյանքի պահանջ։

Սովետական Հայաստանի արտադրողական ուժերի աշխարհագրական օրինաչափությունների ուսումնասիրությամբ զբաղվել ու զբաղվում են ղգալի թվով հետազոտողներ ու ամբողջ գիտական կոլեկտիվներ։ Վերջին տարիներս կատարված աշխատանքների շնորհիվ մի շարք հարցերի մշակումը բարձրացել է ժամանակակից գիտական մակարդակի։ Դա վերաբերում է հատկապես ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի աշխարհագրությանը, բնակչության ու բնակավայրերի աշխարհագրությանը ու տնտեսական քարտեզագրությանը։ Զգալի է միաժամանակ որոշ բնագավառների ետ մնալը։ Իր լուծմանն է սպասում, մասնավորապես, այնպիսի մի կոմպլեքսային պրոբլեմ, ինչպիսին հանրապետության տնտեսության արդի աշխարհագրությունը արտացոլող և գիտական հետազոտության ժամա-

նակակից պահանջները բավարարող մի սոցիալական երկասիրության ստեղծումն է։

Յավով պետք է նշել, որ մինչև այժմ հայերեն լեզվով չունենք Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրությանը նվիրված որևէ ամփոփ ուսումնասիրություն։ Հ. Հովհաննիսյանի «ՀՍԽՀ տնտեսական աշխարհագրությունը» (1927 թ.) և Ա. Օհանյանի ու է. Տեր-Հակոբյանի «Հայկական ՍՍՌ տնտեսական աշխարհագրությունը» (հետպատերազմյան շրջանում ունեցել է մի քանի հրատարակություններ) դպրոցական դասագրքեր են միայն։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը հայերեն լեզվով Սովետական Հայաստանի տնտեսական աշխարհագրության ամփոփ բնութագրման առաջին փորձն է։ Հեղինակները այն դիտում են իբրև մի քայլ այն ճանապարհին, որը պետք է հանդեցնի հանրապետության ժողովրդական տնտեսության գիտական, մանրազնին ու սոցիալական աշխարհագրության ստեղծմանը։

Աշխատության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձված արտադրության աշխարհագրական հիմքի՝ բնական պայմանների ու ռեսուրսների այն տարրերի գնահատմանը, որոնք տեխնիկայի զարգացման արդի վիճակում անմիջական ազդեցություն են ունենում արտադրողական ուժերի զարգացման ու տեղաբաշխման վրա։ Առանձին գլուխ է հատկացված տնտեսության զարգացման պատմա-աշխարհագրական մի քանի հարցերի վերլուծությանը, որն ավելի ցցուն դարձնելով սովետական իշխանության տարիներին տնտեսության մեջ կատարված տեղաշարժերի նշանակությունը, միաժամանակ նպաստում է ժամանակակից որոշ երևույթների ճիշտ բացատրությանը։

Լայն տեղ է հատկացված գլխավոր արտադրողական ուժի՝ բնակչության, ինչպես նաև նյութական արտադրության ճյուղերի աշխարհագրական առանձնահատկությունների վերլուծությանը։

Ժամանակակից տնտեսա-աշխարհագրական գիտությունը մեծ նշանակություն է տալիս հասարակական արտադրության տերիտորիալ կառուցվածքի, արտադրողական ուժերի շրջանային զուգորդումների ուսումնասիրությանն ու տնտեսական շրջանացմանը։ Դրան համապատասխան աշխատության մեջ քննարկվում են բնակչության տեղաբաշխման ու տարաբնակեցման ձևերի տերիտորիալ տարբերությունները, արդյունաբերության տեղաբաշխման, արդյունաբերական հանգույցների ձևավորման օրինաչափությունները, փորձ է արվում բացահայտել գյուղատնտեսական արտադրության շրջանային տարբերությունները և առաջարկվում է գյուղատնտեսական մասնագիտացման նոր սխեմա։ Զգալի տեղ է հատկացված ընդհանուր տրն-

տեսական շրջանացման հարցերին, որոնք քննարկվում են ոչ միայն տնտեսության տերիտորիալ կառուցվածքը բացահայտելու ու բացատրելու առումով, այլև այդ կառուցվածքը կատարելագործելու, արտադրության տերիտորիալ կազմակերպմանը և ժողովրդատնտեսական պլանավորմանն օժանդակելու տեսակետից: Քննարկվում են ներքին տնտեսական շրջանացման սկզբունքները և հիմնավորվում է նրանց հիման վրա մշակված ընդհանուր տնտեսական շրջանացման նոր սխեման:

Գրքի համար հիմք են ծառայել հեղինակների 1960—1966 թթ. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխարհագրության սեկտորում կատարած աշխատանքները, որոնց որոշ արդյունքներ հրատարակվել են գիտական պարբերականներում ու ժողովածուներում՝ հայերեն կամ ռուսերեն լեզուներով:

Գրքում բերված աղյուսակների ու թվական տվյալների մշակմանը մասնակցել են Լ. Հ. Դավթյանը և Ն. Հ. Սարգսյանը: Քարտեզներն ու գրաֆիկները գծագրել են քարտեզագիրներ Գ. Ս. Հովհաննիսյանը և Գ. Մ. Ճանճապանյանը:

Աշխատության ձեռագիրը տպագրության պատրաստելու ընթացքում արժեքավոր դիտողություններ են արել աշխարհագրական գիտությունների թեկնածուներ Ա. Ա. Ասլանյանը, Խ. Ա. Ալեքսյանը, Հ. Ղ. Գրգեարյանը, տնտեսագիտության թեկնածու Լ. Մ. Դավթյանը, որոնց խորին շնորհակալություն են հայտնում հեղինակները:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլուխ առաջին

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունն ունի բազմապիսի աշխարհագրական միջավայր և բազմահարուստ բնական ռեսուրսներ, որոնք իրենց կնիքն են դնում արտադրողական ուժերի վրա, կանխորոշելով նրանց զարգացման մի շարք էական առանձնահատկությունները։

Հասարակական արտադրության մեջ բնական պայմանների ու ռեսուրսների դերն ու տեղը ճիշտ հասկանալու ու գնահատելու համար հիմք պետք է ծառայի հասարակության ու բնության փոխհարաբերության մարքսիստական տեսությունը։

Անդրադառնալով փոխհարաբերության միայն մեկ կողմին՝ բնական միջավայրի ազդեցությանը հասարակական արտադրության վրա, նշենք այդ ազդեցության հետևյալ ասպեկտները. 1) բնությունը մարդու կյանքի ու գործունեության բնական միջավայրը, մշտական պայման է, 2) բնությունը մարդու արտադրական գործունեության նյութական ելակետային հիմքն է, համապարփակ (ունիվերսալ) նախադրյալը, 3) բնությունը այն օբյեկտն է, իրը, որին ուղղված է մարդու վերափոխող գործունեությունը և առանց որի չի կարող ընթանալ արտադրության պրոցեսը։

Կ. Մարքսը հասարակությունը շրջապատող բնությունը գնահատում է որպես «ամեն մի արտադրության աղբյուր»։ «Արտաքին բնական պայմանները,— գրում է նա,— տնտեսապես տրոհվում են երկու խոշոր խմբի— կենսամիջոցների բնական հարստության, հետևապես, հողի պտղաբերության, ջրերի ձկնառատության և այլն, և աշխատանքի միջոցների բնական հարստության, ինչպես գործող ջրվեժները, նավարկելի գետերը, փայտը, մետաղները, ածուխը և այլն։ Կուլտուրայի սաղմնային դրության ժամանակ վճռա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՎԱՐՉԱՍ.-ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

(տե՛ս կից քարտեզը)

Գյուղական վարչական շրջանները և հանրապետական ենթակայության քաղաքները	Տարածությունը (առ 1.1.1967 թ.)		Բնակչությունը (առ 1.1.1967 թ.)		Վարչական շրջ. կենտրոն
	հեկտար	%	հազ. մարդ	%	
1	2	3	4	5	6
1. Արովյանի	84376	3,0	46174	2,0	ք. Արովյան*
2. Ադիգեկովի	117077	4,1	14138	0,6	ք.ա. Ադիգեկով
3. Ալավերդու	111069	3,9	39183	1,7	ք. Ալավերդի
4. Ախուրյանի	57631	2,0	34444	1,5	գ. Ախուրյան
5. Ամասիայի	61046	2,1	17604	0,8	գ. Ամասիա
6. Անիի	42910	1,5	18261	0,8	ք.ա. Մարալիկ
7. Աշտարակի	93502	3,3	52505	2,3	ք.ա. Աշտարակ
8. Ապարանի	81635	2,9	26972	1,2	ք.ա. Ապարան
9. Արթիկի	63165	2,2	32860	1,5	ք. Արթիկ
10. Արտաշատի	55466	1,9	80364	3,6	ք. Արտաշատ
11. Բասարգեչարի	113412	4,0	48208	2,1	գ. Բասարգեչար
12. Գորիսի	75196	2,7	32921	1,5	ք. Գորիս
13. Գուգարքի	78088	2,8	27452	1,2	ք. Կիրովական
14. Եղեգնաձորի	113406	4,0	33604	1,5	ք.ա. Եղեգնաձոր
15. Էջմիածնի	49740	1,8	81569	3,6	ք. Էջմիածին
16. Թալինի	128760	4,5	39725	1,8	ք.ա. Թալին
17. Իջևանի	134614	4,7	39592	1,8	ք. Իջևան
18. Կալինինոյի	68957	2,4	31355	1,4	ք.ա. Կալինինո
19. Կամոյի	62548	2,2	23708	1,1	ք. Կամո
20. Կրասնոսելսկի	69658	2,5	26673	1,2	գ. Կրասնոսելսկ
21. Հոկտեմբերյանի	67994	2,4	60391	2,7	ք. Հոկտեմբերյան

* ք.— քաղաք, ք. ա.— քաղաքատիպ ավան, գ.— գյուղ։


10 կմ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Բնակավայրեր
ԵՐԵՎԱՆ մայրաքաղաք
ԿԻՐՈՎԱԿԱՆ հանրապետական ենթակայության քաղաք
Գորիս շրջանային ենթակայության քաղաք
Ագարակ քաղաքատիպ ավան
Ախուրյան գյուղ
Սահմաններ
ՍՍՀՄ պետական
հանրապետությունների
վարչական շրջանների
Հաղորդակցության ճանապարհներ
երկաթուղային
ավտոմոբիլային
ԼԵՆԻՆԱԿԱՆ
ՍՊԻՏԱԿ
ԿԻՐՈՎԱԿԱՆ
ԱԼԱՎԵՐԴԻ
ԴԻԼԻՋԱՆ
ՍԵՎԱՆԱ ԼԻՃ
ԵՐԵՎԱՆ
ՉԵՐՄՈՒԿ
ԳՈՐԻՍ
ՂԱՓԱՆ

1	2	3	4	5	6
22. Հրազդանի	93582	3,3	29797	1,3	ք. Հրազդան
23. Ղափանի	134618	4,7	31235	1,4	ք. Ղափան
24. Ղուկասյանի	54430	1,9	10142	0,5	դ. Ղուկասյան
25. Մարտունու	117051	4,1	58870	2,6	ք.ա. Մարտունի
26. Մեղրու	66359	2,3	13473	0,6	ք.ա. Մեղրի
27. Նոյեմբերյանի	53795	1,9	27805	1,2	դ. Նոյեմբերյան
28. Շամշադինի	82442	2,9	35555	1,6	ք.ա. Բերդ
29. Սևանի	37572	1,3	17166	0,7	ք. Սևան
30. Սիսիանի	171878	6,0	33269	1,5	ք. Սիսիան
31. Սպիտակի	59617	2,1	43397	1,9	ք. Սպիտակ
32. Ստեփանավանի	63651	2,2	29396	1,3	ք. Ստեփանավան
33. Վեդու	139925	4,9	53106	2,4	ք.ա. Վեդի
1. Երևանի քաղսովետ,	23729	0,8	675194	30,0	
այդ թվում Երևան	15456	0,5	664880	29,5	
2. Լենինականի	3629	0,1	132941	5,9	
3. Կիրովականի	1128	—	81824	3,6	
4. Էջմիածնի	515	—	26370	1,2	
5. Ղափանի	2491	0,1	25614	1,1	
6. Ալավերդի	1063	—	20646	0,9	
7. Հոկտեմբերյան	635	—	20506	0,9	
8. Հրազդան	1226	—	20398	0,9	
9. Կամո	862	—	18054	0,8	
10. Դիլիջան	543	—	15051	0,7	
11. Արթիկ	255	—	11706	0,5	
12. Սևան	185	—	10187	0,4	
13. Ջերմուկ	44	—	3606	0,2	
Ընդամենը	2841633	100,0	2194519	100,0	

Սևանա լիճը — 132626 հեկտար։

կան նշանակություն ունի բնական հարստության առաջին տեսակը, ավելի բարձր աստիճաններում՝ երկրորդ տեսակը»[1]։

Հայկական ՍՍՀ աշխարհագրական միջավայրի բնութագրման և բնական ռեսուրսների տնտեսական գնահատման հաջորդ ելակետային դրույթը այն է, որ ինչքան բարձր է գիտության ու տեխնիկայի զարգացման մակարդակը, այնքան ավելի լայն են արտադրության կողմից օգտագործվող բնական միջավայրի շրջանակները։ Ըստ որում գիտության ու տեխնիկայի զարգացման տվյալ մակարդակի պայմաններում հասարակական արտադրության համար մատչելի և իրրև աշխատանքի գործիքներ ու սպառարժեքների արտադրության միջոցներ օգտագործվող բնական ռեսուրսները մտնում են հասարակական արտադրողական ուժերի մեջ և իրրև այդպիսիք ուսումնասիրման օբյեկտ են ծառայում նաև տնտեսա-աշխարհագրական գիտության համար։

Հայկական ՍՍՀ բնական պայմանների կոմպլեքսում առանձնահատուկ տեղ է գրավում նրա աշխարհագրական դիրքը։ Հանրապետությունը գրավելով Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան ոչ ընդարձակ մի հատվածը, աշխարհագրականորեն իրար է կապում Կովկասն ու Առաջավոր Ասիան։ Նա անմիջական ծովային ելք չունի և Սև ու Կասպից ծովերի նավահանգիստների հետ կապ է պահպանում Վրաստանի ու Ադրբեջանի վրայով։ Մյուս ծովերից նա կտրված է կապիտալիստական երկրներով[2]։ Այս հանգամանքը հանրապետության տերիտորիայի տարանցիկ նշանակությունը նկատելիորեն մեծացնում է։

Արտադրության տեղաբաշխման վրա անմիջականորեն ազդող գործոնի նշանակություն ունեն տերիտորիայի ֆիզիկական հատկանիշները։ Տերիտորիան հանդես է գալիս իրրև բնությունից տրված և մարդու արտադրական գործունեության շնորհիվ ստեղծված ամեն մի նյութականի գոյության ձևը (իրրև տարածություն) և կրողը։ Տերիտորիան արտադրության տեղաբաշխման տարածական բազիսն է։ Նա իրրև տնտեսական կատեգորիա ոչ այլ ինչ է, եթե ոչ համընդհանուր աշխատանքի առարկա և արտադրամիջոց։

Տերիտորիայի ֆիզիկական հատկանիշները, որոնք անմիջական ազդեցություն ունեն նյութական արտադրության վրա, բնութագրվում են ընդհանուր կարգի 2 ցուցանիշներով՝ հորիզոնական ձգվածությամբ (չափսերով) և նրա մակերևույթի ձևով՝ ռելիեֆով։

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, Հայպետհրատ, Երևան, 1954, էջ 536։

2 Հայկական ՍՍՀ հեռավորությունը Սև ծովից ուղիղ գծով 163 կմ է, Կասպից ծովից՝ 193 կմ, Միջերկրական ծովից՝ 750 կմ և Պարսից ծոցից՝ շուրջ 1000 կմ։

Հայկական ՍՍՀ տերիտորիան գրավում է 29,7 հազ. կմ² (2 974 259 հեկտար) տարածություն, որը հավասար է ՍՍՀՄ տերիտորիայի 0,13 %-ին և երկրագնդի ցամաքի 0,02 %-ին։ Այս ցուցանիշով միութենական հանրապետությունների շարքում նա գրավում է վերջին՝ 15-րդ տեղը, իսկ աշխարհի 200 երկրների շարքում՝ 155-րդ տեղը։



2. Հայկական ՍՍՀ տերիտորիայի բաշխումը ըստ բարձրության գոտիների։

Լեռնային տերիտորիայի ռելիեֆային պայմանները բնութագրող քանակական ու որակական բազմաթիվ ցուցանիշներից մարդու արտադրական գործունեության տեսակետից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հիպսոմետրիան և մակերևույթի թեքությունները։

Հանրապետության տերիտորիայի միջին բացարձակ բարձրությունը 1800 մ-ից անցնում է։ Ամենաբարձր (4090 մ) ու ամենացածր (390 մ) նիշերի տարբերությունը հասնում է 3700 մ-ի։ Տեղանքի բարձրության հետ մեկտեղ փոխվում է բնական ողջ կոմպլեքսը, որը ենթակա է ուղղաձիգ գոտիականության օրենքին։ Վերջինս իր հերթին խորը կնիք է դնում բնակչության տնտեսական գործունեության վրա՝ պայմանավորելով արտադրողական ուժերի տեղաբաշխման մի շարք առանձնահատկությունները։

*Աղյուսակ 1**

Հայկական ՍՍՀ տերիտորիայի բաշխումը ըստ բարձրության գոտիների

Բացարձակ բարձրությունը (մետրերով)	Տարածությունը	
	հազար կմ²	%
390— 500	0,02	0,1
500— 800	0,55	1,8
800—1000	2,35	8,0
1000—1500	5,43	18,3
1500—2000	9,36	31,3
2000—2500	7,29	24,5
2500—3000	3,80	12,6
3000—3500	0,97	3,3
3500-ից բարձր	0,03	0,1
Ընդամենը	29,74	100,0

Հայկական ՍՍՀ տերիտորիան ըստ հիպսոմետրիայի բաշխված է հետևյալ կերպ (տե՛ս քարտեզը և աղյուսակ 1).

Հիպսոմետրիկ մեծ տատանումների և բարդ լեռնագրության հետևանքով հանրապետության տերիտորիան հանդես է գալիս իբրև լեռնաշղթաների, բարձրավանդակների, միջլեռնային գոգավորությունների և խորը գետահովիտների մի զուգակցում (տե՛ս սխեման, էջ 13)։

Մակերևույթի թեքությունների մեծությունը այն ցուցանիշն է, որը պատճառական կապի մեջ գտնվելով տերիտորիայի ֆիզիկական մյուս հատկանիշների հետ, կարող է դիտվել իբրև այդ հատկանիշների ամբողջ կոմպլեքսը բնութագրող ընդհանրական ցուցանիշ։ Չկա նյութական արտադրության որևէ ճյուղ, որը ավել կամ պակաս չափով կապված չլինի մակերևույթի թեքությունների, իսկ նրանց միջոցով էլ տեղանքի ռելիեֆային պայմանների հետ։ Թեքությունների մեծացումը, իբրև կանոն, վատացնում է արտադրության ճյուղի զարգացման բնական պայմանները, հանգեցնում է լրացուցիչ տեխնիկական դժվարությունների, շինարարական աշխատանքների թանկաց-

* Աղյուսակը կազմվել է պլանիմետրային հաշվումների հիման վրա և որոշ չափով տարբերվում է գրականության մեջ տարածում գտած տվյալներից։



3. Հայկական ՍՍՀ լեռնագրությունը:

ման: Որոշակի մեծությունից սկսած թեքությունները տերիտորիայի տնտեսական յուրացման համար անհաղթահարելի (ժամանակակից տեխնիկայի պայմաններում) խոչընդոտ են վերածվում:

Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի կողմից տերիտորիայի յուրացմանը ներկայացվող պահանջների բազմակողմանի հաշվառման հիման վրա առանձնացրել ենք թեքությունների մեծության հետևյալ խմբերը՝ մինչև 1°, 1—3°, 3—5°, 5—8°, 8—12°, 12—16°, 16—20°, 20—30°, 30—40° և 40°-ից բարձր: Քարտեզաչափական հաշվումներով ստացել ենք, որ հանրապետության տերիտորիան ըստ մակերևույթի թեքությունների մեծության բաշխվում է հետևյալ կերպ (տե՛ս աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Հայկական ՍՍՀ տերիտորիայի բաշխումը ըստ տեղանքի տիպերի ու մակերևույթի թեքությունների

Տեղանքի տիպերը	Թեքությունների մեծությունը (աստիճաններով)	Տարածությունը	
		հեկտար	%
Հարթ, հորիզոնականին մոտ տարածություններ	մինչև 1	237843	8,0
Մեղմաթեք հարթություններ	1— 3	283275	9,6
Մեղմաթեք լանջեր	3— 5	309153	10,4
Զափավոր թեքության լանջեր	5— 8	434472	14,6
Դարիվեր լանջեր	8—12	399142	13,4
Խիստ դարիվեր լանջեր	12—16	358391	12,0
Զափավոր զառիթափ լանջեր	16—20	287458	9,6
Զառիթափ լանջեր	20—30	397788	13,4
Խիստ զառիթափ լանջեր	30—40	92570	3,2
Դարափուղեր ու քարափներ	40-ից ավելի	39341	1,3
Ընդամենը ցամաքային տարածութ.		2839433	95,5
Սևանա ու Արփի լճեր		134826	4,5
Հայկական ՍՍՀ		2974259	100,0

Տեղի սղության պատճառով սահմանափակվենք թեքությունների՝ աղյուսակում բերված սանդղակի աստիճանների առանձին խմբերի տնտեսական օգտագործման պայմանների հակիրճ բնութագրությամբ միայն:

Մինչև 3° թեքություն ունեցող տերիտորիաները զբաղեցնում են հանրա-

պետության ցամաքային տարածության 18,4 %-ը։ Նրանց համեմատաբար խոշոր զանգվածները տարածված են միջլեռնային գոգավորությունների հատակային մասերում և սարավանդների վրա (տե՛ս քարտեզը)։ Այստեղ պայմանները նպաստավոր են տերիտորիայի գյուղատնտեսական կազմակերպման, ինչպես նաև երկաթուղային ու ճանապարհների շինարարության ու շահագործման համար։ Խոշոր կապիտալ շինարարության համար պայմանները բարենպաստ են 0,5—3° թեքությունների դեպքում։

Երեքից ութ աստիճան թեքությունները (ցամաքի 26 %-ը) փռված են հիմնականում նախալեռնային ու լեռնային սարավանդների (պլատոների) վրա և Որոտան գետի ավազանում։ Տերիտորիայի տնտեսական օգտագործման պայմանները ընդհանուր առմամբ լավ են, չնայած որ 5—6°-ից սկսած հանդես են գալիս նկատելի դժվարություններ. հողաշերտի լվացումը հանգեցնում է բերրիության զգալի անկման, բարդանում են արհեստական ոռոգման, գյուղատնտեսական մեքենաների կիրառման, արդյունաբերական, քաղաքացիական ու հատկապես երկաթուղային շինարարության պայմանները։

Թեքությունների հաջորդ խումբը՝ 8—16°, չնայած որ հանրապետության ցամաքային տարածության շուրջ 27 %-ն է զբաղեցնում, նախորդների համեմատությամբ ավելի ցրված է և աչքի է ընկնում ավելի մանր կոնտուրներով։ Տնտեսական յուրացման պայմանները ընդհանուր առմամբ բավարար են, բայց արտադրության առանձին ճյուղերի զարգացման համար ստեղծվում են լուրջ դժվարություններ։

Այն տերիտորիաները, որոնց թեքությունները 16°-ից անցնում են, սահմանափակ հնարավորություններ ունեն բազմակողմանիորեն օգտագործվելու համար։ 16—30°-ի թեքությունները կարող են օգտագործվել բազմամյա տնկարկների տակ և իբրև խոտհարքներ ու արոտավայրեր, բացառիկ դեպքերում միայն մասչելի են կառուցապատման ու բնակեցման համար։

Ավելի թեք տերիտորիաները (սկսած 30°-ից) գործնականում, չհաշված որոշ բացառություններ, դուրս են մնում արտադրական օգտագործման ոլորտից։

Ինչպես տեսնում ենք, Հայկական ՍՍՀ լեռնային տերիտորիայի տնտեսական բազմակողմանի յուրացման և արտադրության տերիտորիալ տեղաբաշխման պայմանները էական տատանումներ են տալիս ոչ միայն հիպսոմետրիայի, այլև տեղանքի թեքության պատճառով։

Տերիտորիայի այս երկու հիմնական հատկանիշների փոխադարձորեն կապակցված տարածումը էլ ավելի է սրում սակավահողության պրոբլեմը,

Մակերևույթի թեքությունների բաշխումը ըստ բարձրության գոտիների

Թեքությունների մեծությունը (աստիճան)	Բարձրության գոտիները (մետր՝ հաշված ծովի մակարդակից)														Հայկական ՍՍՀ (առանց Սևանա ու Արփի լճերի)	
	մինչև 500		500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից ավելի			
	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%
մինչև 1	1010	0,4	2740	1,1	119021	50,3	29616	12,4	58445	24,5	26011	10,9	1000	0,4	237843	100,0
1— 3	400	0,1	3885	1,4	29278	10,4	94745	33,4	87450	30,9	52523	18,6	14994	5,2	283275	100,0
3— 5	95	0,0	3379	1,1	14200	4,6	84207	27,3	94006	30,5	83253	27,0	30013	9,5	309153	100,0
5— 8	100	0,0	13516	3,1	8054	1,9	56001	13,0	122506	28,1	129175	29,9	105120	24,0	434472	100,0
8—12	145	0,0	10175	2,6	14930	3,7	79547	19,9	111554	28,1	92933	23,3	89858	22,4	399142	100,0
12—16	163	0,1	6292	1,8	14619	4,1	58543	16,3	111108	31,0	102096	28,5	65570	18,2	358391	100,0
16—20	113	0,0	6324	2,2	14732	5,1	56181	19,6	78319	27,3	79693	27,8	52096	18,0	287458	100,0
20—30	394	0,1	6842	1,7	15051	3,8	61109	15,4	106907	27,0	126743	31,8	80742	20,2	397788	100,0
30—40	—	—	1559	1,6	4125	4,5	13098	14,2	18978	20,5	23877	25,7	30933	33,5	92570	100,0
40-ից ավելի	—	—	615	1,6	736	1,9	9440	24,0	8327	21,2	10844	27,4	9379	23,9	39341	100,0
Ընդամենը	2420	0,1	55327	1,9	234746	8,1	542487	19,0	797600	28,1	727148	25,6	479705	17,2	2839433*	100,0

* Առանց Սևանա լճի (132626 հա) և Արփի լճի (2200 հա)։

Աղյուսակում հստակ գծով առանձնացված է այն տերիտորիան, որը արտադրության համար ունի առավել նպաստավոր բնական պայմաններ։



Թեքությունների ժեծությունը (աստիճաններով ու բնական արտահայտությամբ) և նրանց տնտեսական յուրացման պայմանների գնահատականը

- Մինչև 3° (0.052) ----- լավագույն
- 3°-8° (0.052-0.141) ------ լավ
- 8°-16° (0.141 - 0.287) --- բավարար
- 16°-30° (0.287-0.577) -- պիտանի են մասամբ
- 30°- (0.577) -ից բարձր - պիտանի չեն
- կանյոններ ու դարափուլներ
- —·—·— վարչական շրջանների սահմաններ
- ○ Բնակավայրեր

4. Հայկական ՍՍՀ մակերևույթի պիրապեսող թեքություններ:

որը առանց այդ էլ շատ բարդ է Հայկական ՍՍՀ-ում: Այս հատատում են վերը բերված թվերը (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ նյութական արտադրության կազմակերպման համար բավարար բնական պայմաններ ունեցող տերիտորիան սահմանափակվում է մոտավորապես 16° թեքություններով ու 2000 մ բացարձակ բարձրություններով (աղյուսակում այն ընդգծված է) և բռնում է ավելի քան 12 հազար կմ² տարածություն:

Արտադրողական ուժերի զարգացմանը, հատկապես կապիտալ շինարարությանը լրացուցիչ դժվարություններ է հարուցում տերիտորիայի մեծ մասի բարձր սեյսմիկությունը: Եթե հանրապետությունը ամբողջովին գտնվում է սեյսմիկ գոնայում, ապա նրա տարածության մեկ քառորդը, որտեղ բնակվում է բնակչության մեկ երրորդը, սեյսմիկ տեսակետից վտանգավոր տերիտորիա է համարվում (մինչև 7—8 բալ): Կառուցվածքների մեջ հակասեյսմիկ տարրերի կիրառումը հանգեցնում է միջոցների ու նյութերի լրացուցիչ ծախսումների և շինարարության արժեքի 5—8 % թանկացման:

Հայկական ՍՍՀ տերիտորիան, ամբողջությամբ վերցրած, ինժեներաերկրաբանական տեսակետից ու գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով բարենպաստ է ամուր հիմք պահանջող խոշոր կառուցվածքների համար: Գերակշռում են ժայռային ու կիսաժայռային հրաբխածին-նստվածքային ապառները: Որոշ շրջաններում անբարենպաստ պայմաններ են ստեղծում սողանքներն ու երկրի մակերեսին մոտ գտնվող գրունտային ջրերը:

Եթե հանրապետության աշխարհագրական միջավայրի՝ վերը բնութագրված հատկանիշները ավելի շատ ընդգծում են տերիտորիայի յուրացման դժվարությունները, ապա հայտնաբերված ու հետախուզված հանքային ռեսուրսները հանդես են գալիս իբրև արտադրողական ուժերի զարգացումը խթանող առաջնակարգ գործոն:

Հայկական ՍՍՀ-ն աչքի է ընկնում երկրաբանական կառուցվածքի բազմազանությամբ և մետաղային ու ոչ-մետաղային օգտակար հանածոների տարածման բացառիկ բարենպաստ պայմանների առկայությամբ:

Հայկական ՍՍՀ տերիտորիան ՍՍՀՄ-ի մետաղային շրջանացման սխեմայում գտնվում է Անդրկովկասի և Կովկասի ալպյան հասակի ծալքավոր գոնաների մարզի մեջ[1]: Առանձնացվում են երեք մետաղածին գոնաներ, իրենց բնորոշ հանքային հանածոների կոմպլեքսներով. Ալավերդի—Ղափան-

[1] Տե՛ս **И. Г. Магакьян.** Металлогенические районы СССР и перспективы роста их рудных ресурсов. «Вопросы географии», сб. 57, 1962.

19361
15956

յան գոնա, որտեղ գլխավորապես տարածված են պղնձային և ծծմբահրաքարային հանքեր. Փամբակ-Զանգեզուրյան գոնա՝ պղնձա-մոլիբդենային հանքերով. Սևան—Ամասիայի գոնա՝ քրոմիտային և ոսկու—անդիկի—ծարիրի—մկնդեղի հանքավայրերով[1]:

Բնորոշ է մետաղային օգտակար հանածոների բազմազանությունը: Հայտնաբերված են 3 տասնյակի հասնող մետաղներ, մասնավորապես գունավոր մետաղներից՝ պղինձ, ալյումինի հումք (նեֆելինային սիենիտներ), կապար և ցինկ, մագնեզիում. սև մետաղներից՝ երկաթ, քրոմ, մանգան. հազվագյուտ և այսպես կոչված փոքր մետաղներից՝ մոլիբդեն, վոլֆրամ, տիտան, անագ, վանադիում, մկնդեղ, ծարիր, անդիկ, կոբալտ, նիկել և այլն. հազվագյուտ և ցրված մետաղներից՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, բիսմուտ և այլն: Ազնիվ մետաղներից հայտնաբերված են ոսկի, արծաթ, պլատին և այլն:

Այդ հանածոներից մի քանիսն ունեն արդյունաբերական նշանակության խոշոր պաշարներ:

Հայկական ՍՍՀ-ն եղել և մնում է իբրև ՍՍՀՄ-ում պղնձի հանքանյութի կարևոր շրջան: Առավել չափով տարածված են երկու տիպի հանքավայրեր՝ պղնձա-մոլիբդենայինը և պղնձա-հրաքարայինը:

Հիմնական հանքավայրերը կենտրոնացված են Զանգեզուրում: Դրանք մեծ մասամբ կոմպլեքսային հանքեր են, հիմնական մետաղի մեծ պարունակությամբ: Նրանցում պղինձը հանդիպում է մոլիբդենի և մյուս հազվագյուտ ու ցրված տարրերի հետ միասին: Արդյունաբերական խոշոր նշանակություն ունեն Քաջարանի ու Ագարակի հանքավայրերը, որտեղ կենտրոնացած է հանրապետության պղնձի պաշարների հիմնական մասը, ապա հաջորդում են Ղափանինն ու Դաստակերտինը: Արդյունաբերական յուրացման հեռանկարներ ունի նաև Լիճքի հանքավայրը:

Արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերի մի այլ, նվազ աչքի ընկնող խումբ էլ գտնվում է հանրապետության հյուսիսային մասում: Դրանք Շամլուղի և Ալավերդու երակային ու զանգվածային (շտոկային) տիպի պղնձա-ծծմբահրաքարային հանքերն են, ինչպես նաև Ախթալայի բազմամետաղային հանքավայրը:

Հայտնաբերված և հետախուզված են ալյումինի հումքի՝ նեֆելինային

---

1 Տե՛ս **И. Г. Магакьян, С. С. Мкртчян.** Взаимосвязь структуры магматизма и металлогении на примере Малого Кавказа. «Известия АН Армянской ССР, геологические и географические науки», № 4, 1957.

սիենիտների շատ խոշոր պաշարներ, որոնք գործնականորեն անսպառ են։ Նրանք լայնորեն տարածված են Փամբակի լեռնաշղթայի լանջերում, ինչպես նաև Հարավում՝ Մեղրու շրջանում։ Ավելի մանրազնին ուսումնասիրված է առաջինը (Թեժսարի հանքավայրը), որտեղ շահագործման համար կան չափազանց բարենպաստ պայմաններ՝ վիթխարի պաշարներ, տրանսպորտային հարմար դիրք, բաց եղանակով հանույթ կատարելու հնարավորություն և այլն։ Նեֆելինային սիենիտների քիմիական վերամշակման պրոցեսում կախողից բացի ստացվում են արժեքավոր այլ նյութեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է հիմք դառնալ կոմպլեքսային նոր արտադրության։

Կան մի ամբողջ շարք կապարա-ցինկային հանքավայրեր, որտեղ, սակայն, արդյունաբերական պաշարները այնքան մեծ չեն։

Բազմաթիվ են երկաթի հանքավայրերը, որոնք իրենց միներալային կազմով, տեղադրման պայմաններով, պաշարներով ու շահագործման հնարավորություններով խիստ տարբեր են և անհամարժեք։ Հետախուզվածության ներկա վիճակով գործնական առավել հետաքրքրություն են ներկայացնում Կապուտանի, Հրազդանի, Սվարանցի հանքավայրերը։

Կապուտանի հանքավայրում տարածված են ապատիտ-մագնետիտային հանքանյութերը՝ երկաթի բարձր պարունակությամբ (40-ից մինչև 65 %, համաշխարհային հռչակ վայելող շվեդական Կիրունայի տիպի), որոնք միաժամանակ կարող են լավ հումք հանդիսանալ սոպերֆոսֆատի ստացման համար։ Նախնական կանխագուշակումների համաձայն այստեղ կա բավականին մեծ քանակությամբ (մի քանի հարյուր միլիոն տոննա) հանքանյութ։

Հրազդանի հանքավայրն աչքի է ընկնում հանքանյութի բարձր որակով (վնասակար խառնուրդների՝ ծծմբի և ֆոսֆորի աննշան քանակով). այն պարունակում է 22-ից մինչև 40 % երկաթ, բայց նրա պաշարները մեծ չեն (մինչև 100 միլիոն տոննա)։ Սվարանցի մագնետիտա-օլիվինային հանքավայրը ունի համեմատաբար խոշոր պաշարներ (ավելի չան 500 միլիոն տոննա)։ Հանքապառներն այստեղ աղքատ են (պարունակությունը միջին հաշվով մոտ 20 % է), բայց պարունակում են մագնեզիում, վանադիում, տիտան, նիկել և կոբալտ։ Աննշան է սիլիկահողի քանակը։

Հայաստանը երկրագնդի այն հազվագյուտ շրջաններից է, որտեղ մոլիբդենի մեծ պաշարներ են հայտնաբերված։ Դրանց մեծությամբ նա Սովետական Միության մեջ գրավում է առաջատար տեղերից մեկը։

Մոլիբդենի առավել խոշոր, հետախուզված պաշարները գտնվում են Զանգեզուրում (առանձնապես՝ Քաջարանի և Ագարակի պղնձա-մոլիբդենային հանքավայրերում)։ Նրանց հանքանյութերը, իբրև կանոն, պարունակում

են նաև ոսկի, հազվագյուտ և ցրված տարրեր։ Հանքի մշակումը կատարվում է բաց եղանակով, որը նույնպես էժանացնում է արդյունահանումը։

Բացի Զանգեզուրի արդեն շահագործվող հանքավայրերից, մոլիբդենի հեռանկարային բնավայրեր են հայտնաբերված Հանքավանի մոտ, Վարդենիսի լեռնաշղթայի լանջերին և Հանրապետության այլ շրջաններում։

Ինչպես վերևում նշվեց, մետաղական օգտակար հանածոների բոլոր հիմնական հանքավայրերի առանձնահատկությունը հանքանյութի մեջ հազվագյուտ և ցրված տարրերի առկայությունն է այնպիսի քանակություններով, որոնք թույլ են տալիս կազմակերպել նրանց կորզումը արդյունաբերական մասշտաբներով։

Հանրապետության ոսկու ամենախոշոր արմատային հանքավայրը Զոդինն է։

Բազմազան են ոչ-մետաղային օգտակար հանածոները, որոնց մի քանի տեսակները կարևոր տեղ են գրավում Սովետական Միության հանածոհումքի հաշվեկշռում[1]։

Ոչ-մետաղային օգտակար հանածոների բոլոր երեք հիմնական խմբերը (քիմիական հումք, շինանյութեր և ինդուստրիալ հումք) հանրապետությունում ներկայացված են անդրկովկասյան և միութենական նշանակություն ունեցող հանքավայրերով։

Քիմիական հումքի զանազան տեսակների մեջ աչքի է ընկնում քարաղը, նրա երկու խոշոր ավազաններ են հայտնաբերված Արարատյան դաշտում (Երևանի և Հոկտեմբերյանի մոտ), որը բնութագրվում է իրրև ամբողջ Սովետական Միության մեջ քարաղի ամենախոշոր շրջաններից մեկը։

Հայտնաբերված են հանքային ներկերի տասնյակից ավելի հանքավայրեր (Շահնազարի, Գոթանքարի, Աղվերանի, Տանձուտի և այլն), որոնց շահագործումը կարելի է տանել բաց եղանակով։ Ընդհանուր պաշարները գնահատվում են 1,8 միլիոն տոննա։

Քիմիական պարարտանյութերի արտադրության համար հումք ծառայող օգտակար հանածոներից պետք է նշել ծծմբի հրաքարը, ապատիտները, ֆոսֆորիտները։ Նրանց պաշարները բավականաչափ մեծ են և կարող են հիմք ծառայել պարարտանյութերի լայն մասշտաբի արտադրության համար։

Ուշագրավ է, որ Հանրապետությունում լայնորեն տարածված հումքի

---

1 Տե՛ս Геология Армянской ССР, т. VII, Неметаллические полезные ископаемые. Изд-во АН Армянской ССР, Ереван, 1966.


20 կմ
Նոյեմբերյան
Կալինինո
Ալավերդի
Ղուկասյան
Ստեփանավան
Թումանյան
Ամասիա
Ջաջուռ
Իջևան
Բերդ
Լենինական
Սպիտակ
Սարովական
Դիլիջան
Կրասնոսելսկ
Արթիկ
Ապարան
Մարալիկ
Սևան
Ծրագդան
Վերին Թալին
Կամո
Աշտարակ
Էջմիածին
ԵՐԵՎԱՆ
Հրազդան
Մարտունի
Բասարգեչար
Արտաշատ
Վեդի
Ջերեգնաձոր
Ապիկբեկով
Սիսիան
Գորիս
Դաստակերտ
Ղափան
Մեղրի
Պղինձ
Պղինձ - մոլիբդեն
Բազմամետաղներ
Երկաթ
Մագնիում
Քրոմ
Ծարիր
Մանրիկ
Ոսկի
Ալյումին
Մեծմբային հրաքար
Բարիտ
Կերակրատաղ
Ֆոսֆորիտ
Կրաքար ու փրավերտին
Մարմար և մարմարացված կոնգլոմերատ
Դոլոմիտ
Հրակայուն ապառներ
Կվարց, կվարցիտ, կվարց պարունակող ավազ
Գիպս
Դիատոմիտ
Հանքային ներկեր
Գրանիտ
Բազալտ, անդեզիտո-բազալտ, անդեզիտ
Պեմզա
Պեռլիտ
Հրաբխային խարամ
Տուֆ, հրաբխային ավազ
Օբսիդիան
Ագատ

մի շարք տեսակներ (կրաքար, պեղլիտներ, սերպենտինիտ, դորշ ածուխ, մերգելներ) գյուղատնտեսության մեջ կարելի է օգտագործել առանց քիմիական վերամշակման ենթարկելու, պարզապես մանրացնելուց հետո։ Այդ հանգամանքը և ագրոհումքի տվյալ տեսակները բաց եղանակով արդյունահանելու հնարավորությունը նկատելի կերպով բարելավում է նրանց շահագործման տեխնիկա-տնտեսական ցուցանիշները։

Քիմիական հումքի աղբյուր է մետաղային օգտակար հանածոների մեծ մասը (պղինձ, բազմամետաղային, խրոմիտային հանքանյութերը, նեֆելինային սիենիտները)։ Այսպես, նեֆելինային սիենիտներից կորզվող քիմիական նյութերի բաժինը, ըստ հաստատված տեխնոլոգիական սխեմայի, կկազմի նախնական հումքից ստացվող բոլոր նյութերի արժեքի 65 %-ը[1]։

Հումքի շատ բազմազան տեսակներով է ներկայացված ոչ-մետաղային օգտակար հանածոների երկրորդ խումբը՝ շինանյութերը։ Նրանց հարստությամբ ու բազմազանությամբ Հայկական ՍՍՀ-ն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ Միության մեջ։

Ֆիզիկա-մեխանիկական լավ հատկություններով և դեկորատիվ բարձր արժանիքներով աչքի են ընկնում հրաբխային տուֆերն ու տուֆա-լավանեները, որոնք համատարած ծածկույթների ձևով (շերտերի հաստությունը տեղ-տեղ հասնում է մի քանի տասնյակ մետրի) մեծ տարածություններ են գրավում Արագածի լանջերին, ինչպես նաև Ախուրյան գետի միջին հոսանքում։ Հաշվված են հանքավայրերի 14 խոշոր դաշտեր ու խմբեր, որոնց երկրաբանական պաշարները անցնում են 2 մլրդ. մ^3-ից։ Հետախուզված պաշարները կազմում են մոտ 300 մլն. մ^3 (քարհանքերի շահագործման տեխնիկայի ժամանակակից մակարդակի պայմաններում պիտանի որմնաքարի ելքը կազմում է 40—70 %)։

Լավ ուսումնասիրված են հատկապես Արթիկի, Թալինի, Բյուրականի, Մերձերևանյան հանքավայրերը, որտեղ գերակշռում են վարդագույն, կարմրըրավուն, դեղնա-դարչնագույն, սև գույնի տուֆերը։

Բնորոշ են տուֆի ցածր ինքնարժեքը և հանքավայրերի հարմար տրանսպորտային դիրքը (82 հանքավայրերից 37-ը գտնվում են երկաթգծից մինչև 10 կմ հեռավորության վրա)։

Վիթխարի պաշարներ են կազմում բազալտները. նրանք հզոր շերտով

---

[1] Տե՛ս К. Х. Вермишев. Разданский горнохимический комбинат (обзор экономической эффективности комплексного использования минерального сырья на примере нефелиновых сиенитов Армении), Айпетрат, Ереван, 1962, стр. 67.

տարածվում են Հանրապետության հյուսիս-արևմուտքում, Գեղամա լեռնաշղթայում, Արագածի լանջերին, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան մասում և Որոտան գետի ձախափնյա ավազանում: Բազալտի ընդհանուր պաշարները (անդեզիտների և անդեզիտա-բազալտների հետ միասին) գնահատվում են 125 մլրդ. մ³: Բազալտի հալեցման և մետաղի փոխարինողների, մեկուսիչների և հրակայուն նյութերի ստացումը կազմակերպելու համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես Կամոյի և Ղափանի հանքավայրերը:

Կան թեթև լցանյութերի՝ պեռլիտների, օբսիդիանների և լիթոիդային պեմզայի հսկայական պաշարներ: Իրենց տնտեսական պայմաններով ու շահութաբերությամբ առանձնապես աչքի են ընկնում Թալինի, Աբովյանի և Հրազդանի շրջանների հանքավայրերը, որոնք զասավորված են երկաթգծի երկայնքով:

Հանրապետությունում առկա է կապակցող նյութերի, առաջին հերթին՝ պնդազան մարկայի ցեմենտների արտադրության հատատուն հումքային բազան— կրաքար ու տրավերտին, պեմզա ու հրափխրաքար (տրաս), գիպս, դաջ: Այն ավելի կուժեղանա նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման շնորհիվ (նախնական հումքի ընդհանուր կշռի 61 %-ը գնում է բարձրորակ ցեմենտ արտադրելու համար):

Տեխնիկա-տնտեսական լավ ցուցանիշներ ունեցող մարմարի արդյունաբերական հանքավայրերից հարկ է առանձնացնել Ազվերան-Արզականինը, Արարատինը, Խորվիրապինը:

Մի շարք շրջաններում լավ հնարավորություններ կան հրակայուն աղյուսների ու նյութերի (հրակայուն կավերը՝ Ալավերդու և Գուգարքի շրջաններում, մագնիտի և քրոմ-մագնիտային ապառները՝ Սևանա լճի հյուսիս-արևելյան եզերքներում, դոլոմիտները՝ Իջևանի շրջանում), ինչպես նաև ապակու արտադրության, հղկանյութերի արդյունաբերության ու գունագեղ քարերի (ագաթ, հասպիս, օնիքս, օբսիդիան) հանույթ կազմակերպելու համար:

Արժեքավոր են Իջևանի շրջանի բենտոնիտային կավի խոշոր պաշարները (30 մլն. տ): Այդ հանքավայրի արդյունաբերական շահագործումը, մասնավորապես բենտոնիտային փոշու և ակտիվացրած կավի ստացումը թելադրվում է ողջ Սովետական Միության արագ աճող պահանջմունքներով:

Սովետական Հայաստանի հանքային ռեսուրսների կոմպլեքսում պակասում է մի կարևոր օղակ՝ արդյունաբերական նշանակություն ունեցող վառե-

լիքային ռեսուրսները, թեպետ Արարատյան դաշտում հայտնաբերվել են նավթա-գազաբերության ուղղակի նշաններ։

Սովետական Հայաստանը ընկած լինելով ցամաքային գոտում, համեմատաբար սակավաջուր է։ Բազմամյա միջին գետային հոսքը գնահատվում է 7,2 մլրդ. մ³։ Դա նշանակում է, որ բնակչության մեկ շնչին ընկնում է 3,2 հազար մ³, իսկ 1 կմ² մակերեսին՝ 242 հազար մ³ ջուր։ Այս միջին ցուցանիշները, նույնիսկ եթե հաշվի առնենք ջրաօգտագործման աճի տեմպերը, կարող են թվալ միանգամայն բավարար։ Սակայն իրական պատկերը խիստ տարբեր է միջին ցուցանիշներից և Հայկական ՍՍՀ-ն բնութագրվում է իբրև ջրամատակարարման չափազանց սուր պրոբլեմ ունեցող երկիր։

Ջրային հոսքի մեծությամբ աչքի են ընկնում (բացառությամբ սահմանային գետերի) Դեբեդը, Սևջուրը, Որոտանը։ Նրանցից յուրաքանչյուրի միջին-տարեկան հոսքը գերազանցում է 500 մլն. մ³-ից։

Տնտեսական օգտագործման համար առանձնապես անբարենպաստ է հոսքի բաշխումը տարվա ընթացքում։ Վարարման երեք ամիսներին (ապրիլ, մայիս, հունիս) բաժին է ընկնում հոսքի ընդհանուր գումարի շուրջ կեսը։ Առանձին գետերի համար հոսքի բաժինը վարարման ժամանակ տատանվում է 40—70 % միջև, իսկ ձմեռային միջոնքի (դեկտեմբեր-փետրվար) ժամանակ՝ 9—18 %-ի միջև[1]։ Գետերում ջրի մակարդակը խիստ նվազում է նաև հուլիսին և օգոստոսին։

Որոշ գետեր հայտնի են կախված բերուկների բարձր պարունակությամբ, առանձնապես սելավային ակտիվ գործունեությամբ, որը մեծ վնաս է հասցնում ժողովրդական տնտեսությանը։

Հանրապետությունում կան մոտ 300 լճեր և պարբերաբար լցվող ջրավազաններ, որոնցից ամենախոշորը Սևանա լիճն է՝ 1,3 հազար կմ² մակերեսով և 39 մլրդ. մ³ ջրի ծավալով։ Դա կազմում է բոլոր լճերի ջրային պաշարների 99 %-ը։

Իր չափերով միայն Սևանա լիճն է, որ ամբողջ հանրապետության համար ունի ջրային ռեսուրսների տարեկան և բազմամյա կարգավորիչի նշանակություն։ Մնացած լճերի նշանակությունը տեղական է։ Նրանք կարող են ծառայել իբրև որոշ ռեզերվ՝ արոտները ջրարբի դարձնելու և ամառվա չոր շրջանում սահմանափակ հողատարածություններ ոռոգելու համար։ Հայտնաբերված են ստորերկրյա 11 ջրավազաններ, որոնց հա-

---

[1] Տե՛ս **В. П. Валесян.** Исследование стока горных рек Армянской ССР, Изд-во АН СССР, М., 1955, стр. 90—91.

մախառն ստատիկական պաշարները գնահատվում են 50 մլրդ. մ³ շատ ավելի, քան հանրապետության վերնրկրյա բոլոր բնական ու արհեստական ջրամբարները միասին վերցրած։ Դինամիկական պաշարները հաշվվում են 2,7 մլն. մ³։

Ստորերկրյա ջրերը էապես բարելավում են Հայկական ՍՍՀ-ի ջրային ռեսուրսների հաշվեկշիռը և կարևոր ռեզերվ են ներկայացնում ջրամատակարարման համար, ամենից առաջ ցածրադիր, մասամբ էլ նախալեռնային գոտում։

Հայկական ՍՍՀ-ի էներգետիկական ռեսուրսների կառուցվածքում ջրային էներգիան բացառիկ տեղ է գրավում հանրքային վառելիքի համարյա լիովին բացակայության հետևանքով։

Ջրային էներգիայի միջին տարեկան արտադրանքի 2/3-ից ավելին (տե՛ս աղյուսակ 4) բաժին է ընկնում Դեբեդին, Որոտանին ու Հրազդանին։

Հայկական ՍՍՀ-ի լեռնային և սակավաջուր գետերի հիդրոէներգետիկական հնարավորությունների օգտագործման առավել ռացիոնալ ձևը կասկադային ՀԷԿ-երի շինարարությունն է։ Եթե չհաշվենք Հրազդան գետը, որի վրա արդեն գործում է 556 հազար կվտ կարողությամբ ՀԷԿ-երի կասկադը (առանց 2 մանր կայանների), խոշոր կասկադներ կարելի է կառուցել Որոտանի (405 հազ. կվտ) և Դեբեդի (394 հազ. կվտ) վրա։ Հոսքերի սակավաջրության և նրանց բարձր տեսակարար անկումների պատճառով ջրաէներգակառուցումների առավել հարմար, տնտեսապես շահավետ տիպ են բարձրճնշումային դերիվացիոն ՀԷԿ-երը։

Գետերի հոսքի երկարատև կարգավորման հնարավորությունները ծայրահեղ ցածր են՝ կապված խոշոր ջրամբարների գոյացման համար բարենպաստ բավարար թվով տեղամասերի բացակայության հետ։ Մինչդեռ գե-

Աղյուսակ 4

Ջրային էներգիայի պաշարների բաշխումը ըստ գետային ավազանների

Գետային ավազանների անվանումը	Հզորությունը		Միջին-տարեկան հնարավոր արտադրությունը	
	հազար կվտ	%	մլն. կվտ ժամ	%
Դեբեդ	394	22,7	1797	30,9
Աղստև	56	3,2	241	4,1
Ախուրյան	51	2,9	352	6,1
Քասաղ	20	1,2	86	1,5
Հրազդան	563	32,4	1000	17,2
Որոտան	405	23,4	1163	20,0
Ողջի	53	3,1	257	4,4
Մեղրի-Արաքս	142	8,2	616	10,6
Այլ գետեր	50	2,9	300	5,2
Ընդամենը	1734	100,0	5812	100,0

տերի ճնշող մեծամասնությունը աչքի է ընկնում հոսքի տարեկան բաշխման խիստ անհամաչափությամբ և կարիք է զգում կարգավորման։ Բացի այդ, բոլոր գետերի մոտ այդ բաշխումը միաժամանակյա բնույթ ունի, որով և անհնարին է դառնում կատարել ՀԷԿ-երի բեռնվածության միջավազանային կարգավորում։

Ջրային ռեսուրսների մեջ կարևոր տեղ են գրավում բուժիչ ջրերը, որոնց գոյացումը անմիջականորեն կապված է երիտասարդ հրաբխային գործունեության հետ։ Հանքային ջրերի հերթով և նրանց ֆիզիկո-քիմիական հատկությունների բազմազանությամբ Հայկական ՍՍՀ-ն կարող է դասվել աշխարհի ամենահարուստ շրջանների շարքին։ Հանդիպում են հանքային ջրերի համարյա բոլոր հիմնական տիպերի նմանակները[1]։ Հանրապետությունում հաշվված են մոտ 500 հանքային աղբյուրներ, որոնց ընդհանուր դեբիտը կազմում է օրական 60 մլն. լիտր[2]։ Նրանց մի մասը տաք ջրեր են, այդ թվում Ջերմուկի խմբինը՝ 55—64° ջերմությամբ, Հանքավանինը՝ 30—35°, Արարատինը և Տաթևինը՝ 24—25° և այլն։

Աշխարհագրական միջավայրի նկարագրի մեջ առանձնահատուկ տեղ ունեն կլիմայական պայմաններն ու ռեսուրսները։ Հայկական ՍՍՀ-ի կլիմայական պայմանները շատ բազմազան են։ Նրանք բավականին խիստ տարբերվում են ըստ ուղղաձիգ գոտիների, առեղծելով կլիմայական շրջանների մոզայիկ պատկեր։ Այստեղ առանձնացնում են 11 ուղղաձիգ ագրոկլիմայական գոտիներ[3]։

Հանրապետության կլիման ունի տնտեսական տեսակետից կարևոր մի շարք առանձնահատկություններ։

Տաք ժամանակաշրջանի ջերմային ռեժիմը ցածրավայրերում և լեռնային շրջաններում բարենպաստ է մեծ քանակությամբ ջերմասեր գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար, քանի որ 10°-ից բարձր ակտիվ ջերմաստիճանների գումարի, 10°-ից բարձր միջին ջերմաստիճան ունեցող օրերի թվի, ինչպես նաև արևափայլի տևողության և անսառնամանիք ժամանակաշրջանի ցուցանիշները բավականին բարձր են։ Մյուս կողմից, ցուրտ ժամա-

[1] Այսպես, օրինակ, Ջերմուկը հանդիսանում է Կարլովի Վարիի հանքային ջրերի նմանակը, Դիլիջանն ու Ֆիոլետովոն՝ Բորժոմիի, Հանքավանն ու Սևանը՝ Եսենտուկիի, Արարատը՝ Ծաղկաձորի, Տաթևը՝ Կիսլովոդսկի նարզանի և այլն։

[2] Տե՛ս **Н. И. Долуханова.** Закономерности распределения минеральных вод на территории Армянской ССР, «Изучение и эксплуатация минеральных вод Азербайджана» ժողովածուում, Баку, 1960.

[3] Տե՛ս Агроклиматический справочник Армянской ССР, Л., 1961, Հայկական ՍՍՀ ատլաս, Մոսկվա-Երևան, 1961։

նակաշրջանում օդի օրական-միջին ջերմաստիճանը ամենուրեք 0°-ից ցած է իջնում (բացի Մեղրիից), այնպես, որ հանրապետության տերիտորիայի մեծ մասում գերակշռում են հունվարյան միջին —6°-ից ցածր ջերմաստիճանները, իսկ բացարձակ նվազագույնները ամենուրեք լինում են —16°-ից ցածր, ներառյալ հարավի և հյուսիս-արևելքի տաք շրջանները։ Սա որոշ չափով սահմանափակում է բազմամյա անկարկների շատ տեսակներ աճեցնելու հնարավորությունները Անդրկովկասի մյուս հանրապետությունների համեմատությամբ և թույլ է տալիս միայն այնպիսի ծառատեսակների մշակումը, որոնք կարող են դիմանալ ձմեռային սառնամանիքներին (թթենի, ընկուզենի, ծիրանի, դեղձենի և այլն) կամ ձմեռել հողով ծածկված վիճակում (խաղողը)։

Գյուղատնտեսությանը որոշակի վնաս են հասցնում այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսին ցրտահարությունն ու կարկտահարությունն են։ Բարձրալեռնային գոտում անսառնամանիք ժամանակաշրջանը տևում է ընդամենը 60 օր։ Ցածրավայրերում այդ թիվը տատանվում է 203-ից 274-ի միջև։ Ցրտահարությունները, հաճախ նաև կարկտահարությունը, համարյա ամեն տարի նվազեցնում, իսկ երբեմն էլ զգալի տարածությունների վրա նույնիսկ ոչնչացնում են բերքը[1]։

Տեղումների տարեկան քանակությունը տատանվում է 970 մմ-ից (բարձրալեռնային գոտի) մինչև 180 մմ (ցածրադիր ներքին փակ հովիտներ)։

Տերիտորիայի մոտ 40 %-ը (2000 մ-ից բարձր) տարեկան ստանում է 600 մմ և ավելի տեղումներ։ Իսկ հանրապետության մնացած ամբողջ մասը, որն ունի ջերմային լավագույն պայմաններ, ստանում է տարեկան 600 մմ-ից պակաս (իսկ այդ տերիտորիայի մոտ $^1/_3$-ը՝ տարեկան 400 մմ-ից պակաս) տեղումներ և խոնավության խիստ պակաս է զգում, բացառությամբ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջանների, որտեղ 800—1400 մ բարձրությունների վրա թափվում են 600 մմ-ից ավելի տեղումներ։

Չոր մերձարևադարձային շրջանները ներկայացված են ոչ մեծ ու ցրված կղզիներով, որոնց ընդհանուր տարածությունը 600 քառ. կմ-ից չի անցնում։

Ինչպես երևում է ասվածից, կլիմայական պայմանները, իրենց ողջ բազմազանությամբ հանդերձ, ընդհանրապես նվազեցնում են տերիտորիայի գյուղատնտեսական հնարավորությունները։

---

1 Տե՛ս Վ. Ե. Այվազյան, Ռ. Ս. Մկրտչյան, *Ցրտահարությունները Հայկական ՍՍՌ-ում և պայքարը նրանց դեմ*, Երևան, 1959։

Մեծ են Հանրապետության հնարավորությունները կլիման իբրև կուրորտային տնտեսության զարգացման գործոն օգտագործելու տեսակետից։ Շատ շրջանների համար բնորոշ են արեգակնային ռադիացիայի, հատկապես ուլտրամանուշակագույն ռադիացիայի, ինսոլյացիայի և արևափայլի տևողության մեծ չափերը։

Կլիմայական և բնական բուժիչ մյուս ռեսուրսների ավելի ռացիոնալ ու բազմազան օգտագործումը Հայկական ՍՍՀ-ի առջև կարող է բանալ համամիութենական առողջարաններից մեկը դառնալու հեռանկարը։

Հանրապետության հողային ծածկույթին աչքի է ընկնում մեծ խայտաբղետությամբ և լեռնային երկրների համար բնորոշ հողային գոտիների ուղղաձիգ հաջորդականությամբ։

Առավել տարածված են լեռնամարգագետնային հողերը (հողային ֆոնդի մեկ երրորդից ավելին) ենթալպյան սևահողանման և դարչնագույն հողերի տարբերակներով. դրանք հանդիպում են 2200—2400 մ-ից բարձր։ Նրանց վրա տարածված է ենթալպյան և ալպիական բուսականությունը (խոտհարքներն ու ամառային արոտավայրերը)։

Այդ գոտուց ներքև, բարձրադիր սարահարթերի և հարթավայրերի մարզում, մինչև 1900 մ բարձրության վրա ընկած են Հանրապետության համար բնորոշ լեռնատափաստանային խմբի հողատարածքները՝ սկսած կրաքերծված և տիպիկ հզոր սևահողերից մինչև թույլ կրաքերծված կարբոնատային սևահողերը։ Նրանք կազմում են հողային ֆոնդի քառորդ մասը և աչքի են ընկնում բարձր արգավանդությամբ (հումուսի պարունակությունը տատանվում է 5-ից մինչև 15 %-ի սահմաններում)՝ տալով հացահատիկային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների, կարտոֆիլի բարձր բերք։

Նախալեռնային շրջաններում տարածված են տարատեսակ շագանակագույն հողեր, որոնք փոխվում են կիսաանապատային բնահողերի։ Սրանց վրա, արհեստական ոռոգման առկայության դեպքում, լավ են զարգանում պաղպաղու ծառերը, խաղողը, ծխախոտը, ինչպես նաև մերձարևադարձային որոշ կուլտուրաներ՝ նուռը, թուզը, նուշը և այլն (հյուսիս-արևելքում)։

Կիսաանապատային գորշ հողերի խումբը տարածված է Արարատյան հարթավայրում։ Նրանց մեջ հատուկ արժեք են ներկայացնում ոռոգվող կուլտուրական հողերը, որոնք գոյացել են բազմադարյան հողագործության և սիստեմատիկ ոռոգման շնորհիվ։ Չնայած ոչ մեծ տարածությանը, նրանք ներկայումս կազմում են մշակվող հողերի ամենաարժեքավոր մասը և շատ կարևոր դեր են խաղում գյուղատնտեսական արտադրության մեջ։

Կիսաանապատային գորշ և շագանակագույն հողերի տարածման գոտում կան չօգտագործվող հողերի որոշ ռեզերվներ։ Մասնավորապես, Արարատյան հարթավայրում աղակալած հողերի տարածությունն անցնում է 30 հազար հեկտարից, դրանցից մոտավորապես 5 հազար հեկտարը թույլ են աղակալած, ուստի կարող են իրացվել առանց ցամաքուրդ (դրենաժ) և լվացում կիրառելու։

Լեռնաանտառային հողերի գոտում, որը հիմնականում գտնվում է հանրապետության ավելի խոնավ հյուսիսային մասում, տարածված են դարչնագույն, գորշ, հումուսա-կարբոնատային հողերը։

Հայկական ՍՍՀ-ի բուսածածկույթին աչքի է ընկնում բուսական կազմի հարստությամբ ու բազմազանությամբ. տերիտորիայի յուրաքանչյուր 1000 քառակուսի կիլոմետրին միջին հաշվով ընկնում են 100 տարբեր տեսակներ, մինչդեռ ՍՍՀՄ-ում, ամբողջությամբ վերցրած, նույն տարածությանը բաժին է ընկնում սոսկ մեկ տեսակ[1]։

Տնտեսական առումով առաջնակարգ նշանակություն ունեն մարգագետիններն ու անտառները։ Հանրապետության ամբողջ տերիտորիայի մոտավորապես 28 %-ը գրավում են արոտավայրերն ու խոտհարքները։ 2800—3000 մետրից բարձր փռված են բարձրալեռնային մարգագետինները։ Ավելի ցածր (3000—2800-ից մինչև 2400—2200 մ) զարգանում են մերձալպյան մարգագետինները՝ հանրապետության լավագույն խոտհարքները։ Տեղ-տեղ նրանք օգտագործվում են իբրև ամառային արոտավայրեր։ Արարատյան գոգահովտի հարթավայրային և բլրաշատ տարածություններում մինչև 1000 մ բարձրության վրա տիրապետում է կիսաանապատային նվազ բուսականություն։ Դրանք այսպես կոչված ձմեռային արոտավայրերն են, որոնք իբրև կերային հանդակներ աստիճանաբար կորցնում են իրենց նշանակությունը, որովհետև նրանց տերիտորիան ոռոգման շնորհիվ օգտագործվում է բարձրարժեք ինտենսիվ կուլտուրաների մշակության համար։

Արոտավայրերի անսիստեմ օգտագործումը անցյալում հասցրել է նրանց որակական վիճակի որոշ վատթարացմանը, սակայն բարձրալեռնային մարգագետինները չեն կորցրել իրենց մեծ արժեքը և շարունակում են մնալ իբրև հանրապետության անասնաբուծության կարևոր բնական կերային բազան։

Հանրապետությունը հարուստ չէ անտառներով։ Նրանց ընդհանուր տա-

---

1 Տե՛ս Հ. Տոնոյան, *Հայաստանի բարձրալեռնային մարգագետնային բուսականությունը և նրա ժողովրդատնտեսական նշանակությունը*, Երևան, 1955։

րածությունը կազմում է մոտավորապես 350 հազ. հեկտար (անտառածածկ տարածությունը միայն 250 հազ. հեկտար)։ Անտառներն աչքի են ընկնում արժեքավոր ծառատեսակներով՝ տարածության մոտավորապես 90 %-ը գրավում են կաղնին, հաճարենին և բոխին (տե՛ս աղյուսակ 5)։ Անտառային ֆոնդի ճնշող մասը հողապաշտպան ու ջրապաշտպան նշանակություն ունի և չի կարող օգտագործվել անընդմեջ արդյունաբերական հատումների համար։

Աղյուսակ 5

Հայկական ՍՍՀ-ի հիմնական ծառատեսակների զբաղեցրած տարածությունը և պաշարները[1]

Ծառատեսակները	Տարածությունը		Պաշարները		Մեկ հեկտարի միջին պաշարը խորանարդ մետրերով
	հազար հա	%	մլն. խոր. մետր	%	
Հաճարի	91,9	36,6	17,01	55,5	185,0
Կաղնի	87,1	34,7	6,97	23,4	80,0
Բոխի	46,0	18,3	5,35	17,4	116,3
Գիհի	5,9	2,4	0,11	0,3	18,7
Ղաժի	5,5	2,2	0,20	0,6	36,3
Հացենի	3,4	1,3	0,18	0,5	53,0
Սոճի	2,2	0,8	0,17	0,5	77,2
Թխկի	2,0	0,7	0,20	0,6	100,0
Թեղի	1,3	0,5	0,13	0,3	100,0
Լորի	1,2	0,4	0,11	0,3	91,6
Կեչի	1,1	0,4	0,07	0,3	63,6
Այլ ծառատեսակներ	2,6	1,7	0,10	0,3	38,4
Ընդամենը	250,2	100,0	30,60	100,0	122,3

Անտառները հարուստ են վայրի պտղատու ծառերով (տանձ, խնձոր, կեռաս, ընկույզ, հոն, ալուչա, զկեռ), որոնք գրավում են 10 հազար հեկտարից ավելի տարածություն, մի բան, որ հնարավորություն է ընձեռում, մանավանդ հյուսիսային շրջաններում, կազմակերպել արդյունաբերական տիպի անտառապտղային տնտեսություններ։

Անտառները տարածված են լեռնային շրջաններում, գլխավորապես զա-

[1] Աղյուսակը կազմված է ըստ Հայկական ՍՍՀ անտառային տնտեսության վարչության նյութերի և Ա. Աբրահամյանի «Հայաստանի անտառները» (Երևան, 1960) գրքույկի։

ռիթափ (մինչև 25—30°) լանջերի վրա, որտեղ հողի էրոզիան և լվացումը խիստ ինտենսիվ են։

Հանրապետությունը հարուստ է մեղրատու և դեղաբույսերի տեսակներով։

Գլուխ երկրորդ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայկական ՍՍՀ-ի ժամանակակից տնտեսությունն իր հիմնական, բնորոշ գծերով վերջին 2—3 տասնամյակի արդյունք է։ Նրա տեղաբաշխման այսօրվա պատկերը նույնպես հիմնականում ձևավորվել է այդ ժամանակաշրջանում։ Սակայն տնտեսա-աշխարհագրական շատ երևույթների արմատները գնում են դարերի խորքը։

Հայկական բարձրավանդակը մարդու բնակության հնագույն օջախներից մեկն է, որտեղ դեռևս անհիշելի ժամանակներից զբաղվել են հողագործությամբ և ընդերքի հարստությունների (պղինձ, անագ, երկաթ, ոսկի, կերակրաաղ) օգտագործմամբ։

Հայ ժողովուրդը ձևավորվել է այստեղ այն ժամանակ (XII—VII դարերին մ. թ. ա.), երբ հողագործությունը մարդու հիմնական զբաղմունքներից մեկն էր և գյուղերն էլ իբրև հիմնական բնակավայրեր արդեն գոյություն ունեին։ Մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբում արդեն առաջ են գալիս քաղաքները՝ նշանավորելով աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը։

Սոցիալ-տնտեսական լուրջ փոփոխություններ տեղի ունեցան երկրի կյանքում մեր թվարկության առաջին դարերում։ Սկսեցին տիրապետող դառնալ ֆեոդալական արտադրահարաբերությունները։ Այս ժամանակաշրջանին է վերաբերում պատմական, նույնիսկ ժամանակակից աշխարհագրության համար առանձնակի նշանակություն ունեցող այնպիսի մի երևույթ, ինչպիսին երկրի ներքին տերիտորիալ բաժանման ձևավորումն էր։ Հատկանշական է, որ այդ բաժանումը, Հայաստանի տարբեր շրջանների պատմական զարգացման տարբերիչ գծերը արտահայտելուց բացի, անմիջականորեն հենվում էր նրանց բնական, հատկապես լեռնագրական ու ջրագրական առանձնահատկությունների վրա։

Ինչպես վկայում է «Աշխարհացույցը», Մեծ Հայքը բաժանվում էր 15 աշխարհի և 201 գավառի[1]։

Հայաստանի արտադրողական ուժերը զարգացման նոր փուլ են թևակոխում IX—XI դարերում։ Փայտե արորին փոխարինելու է գալիս երկաթե գութանը, տարածում է ստանում հողի մշակման եռադաշտային սիստեմը, ընդարձակվում են ցանքատարածությունները, կառուցվում են նոր ջրանցքներ։ Աճում է գյուղատնտեսական արտադրանքը, որի մի մասը դուրս է բերվում արտաքին շուկա։ Զարգանում են արհեստները, որոնց թիվը անցնում է 50-ից, ինչպես նաև ներքին և արտաքին առևտուրը։ Նրանց խոշոր կենտրոնների են վերածվում Անի, Արծն, Կարս, Դվին, Կարին, Վան, Նախճավան, Մանազկերտ, Արճեշ քաղաքները։ Ավելի է ընդլայնվում լեռնային գործը։ Կարևոր նշանակություն են ձեռք բերում այնպիսի օգտակար հանածոների արդյունահանումն ու վերամշակումը, ինչպիսիք են պղինձը (Սյունիք, Տաշիր-Զորագետ, Աղձնիք), երկաթը (Տարոն, Վասպուրական, Կարին), արճիճը (Սյունիք, Վասպուրական), անագը (Վասպուրական), արծաթը, ոսկին, մկնդեղը[2]։

Այդ ժամանակներում Հայաստանը կրկին դառնում է միջազգային առևտրի կարևոր հանգույց։ Նա տնտեսական կապեր է հաստատում սևծովյան ու միջերկրածովյան նավահանգիստների, Կիևյան Ռուսիայի, Հնդկաստանի, Չինաստանի հետ[3]։

Նրան հաջորդող դարերը ողբերգական եղան Հայաստանի համար։ Թուրք-սելջուկների, թաթար-մոնղոլների, թուրք-օսմանների, պարսիկների բազմիցս կրկնվող ասպատակությունները ոչ միայն արգելակեցին Հայաստանի հետագա առաջընթացը, այլև ետ շպրտեցին նրան իր գրաված սոցիալ-տնտեսական դիրքերից։ Խորը անկում ապրեցին երկրի արտադրողական ուժերը։ Միաժամանակ հսկայական փոփոխություն կրեց տեղի բնակչության էթնիկական կազմը՝ Միջագետքից հարավային Հայաստան թափանցեցին քրդերը, հարավ-արևմտյան շրջաններում թուրք-սելջուկների ստվար զանգվածներ հայտնվեցին, արևելքում բնակություն հաստատեցին թաթարները։

---

1 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963։

2 Ֆ. Խ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1966։

3 Տե՛ս **Я. А. Манандян.** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Изд-во Ереванского университета, Ереван, 1954.

Երկրի վիճակը ավելի վատթարացավ, երբ պատմության ասպարեզ իջան օսմանյան Թուրքիան և Սեֆևվիդյան Իրանը։ Նրանք նոր ուժով ձեռնամուխ եղան նվաճող էթնիկական տարրերի մեջ հայ բնակչության բռնի ձուլման և հայկական հողերը եկվորներով բնակեցնելու քաղաքականության իրականացմանը։ 1639 թվականին ավարտվեց Հայաստանի բաժանումը Թուրքիայի և Իրանի միջև, որոնց պետական սահմանը անցնում էր Ախուրյան գետով, Հայկական Պարով և Վասպուրականի լեռներով։ Արևելյան Հայաստանը բաժանվեց Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և այլ խանությունների միջև, Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին փաշայություններ, որոնք ավելի ուշ վերափոխվեցին վիլայեթների (Վանի, Բիթլիսի, Բայազետի, Էրզրումի, Կարսի և այլն)։

Հայաստանի և հայ ժողովրդի համար պատմական նոր ժամանակաշրջան սկսվեց 19-րդ դարում, երբ Արևելյան Հայաստանի մեծ մասը անցավ Ռուսաստանին։ Պատմական այս ակտը հայ ժողովրդի կյանքում ունեցավ առաջադիմական նշանակություն։

Արևելյան Հայաստանում Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների սահմաններում կազմակերպվեց Հայկական մարզը, որը հետագայում, Կովկասյան փոխարքայության ստեղծման կապակցությամբ, վերակազմվեց Երևանյան նահանգի՝ Ալեքսանդրապոլի, Երևանի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Նախիջևանի և Օրդուբադի գավառներով[1]։

Տասնիններորդ դարի երկրորդ կեսին որոշ պայմաններ ստեղծվեցին Արևելյան Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման, կապիտալիստական տնտեսության անցնելու համար։ Դա վերաբերում է հատկապես գյուղացիական ռեֆորմին (1870 թ.) հաջորդող տարիներին։ Սակայն անցումը կապիտալիստական տնտեսաձևին այստեղ տեղի էր ունենում ավելի դանդաղ, քան կենտրոնական Ռուսաստանում և Անդրկովկասի որոշ այլ շրջաններում։

Կապիտալիստական զարգացման ոլորտի մեջ ավելի վաղ ներգրավվեց գյուղատնտեսությունը։

Նոր տեղաշարժեր կատարվեցին արտադրողական ուժերի տեղաբաշխ-

---

1 Հետագայում Արևելյան Հայաստանի վարչա-տերիտորիալ բաժանման կառուցվածքը բազմիցս ենթարկվում է փոփոխությունների (տե՛ս Օհանյան Ա. Պ., Վարչա-տերիտորիալ բաժանումները նախասովետական Հայաստանում։ Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 51, Աշխարհագրական գիտությունների սերիա, պրակ 2, Երևան, 1955)։

ման մեջ։ Ավելի խորացավ աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանումը, զարգացավ առանձին շրջանների արտադրական մասնագիտացումը։ Այս բոլորը հանգեցրին միջշրջանային տնտեսական կապերի աշխուժացմանը։ Արաքս գետի ամբողջ հովիտը Արևելյան Հայաստանի սահմաններում դարձավ բամբակի, խաղողի մշակության, այգեգործության հիմնական շրջանը։

Խաղողագործությամբ ու այգեգործությամբ զբաղվում էին նաև Զանգեզուրի, Արփայի ավազանի և Հայաստանի հյուսիս-արևելքի հովտային շրջաններում։ Այդ ճյուղերի տարածման վերին սահմանը չէր անցնում 1200—1300 մ-ից։ Նախահեղափոխական վերջին տարիներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի $^2/_3$-ը բաժին էր ընկնում բուսաբուծությանը, իսկ $^1/_3$-ը՝ անասնապահությանը։ Նախալեռնային ու լեռնային շրջանների գյուղատնտեսության մեջ հիմնական տեղը գրավում էին հացահատիկային տնտեսությունն ու անասնաբուծությունը։ Այս պատճառով էլ միջշրջանային առևտուրն ու ապրանքափոխանակությունը կատարվում էին հիմնականում լեռնային ու ցածրավայրային, հովտային շրջանների միջև։

Կապիտալիզմի զարգացման հետ մեկտեղ ծնունդ առավ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը, որը Հայաստանում հիմնվեց ընդերքի հարստությունների և գյուղատնտեսական հումքի օգտագործման վրա։ Հատկապես արագ թափով սկսեց զարգանալ պղնձի հանույթն ու ձուլումը, որը երկար ընդմիջումից հետո վերականգնվել էր XVIII դարի երկրորդ կեսին (1763 թ. Ախթալայի արծաթ-արճճային և 1770 թ. Ալավերդու պղնձի հանքերը)։ Արևելյան Հայաստանում 1846—1867 թթ. մեկը մյուսի հետևից հիմնվեցին 11 պղնձաձուլարաններ (7-ը Զանգեզուրում), որոնց մեծ մասը, սակայն, իր գոյությունը կարողացավ պահպանել ընդամենը 2-ից մինչև 10 տարի։

XX դարի սկզբին արդեն Արևելյան Հայաստանը դարձավ ամբողջ Ռուսաստանի պղնձի արտադրության ամենակարևոր շրջաններից մեկը, որը տալիս էր Ռուսաստանի պղնձի 15—28 %-ը և Անդրկովկասի պղնձի մինչև 75 %-ը։ Նոր քայլ կատարվեց ամբողջ ճյուղի հետագա համակենտրոնացման բնագավառում։ Այն դեպքում, երբ 1891—1913 թթ. պղնձի արտադրությունը աճեց 13 անգամ, պղնձաձուլարանների թիվը կրճատվեց $^1/_3$-ով՝ 9-ից հասնելով 6-ի։

Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման (1899 թ.) և փայտանյութից քարածխին անցնելու կապակցությամբ պղնձի արտադրությունը ավելի արագ թափով աճեց Ալավերդու խմբի գործարաններում։ Առաջին համաշխարհային

պատերազմի նախօրյակին այդ խմբում գործում էին չորս ձուլարաններ («Մանես», Ալավերդի, Շամլուղ, Սիսիմադան), որոնք տալիս էին Հայաստանում արտադրվող պղնձի $^2/_3$-ը։ Զանգեզուրի երկու գործարանների (Սյունիքի, Ուգուրչայի) բաժինը $^1/_3$-ից չէր անցնում։ «Մանես»-ում 1912 թ. կազմակերպվեց տեղի, ինչպես և Զանգեզուրի գործարաններից ստացվող սև պղնձի էլեկտրազտումը, իսկ 1916 թ. սկսվեց ոսկու և արծաթի կորզումը պղնձի ռաֆինացման հետևանքով ստացվող շլամից (մինչև այդ նույն շլամը առաքվում էր Գերմանիա, իսկ պատերազմի տարիներին՝ Անգլիա)։

Նախահեղափոխական Հայաստանի արդյունաբերության երկրորդ կարևոր ճյուղը սպիրտային խմիչքների արտադրությունն էր։ Անցած դարի 80-ական թվականների վերջին արդեն սպիրտի դրման, ինչպես նաև կոնյակի սպիրտի ու կոնյակի մի քանի գործարաններ հիմնադրվեցին։ Նրանց արտադրության խոշորագույն կենտրոն դարձավ Երևանը։ Ավելի ուշ գինու-կոնյակի նոր կատարելագործված գործարաններ կառուցվեցին Արտաշատում (նախկին Ներքին Գամարլու) և Աշտարակում։

Աղյուսակ 3

Խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքը 1913 թ. (%-ներով)[1]

Արդյունաբերության ճյուղերը	
Պղնձաձուլություն (պղնձաքարի հանույթի հետ մեկտեղ)	58,6
Գինու-կոնյակի	21,2
Կաշվի-կոշիկի	5,8
Մրգի պահածոների	4,0
Մետաղամշակման	2,6
Այլ ճյուղեր (բրնձամաքրման, դարեջրի, ձկան որս, անտառաշահագործում)	7,8
Ընդամենը	100,0

Նախահեղափոխական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ նշված երկու ճյուղերի՝ պղնձաձուլության և գինու-կոնյակի արտադրության տեսակարար կշիռը կազմում էր մոտավորապես 80 %, որը երևում է աղյուսակ 6-ից։

Մետաղամշակման, կաշեգործական, պահածոների, օղեթորման, բրընձամաքրման ձեռնարկություններն ու բամբակազտիչ կետերը կենտրոնացված էին Երևանում ու Արարատյան դաշտում։ Բացառություն էր կազմում պահածոների մեկ ոչ մեծ գործարանը, որը գտնվում էր Մեղրիում։ Հայաստա-

1 Աղյուսակը կազմված է ըստ Социалистическое строительство Армянской ССР (1920—1940) վիճակագրական ժողովածուի և «Հայկական ՍՍՌատլասի»։

նի այլ վայրերում զարգացող արդյունաբերության ճյուղերից հարկ է նշել շվեյցարական պանրագործությունը, որի կարևոր շրջան էր դարձել Լոռին, ինչպես նաև գորգագործությունը։ Վերջինիս բազմաթիվ տնայնագործական արհեստանոցներ ցրված էին ոչխարաբուծության զարգացման համար բարենպաստ պայմաններ ունեցող լեռնային շրջաններում։

Խոշոր մեքենայական արտադրության զարգացումը պետք է, բնականաբար, հանգեցներ էներգետիկական տնտեսության երևան գալուն։ Հատկանշական է, որ սկզբից ևեթ Հայաստանի էլեկտրաէներգետիկայի հիմքը կազմեցին հիդրոէլեկտրակայանները. 1913 թ. ընդամենը 13 էլեկտրակայաններից 9-ը աշխատում էին ջրով, 3,1 հազ. կվտ ընդհանուր հզորությունից նրանց բաժին էր ընկնում 2,1 հազ. կվտ։ Ջրոս էլեկտրակայանների համար իբրև վառելիք օգտագործվում էր նավթը[1]։

Արտադրվող էլեկտրաէներգիայի առանց այն էլ չնչին քանակության (մոտ 5 մլն. կվտ–ժ) հիմնական մասը ծախսվում էր Ալավերդու, Երևանի և Ղափանի շրջանի 3—4 գործարաններում։ Առանց բացառության բոլոր էլեկտրակայաններն էլ աշխատում էին իրարից մեկուսացված և էլեկտրաէներգիա էին մատակարարում այն արդյունաբերական ձեռնարկություններին, որոնց կից կառուցված էին, և մի քանի բնակելի թաղամասերի։ Երկրի ամբողջ վառելիքա-էներգետիկական տնտեսությունը հիմնվում էր անտառանյութի և աթարի վրա, որը պատրաստվելով գոմաղբից, ծայրաստիճան սահմանափակում էր վերջինիս որպես օրգանական պարարտանյութի օգտագործումը գյուղատնտեսության մեջ։

Նախասովետական Հայաստանը արդյունաբերական զարգացման ընդհանուր մակարդակի տեսակետից հանդիսանում էր ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը։ Բնակչության 90 %-ը զբաղված էր գյուղատնտեսության մեջ։ Խոշոր արդյունաբերության բանվորների թիվը չէր անցնում 5 հազարից, ըստ որում 4,4 հազարը աշխատում էին պղնձարդյունաբերության մեջ։ Արևելյան Հայաստանի բնակչության մեկ շնչին 3 անգամ ավելի պակաս արդյունաբերական արտադրանք էր ընկնում, քան Ռուսաստանի միջին ցուցանիշն էր։

Հայաստանի տնտեսության ընդհանուր հետամնացության արտահայտություն էր նաև արդյունաբերության այն ժամանակվա տեղաբաշխումը։ Ամբողջ խոշոր արդյունաբերությունը բաշխված էր ընդամենը 8 բնակավայրերի

---

[1] *Տե՛ս* Геворкян Г. С., Электрификация Армении в досоветский период, Ереван, 1956, стр. 8.

մեջ։ Դրանք էին՝ Երևանը, Մանեսը (Ալավերդի), Դիլիջանը, Ներքին Ղամարլուն (Արտաշատ), Ալեքսանդրապոլը (Լենինական), Ղափանը (շրջապատի հանքերի ու պղնձաձուլարանների հետ միասին), Մեղրին և Նոր Բայազետը (Կամո)։ Ըստ որում, Ալավերդու, Երևանի և Ղափանի խմբի ձեռնարկությունները տալիս էին խոշոր արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքի ավելի քան 93 %-ը։

Արևելյան Հայաստանի արտադրողական ուժերի ու նրանց աշխարհագրության մեջ խորը, արմատական փոփոխություններ մտցրեց առաջին համաշխարհային պատերազմը։

Թուրքական զավթիչների կողմից Արևելյան Հայաստանի զգալի մասի կրկնակի օկուպացումը (1918 և 1920 թթ.) և «Դաշնակցություն» կուսակցության ռեակցիոն, հակաժողովրդական քաղաքականությունը երկիրը հասցրին տնտեսական լիակատար փլուզման։ Սպառնալից չափերով կրճատվեցին ցանքատարածությունները ու անասունների գլխաքանակը, արդյունաբերական ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը փակվեց։ Ալավերդու խմբի գործարանները, որոնք մնացել էին այսպես կոչված «չեզոք գոտում», արտադրանք չէին տալիս, դադարել էր պղնձի արտադրությունը նաև Զանգեզուրում։ Հանքերը ավերվել էին ու լցվել ջրով, քայքայվել էր ամբողջ էներգետիկական տնտեսությունը։

Ստեղծված օրհասական վիճակից միակ փրկությունը սովետական իշխանության հաստատումն էր (1920 թ. նոյեմբերի 29)։ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության հիմնադրումը նշանավորեց հայ ժողովրդի վերածննդի սկիզբը։ Նորաստեղծ հանրապետության համար վիթխարի նշանակություն ունեցավ Սովետական մյուս հանրապետությունների հետ նրա միավորումը մեկ Միության մեջ։ Այս քայլը Սովետական Հայաստանի միջազգային դրությունը կայունացրեց և ամրապնդեց, ինչպես նաև նոր հնարավորություն ընձեռեց։ Այսպիսով, Սովետական Հայաստանի արտադրողական ուժերի ըստ ամենայնի զարգացման, նրա բնական հարստությունների ու աշխատանքային ռեսուրսների պլանաչափ օգտագործման համար ստեղծվեցին ներքին և արտաքին բարենպաստ պայմաններ։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում իրականացված սոցիալ-տնտեսական միջոցառումները անճանաչելիորեն վերափոխեցին երկիրը, վիթխարի տեղաշարժեր երևան բերելով նաև արտադրության աշխարհագրության մեջ։ Վերջինիս վերաբերող հիմնական հարցերի, մասնավորա-

պես արտադրության ճյուղերի տեղաբաշխման ու տնտեսության տերիտորիալ կառուցվածքի քննարկումը թողնելով հաջորդ բաժիններին, այստեղ անդրադառնանք միայն մի քանի օժանդակ հարցերի։

Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարության առաջին միջոցառումների թվում, որոնք նոր հասարակարգի սոցիալ-տնտեսական ու իրավական հիմքերը դնելով հանդերձ, արտադրողական ուժերի ապագա աշխարհագրության բնորոշ կողմերն էին պայմանավորում, առանձնահատուկ նշանակություն ունեն 1920 թ. դեկտեմբեր— 1921 թ. հունվար ամիսներին ընդունված մի շարք դեկրետները։ Դրանցից առաջինը 1920 թ. դեկտեմբերի 28-ի դեկրետն էր «Հողերի պետականացման» և նրանք պետական հողային ֆոնդին հանձնելու մասին։ 1921 թ. հունվարի 10-ի դեկրետով ազգայնացվեցին անտառները, սրան հաջորդեց հանրապետության տերիտորիայի ընդերքի (1921 թ. հունվարի 11) և ջրերի ու ջրատեխնիկական կառուցումների (1921 թ. հունվարի 31) ազգայնացումը[1]։ Սրանք սոցիալ-տնտեսական միջոցառումներ էին, որոնք արտադրողական ուժերը զարգացնելու, տերիտորիայի հարստություններն նպատակահարմար օգտագործելու և բնական ռեսուրսները արտադրության ոլորտի մեջ ներգրավելու համար ամբողջովին նոր որակի հասարակական պայմաններ էին ստեղծում։

Հայկական ՍՍՀ-ի արտադրության տերիտորիալ կառուցվածքի, նրա մեջ կատարված տեղաշարժերի փաստական կողմը ճանաչելու տեսակետից էական նշանակություն ունեն հանրապետության ներքին, վարչա-տերիտորիալ բաժանման փոփոխությունները։

Նախ նշենք, որ Սովետական Հայաստանի տերիտորիան ձևավորվեց Ռուսական կայսրության տարբեր նահանգների առանձին մասերից, ուստի և խախտվեց ցարիզմի հաստատած վարչա-տերիտորիալ բաժանումը։ Հայկական ՍՍՀ-ի մեջ մտան նախկին Երևանի նահանգը՝ առանց Նախիջևանի ու Սուրմալուի գավառների և Շարուր-Դարալագյազի գավառի մի մասի, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան հատվածը (Զանգեզուր), Թիֆլիսի նահանգի հարավային մասը և Կարսի մարզի ծայր հյուսիս-արևելյան մի փոքրիկ կտորը (մոտավորապես ներկայիս Ամասիայի շրջանը)։

Ջանդրագառնալով նախասովետական ներքին բաժանումների պատմությանը, նշենք միայն, որ նորաստեղծ սովետական իշխանության առաջին

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՀ օրենքների, Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՀ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920—1938, Հայ-պետհրատ, Երևան, 1963։

քայլերից մեկը եղավ հին վարչա-տերիտորիալ բաժանման վերանայումը։ 1920 թ. դեկտեմբերի 26-ի հրամանով վերացվեց «երկրի բաժանումը նահանգների և շրջանների»[1], որն ընդունվել էր դաշնակցական կառավարության կողմից՝ ցարական նահանգ-գավառ-ոստիկանական տեղամաս-գյուղ սիստեմի փոխարեն, «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վարչական վերաբաժանումների մասին» ԺողկոմԽորհի 1921 թ. հուլիսի 20-ի դեկրետով[2] հաստատվեց գավառ-գավառամաս (գավառակ)-գյուղ եռաստիճան սիստեմը։ Հանրապետությունը բաժանվեց 8 գավառների և 33 գավառամասերի։ Նույն թվի օգոստոսի 31-ի որոշմամբ[3], ի լրումն նշված դեկրետի, կազմվեց ևս 1 գավառ (Զանգեզուրի)՝ 6 գավառակներով։ Այս բաժանումը, որոշ փոփոխություններով հանդերձ, պահպանվեց մինչև 1929 թվականը։ Այդ պահին Հայկական ՍՍՀ-ում կար 9 գավառ և 38 գավառակ (Մեղրու գավառը ներքին բաժանում չուներ)։

Հանրապետության Կենտգործկոմի նախագահության 1929 թ. հուլիսի 26-ի «Հայաստանի ՍՀՆ տերիտորիայի շրջանացման մասին» որոշման համաձայն[4] հանրապետությունը բաժանվեց 5 գավառի (օկրուգի), 31 շրջանի և 2 քաղաքի։ Մեկ տարի անց Կենտգործկոմի և ԺողկոմԽորհի 1930 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ գավառները վերացվեցին։ Վարչա-տերիտորիալ բաժանման եռաստիճան սիստեմի փոխարեն հաստատվեց երկաստիճան սիստեմ, որը և գործում է մինչև այժմ։ Երկու սիստեմների կարևոր, սկզբունքային տարբերություններից մեկն էլ այն էր, որ շրջանների առանձնացման հիմքում դրվեց տնտեսական հատկանիշը, միաժամանակ հաշվի առնելով տերիտորիայի բնական պայմանները և բնակչության ազգային առանձնահատկությունները։ Սա հսկայական դեր խաղաց սովետական իշխանությունը տեղերում ամրապնդելու գործում և հեշտացրեց գյուղատնտեսության և կուլտուրա-լուսավորական աշխատանքների ղեկավարումը կուսակցական ու սովետական օրգանների կողմից։

Երկրի քաղաքական ու տնտեսական ղեկավարման այդ ռեֆորմին հաջորդող տարիների փորձը լիովին ապացուցեց նշված սիստեմի կենսունակությունը։ Հետագա փոփոխությունները վերաբերվել են ոչ թե սիստեմի էությանը, այլ շրջանների սահմաններին ու նրանց ընդհանուր թվին (1952 թ.

---

1 Տե՛ս նույնը, էջ 23։

2 Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների ու որոշումների հավաքածու, պրակ 2, 1921 թ., էջ 83—84։

3 Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների ու որոշումների հավաքածու, 1921 թ., № 5, էջ 39—40։

4 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929 թ. օգոստոսի 6, № 177։

ստեղծված 3 վարչական օկրուգները չարդարացնելով իրենց, ընդամենը 1 տարի գոյատևեցին)։

Հայկական ՍՍՀ-ն Սովետական Միության այն հանրապետությունների թվին է պատկանում, որոնք մարզային բաժանում չունեն։ Նրա տերիտորիան վարչական առումով տրոհված է (առ 1-ը հուլիսի 1967 թ.) 33 գյուղական շրջանների, 13 հանրապետական ենթակայության քաղաքների և 6 քաղաքային շրջանների (Երևանում)։

Ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում վարչա-տերիտորիալ բաժանման միավորների սահմաններում իրականացվում է ոչ միայն վարչա-քաղաքական, այլև տնտեսական ղեկավարությունը։ Սրանից էլ բխում է այն սկզբունքային դրույթը, ըստ որի վարչա-տերիտորիալ բաժանումը դիտվում է սովետական հանրապետությունների տնտեսական շրջանացման բազմաստիճան սիստեմի բաղկացուցիչ մասը և դրանով էլ հենց կապվում է այնպիսի մի պրոբլեմի հետ, ինչպիսին արտադրողական ուժերի տերիտորիալ կառուցվածքի բարելավումն ու կատարելագործումն է։

Գլուխ երրորդ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Բնակչությունը որպես հիմնական արտադրողական ուժ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ է ոչ միայն արտադրության, այլև աշխարհագրական միջավայրի հետ. նա նյութական ու հոգևոր բարիքների արտադրողն է, միևնույն ժամանակ այդ բարիքների սպառողը։ Բնակչության աշխարհագրությունը, որն այժմ արդեն տնտեսական աշխարհագրության ինքնուրույն ճյուղերից մեկն է, ուսումնասիրում է բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցման ձևերը, նրա թվաքանակի ու կազմի փոփոխությունները, որոնք ձևավորվում են որոշակի տարածության մեջ ու ժամանակի ընթացքում։

Սովետական Հայաստանի բնակչության տնտեսա-աշխարհագրական բնութագրի ամբողջականությունը անհրաժեշտորեն կապվում է նրա ձևավորման մինչսովետական ժամանակաշրջանի հետ։

Այդ ժամանակաշրջանում (1828—1920 թթ.), որը հիմնականում համընկնում է Արևելյան Հայաստանի ցարական Ռուսաստանի կազմում լինելու

համեմատաբար խաղաղ տարիների հետ, նրա բնակչության մեջ տեղի են ունենում կարևոր տեղաշարժեր։

Հայ ժողովրդի արևելյան հատվածի համար վերջապես ստեղծվում են խաղաղ կյանքի ու անտեսական գործունեության համեմատաբար նպաստավոր պայմաններ, վերանում է հայերի ֆիզիկական բնաջնջման վտանգը։ Այս փոքրիկ տերիտորիան Արևմտյան Հայաստանի հայության համար դառնում է հայ գաղթականության գրեթե անընդհատ ներհոսքի մի վայր։ Միգրացիոն հոսանքները, որոնց հիմքում ընկած էին քաղաքական դրդապատճառները, առաջնակարգ դեր են խաղացել բնակչության աճման տեմպերում, եւ մղելով բնական աճի նշանակությունը։ Այդ հոսանքները մեծ կամ փոքր ալիքներով թափանցել են Արևելյան Հայաստան. նրանցից մեկը եկել է արևմուտքից, մյուսը՝ հյուսիսից։

Ավելի ուժեղ ու պարբերական բնույթ է կրել արևմտյան հոսանքը, որը Արևմտյան Հայաստանի բնակիչների համար թուրքական յաթաղանից ազատվելու և ապահով կյանք ունենալու վերջին միջոցն է եղել։ Սկսած 1828—30 թվականներից և մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ռուս-թուրքական յուրաքանչյուր պատերազմից հետո (1829 թ., 1853—56 թթ., 1877—78 թթ., 1914—18 թթ.), ինչպես նաև 1894—96 թթ. հայկական կոտորածների ու 1915—16 թթ. մեծ եղեռնի հետևանքով Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներից (Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Էրզրումի, Սվազի ու այլ վիլայեթներից) հայերը մասսայաբար ներգաղթել են Հայաստանի այն տերիտորիաները, որոնք գտնվում էին Ռուսական կայսրության սահմաններում[1]։

[1] Միայն 1828—29—30 թթ. Արևելյան Հայաստան են ներգաղթում 130—140 հազար հայեր, որոնց մեծ մասը վերաբնակվում է Սովետական Հայաստանի ժամանակակից տերիտորիայում։ Այդ նույն ժամանակ Թուրք բնակչության մի մասը Արարատյան դաշտից ու Սևանի ավազանից անցնում է Արաքսի աջ ափը։ Ներգաղթողների շուրջ 40 հազարը կազմում են պարսկահայերը, որոնք Թավրիզի, Մակուի, Մարագայի, Սալմաստի, Խոյի և այլ գավառներից գալով բնակություն են հաստատում գլխավորապես Ջանգեզուրի, Վայքի (Դարալագյազի), Արարատյան դաշտի շրջաններում, այդ թվում՝ Երևանում, ինչպես նաև Ծաղկաձորում ու Ապարանում։ Ապա 90—100 հազար հայեր, որոնք հեռանում են Արևմտյան Հայաստանի տերիտորիայից՝ Էրզրումից, Կարսից, Բայազետից, Արդահանից, Ալաշկերտից, Խնուսից ու այլ վայրերից, մեծ մասամբ տեղավորվում են Շիրակում, Լոռի-Փամբակում, Սևանի ավազանում, ինչպես նաև Ապարանի, Թալինի շրջաններում, Ծաղկաձորում։ (Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, Մասն երկրորդ, Երևան, 1926։ Ստ. Լիսիցյան, ՀԱՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, դեմոգրաֆիայով, Երևան, 1940։ Հ. Գ. Գրգեարյան, Արևելյան Հայաստանի բնակչության աշխարհագրությունը Ռուսաստանին նրա միանալու ժամանակ, Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», Աշխարհագրական գիտությունների սերիա, հատոր 58, պրակ 3, 1956)։

Երկրորդ՝ ավելի թույլ միգրացիոն հոսանքը, սկսած անցյալ դարի 40-ական թվականներից, գալիս էր հյուսիսից և կազմակերպված էր ցարական կառավարության կողմից։ Ռուսաստանի խիտ բնակեցված հողագործական շրջաններից (Տամբովի, Տուլայի, Սարատովի, Վորոնեժի և այլ մարզերից) մի քանի տասնյակ տարիների ընթացքում ավելի քան 11 հազար ռուս աղանդավորներ (դուխոբորներ, մոլոկաններ և Ռուսաստանում տիրապետող կրոնի կողմից հալածվող այլ կրոնական աղանդների ներկայացուցիչներ) տեղափոխվում են Հայաստան։ Սրանց մեծ մասը կարևոր ճանապարհների ու լեռնանցքների հանգուցային շրջաններում հիմնադրում են երկու տասնյակից ավելի գյուղական բնակավայրեր։

Մինչսովետական շրջանի 89 տարիների ընթացքում (1831—1920 թթ.) Արևելյան Հայաստանի բնակչությունը ավելանում է 4,8 անգամ։ Եթե չլիներին 1914—1920 թթ. մահաբեր տարիները, երբ համաշխարհային պատերազմի, թուրքական ջարդերի ու արշավանքների, քաղաքացիական կռիվների, տնտեսական կազմալուծման, սովի, համաճարակների հետևանքով բնակչության 35 %-ից ավելին ոչնչացավ, ապա այդ աճը շատ ավելի բարձր կլիներ։

Նախասովետական Հայաստանի բնակչությունը 1914 թ. հասնում է առավելագույն թվի՝ 1014255 մարդու (1831 թ. համեմատությամբ աճում է 6,3 անգամ)։

XIX դարի պարբերական միգրացիոն հոսանքները զգալի փոփոխություններ են առաջացնում երկրի բնակչության ազգային կազմի մեջ և ուժեղացնում ազգագրական տարբերությունները։ Հայերը վերականգնում են բնակչության հիմնական ու գերակշռող տարր լինելու փաստը և պահպանում այդ, որոշ տատանումներով, ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը։

Ազգագրական բնույթով բավական խայտաբղետ են դառնում հայերը։ Արևելյան Հայաստանի արմատական հայ բնակիչները գերակշռում են հյուսիսային, հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջաններում, այսինքն՝ Լոռիում, Իջևան-Շամշադինում և Ջանգեզուրում։ Մնացած բոլոր շրջաններում բավական զգալի են Արևմտյան Հայաստանի ամենատարբեր մասերից եկած հայ ընտանիքները, իրենց հայրենի հողից բերած հմտություններով, կենցաղով, ավանդություններով ու բարքառով։

Քաղաքների ու քաղաքային բնակչության թույլ զարգացումը բնորոշ է եղել Արևելյան Հայաստանի համար, հատկապես 19-րդ դարի առաջին կեսին։ Այդ ժամանակ միակ քաղաքային բնակավայրը Երևանն էր (մոտ 12 հազար բնակիչ)։ Նույն դարի երկրորդ կեսին Անդրկովկասում կապիտալիզմի զար-

Տարեթիվը	Ընդամենը	Բնակչություն՝ ըստ ազգությունների					
		հայեր		ադրբեջանական խումբ		այլ ազգություններ	
		ընդամենը	%	ընդամենը	%	ընդամենը	%
1831	161747	110671	68,3	50274	31,0	802	0,7
1873	496140	329266	66,3	132125	26,6	34749	7,1
1886	635833	430865	68,0	160963	25,4	44005	6,6
1897	797853	510855	64,0	240323	30,0	46675	6,0
1914	1014255	—	—	—	—	—	—
1920	780000	—	—	—	—	—	—

դացման հետևանքով նախադրյալներ են ստեղծվում քաղաքների ու քաղաքային բնակչության աճի համար։ Թեպետ այդ աճը տեղի էր ունենում ավելի դանդաղ, քան հարևան Ադրբեջանում և Վրաստանում, այնուամենայնիվ 1920 թ. միջին ու մանր մեծության քաղաքների թիվը հասնում է չորսի (Ալեքսանդրապոլ (Լենինական), Երևան, Նոր Բայազետ (Կամո), Գորիս)։ Սրանց համար ավելի բնորոշ էին արհեստագործական և առևտրական ֆունկցիաները, քան արդյունաբերական, իսկ քաղաքացիների մի զգալի մասի հիմնական զբաղմունքը մնում էր գյուղատնտեսությունը։ 1831 թվականից մինչև 1886 թվականը քաղաքային բնակչության տեսակարար կշիռը չի փոխվում (կազմելով մոտ 7,5 %), միայն 19-րդ դարի վերջին մեկ և կես տասնամյակում ու 20-րդ դարի սկզբում քաղաքային բնակչությունը զգալիորեն աճում է։ 1914 թ. քաղաքներում ապրում էր բնակչության գրեթե 10 %-ը, նրա բացարձակ թիվը ավելացել էր 8 անգամ, մինչդեռ ամբողջ բնակչությունը աճել էր միայն 4,8 անգամ։

Բնակչության ճնշող մեծամասնությունը (1920 թ.՝ 85 %) ապրում էր գյուղերում։ 1831-ից մինչև 1914 թվականը գյուղական բնակչությունը աճեց ավելի քան 6 անգամ։ Այդ նույն ժամանակամիջոցում գյուղական բնակչության աճի հետևանքով (հատկապես ներգաղթի շնորհիվ) ոչ միայն ավելի

բնակչությունը 1831—1920 թթ.[1]

Թ ա ն Թ ի վ ը				Բնակչության աճը 1831 թ. համեմատությամբ (%-ներով)		Բնակչության տարեկան միջին աճի տեմպերը (%-ներով)	Բնակչության խտությունը 1 կմ²-ում (մարդ)
ըստ բնակավայրերի							
քաղաքային		գյուղական		ամբողջ բնակչ.	քաղաքային բնակչ.		
բնդամենը	%	բնդամենը	%				
11920	7,4	149827	92,6	—	—	—	5,4
37277	7,5	458863	92,5	307	312	2,6	16,7
46456	7,3	589377	92,7	393	388	1,9	21,4
69558	8,7	728295	91,3	493	585	2,1	26,8
95320	9,5	918935	90,5	627	800	1,4	34,1
112002	14,4	667998	85,6	482	940	—2,1	26,2

մարդաշատ են դառնում գոյություն ունեցող գյուղական բնակավայրերը, որոնք դեռևս բավական նոսր էին տարաբաշխված ամբողջ Հայաստանում, այլև հին գյուղերի կողքին ստեղծվում են նորերը, հերկվում խոպան հողերը, անտառապատ տարածությունների հաշվին ավելանում են գյուղատնտեսական հանդակները (վարելահողերն ու արոտավայրերը)։ Այսպիսով, ընդլայնվում են յուրացված տերիտորիաները և աճում է բնակչության խտությունը։ Հատկապես բարձր էր գյուղական բնակչության խտությունը Արարատյան դաշտում, որը 20-րդ դարի սկզբին դարձել էր ապրանքային ու աշխատատար կուլտուրաների մշակման հիմնական վայրը։

Այս ժամանակաշրջանում հիմնականում ձևավորվում է գյուղական բնակավայրերի ժամանակակից ցանցը։ Գյուղական բնակավայրերի թիվը հազարից անցնում էր, որոնցից 1919 թ. դատարկ էին 241-ը, բացի այդ, ավերակ վիճակում էին 63 գյուղ[2]։ Գերակշռում էին մանր գյուղերը։ Մարդաշատ գյուղերը համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեին Սևանի ավազանում, Արթիկի, Ապարանի շրջաններում։

[1] *Աղյուսակը կազմված է Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931 թթ.)» աշխատության հիման վրա (Երևան, 1932)։*

[2] *Հաշվումները կատարված են Զ. Կորկոտյանի հիշատակված աշխատության տվյալների հիման վրա։*

Հայկական ՍՍՀ բնակչության թվի և կազմի փոփոխությունները 1913—1966 թթ.[1]

Տարեթվերը	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում		Բնակչության կազմը ըստ բնակավայրերի (տոկոսներով)		Բնակչության թիվը 1913 թ. և 1920 թ. համեմատությամբ (տոկոսներով)					
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	ամբողջ բնակչությունը		քաղաքային բնակչությունը		գյուղական բնակչությունը	
						1913	1920	1913	1920	1913	1920
1913	1000100	104000	896100	10	90	—	—	—	—	—	—
1920	780000	112002	667998	14	86	78,2	—	107,7	—	74,8	—
1926	881290	167098	714192	19	81	88,1	112,7	160,7	150,1	79,7	106,8
1939	1282338	366447	915891	29	71	128,2	164,0	352,3	327,2	102,2	136,7
1959	1763048	881844	881204	50	50	176,3	225,4	847,9	787,3	98,3	131,5
966	2194519	1210329	984190	55	45	219,4	356,0	1161,0	1080,0	109,1	147,0

Նախասովետական բնակչության համար բնորոշ էր արտագնացությունը, որը պայմանավորված էր թաքնված գերբնակչությամբ։ Հողազուրկ գյուղացիության մի մասը, տեղում արդյունաբերության ու քաղաքների թույլ զարգացման հետևանքով, ապրուստի միջոցներ փնտրելով, դիմում էր արտագնացության դեպի Բաքու, Բաթում, Հյուսիսային Կովկաս, Ռուսաստանի այլ վայրեր և արտասահմանյան երկրներ։ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին յուրաքանչյուր տարի արտագնացության դիմողների թիվը հավասար էր գյուղական արական սեռի աշխատունակ բնակչության տարեկան աճին։ Արտագնացներ էին տալիս Հայաստանի գրեթե 800 գյուղեր[2]։ Դաշնակների տիրապետության տարիներին (1918—1920 թթ.) բնակչության որոշ մասը (մոտ 100 հազար մարդ), փրկվելով երկրում տիրող քաոսից, սովից ու հիվանդություններից, անցնում է Հյուսիսային Կովկաս։ Սովետական կար-

1 *Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա.* Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР, М., 1963; Советская Армения за 40 лет. Статистический сборник, Ер., 1960; *Զ. Կորկոտյան, Հիշատակված աշխատությունը։*

2 *Հ. Ե. Թումանյան. Հայաստանի նախասովետական շրջանի ազգաբնակչությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1965, № 4, էջ 51։*

դերի հաստատման պահին Սովետական Հայաստանի ներկայիս տերիտորիայում հազիվ հաշվվում էր 780 հազար մարդ: Սա այն նվազագույն հիմքն էր, որից սկսեց սովետահայ բնակչության հետագա աճը:

Վերը բերված աղյուսակում (էջ 42—43) ամփոփված է Հայկական ՍՍՀ ժամանակակից տերիտորիայի բնակչության պատկերը 1831—1920 թթ.:

Սովետական տարիների ընթացքում Հանրապետության հասարակական և տնտեսական կյանքում սոցիալիստական մեծ փոփոխությունների հետևանքով հայ ազգը ձեռք բերեց նոր որակ, համախմբվեց ու վերափոխվեց սոցիալիստական ազգի, լայն թափով ծաղկեցին ժողովրդի նյութական ու հոգևոր ուժերը:

Սովետական ժամանակաշրջանի բնակչության բնորոշ գծերից մեկը նրա աճման արագ տեմպերն են:

1920—1966 թթ. Հանրապետության բնակչությունը 780 հազարից աճել է մինչև 2200 հազարի, կամ ավելացել է 2,8 անգամ: Նույն տարիներին ՍՍՀՄ բնակչությունն աճել է մոտ 1,7 անգամ, իսկ աշխարհինը՝ մոտ 1,8 անգամ: Եթե 1920 թ. Հայկական ՍՍՀ բնակչությունը կազմել է ՍՍՀՄ բնակչության 0,75 %-ը, ապա 1966 թ. (հունվարին)՝ 0,95%-ը: Վերջին տարիներին նրա տարեկան միջին աճը կազմում է մոտ 65 հազար մարդ: Անդրկովկասի մյուս հանրապետությունների համեմատությամբ ևս Հայկական ՍՍՀ բնակչությունը ավելի արագ է աճել[1], որի հետևանքով բարձրացել է նրա տեսակարար կշիռը նաև Անդրկովկասի բնակչության մեջ (1920—21 թթ. 15,4%-ի դիմաց 1965 թ.՝ 19%):

Բնակչության թվի արագ աճի աղբյուրներն են առաջին հերթին բնական աճը, ապա միգրացիոն գործոնը:

Վերջին 25 տարիներին միութենական հանրապետությունների բնական աճի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՀ բնակչության բնական աճը ոչ միայն բարձր է եղել նախասովետական շրջանի նույն ցուցանիշից[2], այլև 1940 թվականին հանդիսացել է ամենաբարձրը Սո-

---

[1] Այսպես, 1926 թ. և 1939 թ. մարդահամարների միջև բնակած ժամանակամիջոցում նրա բնակչությունը ավելացել է 45%-ով, Ադրբեջանական ՍՍՀ՝ 39%-ով, Վրացական ՍՍՀ՝ 32%-ով (ՍՍՀՄ՝ 15,9%-ով), իսկ 1939 թ. և 1959 թ. մարդահամարների միջև՝ համապատասխանաբար 37%, 15% և 14% (ՍՍՀՄ՝ 9,5%): Տե՛ս П. Г. Подьячих. «Население СССР», М., 1961.

[2] 1891—1914 թթ. յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով Հայաստանում ծնվում էր 35,0 մարդ, մահանում 21,6 մարդ, և բնական աճը կազմում էր 13,4 մարդ: Տե՛ս Լ. Դավթյան, Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Երևան, 1965, էջ 24:

վետական Միության մեջ, գերազանցելով վերջինիս միջին ցուցանիշը (13,2) երկու անգամ (27,4)։ Այնուհետև որոշ տատանումներից հետո 1964 թ. իջել է 24,8 (կրկին երկու անգամ գերազանցելով ՍՍՀՄ միջին ցուցանիշը) և գրավել 6-րդ տեղը Ադրբեջանից (32,5) և միջինասիական հանրապետություններից հետո (25,1—31,8)։

Բնական աճը կապված է բնակչության կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների հետ և անմիջական հետևանք է բնակչության վերարտադրության տարբեր գործոնների փոխազդեցության։ Այդպիսի գործոններից են բնակչության ծնելությունը և մահացությունը, որոնց չափերը իրենց հերթին պայմանավորված են զանազան պատճառների փոխադարձ բարդ կախվածությամբ։ Այդ պատճառների մի խումբը գործում է ծնելության բարձրացման, մյուսը, ընդհակառակը՝ իջեցման ուղղությամբ։ Հայկական ՍՍՀ-ին բնորոշ է ծնելության բարձր գործակից (1000 բնակչին ընկնող ծնվածների թիվը) ընդհանրապես և ավագ տարիքի կանանց խմբերում հատկապես։ Հանրապետության նշված գործակիցը եղել է Միության մեջ ամենաբարձրներից մեկը (օրինակ, 1926—30 թթ. կազմել է 56,1, որը համարվում է հազվադեպ երևույթ ոչ միայն Սովետական Միության, այլև համաշխարհային դեմոգրաֆիկ վիճակագրության պրակտիկայում)[1]։

Ծնելության նվազման ուղղությամբ Հայկական ՍՍՀ-ում գործող պատճառներից են բարձր և նվազ պտղաբեր տարիքի կանանց տեսակարար կշռի ավելացումը, կանանց ամուսնության միջին տարիքի բարձրացումը, քաղաքային բնակչության զգալի ավելացումը (որի ծնելության գործակիցը ավելի ցածր է գյուղականից), կանանց կրթական ցենզի և հասարակական արտադրության մեջ զբաղվածության բարձրացումը, ծնելության կարգավորման արհեստական միջոցների ավելի լայն կիրառումը և այլն։

Ինչ վերաբերում է մահացության գործոնին, ապա նրա սիստեմատիկ նվազման փաստը արտացոլում է այն հսկայական առաջընթացը, որ տեղի է ունեցել և շարունակվում է անընդհատ Հայկական ՍՍՀ-ում բնակչության առողջական վիճակի և բուժսպասարկման բարելավման ուղղությամբ, ինչպես նաև մի շարք հիվանդությունների ու համաճարակների իսպառ վերացման և հատկապես մանկական մահացությունների (որոնք մինչև վերջին տարիներս համեմատաբար բարձր էին) կրճատման ասպարեզներում։

Այսպիսով, հիշյալ պատճառների փոխազդեցության հետևանքով սովետական ժամանակաշրջանում նկատվում է Հայկական ՍՍՀ-ի բնակչության

---

[1] Լ. Դավթյան, նշված աշխատությունը, էջ 92, 84։

ծնելության բարձր մակարդակի որոշ կայունացում, որը, սակայն, վերջին տարիներս ցուցաբերում է նվազման ընդհանուր տենդենց: Միաժամանակ տեղի է ունենում մահացության սիստեմատիկ պակասում: Սակայն գերակշռող գործոնի (ծնելության) նվազման պատճառով բնական աճը նույնպես դանդաղ, բայց որոշակիորեն իջնում է (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Ծնելությունը, մահացությունը և բնական աճը ՍՍՀՄ-ում, Հայկական, Ադրբեջանական և Վրացական ՍՍՀ-ներում (բնակչության յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով)[1]

	1940 թ.			1950 թ.			1960 թ.			1964 թ.		
	ծնվածների թիվը	մահացությունների թիվը	բնական աճը	ծնվածների թիվը	մահացությունների թիվը	բնական աճը	ծնվածների թիվը	մահացությունների թիվը	բնական աճը	ծնվածների թիվը	մահացությունների թիվը	բնական աճը
ՍՍՀՄ	31,2	18,0	13,2	26,7	9,7	17,0	24,9	7,1	17,8	19,6	6,9	12.7
Հայկական ՍՍՀ . .	41,2	13,8	27,4	32,1	8,5	23,6	40,3	6,8	33,5	30,7	5,9	24,8
Ադրբեջանական ՍՍՀ	29,4	14,7	14,7	31,2	9,6	21,6	42,6	6,7	35,9	39,6	7,1	32,5
Վրացական ՍՍՀ .	27,4	8,8	18,6	23,5	7,6	15,9	24,7	6,5	18,2	21,9	6,7	15.2

Բնական աճից հետո միգրացիոն գործոնը (առանց միջհանրապետական մեխանիկական շարժման) սովետական ամբողջ ժամանակաշրջանի համար մնում է բնակչության թվի ավելացման կարևոր աղբյուրը, որը սնվում է երկու ակունքներից: Առաջինը դա պետական օրգանների կողմից կազմակերպված հայերի հայրենադարձությունն է դեպի Հայկական ՍՍՀ: Սովետական իշխանության տարիներին շուրջ 200 հազար հայեր աշխարհի ամենատարբեր երկրներից վերադարձել են իրենց հայրենիքը, այդ ներհոսքը շարունակվելու է նաև ապագայում:

Երկրորդ ակունքը բնակչության միջհանրապետական մեխանիկական շարժումն է: Հայկական ՍՍՀ-ն մյուս միութենական հանրապետությունների հետ բնակչության փոխանակության դրական հաշվեկշիռ ունի: Այդ մասին են վկայում թեպետ և սահմանափակ ժամանակամիջոցում կատարված հաշ-

[1] *Տե՛ս* Народное хозяйство Армянской ССР в 1965 г. Статистический ежегодник. Ер., 1965, стр. 312.

վարկները[1], բայց կասկածից դուրս է, որ դրական արդյունքը ընդհանուր առմամբ օրինաչափ է սովետական իշխանության անցած տարիների համար:

Բնակչության կառուցվածքային փոփոխությունները առաջին հերթին արտահայտվում են քաղաքային բնակչության բացարձակ արագ աճի մեջ: Հայկական ՍՍՀ-ն սովետական տարիներին Անդրկովկասի «ամենագյուղացիական» հանրապետությունից դարձել է քաղաքային բնակչության առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող հանրապետություն, իսկ միութենական հանրապետությունների մեջ այդ ցուցանիշով ետ է մնում միայն էստոնական, լատվիական ՍՍՀ-ից և ՌՍՖՍՀ-ից: Բնակչության կազմի այսպիսի շեշտակի որակական փոփոխություն կատարվել է արտադրողական ուժերի, հատկապես արդյունաբերական զարգացման բարձր մակարդակի պայմաններում, որը զուգորդվում էր նաև քաղաքային կյանքին հատուկ ոչ-արդյունաբերական ճյուղերի ու ֆունկցիաների ստեղծմամբ ու կենսարոնացմամբ քաղաքային բնակավայրերում և որպես դրանց հետևանք քաղաքների ու քաղաքային բնակչության սրընթաց աճով:

1913 թ. համեմատությամբ 1966 թ. Հայկական ՍՍՀ-ի քաղաքային բնակչությունը աճել է 11,6 անգամ, այսինքն՝ ավելի արագ, քան Սովետական Միության որևէ հանրապետությունում, մինչդեռ գյուղական բնակչությունը աճել է ընդամենը 9,1%-ով, կամ 88 հազարով: Հայաստանի քաղաքներում 1913 թ. ապրում էին 104 հազար մարդ կամ բնակչության 10%-ը, իսկ 1966թ.՝ 1210 հազար մարդ, կամ 55%-ը (տե՛ս աղյուսակ 8, էջ 44):

Հայկական ՍՍՀ քաղաքային բնակչության աճի աղբյուրներն են հանդիսացել. 1. Գյուղական բնակչության հոսքը դեպի քաղաք, որը կլանել է գյուղի գրեթե ամբողջ բնական աճը այդ տարիներին: Գյուղատնտեսության կոլեկտիվացման, մեքենայացման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով գյուղական վայրերում առաջացած աշխատանքային կոնտիգենտի զգալի մասը փոխադրվել է դեպի քաղաքները: 2. Նոր քաղաքային բնակավայրերի առաջացումը (ինչպես ի հաշիվ գյուղական բնակավայրերի վերակազմման կամ խոշորացած քաղաքների կազմի մեջ մտնելու, այնպես էլ «դատարկ» տեղերում նոր քաղաքային բնակավայրերի ստեղծման հաշվին): 3. Քաղաքային բնակավայրերում տեղավորվող հայրենադարձները և այլ հանրապետություններից տեղափոխվողները: 4. Քաղաքային բնակչության բնական աճը:

---

[1] Այսպես, 1960—1962 թթ. երեք տարիների ընթացքում եկել են այլ հանրապետություններից 17972 մարդ, մեկնել են այլ հանրապետություններ 11875 մարդ, դրական մնացորդը կազմում է 6079, կամ շուրջ 2 հազար մարդ տարեկան: Տե՛ս Լ. Դավթյան, նշված աշխատությունը, էջ 75:

Հանրապետության բնակչության որակական փոփոխություններից են նաև նրա սոցիալական-դասակարգային կազմում տեղի ունեցած արմատական տեղաշարժերը, որոնք արտահայտված են ստորև բերված աղյուսակում։

Աղյուսակ 13

Հայկական ՍՍՀ բնակչությունը ըստ հասարակական խմբերի (տոկոսներով)[1]

	1926 թ.	1939 թ.	1959 թ.
Ամբողջ բնակչությունը (աշխատողները և խնամքի տակ գտնվողները)	100	100	100
այդ թվում՝			
Բանվորներ և ծառայողներ	13,2	32,2	62,3
Կոլտնտեսականներ	0,1*	64,1**	37,5
Մենատնտես-գյուղացիներ և չկոոպերացված արհեստավորներ	79,1	3,7	0,2
Քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրեր . .	7,6	—	—

* Ներառյալ կոոպերացված արհեստավորները։

** Այդ թվում 1,2% կոոպերացված արհեստավորները։

Համաձայն 1959 թ. մարդահամարի տվյալների, Հայկական ՍՍՀ բնակչության ընդհանուր թվից (1763,0 հազար) հայերը կազմել են 1551,6 հազ. (88%), ադրբեջանցիները՝ 107,7 հազար (6,1%), ռուսները՝ 56,5 հազ. (3,2%), քրդերը՝ 25,6 հազ. (1,5%), ուկրաինացիները՝ 5,6 հազ. (0,3%), հույները՝ 5,0 հազ. (0,3%), ասորիները՝ 4,3 հազ. (0,2%), մյուս ազգությունները (հրեաները, վրացիները և այլն)՝ 6,7 հազ. (0,4%)։

Բնակչության տարաբնակեցման աշխարհագրությունը առաջին հերթին պայմանավորված է արտադրության տեղաբաշխմամբ և արտադրողական ուժերի զարգացման մակարդակով։ Միևնույն ժամանակ, քանի որ մարդկանց արտադրական գործունեությունը տեղի է ունենում ամենատարբեր բնաաշխարհագրական միջավայրում, ապա արտադրության ու բնակչության տերիտորիալ կազմակերպումը կրում է իր վրա այդ միջավայրի նպաստավոր կամ ան-

[1] Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР, М., 1963 г.; Всесоюзная перепись 1926 г. ЗСФСР, Тифлис, 1930.

նպաստ պայմանների ազդեցությունը։ Այդ պատճառով բնաաշխարհագրական պայմանները ավելի կամ պակաս չափով ազդում են բնակչության տարածական տեղաբաշխման վրա, պայմանավորելով նրա այս կամ այն առանձնահատկությունը։ Այդ ազդեցությունը ակնհայտ է դառնում, երբ փորձում ենք վերլուծել Հայկական ՍՍՀ բնակչության տեղաբաշխման պատկերը։

Հայկական ՍՍՀ տերիտորիայի վրա աշխատանքի կիրառման համար բնական պայմանների խիստ տարբերություններ կան, որի հետևանքով աշխատանքի միևնույն քանակը նրա տարբեր մասերում բավարարում է ոչ հավասար չափի պահանջմունքներ և ստեղծում է մարդկանց ապրուստի ու արտադրության տեղաբաշխման միմյանցից բավականին տարբերվող պայմաններ։ Այսպես, Արարատյան դաշտն իր բարձր հողագործական կուլտուրայով, տաք ու արևշատ կլիմայով, ջրովի ու բերրի հողերով ունի ամենանպաստավոր պայմանները գյուղատնտեսության աշխատատար, ինտենսիվ, եկամտաբեր ճյուղերի զարգացման և բնակչության ու բնակավայրերի բավական խիտ տեղաբաշխման համար։ Մինչդեռ Հանրապետության տերիտորիայի ճնշող մեծամասնությունը դասվում է բարձրալեռնային, մասնատված ու էրոզիայի ենթարկված ռելիեֆի, օգտագործման համար պիտանի փոքրաքանակ հողերի և խստաշունչ կլիմայական պայմաններում, որոնք սահմանափակում կամ դժվարացնում են մարդկանց բնակության և գյուղատնտեսության ընդարձակման տերիտորիալ սահմանները։

Հանրապետության բնակչության տարաբնակեցման ենթակա փաստական տարածությունը, կամ, այսպես կոչված բնակեցված տերիտորիայի չափսերը շատ ավելի փոքր են, քան այդ թվում է առաջին հայացքից։ Իսկապես, բնակեցված տերիտորիան, այսինքն՝ բնակավայրերի տերիտորիաները, գյուղատնտեսական հանդակները (այդ թվում և տնամերձ հողերը), որոնց վրա տեղի է ունենում մարդկանց ակտիվ ու հարատև տնտեսական գործունեությունը, կազմում են Հանրապետության ամբողջ տարածության 47,5%-ը։ Եթե ողջ բնակչության խտությունը ամբողջ տերիտորիայի հաշվով կազմում է 74 մարդ 1 քառ. կմ-ի վրա (որը ավելի քան 7 անգամ գերազանցում է ՍՍՀՄ միջին խտությունը), ապա բնակեցված տերիտորիայի կամ ակտիվ օգտագործվող հողահանդակների 1 քառ. կմ-ի վրա կազմում է մոտ 155 մարդ։ Եթե անցյալ դարի սկզբներին բնակչության խտությունը մոտ 5 մարդ էր, իսկ 1913 թ.՝ 33, ապա 1966 թ. կազմել է 74 մարդ։

Հանրապետության տարբեր մասերում բնակչության խտության մեծ անհամաչափություն գոյություն ունի։ Արարատյան դաշտում (հաշվելով մինչև 1000 մ բարձրության վրա ընկած տերիտորիան, այդ թվում Երևանը), որը



6. Հայկական ՍՍՀ բնակչության խտությունը:

Բնակչության միջին խտությունը ըստ բարձրության գոտիների (մեկ քառակուսի կմ-ի վրա, մարդ). 1. մինչև 1000 մետր՝ 340 մարդ, 2. 1000—1500՝ 65 մարդ, 3. 1500—2000՝ 60 մարդ, 4. 2000—2500՝ 12 մարդ, 5. 2500-ից բարձր՝ չբնակեցված բարձրալեռնային տերիտորիաներ:

Բարձրության գոտիները		Տեղանքի գյուղատնտեսական հնարավորությունները, կապված թեքությունների մեծության հետ (թեքությունները ամենամարը հչիր գոտու տերիտորիայում %)				Կլիմայի տիպերը	Գյուղատնտեսական հանդակները (տոկոսներով հանրապետության գյուղատնտեսական հանդակների ընդհանուր տարածությունից)			
Բարձրությունը ծովի մակարդակից (մետրերով)	Տարածքի %-ը հանրապետության	Հարթավայրեր (3°-ից պակաս)	Լեռնաբլուրներ (3°—8°)	Լեռներ (8°—16°)	Խիստ լեռնային (16°-ից բարձր)		Վարելահող	Մարգագետիններ և արոտներ	Պտղատու և խաղողի այգիներ	Ամբողջ տարածքի %-ը
390—1000	9,9	54	13	16	17	Ջոր մերձարևադարձային	13,2	51,3	2,3	8,8
1000—1500	17,6	23	26	25	26	Բարեխառն-տաք և չոր	17,5	41,5	10,5	15,4
1500—2000	32,5	18	28	28	26	Բարեխառն, տափաստանային մասում ցուրտ, անտառային—մեղմ ձմեռ	43,5	7,2	46,5	21,4
2000—2500	26,5	10	30	27	33	Ցուրտ լեռնային	25,8	—	37,0	28,0
2500-ից բարձր	13,5	3	25	28	44	Խիստ բարձրալեռնային	—	—	3,7	26,4

գբաղեցնում է հանրապետության տարածության մոտ 6,5 %-ը, ապրում է Հայկական ՍՍՀ բնակչության 45%-ից ավելին։ Միջին խտությունը այստեղ շատ բարձր է (1 քառ. կմ-ի վրա 400 մարդ, իսկ միայն գյուղական բնակչության հաշվով՝ 150 մարդ) և աչքի է ընկնում ամբողջ Անդրկովկասում ու ՍՍՀՄ-ում որպես առավել խիտ բնակեցված վայրերից մեկը։ Նվազագույն խտություն ունեն Որոտան և Արփա գետերի վերին հոսանքների շրջանները, ինչպես նաև Զանգեզուրի հարավը և հանրապետության ծայր հյուսիս-արևմուտքը, որտեղ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա ապրում են 15—20 մարդ։

Մեր մոլորակի բնակչության ըստ բարձրության գոտիների տեղաբաշխ-

գոտիների և ենթագոտիների բնա-կլիմայական
(1959 թ. մարդահամարի տվյալներով)[1]

Բնակավայրերի քանակը (%)	Բնակչությունը (%)			Բնակչության խտությունը (1 կմ²-ում միջին հաշվով)	Քաղաքային բնակավայրերը (1959 թ. մարդահամարից հետո ձևավորված քաղաքային բնակավայրերը ընդգրկված են)
		որից			
	բոլորովին	գյուղական	քաղաքային		
23,6	49,2	67,4	28,9	330	Մեղրի, Իջևան, Ախթալա, Արտաշատ, Էջմիածին, Արարատ, Հոկտեմբերյան, Քոլագերան, Ղափան, Վեդի, Նոր-Խարբերդ, Թումանյան, Այրում, Բերդ, Երևան
22,3	16,4	12,7	21,5	50	Ալավերդի, Սովետաշեն, Ադարակ, Շամլուղ, Աշտարակ, Ազիզբեկով, Սղնեգեաձոր, Դիլիջան, Նոր-Հաճըն, Գորիս, Ստեփանավան, Կիրովական, Արզնի, Անիպեմզա, Աբովյան, Լուսակերտ
40,7	29,2	19,7	39,3	55	Կալինինո, Լենինական, Սպիտակ, Վերին Թալին, Սիսիան, Լուսավան, Մարալիկ, Դաստակերտ, Արթիկ, Հրազդան, Պեմզաշեն, Ծաղկաձոր, Ապարան, Գազարին, Սևան
13,4	5,2	0,2	10,3	9	Կամո, Մարտունի, Քաջարան, Ջերմուկ
—	—	—	—	—	—

ման համար բնորոշ է ցածրադիր շրջաններում նրա կուտակումը: Այսպես, հրկրագնդի բնակչության 90%-ը ապրում է ծովի մակարդակից մինչև 400 մ բարձրության վրա գտնվող տերիտորիաներում: Նույն փաստը (ցածրադիր վայրերում կուտակումը) ավելի ցայտուն ձևով արտահայտվում է լեռնային երկրներում: Որպես կանոն, բնակչության խտությունը և տերիտորիայի բնակվածությունը օրինաչափորեն պակասում է տերիտորիայի բարձրացմանը

[1] *Աղյուսակը կազմելիս օգտվել ենք հետևյալ աղբյուրներից. Հ. Գ. Գրգեարյանի* Распределение населения Армянской ССР по вертикальным поясам» *հոդվածից՝ զետեղված «География населения СССР» ժողովածուում, Մ-Լ, 1964, Հայկական ՍՍՀ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Աշխարհագրության սեկտորում մշակված նյութերից, Հայկական ՍՍՀ ԿՎՎ և այլ նյութերից:*

դուգրնթաց։ Սակայն այդ երևույթը միատեսակ չի արտահայտվում բոլոր լեռնային երկրներում։ Օրինակ, Հայկական և Վրացական ՍՍՀ-ները, որոնց տերիտորիաները աչքի են ընկնում լեռնային երկրներին հատուկ բարդ կառուցվածքով և ռելիեֆի մեծ տատանումներով, ունեն բնակչության ըստ բարձրության դոտիների տեղաբաշխման տարբեր պատկերներ։ Այն ժամանակ, երբ Վրացական ՍՍՀ բնակչության 83%-ից ավելին բնակվում է ծովի մակարդակից մինչև 800 մ բարձրությունների վրա, Հայկական ՍՍՀ գրեթե ամբողջ բնակչությունը (96%-ից ավելին) ապրում է 800 մ-ից մինչև 2400 մ բարձրությունների վրա և միայն 4%-ը՝ 800 մ-ից ցածր։

Վերը բերված աղյուսակում (№ 11) ամփոփված է Հայկական ՍՍՀ բնակչության և բնակավայրերի բաշխումը ըստ բարձրության գոտիների, նրանց տեղանքի թեքությունների, կլիմայական պայմանների ու գյուղատնտեսական հնարավորությունների։

Աղյուսակից հետևում է, որ Հայկական ՍՍՀ բնակչությունը տեղաբաշխված է հանրապետության բարձրության գրեթե բոլոր գոտիներում, սկսած 390 մ-ից մինչև 2400 մ և միայն նրա տերիտորիայի մոտ 14%-ը (2400 մետրից բարձր) զրկված է մշտական բնակչությունից[1]։ Չնայած վերին գոտիներում բնա-կլիմայական պայմանների զգալի վատացմանը, այսուհանդերձ, բնակչության կեսից ավելին ապրում է 1000—2400 մետր բարձրությունների վրա։ Մինչդեռ լեռնային երկրների համար բնորոշ է, երբ բարձրալեռնային գոտիները գրեթե ամբողջովին զրկված են բնակչությունից ի հաշիվ ցածրադիր մասերում նրա կուտակման։ Վերջին տարիներին նկատվում է բնակչության որոշակի շարժում վերից վար, մի կողմից բարձրալեռնային սակավահող շրջաններից դեպի Արարատյան դաշտը կազմակերպված տեղափոխությունների, մյուս կողմից դեպի ցածրադիր շրջանների քաղաքները գյուղական բնակչության ներհոսքի հետևանքով։ Բոլոր դեպքերում այդ, առայժմ դեռևս թույլ, տեղաշարժերը կարող են դանդաղեցնել լեռնային շրջաններում արտադրողական ուժերի զարգացման տեմպերը, եթե չձեռնարկվեն միջոցներ այդ երևույթը կանխելու համար։

Բնակչության այսպիսի տեղաբաշխումը, երբ նրա մոտ կեսը կենտրոնացած է մինչև 1000 մ բարձրություն ունեցող գոտում, որտեղ մեծ հնարավորություններ կան լայն չափով զարգացնելու ինտենսիվ ջերմասեր և աշխատատար կուլտուրաները, դրական պետք է համարել։ Բնակչության բարձր

---

[1] Այս տերիտորիան (2400 մ-ից բարձր) զբաղեցնում են սեզոնային բնակիչները, որոնք ամռանը օգտագործում են բարձրալեռնային արոտավայրերը, բացի այդ, այստեղ գոյություն ունեն մի քանի գիտահետազոտական հիմնարկների մշտական կայաններ իրենց բնակիչներով։

խտությունը և հետևաբար աշխատանքային ռեսուրսների կենտրոնացումը այս-տեղ իր նպաստավոր դերն է կատարել նաև արդյունաբերության արագ աճ-ման գործում։

Հանրապետության հողային, էներգետիկ և հումքային ռեսուրսները ցրված են ըստ բարձրության գրեթե բոլոր գոտիներում։ Քանի որ այդ ռեսուրս-ների օգտագործման ու արտադրության տեղաբաշխան հարցերը սերտորեն կապված են նաև հիմնական արտադրողական ուժի՝ բնակչության առկայու-թյան հետ, այդ պատճառով հանրապետության արտադրողական ուժերի զար-գացման համար ընդհանուր առմամբ բարենպաստ պետք է համարել բնակ-չության այսպիսի բաշխումը, երբ, բացի առաջին գոտուց (մինչև 1000 մ), բնակչության մի մասն էլ բնակվում է նրան հաջորդող ավելի բարձր գոտի-ներում։

Աղյուսակը ցույց է տալիս նաև, որ հանրապետությունում բնակ-չությունը տարաբնակեցված է բարձրության գոտիներում աստիճանաձև կամ յուրօրինակ քառահարկ բուրգի նման, որի հիմքը կամ առաջին «հարկը» բավական ընդարձակ է, երկրորդը՝ եռապատիկ նեղ, երրորդը՝ նախորդից լայն, իսկ վերջինը՝ շատ նեղ։ Տեղի ունի ոչ թե բնակչության թվի հետևողա-կան նվազում ամեն մի հաջորդ բարձրության գոտում, այլ թռիչքաձև տա-տանումներով ընդհանուր նվազում՝ գոտիների բարձրացման ուղղությամբ։ Այսպես, առաջին «հարկում» (մինչև 1000 մ), որը զբաղեցնում է հանրա-պետության ամբողջ տարածության մեկ տասներորդ մասը, ապրում է բնակ-չության մոտ կեսը։ Այս գոտին ունի գյուղատնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման և դաշտավարության մեքենայացման համար լավա-գույն պայմաններ, այստեղ կենտրոնացած են ջրովի հողերի հիմնական զանգվածները, գերակշռում է ինտենսիվ հողագործությունը և մերձքաղաքա-յին կաթնատու անասնաբուծությունը, շատ նպաստավոր են նաև արդյունա-բերական շինարարության և արդյունաբերության աշխատատար ու այլ ճյու-ղերի զարգացման հնարավորությունները։ Այս և հաջորդ գոտու մերձեցման շըր-ջանում աճել է հանրապետության ամենամեծ քաքաղային կենտրոնը՝ Երևանը։ 1000—1500 մ բարձրության վրա տեղավորված երկրորդ «հարկը» տերի-տորիայով գրեթե երկու անգամ գերազանցում է նախորդին, բայց բնակչու-թյունը երեք անգամ պակաս է նրանից։ Սա անցողիկ գոտի է և օժտված է նախորդ ու վերին գոտիներին բնորոշ բնա-կլիմայական ինչպես բարե-նպաստ, այնպես էլ քիչ նպաստավոր պայմաններով։ Վարելահողերը նախոր-դից փոքր-ինչ ավելի են, բայց 2,5 անգամ պակաս, քան հաջորդում, անջրդի ու ջրովի հողագործությունը զուգակցվում է զարգացած անասնաբուծության

հետ։ Տեղանքի կտրտվածությունը և թեքությունների աստիճանները շատ ավելի մեծ են, քան նախորդ գոտում և էրոզիոն պրոցեսները համատարած բնույթ ունեն։ 1500—2000 մ բարձրության վրա գտնվող երրորդ «հարկը» տերիտորիայով ամենից ընդարձակն է, քանի որ այստեղ են տեղավորված հանրապետության բարձրադիր հարթավայրերը՝ Շիրակի դաշտը, Սևանի մերձափնյա հարթությունները, Լոռու սարահարթը, Զանգեզուրի միջլեռնային թեք հարթությունները և վարելահողերի հիմնական զանգվածները։ Բնական է, որ այսպիսի պայմաններում առաջին գոտուց հետո բնակչության երկրորդ խոշոր կուտակումը նկատվում է հենց այս գոտում։ Չորրորդ բարձրալեռնային գոտին (2000—2500 մ) զբաղեցնում է հանրապետության տարածության մոտ քառորդը, ունի ցուրտ կլիմա և կարճ վեգետացիոն շրջան, գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները, հատկապես դաշտավարության, սահմանափակ են, այդ պատճառով այստեղ ապրում է բնակչության միայն 5%-ը[1]։

Արտադրության եղանակի ամեն մի փոփոխության հետևում է տարաբնակեցման ձևերի համապատասխան նորոգում ու բարեփոխում, որը ավել կամ պակաս չափով հարատև պրոցես է։ Հայկական ՍՍՀ-ում ներկայումս գոյություն ունեցող բնակչության տարաբնակեցման հիմնական ձևերը դարերի ընթացքում կրել են իրենց վրա ոչ միայն սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը, այլև հայ ժողովրդի բախտի հետ կապված պատմական բարդ իրադարձությունների կնիքը և երկրի բնաշխարհի առանձնահատկությունների դրոշմը։ Հայտնի է, որ մեկ անգամ չէ, որ ավերվել, հիմնահատակ են եղել բնակավայրերը, տեղահանվել կամ սրի քաշվել երկրի բնակչությունը օտար զավթիչների կողմից։ Այս ամենը իրենց նկատելի հետքերն են թողել բնակավայրերի դիրքի, խտության, արտաքին տեսքի, մարդաշատության և տնտեսական բնույթի վրա։

Մեծ փոփոխություններ այդ բնագավառում տեղի են ունեցել սովետական շրջանում և հատկապես եռպատերազմյան ժամանակաշրջանում, երբ ժամանակակից խոշոր ինդուստրիայի ստեղծման, բնակչության աշխատանքային ու նյութական պայմանների բարելավման, շինարարության մեջ տեխնիկական առաջադիմության, պետական շրջանային հատակագծման մեթոդ-

---

[1] Հանրապետության ամենաբարձր գյուղը բնակած է 2375 մ բացարձակ բարձրության վրա (Ծաղկասար, Ախուրյանի շրջան)։ Ըստ 1959 թ. մարդահամարի տվյալների 2200 մետրից բարձր բնակվում է մեր հանրապետության բնակչության միայն 0,3%-ը (8 գյուղ)։

ների գործադրման հետևանքով տարաբնակեցման դարերից եկած հին ձևերը տեղի են տալիս նոր՝ ժամանակակից ու առաջադիմական ձևերին։

Հայտնի է, որ բնակչության տարաբնակեցումը պայմանավորված է արտադրության տեղաբաշխումով, բայց արդեն ձևավորված տարաբնակեցումը ինքը սկսում է ազդել արտադրության տեղաբաշխման վրա։ Այդ պատճառով տարաբնակեցման պրոբլեմը հանդիսանում է արտադրողական ուժերի տեղաբաշխման կամ տերիտորիայի կազմակերպման ընդհանուր խնդրի մի մասը, իսկ ժամանակակից սոցիալիստական քաղաքը ներկայանում է որպես տերիտորիայի առավել արդյունավետ կազմակերպման ձևերից մեկը։

Քաղաքների արագ աճը երկրի տնտեսական և հատկապես ինդուստրիալ զարգացման կարևոր ցուցանիշներից է։ Սովետական ժամանակաշրջանը հանրապետության բնակչության համար եղել է քաղաքների ստեղծման և բուռն աճման տարիներ (տե՛ս աղյուսակ № 12)։

Առաջիկայում նույնպես այդ օրինաչափ պրոցեսը, ինչպես երևում է, շարունակվելու է։ Սակայն հանրապետության ուրբանիզացիայի այս ֆոնի վրա Երևան քաղաքի աննախընթաց աճը և քաղաքային բնակչության մեջ նրա ունեցած առյուծի բաժինը (տե՛ս աղյուսակ № 13) Սովետական Միության քաղաքաշինական պրակտիկայում եզակի երևույթներից պետք է համարել։ Այժմ միութենական հանրապետությունների մայրաքաղաքներից և ոչ մեկը (բացի Ռիգայից և Բաքվից, որոնք իրենց տեսակարար կշռով բավականին մոտեցել են Երևանին) այդպիսի մենաշնորհ չունի։

Երևանը իր բնակչությամբ միութենական հանրապետությունների մայրաքաղաքների հիերարխիայում (չհաշված Մոսկվան) գտնվում է առաջին յոթ մայրաքաղաքների թվում (Կիևից, Բաքվից, Տաշքենդից, Թբիլիսիից, Մինսկից, Ռիգայից հետո) և դասվում է ՍՍՀՄ 25 խոշորագույն քաղաքների (500 հազարից ավելի բնակիչ ունեցողների) շարքին։ Միևնույն ժամանակ նա մտնում է աշխարհի 253 խոշորագույն քաղաքների մեջ։

Երևանում բնակչության և արդյունաբերության հսկայական կուտակման փաստը բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի։ Այստեղ նշենք դրա հիմքում ընկած օբյեկտիվ պատճառներից գլխավորները։ Դրանց թվին են պատկանում՝ Երևանի շատ նպաստավոր տնտեսա-աշխարհագրական դիրքը, բազմապիսի արդյունաբերական, տրանսպորտային, կուլտուրական, վարչաքաղաքական և քաղաքաստեղծ այլ ֆունկցիաները (այդ թվում նաև աշխարհասփյուռ հայերի համար համազգային կենտրոն լինելը), բնակչության կուլտուր-կենցաղային և կոմունալ սպասարկման բարձր մակարդակը, որոնք անընդհատ ձգում են բնակչության նորանոր զանգվածներ։ Բացի այդ,

Քաղաքային բնակավայրեր[1]

		Տարիներ				1966 թվականին՝ 1926 թ. համեմատությամբ (տոկոսներով)
		1926 թ.	1939 թ.	1959 թ.	1966 թ.	
Բոլոր քաղաքային բնակավայրերի թիվը		21	18	35	50	238
այդ թվում՝ քաղաքների		7	9	14	23	328
քաղաքատիպ ավանների		14	9*	21	27	193
Մեկ քաղաքային բնակավայրի միջին մեծությունը (բնակիչների թիվը առանց Երևանի)		5112	9543	10956	11577	227
այդ թվում՝ քաղաքների (առանց Երևանի)		10994	14413	21220	19174	179
քաղաքատիպ ավանների		1821	3611	3591	3631	199
Քաղաքային բնակավայրերի ցանցի խտությունը	Մեկ քաղաքային բնակավայրին ընկնող տարածությունը (հաս. կմ)	1380	1611	828	580	—
	1000 հաս. կմ տարածությանն ընկնող քաղաքային բնակավայրերի թիվը	0,7	0,6	1,2	1,7	243

* Քաղաքատիպ ավանների թվի պակասումը բացատրվում է նրանց առանձնացման չափանիշի փոփոխմամբ, որի հետևանքով նախկին քաղաքատիպ ավաններից մի քանիսը 1939 թ. մարդահամարի ժամանակ դասվել են գյուղական բնակավայրերի շարքը։

[1] Աղյուսակը կազմելու համար օգտագործել ենք հետևյալ աշխատությունները. Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР, М., 1963 և Հայկական ՍՍՀ կվվ նյութերը։

բավական բարձր են գրեթե 700-հազարանոց քաղաքի բնակչության վերարտադրության տեմպերը, թեպետ վերջին մի քանի տարիների ընթացքում նկատվում է քաղաքի բնակչության աճի որոշ դանդաղում (ինչպես բնական, այնպես էլ մեխանիկական աճի ասպարեզներում)։ Միևնույն ժամանակ լավ հայտնի է, որ Երևանի հետագա ուժեղ աճը ոչ միայն դժվարացնելու և բարդացնելու է նրա բնակիչների կյանքի պայմանները, այլև սահմանափակելու է հանրապետության մանր, փոքր ու միջին քաղաքների զարգացումը. այդպիսի երևույթները արդեն զգացնել են տալիս իրենց։ Առաջացած փաստական անհամամասնության մեղմացումը ըստ երևույթին հնարավոր է։ Այդ մասին են վկայում նաև քաղաքային բնակչության մեջ նրա տեսակարար կշռի նվազման տենդենցը, որը նկատվում է վերջին տարիներին (տե՛ս աղյուսակ № 13)։

Աղյուսակ 13

Երևանի տեսակարար կշիռը Հայկական ՍՍՀ ամբողջ և միայն քաղաքային բնակչության մեջ (%)[1]

Տարիները	Ամբողջ բնակչության մեջ	Քաղաքային բնակչության մեջ
1926 թ.	7,3	38,7
1939 թ.	15,9	55,5
1959 թ.	28,8	57,7
1966 թ.	29,3	53,1

Մյուս կողմից, ուրբանիզացիայի ընթացքում տեղի ունի մի այլ երևույթ։ Դա մանր և փոքր քաղաքային բնակավայրերի ստեղծումն է հանրապետությունում։ Քաղաքային ցանցի խտությունը պատկերող տվյալները վկայում են, որ անընդհատ աճում են հանրապետության ընդհանուր տարածության մեկ միավորին (1000 քառ. կմ) ընկնող քաղաքային բնակավայրերի թիվը (տե՛ս աղյուսակ № 12)։ Կարելի է ասել, որ քաղաքային բնակավայրեր արդեն ստեղծվել են գրեթե ամենուրեք։

Նախասովետական Հայաստանի համեմատությամբ քաղաքային բնակավայրերը աճել են 12,5 անգամ։ Այժմ գրեթե յուրաքանչյուր վարչական շրջանում կան քաղաքային բնակավայրեր (բացի Ամասիայի, Ղուկասյանի, Բաբաարգեչարի ու Կրասնոսելսկի շրջաններից), իսկ 13 շրջաններից յուրաքանչյուրում նրանց թիվը երկուս է կամ ավելի։

Հատկանշական է, որ ըստ բարձրության գոտիների քաղաքային բնակավայրերը ավելի հավասարաչափ են տեղաբաշխված, քան ամբողջ բնակչու-

[1] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. Ереван за 40 лет в цифрах. Статистический сборник, Ер., 1960, Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР, Ер., 1963, *Հայկական ՍՍՀ ԿՎՎ նյութերը։*

թյունը, նրանց 30-ական տոկոսը գտնվում է առաջին երեք գոտիներից ամեն մեկում, իսկ 10%-ը՝ 2000—2500 մ բարձրության գոտում (տե՛ս աղյուսակ 11):

Քաղաքային բնակավայրերի արեալների այդպիսի ընդլայնումը լեռնային երկրի համար հեռանկարային պետք է համարել, քանի որ դա արտադրողական ուժերի տերիտորիալ պլանավորման ու տեղաբաշխման այն խրախուսելի տենդենցն է, որի նպատակն է հանրապետության տնտեսապես թույլ յուրացված բարձրալեռնային շրջաններում ստեղծել արդյունաբերական օջախներ, կազմակերպական-տնտեսական կենտրոններ, որոնք պետք է լուծեն ինչպես աշխատանքային ռեսուրսների, այնպես էլ բնական հարստությունների ռացիոնալ օգտագործման պրոբլեմը նշված շրջաններում:

Եթե դասակարգենք Հայկական ՍՍՀ քաղաքային բնակավայրերը ըստ մեծության, ելնելով ՍՍՀՄ-ում ընդունված չափանիշներից, բայց որոշ ուղղումներ մտցնելով նրա մեջ (նկատի ունենալով հանրապետության առանձնահատկությունները), ապա կստացվի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 14

Քաղաքային բնակավայրերի դասակարգումը ըստ նրանց մեծության (1.I.1966 թ.)[1]

	Քաղաքային բնակավայրերը՝ խմբավորված ըստ բնակչության թվի (հազ. մարդ)																	
	Ընդամենը		մանր				փոքր				միջին				խոշոր		խոշորագույն	
			ա		բ		ա		բ		ա		բ					
	բնակավայրերի քանակը	%	մինչև 2		2—5		5—10		10—20		20—50		50—100		100—500		500-ից բարձր	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
Բոլոր քաղաքային բնակավայրերը	50	100	6	12	16	32	13	26	9	18	3	6	1	2	1	2	1	2
այդ թվում՝																		
քաղաքները	23	100	—	—	2	8,7	6	26,1	9	39,2	3	13,1	1	4,3	1	4,3	1	4,3
քաղաքատիպ ավանները	27	100	6	22,2	14	51,9	7	25,9	—	—	—	—	—	—	—	—	—	—

[1] Խմբավորումը կատարելիս օգտվել ենք Հայկական ՍՍՀ ԿՎՎ նյութերից:

Առաջին հերթին նկատելի է երկու անհավասարաչափ բևեռների առաջանալը։ Մի կողմից, մանր ու փոքր քաղաքային բնակավայրերը կազմում են ընդհանուր թվի բացարձակ մեծամասնությունը (88%), բայց ունեն քաղաքային բնակչության միայն 24%-ը։ Մյուս կողմից, միջին, խոշոր և խոշորագույն քաղաքային բնակավայրերը՝ թվով վեցը (Ալավերդին, Ղափանը, Էջմիածինը, Կիրովականը, Լենինականը և Երևանը), կամ 12%, ունեն ամբողջ քաղաքային բնակչության $^3/_4$-ից ավելին։ Այս խմբում կենտրոնացած է հանրապետության արդյունաբերական հիմնական ֆոնդերի, բանվոր-ծառայողների և համախառն արտադրանքի ճնշող մեծամասնությունը։

Մանր և փոքր քաղաքային բնակավայրերը նոր ձևավորվող թույլ արդյունաբերական կենտրոններ են, դրանցից յուրաքանչյուրի բնակչության միջին թիվը մոտ 6 հազար է, որոնց 30%-ը 1959 թվից հետո է միայն քաղաքային բնակավայր դարձել։ Ունենալով արդյունաբերական զարգացման բարենպաստ պայմաններ (հանքային կամ գյուղատնտեսական հումքի բազա, աշխատանքային ռեսուրսներ), նրանց մեծ մասը խիստ կարիք ունի կոմունալ և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, տեղում որակյալ կադրերի պատրաստման և նոր արդյունաբերական ու քաղաքաստեղծ զանազան ձեռնարկությունների հիմնադրման։ Կան նաև քաղաքային բնակավայրեր, որոնց բնակչությունը շատ դանդաղ է աճում (օրինակ՝ Քոլագիրանը, Մարալիկը, Տագարինը, Նոր Խարբերդը)։

Հրազդան գետի հովտով, Երևանից մինչև Սևան, խճուղու և երկաթուղու երկայնքով ձգվում են մեկ տասնյակ նոր քաղաքային բնակավայրեր։ Սրանք խմբվել են այստեղ էլեկտրաէներգիայի աղբյուրների, հանքային հումքի, ջրի մոտիկության և հաջող զուգորդման, տրանսպորտային դիրքի հարմարության պատճառով։ Մի քանիսը առաջացել են «դատարկ» տեղում, սկզբում որպես Հրազդանի կասկադի էլեկտրակայանների բանավաններ՝ Լուսավանը, Լուսակերտը, Նոր Հաճընը, Գագարինը։ Նրանց մի մասը հետագայում հիդրոէլեկտրակայանների շինարարության ավարտից հետո վերածվեց արդյունաբերական կենտրոնների։ Նեֆելինային սիենիտների անսպառ պաշարների և նրանց հիման վրա կառուցվող արդյունաբերական մեծ կոմպլեքսի մոտ ծագեց Հրազդան քաղաքը, աշխույժ խճուղային մայրուղու և տրանսպորտային հանգույցի մոտ՝ Սևանը, մայրաքաղաքից ոչ հեռու, նպաստավոր տրանսպորտային դիրքով, նրա կարևոր արբանյակը՝ Աբովյանը, հանքային ջրերի աղբյուրի մոտ՝ Արզնին, հանգստի ու բուժման վայրում՝ Ծաղկաձորը։

Հանքագործային քաղաքների և ավանների մի ամբողջ համասեռություն է աճել պղնձա-մոլիբդենային հանքավայրերի մոտ. դրանք են՝ Ղափանը, Քա-



7. Հայկական ՍՍՀ խոշոր քաղաքային բնակավայրերը:

Քաղաքային բնակավայրերի աճը (1965 թ.՝ 1913 թ. համեմատությամբ): Մինչև 1913 թ. դոյություն ունեցող քաղաքային բնակավայրեր. 1. *ուժեղ աճածներ (ավելի քան 10 անգամ),* 2. *2—5 անգամ աճածներ,* 3. *2-ից պակաս անգամ աճածներ,* 4. *համեմատաբար դանդաղ աճածներ: Սովետական ժամանակաշրջանում վերակազմված քաղաքային բնակավայրեր.* 5. *ուժեղ աճածներ (ավելի քան 10 անգամ),* 6. *5—10 անգամ աճածներ,* 7. *2—5 անգամ աճածներ,* 8. *2-ից պակաս անգամ աճածներ,* 9. *համեմատաբար դանդաղ աճածներ: Սովետական ժամանակաշրջանում «դատարկ» տեղում առաջացած քաղաքային բնակավայրեր.* 10. *արագ աճածներ,* 11. *համեմատաբար դանդաղ աճածներ: Քաղաքային բնակավայրերի տիպերը.* 12. *քաղաքներ,* 13. *քաղաքատիպ ավաններ:*

ջարանը, Ագարակը, Դաստակերտը։ Տաք հանքային ջրերի մոտ, համարյա մերկ տեղում զարգանում է համամիութենական առողջարան Ջերմուկը, իսկ նախկին խոշոր գյուղեր Սիսիանը, Եղեգնաձորը, Ազիզբեկովը, Մեղրին, գտնվելով հարուստ գյուղատնտեսական շրջապատում, վերածվեցին քաղաքային բնակավայրերի, հիմնականում արդյունաբերության զարգացման և վարչական կենտրոններ լինելու շնորհիվ։

Շիրակի եզակի բնույթ ունեցող շինարարական նյութերի հանույթի ու արտադրության բազայի վրա ստեղծվել են քաղաքային բնակավայրեր Արթիկը, Պեմզաշենը, Անիպեմզան։ Դեբեդի ստորին հոսանքում, արդյունաբերական պտղաբուծության նոր շրջաններից մեկում ստեղծվել է Այրում քաղաքային բնակավայրը իր սննդհամի ձեռնարկություններով։ Գետի հոսանքով փոքր-ինչ վեր գունավոր մետաղների հանույթի ու վերամշակման հետ կապված աճել են Ալավերդին, Շամլուղը, Ախթալան, սրանցից ոչ հեռու, հրակայուն կավերի հանքավայրի մոտ՝ Թումանյանը։ Փամբակի հովտում իր նպաստավոր աշխարհագրական դիրքի շնորհիվ աճել է հանրապետության երրորդ քաղաքը, մեծ քիմիայի կենտրոնը՝ Կիրովականը, նրանից արևմուտք ձևավորվել է երիտասարդ արդյունաբերական կենտրոն Սպիտակը։

Արարատյան դաշտի նոր քաղաքների մեծ մասի ստեղծման հիմքում ընկած է բարձրորակ գյուղատնտեսական հումքի արտադրության լայն հնարավորությունները (Հոկտեմբերյան, Աշտարակ, Արտաշատ, Էջմիածին, Վեդի), որի հետևանքով նրանք դարձել են գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերական կենտրոններ, միևնույն ժամանակ ունեն հարուստ գյուղատնտեսական շրջանների վարչական կենտրոնների կարևոր ֆունկցիաներ։ Լավորակ շինարարական հումքի՝ կրաքարի խոշոր հանքավայրի մոտ աճել է ցեմենտի արտադրության կարևոր կենտրոն Արարատ քաղաքը։

Անցումը դեպի խոշոր սոցիալիստական տնտեսության զգալի փոփոխություններ առաջացրեց նաև գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական տիպում, մարդաշատության մեջ, արտաքին տեսքում։ Կոլեկտիվացումը մասսայականորեն չվերակառուցեց վաղուց ձևավորված գյուղական բնակավայրերի ցանցը, քանի որ կոլտնտեսությունները կազմակերպվեցին արդեն գոյություն ունեցող գյուղական բնակավայրերում։ Ի տարբերություն քաղաքայինի, գյուղական տարաբնակեցումը ավելի կայուն ու քիչ դինամիկ է, սակայն այստեղ նույնպես սովետական իշխանության տարիներին կատարվեցին ակնառու տեղաշարժեր։

Արարատյան գոգավորության նոր յուրացվող ջրովի հողերի վրա ստեղծվեցին ժամանակակից բարեկարգ կոլտնտեսային գյուղեր և սովխոզային

ավաններ։ Ավելացավ Հանրապետության գյուղերի մարդաշատությունը, վերացվեցին մի շարք մանր և փոքր բնակավայրեր։ Գյուղական բնակավայրերի մի մասը խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման հետևանքով վերածվեց քաղաքատիպ ավանների կամ կլանվեց հարևան քաղաքների տերիտորիալ ընդարձակման հաշվին։ Արմատապես փոխվեցին հին հայկական ավանդական գյուղի ֆունկցիաները, նրա կառուցապատման ձևերը, գյուղացու տան կառուցվածքը, ճարտարապետական ձևավորումը։

Դասակարգելով գյուղական բնակելի վայրերը ըստ նրանց մեծության (մարդաշատության), ստանում ենք հետևյալ պատկերը։ Հանրապետության գյուղական բնակչության հիմնական մասը (60%-ից ավելին) ապրում է խոշոր (1000—5000 մարդ) և շատ խոշոր (5000-ից ավելի մարդ ունեցող) գյուղերում, 37%-ը՝ միջին մեծության (100—1000 մարդ) գյուղերում, իսկ մանր (մինչև 25 մարդ) և փոքր (26—100 մարդ) գյուղական բնակելի վայրերում՝ աննշան մասը, մեկ տոկոսից էլ պակաս (տե՛ս գծագիր 8)։

Այսպիսով, Հայկական ՍՍՀ գյուղական տարաբնակեցման համար բնորոշ են առաջին հերթին խոշոր, ապա միջին մեծության գյուղերը։ Մինչդեռ ՍՍՀՄ գյուղական բնակչության կեսից ավելին ապրում է միջին մեծության գյուղերում և միայն 37%-ը՝ խոշոր ու շատ խոշոր գյուղերում։

Հանրապետությունում խոշոր գյուղերից առավել տարածված են 1000—2000 բնակիչ ունեցողները, որտեղ ապրում է ամբողջ գյուղական բնակչության $^1/_3$-ը։ Սրանք հատկապես աչքի են ընկնում Արարատյան դաշտում, հյուսիս-արևելքում և Շիրակում։ Միջին մեծության գյուղերը գտնվում են ամենուրեք, բայց ավելի հաճախ կարելի է հանդիպել հյուսիս-արևմուտքում և Զանգեզուրում։ Սևանի ավազանի համար բնորոշ են խոշոր և շատ խոշոր գյուղերը։ Ամբողջ Անդրկովկասի շատ խոշոր գյուղերի $^1/_4$-ից ավելին գտնվում է Հայկական ՍՍՀ-ում։

Հայկական ՍՍՀ-ն միութենական հանրապետությունների մեջ գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ ետ է մնում միայն Մոլդավական ՍՍՀ-ից, իսկ Անդրկովկասում զբավում է առաջին տեղը[1]։

[1] Մոլդավական ՍՍՀ-ում միջին մարդաշատությունը կազմում է մոտ 1200 մարդ, Հայկական ՍՍՀ-ում՝ 700-ից ավելի, Վրացական ՍՍՀ-ում՝ 480, Ադրբեջանական ՍՍՀ-ում՝ մոտ 400։ Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերի մեծության (մարդաշատության) վերաբերյալ հաշվումները (այդ թվում գծագիր № 8) կատարվել են 1959 թ. մարդահամարի տվյալների հիման վրա, որոնք ճշտվել են 1961 թ. հունվարի 1-ի դրությամբ։ Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР: ՍՍՀՄ և այլ հանրապետությունների գյուղական բնակավայրերի վերաբերյալ տվյալները վերցված են Մոսկվայում 1963 թ. լույս տեսած Ս. Վ. Կովալևի «Сельское расселение» աշխատությունից։



8. Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերի բաշխումը ըստ մեծության *(1959 թ. մարդահամարի տվյալներով)*։

Հանրապետության գյուղական տարաբնակեցման աշխարհագրական տարբերություններից ելնելով, կարելի է առանձնացնել հետևյալ երեք խումբ տիպերը, որոնք կապված են գյուղական բնակչության տնտեսական գործունեության և բնական պայմանների ու ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունների հետ։

I. *Հարթավայրային գրեթե համատարած և նախալեռնային նովիտեների ստորին մասերի խմբային տարաբնակեցում աշխատատար ու ինտենսիվ գյուղատնտեսության (խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության) շրջաններում, գերազանցապես ոռոգվող հողերի վրա։ Գյուղերը աչքի են ընկնում մարդաշատությամբ, կուռակված են ջրանցքների երկայնով կամ նրանց շուրջը։ Առաջացնելով համատարած բնակեցման արեալներ, նրանք խմբավորվում են լեռնային գետերի դեպի հարթավայրերն անցնելու շրջանում կամ արտաբերման կոների մոտ։ Գյուղատնտեսական հանդակները (այգիներն ու վարելահողերը) և բնակավայրերը մի ընդհանուր զանգված են կազմում, իսկ գյուղերի տերիտորիաները աննկատելիորեն ձուլվում են իրար։ Գյուղական բնակչության խտությունը առավելագույնն է հանրապետությունում։ Տարաբնակեցման այս տիպերը լավ արտահայտված են Արարատյան դաշտում, հանրապետության հյուսիս-արևելքի գետահովիտների ստորին մասերում։*

II. Սաբավանդների խմբային և ցրված տարաբնակեցում զարգացած հողագործական (անջրդի ու ջրովի) և անասնաբուծական շրջաններում։ Գերակշռում են խոշոր և միջին մեծության գյուղերը, որոնք խմբավորված են կամ ձգվում են գետերի հոսանքով, շարված են տրանսպորտային ուղիների երկայնքով կամ ցրված են վարելահողային զանգվածներում։ Որոշ շրջաններում բավական խիտ դասավորված բնակավայրերը առաջացնում են մեծ կամ փոքր չափի անընդմեջ առանձին հատվածներ, այլ տեղերում բնակավայրերը նոսր են բաշխված և առանձնացած միմյանցից զգալի տարածություններով։ Խմբային և ցրված այս տիպերը հանդիպում են Շիրակի դաշտում, Սևանի ավազանում, Լոռիում, Աշոցքի սարահարթի վրա։

III. Լեռնահովտային օազիսային, ցրված կամ շղթայանման տարաբնակեցում, որը բնորոշ է զարգացած անասնաբուծության և որոշ տեղերում նրան զուգորդող այգեգործության շրջանների համար։ Այստեղ սովորաբար տերիտորիայի կտրտվածությունը և ռելիեֆի բարձրությունների տարբերությունները բավականին մեծ են։ Գերակշռում են միջին մեծության գյուղերը, որոնք գտնվում են գլխավորապես գետահովիտներում, ձգվում են շղթայանման, հոսանքն ի վեր, տեղավորվելով տարբեր ուղղաձիգ գոտիներում, բարձրությունների զգալի տարբերությամբ։ Սրանց մեծ մասը լեռնային գյուղեր են գետային դարավանդների վրա, պաշտպանված սառը քամիներից և շրջապատված կանաչ միկրոօազիսով։ Հանդիպում են գյուղեր, որոնք փովում են գետի զառիվայր ափով, «մագլցելով» դեպի վեր, ստեղծում են միմյանց հաջորդող բազմահարկ կառուցապատված դարավանդներ։ Հաճախ ռելիեֆի խիստ կտրտվածության և մեծ թեքությունների պատճառով գյուղերը հարմարվելով տեղանքի նպաստավոր դիրքին, ցրված են ամենատարբեր մասերում և մեկուսացած, իսկ նրանց կողմից օգտագործվող գյուղատնտեսական հանդակները գտնվում են բավական հեռավորության վրա սարալանջին կամ հարևան սարավանդում։ Տարաբնակեցման այս տիպերը հանդիպում են Վայքում և Զանգեզուրի շրջաններում։ Շղթայանման և ցրված տիպերը հատուկ են նաև անտառաշատ շրջաններին։ Հանրապետության հյուսիս-արևելքում և Զանգեզուրում գյուղերի զգալի մասը տեղավորված է գետահովիտներում, անտառի արտաքին եզրի և գյուղատնտեսական հանդակների հատման վայրերում։

Գլուխ չորրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ։ ՆՐԱ ՏԵՂԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի քանակական բուռն աճը հանդեցրեց որակական արմատական տեղաշարժերի, որոնց թվում, աշխարհագրական առումով, ամենից ավելի էականն ու հիմնականը, մեր կարծիքով, ամբողջական ժողովրդատնտեսական կոմպլեքսի ձևավորումն է։ Որևէ երկրի կամ տերիտորիայի էկոնոմիկայի զարգացումը, ինչպես հայտնի է, ունի փոխադարձ կապակցության մեջ գտնվող ու իրար պայմանավորող երկու կողմ՝ արտադրական-ճյուղային և տարածական-շրջանային։ Սրանց համատեղ զարգացումը որոշակի պայմաններում կարող է բերել մի որակի, որը վերջին տարիներին գրականության մեջ հայտնի դարձավ տերիտորիալ-արտադրական կոմպլեքս կամ շրջանային ժողովրդատնտեսական կոմպլեքս անունով։

Տերիտորիալ-արտադրական կոմպլեքսների երևան գալը ոչ միայն աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման օբյեկտիվորեն գոյություն ունեցող պրոցեսի արտահայտություն է, այլև արդյունք է ժողովրդական տնտեսության տերիտորիալ կազմակերպման, որը հատուկ է սոցիալիստական, պլանաչափ զարգացող տնտեսաձևին։ Տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի գոյության հիմնական հատկանիշը դա տնտեսության ընդհանրությունն է տերիտորիայի որոշակի սահմաններում, որը հիմնվում է տնտեսության ճյուղերի ու այդ տերիտորիայի տարբեր մասերի պլանաչափ, շատ թե քիչ բազմակողմանի ու փոխադարձ կապակցված զարգացման վրա։ Հատկապես անհրաժեշտ է ընդգծել տերիտորիայի տարբեր մասերի կապակցվածությունը և նրանց միջև տնտեսական, մասնավորապես արտադրական կապերի առկայությունը, որովհետև առանց դրանց մենք գործ կունենանք միայն ճյուղերի, թեկուզ և միմյանց հետ սերտորեն կապված, խմբի հետ, որն արդեն ոչ թե տերիտորիալ-արտադրական, այլ սոսկ արտադրական կոմպլեքս է, որի համար տարածական կոնկրետ սահմանները նշանակություն չունեն։ Շրջանային ժողովրդատնտեսական կոմպլեքսի անհրաժեշտ հատկանիշն է նաև միութենական մասշտաբի արտադրական մասնագիտացումը[1]։

---

[1] Պատահական չէ, որ շատ հեղինակներ արտադրական մասնագիտացումը անմիջականորեն մտցնում են շրջանային կոմպլեքսի բնորոշման մեջ։ Տե՛ս Н. Ф. Яницкий, Комплексность

Տնտեսության կոմպլեքսային զարգացումն ու մասնագիտացումը և դրանց հիման վրա հանրապետական տերիտորիալ-արտադրական կոմպլեքսների ձևավորումը հատուկ է Սովետական Միության բոլոր հանրապետություններին և ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինայի ու Ղազախստանի տնտեսական շրջաններին։ Այդ կոմպլեքսները գտնվում են զարգացման տարբեր աստիճանների վրա, հասունության տարբեր փուլերում։

Տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ձևավորման ու զարգացման փաստը հատուկ նշանակություն է ձեռք բերում Հայկական ՍՍՀ-ի համար, քանի որ մինչսովետական շրջանում և նրանից հետո էլ մի տևական ժամանակ տնտեսության ամենաբնորոշ կողմերից մեկը տերիտորիալ տրոհվածությունն էր, նրա տարբեր մասերի միջև տնտեսական, առավել ևս արտադրական կապերի բացակայությունը։ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծումով այդ տերիտորիաները միավորվեցին մեկ ամբողջության մեջ սկզբում միայն քաղաքական-վարչական առումով։ Պահանջվեց զգալի ժամանակ, մինչև որ երկրի արտադրողական ուժերը, հասնելով զարգացման որոշակի մակարդակի, հնարավոր դարձրին տնտեսական կապերի շատ թե քիչ հասունացած սիստեմի ստեղծումը։ Խոսքը վերաբերում է թե՛ ներճյուղային ու միջճյուղային և թե՛ միջշրջանային տնտեսական-արտադրական կապերին։ Սա արդեն Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի տերիտորիալ կառուցվածքին ամբողջովին նոր որակ է հաղորդում։ Հանրապետության տնտեսությունը սկսում էր ձևավորվել իբրև մեկ ամբողջական և ինքնուրույն տերիտորիալ-արտադրական կոմպլեքս՝ լինելով միաժամանակ Սովետական Միության միասնական տնտեսության բաղկացուցիչ մասը։

Հայաստանի տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի համեմատաբար արագ ձևավորման ու զարգացման գործում վճռական դեր կատարեց ոչ միայն և ոչ այնքան աշխատանքային ռեսուրսների, այլև տերիտորիայի խիստ բազմազան բնական պայմանների ու ռեսուրսների պլանաչափ օգտագործումը։ Վերջին հանգամանքը Սովետական Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը սկզբից ևեթ հաղորդեց կոմպլեքսային բնույթ։

Հայկական ՍՍՀ-ի, ինչպես նաև ՍՍՀՄ-ի մեջ մտնող բոլոր հանրապետությունների մյուս հատկանշական կողմն այն է, որ նրանց տնտեսության

в развитии экономического района социалистических стран (Теоретические вопросы экономического районирования, Изд. АН СССР, М., 1962, դրքում), **В. В. Кистанов**, Комплексное развитие и специализация хозяйства экономических районов, Изд. «Экономика», М., 1965. և այլ հեղինակների գործեր։

զարգացումը հենվում է ամբողջ Սովետական Միության նյութատեխնիկական վիթխարի հնարավորությունների, ինչպես նաև նրա ներքին շուկայի գործնականում անսահմանափակ պահանջմունքների վրա։ Այս հանգամանքը մի կողմից ամբողջ տնտեսության համար զարգացման բարձր տեմպեր է ապահովում, իսկ մյուս կողմից էլ նպաստում է նրա արտադրական մասնագիտացման հետագա ծավալմանն ու խորացմանը։

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի զարգացման վրա ազդող վերոհիշյալ գործոնները ապահովելով նրա բազմաթիվ գծերի ընդհանրությունը Միության մյուս կոմպլեքսների հետ, միաժամանակ նպաստել են նրա անհատական, այլ տեղերում չկրկնվող հատկանիշների երևան գալուն, հատկանիշներ, որոնք տեղի բնական ու պատմա-տնտեսական յուրահատկությունների արդյունք են։

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի զարգացման ընդի փուլը բնորոշող առանձնահատկությունները փորձենք քննարկել առանձին-առանձին։

Ամենաէական ու բնորոշ առանձնահատկություններից մեկը **ինդուստրացման բարձր տեմպերը և կոմպլեքսի մեջ արդյունաբերության տիրապետող դերն է։** Այս փաստի նշանակությունը ավելի է մեծանում, եթե նկատի ենք ունենում տնտեսության ազրարային բնույթը նախկինում և նրա զարգացման այն ծայրաստիճան ցածր մակարդակը, որից սկսվեց երկրի ինդուստրացումը։ Ինդուստրացման բարձր տեմպերը ձեռք են բերվել հիմնականում նոր կապիտալ շինարարության, մասնավորապես արդյունաբերական շինարարության հաշվին։ Սովետական իշխանության 45 տարիների ընթացքում Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է մոտավորապես 3390 մլն. ռուբլի։ Ինչպես երևում է № 15 աղյուսակից, կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի ավելի քան 46%-ը բաժին է ընկել արդյունաբերությանը։

Հայկական ՍՍՀ-ն ինդուստրացման իր տեմպերով Սովետական Միության հանրապետությունների շարքում առաջնակարգ տեղ է գրավում, զգալի չափով գերազանցելով միութենական միջին ցուցանիշները[1]։ Սա բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից առանձնապես պետք է հիշատակել հետևյալները. արդյունաբերության նախահեղափոխական՝ էլակետային ծայր

---

[1] Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման տեմպերը ՍՍՀՄ-ում ամենաարագն են։ Միության միջին ցուցանիշները նրանք գերազանցում են 1,7 անգամ, Վրացական ՍՍՀ-ինը՝ 1,9 անգամ, Ադրբեջանական ՍՍՀ-ինը՝ 4,3 անգամ (տե՛ս Народное хозяйство СССР в 1964 г., Статистический ежегодник, М., 1965, стр. 128).

Կապիտալ ներդրումների բաշխումը ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի (1921—1965 թթ.)[1]

Տնտեսության ճյուղեր	Կապիտալ ներդրումների գումարը	
	մլն. սոմլի	%
Արդյունաբերություն	1562,1	46,1
Գյուղատնտեսություն (առանց կոլտնտեսությունների հաշվին կատարված ներդրումների)	360,3	10,7
Տրանսպորտ և կապ	217,4	6,4
Բնակարանային շինարարություն (առանց անհատականի)	602,1	17,8
Առևտրի և կոմունալ ձեռնարկությունների, դիտության ու կուլտուրայի հիմնարկների և այլ օբյեկտների շինարարություն	645,9	19,0
Ընդամենը	3388,8	100,0

աստիճան ցածր մակարդակը, Կոմունիստական կուսակցության և Սովետական կառավարության՝ Ռուսաստանի հետամնաց ազգային ծայրամասերը արագ թափով ինդուստրացնելու և կենտրոնական զարգացած շրջանների մակարդակին հասցնելու քաղաքականությունը և, վերջապես, առկայությունը բազմապիսի բնական ռեսուրսների, որոնց շահագործումով ու արտադրության ոլորտի մեջ ներգրավումով շահագրգռված է ոչ միայն Հանրապետության, այլև ամբողջ Սովետական Միության տնտեսությունը։

Հանրապետության ինդուստրիալ զարգացման մակարդակի մասին կարելի է դատել ժողովրդական տնտեսության հասարակական ամբողջական արդյունքի ու ազգային եկամտի ճյուղային կառուցվածքի տվյալներից (տե՛ս աղյուսակ 16)։

Միայն արդյունաբերությունը, շինարարությունն ու տրանսպորտը տալիս էն հասարակական ամբողջական արդյունքի 83,5%-ը և ազգային եկամտի ընդհանուր ծավալի 75%-ը, որոնք զգալիորեն գերազանցում են 1958 թվականի համապատասխան ցուցանիշները։

Սակայն, չնայած արդյունաբերության զարգացման բարձր տեմպերին և ժողովրդական տնտեսության կառուցվածքում արդյունաբերության բարձր տեսակարար կշռին, Հայկական ՍՍՀ-ն դեռևս ետ է մնում ՍՍՀՄ միջին տվյալներից այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են մեկ շնչին ընկնող ար-

[1] Աղյուսակը կազմված է ըստ Հայկական ՍՍՀ վիճակագրական վարչության տվյալների։

Աղյուսակ 16

Հայկական ՍՍՀ հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի ճյուղային կառուցվածքը

(տոկոսներով)[1]

Ճյուղերի անվանումը	Հասարակական արդյունք		Ազգային եկամուտ	
	1958 թ.	*1963 թ.*	*1958 թ.*	*1964 թ.*
Արդյունաբերություն	62,5	69,0	53,5	60,6
Շինարարություն	10,9	12,2	10,5	12,4
Գյուղատնտեսություն	20,5	12,2	23,5	12,9
Տրանսպորտ և կապ	1,5	2,3	1,6	3,0
Այլ ճյուղեր (առևտուր, նյութա-տեխնիկական մատակարարում, մթերումներ և այլն) . .	4,6	4,3	10,9	11,1
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0

դյունաբերական արտադրանքը, հիմնական արդյունաբերական-արտադրական ֆոնդերը, արդյունաբերության մեջ զբաղվածների տոկոսը[2]։

Վերջին հարցի հետ անմիջականորեն առնչվում է Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի երկրորդ կարևոր առանձնահատկությունը՝ գյուղատնտեսության բնղայնման բնական հիմքի սահմանափակ լինելը։ Տերիտորիայի գյուղատնտեսական յուրացվածության բարձր աստիճանը ստեղծել է մի այնպիսի վիճակ, երբ արտադրության այս ճյուղի հետագա զարգացման հնարավորությունները հողատարածությունների ընդլայնման հաշվին հիմնականում սպառվել են։ Նույնիսկ ամենալավատես հաշվումներով էլ գյուղատնտեսական շրջանառության մեջ լրացուցիչ կարգով կարելի է ներգրավել ոչ ավելի, քան 100—150 հազար հեկտար նոր հողատարածություններ, որը հավասար է գյուղատնտեսական հանդակների ընդհանուր տարածության 7—10%-ին միայն։

Ինչպես հայտնի է, մեր հանրապետության հողա-կլիմայական պայմաններում գյուղատնտեսության ամենից ավելի ինտենսիվ ճյուղերի զարգացումը

---

[1] Աղյուսակը կազմված է ըստ Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների։

[2] Այդ մասին տե՛ս Մ. Ադոնց, Հասարակական արդյունքի և ազգային եկամտի ընդլայնված վերարտադրությունը Հայկական ՍՍՀ-ում։ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1964, № 6։

կապվում է ոռոգման հողագործության հետ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոռոգելի հողատարածությունների ընդարձակման հնարավորությունները նույնպես խիստ սահմանափակ են։ Նրանք կազմում են շուրջ 200 հազար հեկտար։ Սա նշանակում է, որ ամենավերջին հնարավորությունների օգտագործման դեպքում ոռոգելի հողատարածությունները կարելի է միայն կրկնապատկել։

Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում որպես գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղի և՛ ներկայումս, և՛ ապագայում պետք է դիտվի նրա ինտենսիվացումը, որը ենթադրում է լայն մասշտաբների հասնող քիմիացում, արտադրական պրոցեսների էլեկտրիֆիկացում, ագրոտեխնիկայի ու մելիորացիայի հետագա բարելավում։ Ընթացիկ հնգամյակում արդեն նախատեսվում է խիստ ավելացնել գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը, որը տնտեսական ու կազմակերպչական բնույթի մի շարք այլ միջոցառումների հետ միասին պետք է ապահովի գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետության ու ծավալի կայուն աճը։ Այս հանգամանքը հնարավորություն կտա որոշ չափով նվազեցնել գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման տեմպերի մեջ նկատվող խզումը, հետևապես և ավելի կայունացնել հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կառուցվածքը։

Մյուս կողմից պետք է ընդգծել այդ կոմպլեքսի բաղկացուցիչ մասերի արտադրական կապերի մեջ ի հայտ եկող այն երևույթները, որոնք բխում են ներկայումս գյուղատնտեսությանը ցույց տրվող մեծ ուշադրությունից։ Տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ձևավորման ու զարգացման սկզբնական շրջանում, ընդհուպ մինչև վերջին տարիները, հանրապետության արդյունաբերության ու գյուղատնտեսության փոխհարաբերության մեջ հիմնականը, տիրապետողը գյուղատնտեսության կողմից արդյունաբերությանը հումք մատակարարելն էր։ Զարգացման արդի էտապում ավելի ու ավելի ակնհայտ է դառնում այն, որ նույն այդ գյուղատնտեսությունը արդյունաբերական արտադրանքի խոշոր սպառողի է վերածվում՝ այս ուղղությամբ ևս իր ազդեցությունը թողնելով վերջինիս վրա։

Սովետական Հայաստանի տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի հաջորդ կարևոր առանձնահատկությունը սեփական աշխատանքային ռեսուրսներով ապահովված լինելը, հումքային բազմապիսի ու հարուստ բազայի առկայությունը և արտադրության՝ նրանց վրա հիմնվող ճյուղերի գերակշռող դիրքն է։

Տնտեսության առաջատար ճյուղը՝ արդյունաբերությունը իրենից ներկայացնում է մի բարդ կոմպլեքս, որը բազմաթիվ ու բազմապիսի թելերով կապված է մի կողմից Սովետական Միության բոլոր տնտեսական շրջանների հետ, իսկ մյուս կողմից խոր ու բազմաճյուղ արմատներ է գցել հանրապետությունում՝ հանդիսանալով վերջինիս ծնունդը:

Հատկապես հզոր են այն արմատները, որոնց միջոցով արդյունաբերությունը հենվում է տեղական հանքային ռեսուրսների վրա: Հարցը նրանումն է, որ ժամանակակից արդյունաբերության մեջ օգտագործվող բազմաթիվ հանքատեսակների տերիտորիալ բաշխումը կանխորոշում է և նրանց բազայի վրա ստեղծված վերամշակող արդյունաբերության ճյուղերի տեղաբաշխումը: Հանրապետությունում հայտնաբերված և արտադրական ոլորտի մեջ ներգրավված հանքային հարստությունները, գրեթե ամբողջությամբ, այդպիսի բնույթ ունեն: Եվ պատահական չէ, որ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կորիզը կազմող և արտադրական պրոֆիլը որոշող ճյուղերի ճնշող մեծամասնությունը ծագել ու զարգանում են հենց այդ հարստությունների օգտագործման շնորհիվ:

Հատկանշական է, որ նրանք հիմք են ծառայում սոցիալիստական ինդուստրիայի առաջատար ճյուղի՝ ծանր արդյունաբերության զարգացման համար:

Տեղական մի այլ՝ գյուղատնտեսական հումքի բազայի վրա ստեղծվել և զարգանում են արտադրության «Բ» խմբի մի շարք կարևոր, հանրապետության համար պրոֆիլային ճյուղեր ու արտադրություններ (գինու-կոնյակի, պահածոների, ծխախոտի, տեքստիլ-տրիկոտաժեղենի, կաշվի-կոշիկի և այլն):

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի էական հատկանիշներից է արտադրական ցիկլերի և միջճյուղային արտադրական կապերի զարգացման բարձր մակարդակը: Սա ուղղակի արտահայտությունն է այն բանի, որ հատկապես վերջին 1—2 տասնամյակներում առավել արագ թափով զարգանում էին արտադրության ճյուղերի այսպես կոչված «վերին հարկերը», որոնք իրենց հետ բերում էին արտադրական նոր կապերի հաստատում ինչպես «հիմքային», այնպես էլ հարևան ճյուղերի ու արտադրությունների հետ:

Հանրապետության տնտեսության արդի կառուցվածքի, նրա ներքին տեխնիկա-տնտեսական կապերի (միջճյուղային և տերիտորիալ), ինչպես և զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայ-

կական ՍՍՀ-ում ավել կամ պակաս չափով ներկայացված են հետևյալ 5 արտադրական ցիկլերը կամ նրանց խմբերը[1]։

1. Գունավոր մետալուրգիայի արտադրությունների ցիկլ,
2. Ինդուստրիալ-ագրարային ցիկլերի խումբ,
3. Հիդրոմելիորատիվ ինդուստրիալ-ագրարային ցիկլ,
4. Հիդրո-էներգաարդյունաբերական ցիկլերի խումբ,
5. Վերամշակող արդյունաբերության ցիկլերի խումբ։

Համեմատաբար մեծ թվով ցիկլերի հանդես գալը Հայկական ՍՍՀ-ի խիստ սահմանափակ տերիտորիայում բխում է նրա բնական ու տնտեսական պայմանների բազմազանությունից և պետք է համարել օրինաչափ։ Սակայն այդ պայմանները բոլոր ցիկլերի զարգացման համար միատեսակ հնարավորություններ չեն ընձեռում։ Ավելին, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման, արտադրության մեջ նոր նյութերի ներդրման, նոր բնական ռեսուրսները տնտեսական շրջանառության մեջ ներգրավելու շնորհիվ ցիկլերի մի մասի կառուցվածքում տեղի են ունենում էական փոփոխություններ, ինչպես և նոր ցիկլերի ծագման նշաններ են հանդես գալիս։ Վերջին գործոնների շարքում առանձնակի տեղ է գրավում բնական գազի իբրև քիմիական հումքի օգտագործումը, որը մի շարք նոր, գոյություն ունեցող ցիկլերի մեջ չմտնող արտադրություններ կազմակերպելու սկիզբը հանդիսացավ։

Խոսելով Հայկական ՍՍՀ արտադրական ցիկլերի զարգացման պայմանների մասին, ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ նրանք առավել բարենպաստ են գունավոր մետալուրգիայի ցիկլի և վերամշակող արդյունաբերության ցիկլերի խմբի համար։ Պակաս բարենպաստ են ինդուստրիալ-ագրարային ցիկլերի խմբի և հիդրոմելիորատիվ ցիկլի զարգացման պայմանները, իսկ ինչ վերաբերում է հիդրո-էներգաարդյունաբերական ցիկլերի խմբին, ապա այն ընդլայնման ու զարգացման հեռանկարներ չունի։ Հանրապետության էլեկտրաէներգետիկական հաշվեկշռի մեծ լարվածության հետևանքով նրա որոշ էլեկտրատար ճյուղեր այսօր արդեն փոխում են իրենց բնույթը կամ կրճատում արտադրության ծավալը։

---

[1] Տվյալ դեպքում մենք հիմք ենք ընդունել արտադրական ցիկլերի՝ Ն. Ն. Կոլոսովսկու անվանացանկը, որը նա մշակել է ամբողջ Սովետական Միության համար, տալով յուրաքանչյուր ցիկլի հիմնավորումն ու բնութագիրը։ Տե՛ս Колоссовский Н. Н., Производственно-территориальное сочетание (комплекс) в Советской экономической географии, որը տեղավորված է նրա իսկ «Основы экономического районирования» (Госполитиздат, 1958) գրքում։

Այս վերջին հարցի հիշատակումը մեզ ընդհուպ մոտեցնում է տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի հաջորդ բնորոշ գծի՝ սեփական էներգետիկական ռեսուրսների համեմատաբար թույլ բազայի բնութագրմանը: Ուշադրության արժանի է, որ կոմպլեքսի այս հատկանիշը ի հայտ եկավ միայն վերջին տարիներս և գնալով ավելի ու ավելի բնորոշ է դառնում, խորը հետք թողնելով Հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության վրա:

Ինչպես տեսանք առաջին գլխում, մեզ մոտ վառելիքային օգտակար հանածոներ դեռևս չեն հայտնաբերված, որի հետևանքով էլ Հանրապետության տնտեսությունը հիմնվում է դրսից բերվող գազի, քարածխի և նավթամթերքների վրա, որոնց բաժինը վառելիքա-էներգետիկական հաշվեկշռում 1962 թ. կազմում էր մոտավորապես 90%[1] և ներկայումս գնալով ավելանում է: 1965 թ. ամբողջ վառելիքը (3,6 մլն. պայմանական տ) սպառողների մեջ բաշխվել է հետևյալ կերպ՝

էլեկտրաէներգիայի արտադրություն	—18%
ջերմաէներգիայի արտադրություն	—20%,
ջերմային շարժիչներում մեխանիկական էներգիայի արտադրություն	—18%,
տեխնոլոգիական և այլ նպատակների համար	—44%[2]:

Անցած 4—5 տարիների ընթացքում, ինչպես և մոտ ապագայում սպասվող հիմնական փոփոխությունը էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով օգտագործվող վառելիքի տեսակարար կշռի զգալի ավելացումն է: Մյուս կարևոր փոփոխությունը դա վառելիքային հաշվեկշռում բնական գազի հանդես գալը և գերիշխող դիրքի նվաճումն է: Եթե 1960 թվականին այն ամբողջովին բացակայում էր, ապա 1963 թվականին կազմեց 35 տոկոս, իսկ 1965 թ. հասավ մինչև 65%: Սպասվում է, որ 1970 թ. Հանրապետությունում կպահանջվի ծախսել մինչև 5 մլրդ.մ³ գազ՝ 1965 թ. 2,5 մլրդ.մ³-ի փոխարեն:

Տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի քննարկվող հատկանիշի մասին խոսելիս չի կարելի չնշել, որ ընդամենը 3 տասնամյակ առաջ այն կարծիքն էր տիրապետում, որ Հայկական ՍՍՀ-ն հանդիսանում է Սովետական Միության հիդրոէներգետիկական ռեսուրսներով հարուստ շրջաններից մեկը: Դա նպաստեց այն բանին, որ Հանրապետության ամբողջ էլեկտրատնտե-

[1] Տե՛ս Народное хозяйство Армянской ССР в 1964 г., Статистический ежегодник, Ереван, 1965, стр. 14.

[2] Տվյալներն ստացված են քամ Народное хозяйство Армянской ССР в 1965 г., Статистический ежегодник, Ереван, 1966, стр. 22.

սությունը ի սկզբանե կառուցվեց ջրային էներգիայի օգտագործման վրա։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ 1926—1960 թթ. կառուցվեց մոտավորապես 4 տասնյակ մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 627 հազ. կվտ. ընդհանուր կարողությամբ, որից 563 հազ. կվտ՝ Հրազդան գետի վրա։ Ներկայումս հանրապետության ջրային էներգիայի պաշարների մոտ 40%-ը արդեն օգտագործվում է[1]։ Մինչև 1963 թ., երբ դեռ շահագործման չէր հանձնվել Երևանի ջերմաէլեկտրակենտրոնը (ՋԷԿ), արտադրվող էլեկտրաէներգիայի 98%-ը տալիս էին հիդրոէլեկտրակայանները։ Հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի բուռն աճը, մի կողմից, և Հրազդանի կասկադի արտադրանքի նվազումը (կապված Սևանի պրոբլեմի նոր լուծման հետ), մյուս կողմից, հույժ խնդիր դրին կարճ ժամանակում կառուցել ու գործարկել էլեկտրաէներգետիկական նոր կարողություններ։

Ադրբեջանական գազի Հայկական ՍՍՀ մուտք գործելու շնորհիվ էլեկտրաէներգիայի արտադրության համար նոր լժան վառելիքային բազա ըստեղծվեց։ Կառուցվեցին ու շարք մտան Երևանի, Կիրովականի ու Հրազդանի (մասամբ) ջերմաէլեկտրակենտրոնները, որոնք լուրջ որակական փոփոխություններ մտցրին էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի մեջ։ Արդեն 1965 թ. էլեկտրաէներգիայի կեսից ավելին արտադրվեց բնական գազի միջոցով։

Առաջիկայում ևս առաջնությունը տրվելու է ջերմաէլեկտրակայաններին, և էլեկտրաէներգիայի հաշվեկշռում նրանց դերը ավելի է մեծանալու, չնայած որ մոտակա տարիներս շահագործման կհանձնվեն Որոտանի 3 կայանները (Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի) և Սևկովի Դեբեդի կասկադի շինարարությունը Հիդրոէլեկտրակայանների մեծ մասը էլեկտրասիստեմի ծանրաբեռնվածության օրական ու սեզոնային գրաֆիկի կարգավորիչի դեր է կատարելու։

Քանի որ ջերմաէլեկտրակայանները ամբողջությամբ աշխատում են ներմուծվող վառելիքով, ապա նրանց դերի հետագա մեծացումը ավելի ընդգծում ու ցայտուն է դարձնում հանրապետության սեփական էներգետիկական բազայի թուլությունը։ Վերջինիս արտահայտությունն է նաև այն, որ մեծ խզվածք է գոյացել տեղում արտադրվող էլեկտրաէներգիայի քանակի ու նրա նկատմամբ ունեցած պահանջարկի միջև։ Օրինակ, 1965 թ. էլեկտրաէներգիայի պակասի գրեթե 37%-ը լրացվել է Ադրբեջանական ՍՍՀ-ից ստացվող էլեկտրաէներգիայի հաշվին։

[1] Այս ցուցանիշների մեծությամբ Հայկական ՍՍՀ-ն գտնվում է աշխարհի ամենից ավելի «հիդրոէներգետիկական» երկրների՝ Նորվեգիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Ճապոնիայի հետ միևնույն մակարդակի վրա։

Հաշվումները ցույց են տվել, որ 1970 թ. հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը կկազմի 8,9 մլրդ. կվտ-ժ, որը ավելի քան 2 անգամ գերազանցում է 1965 թ. մակարդակը։ Ենթադրվում է, որ Որոտանի կասկադի հիդրոէլեկտրակայանների և Հրազդանի ջերմաէլեկտրակայանի շինարարության ավարտումը, էներգահզորությունների ավելի քան 1 մլն. կվտ աճ տալով հանդերձ, չի կարող ապահովել հանրապետության կարիքները։ Տարեկան դարձյալ մոտավորապես 1 մլրդ. կվտ-ժ էլեկտրաէներգիա հարկ կլինի ստանալ Ադրբեջանից։ Միաժամանակ նախատեսված է 100 մլն. կվտ-ժ հաղորդել Նախիջևանի ԻՍՍՀ։

Համապատասխան չափով աճելու է և վառելիքի պահանջարկը. ըստ գոյություն ունեցող հաշվարկների, 1970 թ. այն հասնելու է 6,8 մլն. տ պայմանական վառելիքի, որից 5 մլն. տ ի հաշիվ բնական գազի և 1 մլն. տ ի հաշիվ մազութի։ Էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվելու է 2,5 մլն. տ պայմանական վառելիք[1]։

Հայկական ՍՍՀ-ն բնական գազ առայժմ ստանում է Ադրբեջանական ՍՍՀ Ղարադաղի հանքավայրից, որը սակայն ի վիճակի չէ պահանջվող չափով ավելացնել գազի հանույթը։ Պակասը պետք է լրացվի Հյուսիսային Կովկասից ստացվող գազի հաշվին։ Ենթադրվում է, որ 1970 թվականից սկսած Անդրկովկասի, հատկապես Հայկական ՍՍՀ վառելիքա-էներգետիկական հաշվեկշռում զգալի տեղ կգրավի իրանական գազը, որի տեղափոխման համար նախատեսվում է կառուցել հզոր գազամուղ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման տեղաբաշխումը, որն իր հիմնական գծերով ձևավորվել է հետպատերազմյան շրջանում։ Էլեկտրաէներգիայի արտադրության 95%-ը բաժին է ընկնում Երևան—Սևան հատվածում կառուցված Հրազդանի կասկադի 6 կայաններին (չհաշված 2 փոքրիկ սեզոնային ՀԷԿ-երը) և Երևանի ու Հրազդանի ՋԷԿ-երին։ Էլեկտրաէներգիայի մնացած մասը արտադրվում է Զորագետի, Լենինականի, Ողջիի և մոտավորապես 30 այլ մանր հիդրոէլեկտրակայաններում (տե՛ս քարտեզը)։ Հատկանշականն այն է, որ ապագայում Երևան-Սևան շրջանի դերը՝ իբրև հանրապետության էլեկտրաէներգետիկան հիմնական կենտրոնի, ավելի է մեծանալու։ Նախատեսվում է, մասնավորապես մինչև 1970 թ., Հրազդանի ջերմաէլեկտրակայանի հզորությունը հասցնել 700 հազ. կվտ, որը 150 հազ. կվտ-ով ավելի է, քան հանրապետության խոշորագույն՝ Երևանի ջերմաէլեկտրակայանի հզորությունը։

---

1 *Տե՛ս* С. Саркисян, Армении—мощную энергетическую базу, «Коммунист» *օրաթերթ, 25 մարտի 1966 թ.։*



9. Հայկական ՍՍՀ էլեկտրակայաններ:

էլեկտրաէներգիայի սպառման տեղաբաշխումը զգալիորեն տարբերվում է նրա արտադրության տեղաբաշխումից։ Ներկայումս Հանրապետության ամբողջ տերիտորիան ծածկված է էլեկտրահաղորդման գծերի խիտ ցանցով։ Նրանց միջոցով էլեկտրաէներգիա է առաքվում բոլոր քաղաքներին, քաղաքատիպ ավաններին և գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնությանը։ Մնացած, թվով ոչ շատ, գյուղերը էլեկտրաէներգիա առայժմ ստանում են նրանցում տեղակայված շարժական էլեկտրակայաններից կամ գյուղական ՀԷԿ-երից։ Այնուամենայնիվ, սպառվող էլեկտրաէներգիայի մինչև 80%-ը բաժին է ընկնում ընդամենը 2 քաղաքի՝ Երևանին ու Կիրովականին։ Խոշոր սպառողներ են հանդիսանում նաև Լենինականը, Ալավերդին, Ղափանը և Քաջարանը։

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսը բնութագրող հատկանիշներից է տարեցտարի ավելի սրվող մի պրոբլեմ, ինչպիսին ջրի պրոբլեմն է, որի լուծումը, ի տարբերություն էլեկտրաէներգիայի, վառելիքի կամ այս կամ այն հումքի պրոբլեմների լուծման, պետք է փնտրել միայն և միայն տեղում, լուրջ հույսեր չկապելով հեռավոր տարածություններից ջրի փոխադրման հետ։

Հարցը նրանումն է, որ այսօր արդեն ջրային ռեսուրսների անհամաչափ տեղաբաշխումը տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում մի շարք շրջաններում։ Ոչ հեռու ապագայում հարցի այս կողմի ավելի սրման հետ մեկտեղ հանրապետության առաջ ամբողջ հասակով մեկ կծառանա ջրի պակասի պրոբլեմը ընդհանրապես։

Ներկայումս արդեն Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ջրի պահանջը, ներառյալ և հիդրոէներգետիկայի կարիքները, կազմում է տարեկան մոտավորապես 4 մլրդ. մ³, որը հավասար է միջին խոնավություն ունեցող տարվա մակերեսային ընդհանուր հոսքի ավելի քան 56%-ին, իսկ եթե նկատի ունենանք ծայրահեղ ջրասակավ տարին, ապա ջրային ռեսուրսների օգտագործման գործակիցը կանցնի նույնիսկ 0,75-ից։

Հայտնի է, որ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղեր ջրի նկատմամբ տարբեր պահանջներ են ներկայացնում։ Եթե նրանց մի մասը օգտագործում է ջուրը, չպակասեցնելով նրա քանակը և որոշ դեպքերում միայն աղտելով որակի վրա (հիդրոէներգետիկա, արդյունաբերություն, կոմունալ տնտեսություն), ապա մյուս մասը ջուր սպառող է (գյուղատնտեսություն և արդյունաբերության որոշ ճյուղեր)։ Երկրորդ դեպքում ջուրն անվերադառձ կերպով կորչում է, ամբողջապես դուրս գալով ջրատնտեսական հաշվեկշռից։ Ջրի այդպիսի կորուստը Հայկական ՍՍՀ-ում գնահատվում է տարեկան ավելի

քան 1,5 մլրդ. մ³, որի հիմնական մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը (ոռոգմանը)։

Մոտավոր հաշվումները ցույց են տալիս, որ առաջիկա 20 տարվա ընթացքում Հանրապետության պահանջարկը, նկատի չունենալով հիդրոէներգետիկան, կկրկնապատկվի։ Այդ դեպքում արդեն, եթե ելնենք նույնիսկ Հանրապետության միջին տվյալներից, մակերեսային ջրերի օգտագործման աստիճանը կկազմի 60—70 %։ Այս տվյալներն արդեն մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ ամենամոտ ժամանակներս արդեն ջրի պակասը արտադրողական ուժերի զարգացումը սահմանափակող գործոնի դեր է կատարելու։ Բայց եթե հաշվի առնենք ոչ թե ամբողջ Հանրապետության տարեկան միջին ցուցանիշները, այլ ջրային ռեսուրսների տարածական և տարվա ընթացքում բաշխվածության իրական պատկերը, ապա ակնհայտ է արդեն այնպիսի հարցերի առաջարեզ դալը, որոնք ջրամատակարարումը և նրա՝ տարածության ու ժամանակի մեջ կարգավորումը դնում են Հանրապետության ամենակարևոր ու անհետաձգելի ժողովրդատնտեսական պրոբլեմների շարքը։

Ջրային տնտեսությունը եղել ու մնում է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը։ Ջրային տնտեսության, ինչպես և էլեկտրաէներգետիկայի, կարևորությունը որոշվում է նրանով այն առանձնահատկությամբ, որ հավասար չափով հարկավոր են ու ծառայում են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերին։ Բայց եթե Հայկական ՍՍՀ ներկա տերիտորիայում մարդու անձնական կարիքների ու գյուղատնտեսության համար ջուրն սպառվել կամ օգտագործվել է հնուց ի վեր, ապա նրա օգտագործման մյուս բնագավառները (հիդրոէներգետիկա, արդյունաբերություն, ժամանակակից իմաստով կոմունալ տնտեսություն) համեմատաբար նոր են։ Ներկայումս ինժեներական կառուցումներ ունեն և ջրամատակարարման սիստեմներից օգտվում են Հանրապետության բոլոր՝ 50 քաղաքներն ու քաղաքատիպ ավանները, գյուղական բնակավայրերի զգալի մասը, մոտավորապես 250 հազար հեկտար ոռոգելի տարածություն, ավելի քան 100 հազար հեկտար արոտավայրեր և 2000-ի հասնող արդյունաբերական, տրանսպորտային ու այլ արտադրական ձեռնարկություններ (այդ թվում մոտավորապես 40 հիդրոէլեկտրակայաններ)։

Չնայած այս հսկայական նվաճումներին, Հանրապետության բնական պայմանների առանձնահատկությունները և տնտեսական զարգացման շահերը թելադրում են զգալիորեն ընդլայնել և որակապես բարելավել ջրատնտեսական միջոցառումները, նպատակ ունենալով առաջին հերթին վճռականորեն բարձրացնել ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը։ Այդ

միջոցառումների հիմքում պետք է դրվի ջրամատակարարման պրոբլեմի կոմպլեքսային լուծումը, որը հաշվի կառնի բոլոր սպառողների, ինչպես նաև ջրի պաշարների՝ իբրև բնության տարրի պահպանման ու վերականգնման շահերը։

Հայկական ՍՍՀ-ում ջրի սպառման տերիտորիալ տարբերությունները համարյա նույնությամբ կրկնում են արտադրողական ուժերի տեղաբաշխման պատկերը, միաժամանակ խստիվ կերպով տարբերվելով ջրային ռեսուրսների տեղաբաշխումից։ Դրանով էլ հենց բացատրվում է այն անհամաչափությունը, որը գոյություն ունի հանրապետության տարբեր շրջանների ջրով ապահովվածության ցուցանիշների միջև։ Ջրի պահանջի և այն բավարարելու հնարավորությունների միջև ամենից ավելի մեծ խզվածք, հատկապես ամառվա ամիսներին, նկատվում է Զանգեզուրում, Արարատյան դաշտում և հանրապետության հյուսիս-արևելքի որոշ շրջաններում։

Ջրի մատակարարման ու ծախսման առանձնահատկությունները ավելի ակնառու կերպով փոփոխվում են՝ կախված տերիտորիայի բարձրությունից։ Ելած այդ առանձնահատկությունների, հանրապետությունում կարելի է անջատել 3 ուղղաձիգ գոտիներ։

1. Ցածրադիր գոտի (մինչև 1000—1100 մ). ընդգրկում է գետերի ստորին հոսանքի շրջանը և սնվում է լեռնային ու նախալեռնային գոտուց հոսող ջրերով։ Խոնավության ամենամեծ դեֆիցիտն ունի, ուստի և պահանջվում է լրիվ ոռոգում։ Ջրի հիմնական սպառողը հողագործությունն է։ Ընչին քանակությամբ ջուր օգտագործվում է հիդրոէներգետիկայի և բնակավայրերի կարիքների համար։ Ջրի անվերադարձ կորուստների հիմնական մասը բաժին է ընկնում այս գոտուն։

2. Նախալեռնային գոտին (1000—1100 մետրից մինչև 2000—2200 մ) ամենից ավելի ընդարձակն է, գրավում է հանրապետության տերիտորիայի մոտավորապես կեսը և հանդիսանում է քաղաքային բնակեցման և արդյունաբերական շինարարության հիմնական շրջանը։ Մեր հանրապետության պայմաններում նա համընկնում է գետերի միջին հոսանքի հետ, որը աչքի է ընկնում հիդրոէներգետիկական ռեսուրսների համեմատաբար մեծ կուտակումով։ Դժվար է առանձնացնել ջուր սպառող ու օգտագործող որևէ մեկ հիմնական ճյուղ։ Այստեղ կոմունալ, արդյունաբերական ու գյուղատնտեսական ջրամատակարարման ու հիդրոէներգետիկայի շահերը խաչաձևվում են։ Զգուշացնց կարևոր հանգամանք է, որ ցածրադիր գոտում ջրամատակարարման շատ հարցեր որոշվում են հենց այս գոտում։ Այդ պատճառներով էլ վերջինիս ջրային ռեսուրսների կոմպլեքսային ու արդյունավետ օգտագործումը ձեռք է

բերում առանձնակի նշանակություն։ Վերջապես հատկանշական է և այն, որ գոտու ջրատնտեսական հաշվեկշռում մեծ տեսակարար կշիռ ունեն այն ճյուղերը (հիդրոէներգետիկա, արդյունաբերական ու կոմունալ ջրամատակարարում), որոնք ջրի աննշան կորուստներ են տալիս, բայց միաժամանակ կարող են (խոսքը վերջին երկուսի մասին է) խիստ վատթարացնել նրա որակը։

3. Լեռնային գոտում (2000—2200 մ-ից բարձր) բացակայում է ոռոգում պահանջող հողագործությունը, նվազագույնի է հասնում մշտական բնակչությունը և չկան հիդրոէլեկտրակայաններ, ուստի և տնտեսության ջուր սպառող հիմնական ճյուղը արոտային անասնաբուծությունն է։ Նրա համար նույնպես բնորոշ է ջրի համեմատաբար մեծ քանակության կորուստը։

Եզրափակելով վերևում ասվածը, թվարկենք այն հիմնական պրոբլեմները, որոնց լուծումը նոր աստիճանի կբարձրացնի Հանրապետության ջրային տնտեսությունը. ջրամբարների կառուցումը և նրա միջոցով մակերևույթային հոսքի կարգավորվածության բարձրացումը, ջրի ստորերկրյա պաշարների ավելի լայն ու ռացիոնալ օգտագործումը, Սևանի ջրերի դարավոր պաշարների օգտագործման վերջնական դադարեցումը և նրանց փոխարինումը այլ աղբյուրներով, ջրային տնտեսության սանիտարական-տեխնիկական վիճակի բարելավումը (առաջին հերթին արդյունաբերական և տնտեսական-աղբային ջրերի քիմիական և այլ տիպի մաքրման կազմակերպումը), որը աղտոտումից ղերծ կպահի հատկապես Ողջին, Դեբեդն ու Հրազդանը։

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի համար իրրև բնորոշ գիծ պետք է դիտել աշխատանքի տերիտորիալ բաժանման համեմատաբար բարձր մակարդակը և նրա հետ հակադարձ կապակցության մեջ գտնվող տրանսպորտային աներաբեկպատ պայմանները, որոնք դժվարացնում են այդ բաժանման տրանսպորտային սպասարկումը ու արտադրության տերիտորիալ կազմակերպումը։ Սա ըստ էության խտացրած արտահայտությունն է վերևում բնութագրված մյուս հատկանիշների և այն տարածական (շրջանային) տարբերությունների, որոնք գոյություն ունեն կոմպլեքսի ներսում։

Հանրապետության սահմաններում աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման արդի նկարագրի ձևավորման գործում վճռական դեր են խաղացել 3 գործոն՝ բնական պայմանների ու ռեսուրսների տեղաբաշխումը, բնակչության ու աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումը և տնտեսության ու նրա տեղաբաշխման պլանային ղեկավարման սիստեմը։

Տնտեսության պլանային ղեկավարման հետ անմիջականորեն կապվում են բնական ռեսուրսների յուրացման հերթականության, արտադրության այս կամ այն ճյուղի ծավալի որոշման, ամբողջ կոմպլեքսի ու նրա տերի-

տորիալ մասերի զարգացման տեմպերի, միջշրջանային արտադրական կապերի հաստատման ու մի շարք այլ հարցեր։ Առաջին գործոնը հողագործության, անասնապահության և լեռնահանքային արդյունաբերության կոնկրետ տեղաբաշխումն է թելադրում։ Ինչ վերաբերում է երկրորդ գործոնին՝ բնակչության ու աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխմանը, ապա այն վճռական աղդեցություն է ունենում վերամշակող ճյուղերի և առաջին հերթին ժողովրդական սպառման ապրանքների արտադրության տեղաբաշխման վրա։

Քննարկվող հատկանիշի երկրորդ կողմը՝ կոմպլեքսի ներսում արտադրական կապերի իրականացման համար տրանսպորտային պայմանների անբարենպաստ լինելը գնալով ավելի զգալի է դառնում։ Նախահեղափոխական շրջանի տրանսպորտային շինարարությունը պայմանավորված չի եղել Հայաստանի տնտեսական զարգացումով։ Սակայն հետագայում, սովետական իշխանության տարիներին, արդեն ձևավորված ճանապարհային ցանցը նպաստել է ընդհանրապես արտադրողական ուժերի և նրանց տեղաբաշխման առանձին հատկանիշների զարգացմանը։ Սա բնորոշ է հատկապես երկաթուղիների համար, որոնք մեծ դեր խաղացին իրենց հարող շրջանների բնական հարստությունների յուրացման, արդյունաբերական խոշոր կենտրոնների ստեղծման և հանրապետության տնտեսության տերիտորիալ տարբերությունների ձևավորման գործում։

Արդի էտապում ավելի ու ավելի ակնհայտ է դառնում ճանապարհաշինության ետ մնալը արտադրողական ուժերի զարգացման տեմպերից, որը մասամբ պայմանավորված է հանրապետության մակերևույթի բարդ պայմաններով։ Մինչդեռ ժողովրդատնտեսական կոմպլեքսի տերիտորիալ կառուցվածքի հետագա կատարելագործումը, մի շարք տնտեսապես ետ մնացող տերիտորիաների արդյունաբերական զարգացումը, արտադրության շրջանային մասնագիտացման հետագա խորացումը շատ բաներով կախված են նոր ճանապարհների շինարարությունից և տրանսպորտային ցանցի տեղաբաշխման բարելավումից։

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի մինչ այժմ բնութագրված հատկանիշները տեղական յուրահատուկ պայմանների արտահայտությունն են և արտացոլում են նրա ներքին դրությունը, չնայած որ նրանց որոշ կողմեր սերտորեն կապված են հանրապետության տնտեսական զարգացման արտաքին պայմանների հետ։ Սակայն հանրապետության կոմպլեքսը ունի մի բնորոշ գիծ, որը ինչքան որ ներքին պայմանների՝ արդեն քննարկված հատկանիշների ընդհանրության արգասիք է, նույն չափով էլ, եթե ոչ ավելի, պայմանավորված է արտաքին գործոններով։ Դա կոմպլեքսի

ներսում մասնագիտացման ճյուղերի տիրապետող դիրքն է, ճյուղեր, որոնք իրենց արտադրանքի ծավալով գերազանցում են հանրապետության և նույնիսկ Անդրկովկասի պահանջները։ Այս հատկանիշը պայմանավորող գործոնների մեջ վճռական դեր են խաղում ամբողջ Սովետական Միության սահմաններում գործող աշխատանքի սոցիալիստական տերիտորիալ բաժանման օրինաչափությունները։

Հայկական ՍՍՀ-ն հանդիսանում է Սովետական Միության ժողովրդատնտեսական կոմպլեքսի կարևոր տերիտորիալ օղակներից մեկը։ Նրա դերը այդ կոմպլեքսում բնութագրվում է ոչ միայն ըստ տերիտորիայի ու բնակչության թվի տեսակարար կշռի (համապատասխանաբար 0,13 % և 0, 95%), այլև, հիմնականում, տնտեսության այնպիսի ճյուղերով, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը (նրա որոշ ճյուղերը), խաղողագործությունն ու հարավային պաղպաղատուծությունը՝ նրանց վրա հիմնվող գինու-կոնյակի ու պահածոների արդյունաբերության հետ միասին և, վերջապես, տեքստիլ-արիկոտաժեղենի արդյունաբերությունը։

Հատկանշական է, որ արդյունաբերության գծով արտահանվող արտադրանքի ծավալը (արժեքային արտահայտությամբ) գերազանցում է ներմուծվողին։ Նպատակ չունենալով մանրամասն քննության ենթարկել արդյունաբերության ապրանքայնության բնույթը, նշենք միայն, որ հանրապետության արտահանման մեջ արժեքային արտահայտությամբ առաջին տեղը գրավում է տեքստիլ-արիկոտաժեղենը (շուրջ $^1/_3$), երկրորդ տեղումն է մեքենաշինության արտադրանքը (ավելի քան $^1/_5$), սրանց հաջորդում են քիմիական ապրանքները (մոտ 20%), գինիները, կոնյակները, պահածոները, գունավոր մետաղները։ Ընդ որում արտահանության ընդհանուր ծավալում արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը անցնում է 99%-ից (ներմուծման կառուցվածքում նրա բաժինը զգալի չափով պակաս է)։

Հանրապետության մասնագիտացման ճյուղերից ապրանքայնության ամենամեծ աստիճանն ունի քիմիական արդյունաբերությունը, որը հանրապետությունից դուրս է ուղարկում իր արտադրանքի ավելի քան 80%-ը։ Ապրանքայնության բարձր ցուցանիշներով աչքի են ընկնում նաև գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը (արտադրանքի $^3/_5$-ը), թեթև արդյունաբերությունը (ավելի քան 50 %-ը)։ Սննդի արդյունաբերությունը միութենական շուկա է հանում իր արտադրանքի $^1/_3$-ը միայն։

Այս ճյուղերը հանրապետության արտադրական դեմքը բնութագրում են ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանում։ Ներկայումս

արտասահմանյան 70 երկրներ առաքվում է Սովետական Հայաստանում արտադրվող 150 տեսակի արտադրանք, որի արժեքի մոտ կեսը բաժին է ընկնում մեքենաշինությանը։

Հիշատակված 5 ճյուղերը Հայկական ՍՍՀ-ի համար ներկայանալով իբրև մասնագիտացման ճյուղեր, միաժամանակ կազմում են նրա տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կմախքը և ապագայում էլ որոշելու են նրա զարգացման հիմնական ուղղությունը։ Հանրապետությունում ներկայացված մյուս ճյուղերը հիմնականում օժանդակ դեր են կատարում և կոչված են սպասարկելու բնակչության անմիջական կարիքներն ու մասնագիտացման ճյուղերի պահանջները, չնայած որ նրանց արտադրանքի առանձին տեսակներ ևս ինքնուրույն միջհանրապետական նշանակություն ունեն։

Սրանք են ահա Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի հիմնական հատկանիշները։ Արտացոլելով կոմպլեքսի ներքին բովանդակությունը, նրանք միաժամանակ բացահայտում են այդ կոմպլեքսի ուժեղ ու թույլ կողմերը և այն ընդհանուր պրոբլեմները, որոնք կանգնած են հանրապետության տնտեսական զարգացման ճանապարհին։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ առաջին

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱ–ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերությունը, ինչպես նշվեց վերևում, Հայկական ՍՍՀ ժամանակակից տնտեսության առաջատար ու ամենահեռանկարային ճյուղն է։ Նա հանդիսանում է հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կմախքը և միաժամանակ որոշում է նրա տեղը աշխատանքի միութենական տերիտորիալ բաժանման սիստեմում։

Արդյունաբերության կողմից նման տիրապետող դիրքերի նվաճումը ապահովվեց նրա զարգացման խիստ բարձր տեմպերի շնորհիվ։ 1965 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 107 անգամ։

Ուշադրության արժանի է, որ հանրապետության արդյունաբերության զարգացման տեմպերը չեն նվազի նաև ընթացիկ՝ 1965—1970 թթ. հնգամյակում։ Արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալը նախատեսվում է ավելացնել 1,8 անգամ, որը կապահովի աճման 12,5% միջին-տարեկան տեմպ։ Սովետական Միության արդյունաբերությունը ամբողջությամբ վերցրած կաճի 1,5 անգամ[1]։

Չնայած նախասովետական Հայաստանի տնտեսության ագրարային, կիսագաղութային բնույթին և լեռնահանքային արդյունաբերության ու պղնձաձուլության առաջատար դերին, այնուամենայնիվ արտադրության միջոցներ արտադրող ճյուղերի բաժինը 1913 թ. չէր անցնում 29 %-ից, իսկ 1919 թ. նվաճեց մինչև 12%։ Սովետական իշխանության տարիներին չնայած սպառման առարկաների արտադրության բացարձակ քանակի անընդհատ աճին, նրա և

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվները։

«Ա» խմբի արտադրանքի հարաբերակցությունը հաստատուն ձևով փոխվում էր հօգուտ վերջինիս։ 1949 թ. արդեն գերապանցությունն անցավ արտադրամիջոցների արտադրությանը, իսկ ներկայումս նրա տեսակարար կշիռը կազմում է 67% (տե՛ս աղյուսակ 17)։

Տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Ա» և «Բ» խմբերի հարաբերակցության այսպիսի փոփոխությունը ոչ միայն Հանրապետության սոցիալիստական ինդուստրացման հաջողությունների վառ արտահայտությունն է, այլև վկայում է սպառման առարկաների արտադրության ծավալման համար անցյալի սահմանափակ հնարավորությունների մասին։ Զարգացման ներկա փուլի բնորոշ գծերից մեկն այն է, որ ինդուստրացման ձեռք բերած հաջողությունների հիման վրա ամբողջ արդյունաբերության բուռն վերելքի հետ միասին ավելի մեծ ուշադրություն է դարձվում ժողովրդական սպառման առարկաների արտադրության ընդլայնման վրա։ Նույն աղյուսակից պարզորոշ կերպով երևում է, որ սկսած դեռևս 1955 թվականից «Ա» և «Բ» խմբերի հարաբերակցության փոփոխությունը ավելի ու ավելի աննշան է դառնում, իսկ վերջին 5—6 տարվա ընթացքում, ըստ էության, չի նկատվում։

Աղյուսակ 17[1]

Արտադրամիջոցների արտադրության («Ա» խումբ) և սպառման առարկաների արտադրության («Բ» խումբ) տեսակարար կշիռը արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ (%-ներով)

Տարեթվեր	Ամբողջ արդյունաբերությունը	Այդ թվում	
		Արտադրամիջոցների արտադրությունը («Ա» խումբ)	Սպառման առարկաների արտադրությունը («Բ» խումբ)
1913	100	29	71
1919	100	12	88
1928	100	24	76
1940	100	41	59
1945	100	44	56
1955	100	59	41
1958	100	60	40
1960	100	64	36
1962	100	67	33
1963	100	67	33
1964	100	67	33
1965	100	67	33

Հայկական ՍՍՀ արդյունաբերական դեմքը բնորոշող և ամենից ավելի մեծ ապրանքայնությամբ օժտված ճյուղերն են մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, տեքստիլ-տրիկոտաժեղենի ու սննդի արդյունաբերությունը։ Արդյունաբերության հիմնական ցուցանիշների՝ համախառն արտադրանքի, արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի և բանվորների թվի բաղադրումը ցույց է տալիս, որ արդյունաբերության առա-

[1] Աղյուսակը կազմված է ըստ Народное хозяйство Армянской ССР в 1965 г. վիճակագրական տարեգրքի։

ջատար ճյուղերի թվին պետք է դասել նաև շինանյութերի արտադրությունը։ Այս վեց ճյուղերին բաժին է ընկնում ամբողջ հանրապետության արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի արժեքի մինչև 65%-ը, բանվորների թվի 75%-ը և արդյունաբերության համախառն արտադրանքի մոտավորապես 85%-ը։

Արդյունաբերության ճյուղային կառուցվածքում զգալի տեղ են գրավում նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը և անտառային ու փայտամշակման արդյունաբերությունը, սակայն սրանք ինչպես իրենց բնույթով, այնպես էլ քանակական համեմատական ցուցանիշներով Հայկական ՍՍՀ-ի համար պրոֆիլային ճյուղեր համարվել չեն կարող։

Հայկական ՍՍՀ-ի, ինչպես և Սովետական Միության բոլոր հանրապետությունների, արդյունաբերության զարգացման ու տեղաբաշխման փոփոխությունները ընթանում են ժողովրդական տնտեսության պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացման տնտեսական օրենքի համապատասխան։ Ընդ որում արդյունահանող արդյունաբերության ճյուղերը զարգանում են այնտեղ, որտեղ առկա են համապատասխան օգտակար հանածոները։ Դրան համապատասխան որոշվում է նաև վերջիններիս արդյունաբերական օգտագործման հերթականությունն ու ծավալը[1]։ Վերամշակող արդյունաբերության ճյուղերը առավելապես հարում են աշխատանքային ռեսուրսների ավելցուկ ունեցող շրջաններին ու հումքի աղբյուրներին։

Արդյունաբերության առաջատար ճյուղերի մեջ մտնող հիմնական արտադրությունների ի հայտ գալը մեր հանրապետությունում, ինչպես և նրանց տեղաբաշխման արդի պատկերը այդ երկու պայմանների կիրառման ցայտուն արտահայտությունն է։

Հարկ է նշել, որ մի տևական ժամանակ, հատկապես 30-ական ու 40-ական թվականներին, արդյունաբերության ճյուղերի տեղաբաշխման գործում էական ներգործություն ուներ էլեկտրաէներգիայի աղբյուրներին հարող ճյուղերի զարգացումը։ Սակայն ներկայումս այդ օրինաչափությունը կորցրել է իր ուժը, և նախկինում ստեղծված էլեկտրատար ճյուղերը դիջել են իրենց առաջատար դերը այլ ճյուղերի։

Չափազանց թույլ է արտահայտվում այն օրինաչափության ազդեցությունը, որը թելադրում է մի շարք վերամշակող ճյուղեր տեղաբաշխել նրանց արտադրանքի սպառման վայրերում։ Այդ ճյուղերը (սննդի, թեթև և շինանյութերի արդյունաբերության որոշ ճյուղեր) իրենց արտադրանքի բացարձակ ծա-

[1] Տե՛ս Пробст А. Е., Размещение социалистической промышленности (теоретические очерки). Экономиздат, М., 1962, стр. 16.

վալով շոշափելի բաժին ունեն, բայց նրանք չէ, որ բնութագրում են հանրապետության արտադրական պրոֆիլը և, բացառությամբ որոշ արտադրությունների, հիմնականում օժանդակ նշանակություն ունեն։

***

Նախքան Հայկական ՍՍՀ արդյունաբերական կոմպլեքսի տերիտորիալ հատվածների վերլուծությանն անցնելը, համառոտակի քննության առնենք նրա հիմնական ճյուղերի զարգացման ու տեղաբաշխման պայմաններն ու առանձնահատկությունները։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության «ֆունդամենտալ», տեղական հումքային բազայի վրա կառուցված ճյուղերից է գունավոր մետալուրգիան։

Առ այսօր հանրապետության ընդերքից արդյունահանվում և հարստացվում են պղնձային, պղնձա-մոլիբդենային և բազմամետաղային հանքատեսակներ, որոնցից միայն պղնձահանքն է, որ վերամշակման հաջորդ աստիճանները ևս անցնում է տեղում՝ Հայկական ՍՍՀ-ում, ներառյալ նաև վայերբարսային պղնձի ու գլանվածքի ստացումը և նրա օգտագործումը մեքենաշինության մեջ։

Սովետական իշխանության տարիներին արդյունաբերության այս հնադույն ճյուղը ոչ միայն հիմնովին ավերված վիճակից վերականգնվեց, այլև ենթարկվեց արմատական վերակառուցման։ Փակվեցին նվազ շահութաբեր մանր ձեռնարկությունները և պղնձի ամբողջ ձուլումը կենտրոնացվեց Ալավերդում։ Վերակառուցվեցին հին հանքերը, կառուցվեցին նորերը, մեքենայացվեցին սաորերկրյա աշխատանքները պղնձահանքերում։ Այս բոլորի հետևանքով անհամեմատելի չափով հզորացավ հումքային բազան՝ ապահովելով պղնձաձուլության արագ աճը։

Պղնձի կոնցենտրատի հիմնական մասը ստացվում է Զանգեզուրում՝ Ղափանի պղնձի, Քաջարանի, Ագարակի ու Դաստակերտի պղնձա-մոլիբդենային կոմբինատներում, որտեղից այն ուղարկվում է Ալավերդի։ Կոնցենտրատի մնացած մասը տալիս է վերջերս շահագործման հանձնված Ախթալայի հարըստացուցիչ ֆաբրիկան, որը աշխատում է տեղի, ինչպես և հարևան Շամլուղի հանքերի բազայի վրա։

Պղնձի հարուստ հանքերը ավելի լայնորեն օգտագործելու միջոցով նախատեսվում է զգալի չափով ավելացնել հանքաքարի հանույթը ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Ալավերդու շրջանում։ Ակնհայտ է դառնում, որ հանրապետության միակ պղնձաձուլական կոմբինատը ի վիճակի չէ ապահովել անընդհատ աճող հանքաքարի վերամշակումը։ Այդ առումով արդեն հասունա-

ցած է համարվում Ղափանում պղնձաձուլական գործարանի կառուցման հարցը։

Մոլիբդենային կոնցենտրատի և մետաղային ալյումինի արտադրությունը հիմնադրվել է հետպատերազմյան շրջանում։ Ներկայումս գունավոր մետալուրգիայի համախառն արտադրանքի մեծագույն մասը բաժին է ընկնում մոլիբդենին[1]։ Ըստ որում Սովետական Հայաստանը դարձել է Միության մոլիբդեն արտադրող կարևորագույն շրջաններից մեկը։

Արդյունահանվող պղնձա-մոլիբդենային հանքաքարից ստացվող մոլիբդենային կոնցենտրատը ուղարկվում է հանրապետության սահմաններից դուրս։ Մինչդեռ հանքաքարի հետախուզված հսկայական պաշարները, կոնցենտրատի արտադրության սպասվող աճը, ինչպես նաև տեխնիկա-տնտեսական բնույթի մի շարք բարենպաստ պայմաններ նպատակահարմար ու շահավետ են դարձնում կոնցենտրատի վերամշակման հաջորդ փուլերը և մետաղային մոլիբդենի ստացումը կազմակերպել տեղում։ Նախատեսվում է հանրապետությունում կառուցել մի խոշոր ձեռնարկություն, որտեղ մետաղային մոլիբդենից բացի կստացվեն նաև մի շարք հազվադյուտ մետաղներ։

Եթե մոլիբդենի արտադրության բնագավառում իր լուծմանն սպասող պրոբլեմ է «վերին հարկերի» ստեղծումը, գոյություն ունեցող տեխնոլոգիական ցիկլի հետագա շարունակումն ու զարգացումը, ապա ալյումինի արտադրության մեջ պակասող օղակը հումքի արտադրությունն է։ Արտադրական ցիկլի «ամենավերին հարկերի» (մետաղային ալյումին-գլանվածք-փայլաթիթեղ) ստեղծումը Երևանում (թեկուզ և պահանջվում էր կավահողը տեղափոխել այստեղ Ուրալից՝ 4000 կմ հեռավորության վրա) պայմանավորված էր էժան հիդրոէներգիայի ազատ ռեսուրսներով, որոնք առկա էին հանրապետությունում 40-ական թվականներին։

Ալյումինի արդյունաբերության համար սեփական հումքային բազայի ստեղծման պրոբլեմը լուծվում է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի կառուցման շնորհիվ, որը նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման միջոցով կարտադրի նաև կավահող։

Այսպիսով, հանրապետությունում բարենպաստ պայմաններ կան, որպեսզի գունավոր մետալուրգիայի երեք հիմնական ճյուղերն էլ ունենան լրիվ

---

[1] Դեռևս 1959 թ. գունավոր մետալուրգիայի համար արդյունահանվող ու հարստացվող հումքի $^2/_3$-ից ավելին բաժին էր ընկնում մոլիբդենի կոնցենտրատին։ Տե՛ս Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչ. Երևան, 1960, էջ 107։

արտադրական ցիկլ։ Այդ բանը հանրապետության ամբողջ արդյունաբերության կոմպլեքսային զարգացման համար նոր, կարևոր խթան կհանդիսանա։

Գունավոր մետալուրգիայի ճյուղային կառուցվածքի նկարագիրը ամբողջական չի լինի, եթե չհիշատակենք նաև արդեն գոյություն ունեցող կամ ստեղծվող այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են ցինկի ու արճճի (Ախթալայի բազմամետաղային հանքավայրի) կոնցենտրատների, ազնիվ ու հազվագյուտ մետաղների արտադրությունը։ Մասնավորապես, ընթացիկ հնգամյակում ծրագրված է կառուցել ոսկու կորզման խոշոր կոմբինատ, որն աշխատելու է Ջոդի ու մի շարք այլ հանքավայրերի բազայի վրա։

Քիմիական արդյունաբերությունը Սովետական Հայաստանի համար ամբողջովին նոր ճյուղ է։ Այն ծագել է 20-ական թվականների վերջերին միայն (կալցիումի կարբիդի արտադրություն), բայց ներկայումս դարձել է արդեն հանրապետության հիմնական ու պրոֆիլային ճյուղերից մեկը։ Վերջին 3 տասնամյակում այն 3 անգամ ավելի արագ է աճել, քան ընդհանուր առմամբ ամբողջ արդյունաբերությունը։ Հայկական ՍՍՀ-ում մեծ քիմիայի ստեղծման վճռական պայմանն են հանդիսացել՝ 1) կալցիումի կարբիդի և նրա հիման վրա զարգացած մի շարք արտադրությունների համար էլեկտրային հումք ծառայող քիմիապես մաքուր կրաքարերը, 2) պղնձի ձուլման ժամանակ արտադրվող ծծմբային գազերը, որոնք նույնպես քիմիական արդյունաբերության համար էժան հումք են հանդիսանում և 3) էժան հիդրոէլեկտրաէներգիայի ավելցուկը, որը մի տևական ժամանակ՝ մինչև 40-ական թվականների վերջը, նկատվում էր հանրապետությունում Հրազդանի կասկադի կառուցման հետևանքով։

Կալցիումի կարբիդը ելակետ ծառայեց երկու ինքնուրույն քիմիական կոմպլեքսների ստեղծման համար։ Առաջինը՝ դա ացետիլենի և նրա բազայի վրա բարձրմոլեկուլային միացությունների սինթեզումն է։ Այս կոմպլեքսի մեջ են մտնում քլորոպրենային կաուչուկները ու լատեքսները, կաուստիկ սոդան ու աղաթթուն, քացախաթթուն, վինիլացետատը, պոլիմերիզացիոն պլաստիկները, պոլիվինիլային սպիրտը, էմուլսիանները, էլեկտրամեկուսիչ լաքերը, սինթետիկ խեժերը, ացետիլցելյուլոզան, արհեստական մետաքսաթելը, ավտոդողերը, ռետինատեխնիկական իրերը և նույնիսկ հերբիցիդները։

Կալցիումի կարբիդի վրա հենվող մյուս քիմիական կոմպլեքսը իր մեջ ընդգրկում է կալցիումի ցիանամիդի, ազոտային պարարտանյութերի, ազոտաթթվի, դիցիանդիամիդի, մելամինի, կարբամիդի (միզանյութի) և այլ նյութերի արտադրությունը։

Հանրապետությունում քիմիական ինքնուրույն կոմպլեքսի ստեղծման բա-

էլ ծառայեց պղնձի արդյունաբերությունը։ Ծծմբային գազերի հիման վրա կազմակերպվեց ծծմբաթթվի և պղնձարջասպի արտադրությունը։

Հայկական ՍՍՀ-ում էժան էլեկտրաէներգիայի աղբյուրների առկայությունը պատճառ դարձավ այն բանի, որ քիմիական արդյունաբերության երևան եկող ճյուղերի մեջ գերակշռում էին էլեկտրաթերմիկական արտադրությունները։

Վերջին տարիներս էլեկտրաէներգիայի արտադրության կարողությունների և նրա պահանջարկի միջև առաջացած անհամամասնությունը, ինչպես նաև բնական գազի մուտքը Հայկական ՍՍՀ էապես փոխեցին քիմիական արդյունաբերության զարգացման տեխնիկա-տնտեսական պայմանները։ Արտադրությունների ացետիլենային ամբողջ խումբը, ինչպես նաև ամոնիակի արտադրությունը կալցիումի կարբիդից անցնում են բնական գազի օգտագործմանը, որը մեծ չափով կրճատում է էլեկտրաէներգիայի պահանջարկը, հնարավորություններ ստեղծելով արտադրանքի ծավալի արագ ավելացման համար։ Միայն վերջերս ի հայտ եկած գործոն է նաև տեղական կերակրառաջի արդյունաբերական օգտագործումը ացետիլենային խմբի մեջ։

Հանրապետության քիմիական արդյունաբերության մեջ նոր որակական փոփոխություններ են սպասվում ամենամոտ ապագայում։ Դրանցից մեկը կապված է նեֆելինային սիենիտների կոմպլեքսային օգտագործման հետ, որի շնորհիվ կկազմակերպվի ոչ միայն հանրապետության, այլև Սովետական Միության համար մի շարք նոր նյութերի արտադրությունը (նատրիումի մետասիլիկատ և կալցիումի մետասիլիկատ)։ Բարձր տեսակի բյուրեղապակու համար՝ երևանիտի ստացումը նորություն կլինի համաշխարհային պրակտիկայի մեջ։

Մյուս կարևոր որակական տեղաշարժն այն է, որ ներկայումս զարկ է տրվում հատկապես մասսայական օգտագործման նյութերի արտադրությանը, ինչպիսիք են, օրինակ, սինթետիկ խեժերը, պլաստմասսաները և նրանցից պատրաստվող իրերը։

Մինչև վերջին ժամանակներս քիմիական արդյունաբերության համար, էներգատարողությունից բացի, բնորոշ էր նաև նյութատարողությունը (материалоемкость)։ Սակայն նոր ստեղծվող մի շարք արտադրություններ (քիմիական ռեակտիվների, դեղորայքի, վիտամինների, լիպինի և այլն) արդեն աչքի են ընկնում չնչին քանակության նյութերի օգտագործումով ու մեծ աշխատատարողությամբ։

Քիմիական արդյունաբերությունը առաջիկայում ևս աչքի է ընկնելու զարգացման բարձր տեմպերով։ Ըստ որում նրա հիմնական ուղղությունը լի-

նելու է արտադրվող նյութերի հետագա, ավելի խորը վերամշակման կազմակերպումը տեղում: Դա հնարավորություն կտա արտադրատեսակների թողարկման ծավալը ավելացնելու հետ մեկտեղ մեծ չափով ընդլայնել նաև նրանց ասորտիմենտը:

Այս ճյուղի զարգացման հեռանկարում գնալով ավելի որոշակի տեղ է բռնում կերակրառաղի հարուստ պաշարների օգտագործումը, որը քլորային նյութերի արտադրության և նրա հիման վրա քիմիական նոր կոմպլեքսների կազմակերպման իրական հնարավորություններ է ստեղծում:

Հայկական ՍՍՀ-ում առանձնահատուկ տեղ է գրավում մեբենաշինությունը, որը համեմատաբար երիտասարդ, բայց առավել արագ զարգացող ճյուղերից է:

Հանրապետությունում նրա զարգացումը խթանող պայմաններ են հանդիսանում տեղում գոնավոր մետաղների, ռետինա-տեխնիկական ու կաբելային իրերի արտադրությունը և ազատ աշխատանքային ռեսուրսների առկայությունը: Ավելի ուշ երևան եկած բարենպաստ պայմաններ են մեքենաշինության մեջ ավելի ու ավելի լայն կիրառություն գտնող պլաստմասսաների արտադրությունը, մեքենաշինական գիտա-հետազոտական, կոնստրուկտորական կազմակերպությունները, ինչպես նաև հանրապետությունում որակյալ կադրեր պատրաստելու հնարավորությունը:

Մեքենաշինության զարգացումն արգելակող գործոն են հանդիսանում սև մետաղների սեփական արտադրության բացակայությունը, ինչպես և ՍՍՀՄ սև մետալուրգիայի հիմնական բազաներից ու մեքենաշինության արտադրանքի սպառման խոշոր կենտրոններից հեռու գտնվելը:

Վերոհիշյալ նպաստավոր ու անբարենպաստ պայմաններն էլ ամբողջությամբ վերցրած կանխորոշում են Հայկական ՍՍՀ մեքենաշինության զարգացման գլխավոր ուղղությունը, այն է՝ գոնավոր ու հազվագյուտ մետաղների, ինչպես և կիսահաղորդիչ նյութերի մասսայական կիրառում պահանջող, ընդհանուր առմամբ ոչ մետաղատար, աշխատատար ճշգրիտ մեքենաների թողարկումը:

1965 թ. դրությամբ հանրապետության արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի 17,6%-ը բաժին էր ընկնում մեքենաշինությանն ու մետաղամշակությանը[1]: Այդ ցուցանիշով նա զիջում է միայն էլեկտրաէներգետիկային՝ արդյունաբերության ճյուղերի մեջ գրավելով երկրորդ տեղը: Ար-

---

1 Տե՛ս Народное хозяйство Армянской ССР в 1965 г., Статистический ежегодник, стр. 49.

դյունաբերական բանվորների թվով նույնպես երկրորդ տեղումն է, առաջնությունը այս անգամ զիջելով թեթև արդյունաբերությանը։

Բնորոշ է, որ մեքենաշինությունը իր արտադրանքի աճի տեմպերով գերազանցում է թե առհասարակ ամբողջ արդյունաբերության և թե նրա մնացած բոլոր ճյուղերի աճի տեմպերին։

Մեքենաշինությունը համեմատաբար կարճ ժամանակում վերածվելով հանրապետության առաջատար ճյուղերից մեկի, ներկայումս աչքի է ընկնում բարդ կառուցվածքով և բողարկվող արտադրանքի մեծ անվանացանկով։ Նրա գլխավոր ենթաճյուղերը՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, հաստոցաշինությունը, սարքաշինությունն ու ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը հիմնականում համապատասխանում են ամբողջ մեքենաշինության զարգացման վերը նշված գլխավոր ուղղություններ։ Նրանց շարքում գլխավորը էլեկտրատեխնիկական արդյունաբերությունն է։ Նրա արտադրանքի ծավալով Հայկական ՍՍՀ-ն Սովետական Միությունում գրավում է 3-րդ տեղը, տալով միաժամանակ ամբողջ Անդրկովկասի էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի մոտավորապես կեսը։ Գլխավոր արտադրատեսակների թվում նշենք շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, գեներատորները, էլեկտրաշարժիչները (այդ թվում՝ միկրոէլեկտրաշարժիչները), էլեկտրագոդման սարքավորումը, ցածր ու բարձր լարման ապարատուրան, կաբելային իրերը, տարբեր տեսակի էլեկտրալամպերը։

Բավականին ամբողջական տեսք ունի հաստոցաշինությունը, որը արտադրում է մետաղաձող հաստոցների բոլոր հինգ տեսակները (խառատային, շաղափային, ֆրեզային, ներքաշ, հղկման), ինչպես նաև քարահատ ու քարհղկող հաստոցներ։ Առավել արագ թափով աճում է փոքր ծավալի ճշգրիտ հաստոցների թողարկումը (դրա գծով այսօր արդեն Հայկական ՍՍՀ-ն Սովետական Միությունում առաջին տեղն է գրավում), որոնք լայն կիրառություն ունեն հատկապես սարքաշինության մեջ։ Հետաքրքրական է, որ 1970 թ. նրանք կկազմեն հանրապետությունում թողարկվող հաստոցների ընդհանուր քանակության մոտ կեսը[1]։

Հանրապետության մեքենաշինության առավել երիտասարդ ճյուղերը սարքաշինությունն ու ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունն են։ Սրանք իրենց բնույթով, իբրև ամենից ավելի աշխատատար և քիչ մետաղատար ճյու-

---

[1] Տե՛ս Բ. Հ. Մուրադյան, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966։

ղեր, առավել չափով են համապատասխանում Հայկական ՍՍՀ պայմաններին։ Այդ մասին են վկայում հետևյալ տվյալները. մեկ կիլոգրամ արտադրանքի ստացման համար պահանջվող աշխատանքի քանակը, օրինակ, հասատոցաշինության հետ համեմատած, միջին հաշվով այստեղ ավելի է 5—10 անգամ, իսկ մաթեմատիկական հաշվիչ մեքենաների արտադրության մեջ՝ մինչև 30 անգամ։

Ներկայումս այս ճյուղերը տալիս են էլեկտրաչափիչ բազմապիսի սարքեր, տեխնոլոգիական պրոցեսները վերահսկելու ու կարգավորելու տարբեր բնույթի մեքենաներ ու հարմարանքներ, արտադրական օգտագործման ռադիոխրներ, արտադրական ու կենցաղային ժամացույցներ, մաթեմատիկական էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ և արտադրանքի բազմաթիվ այլ տեսակներ։

Նշված պրոֆիլային ճյուղերից բացի, Հանրապետությունում ավել կամ պակաս չափով ներկայացված են մեքենաշինության մի քանի այլ ճյուղեր ևս, որոնք թողարկում են կոմպրեսորներ, հիդրոպոմպեր, դարբնոցա-մամլիչային մեքենաներ, ավտոբեռնիչներ ու ավտոֆուրգոններ, քիմիական ու սննդի արդյունաբերության համար սարքավորում, կոնդիցիոներներ ու արդյունաբերական օդափոխիչներ և բազմատեսակ այլ արտադրանք։

Հայկական ՍՍՀ մեքենաշինությունը վերածվել է արդյունաբերական մի կոմպլեքսի, որը միավորում է 7 տասնյակի հասնող ձեռնարկություններ։ Հատկապես վերջին տարիներս զգալի աշխատանք կատարվեց մեքենաշինության ներճյուղային արտադրական կապերի սերտացման և նրա, այսպես կոչված օժանդակ, նախապատրաստող արտադրությունների ստեղծման ուղղությամբ։ Կառուցվեցին գործիքաշինական, գործադիր սարքերի, տեխնիկական քարերի և մեքենաշինությանը անհրաժեշտ այլ իրեր ու մեխանիզմներ մատակարարող ձեռնարկություններ։ Ստեղծվեցին չուգունե ձուլվածքների մասնագիտացված արտադրամասեր։ Չնայած այս բոլորին, նախապատրաստող արտադրությունների, գործիքային, նորոգման և տեխնիկական ծառայությունների անբավարար զարգացումը մնում է հանրապետության մեքենաշինության թույլ տեղերից մեկը։ Չկան, մասնավորապես, կռանվածքների, դրոշմոցների, գունավոր մետաղների և պողպատի ձուլման մասնագիտացված արտադրություններ։ Այս բոլորի ստեղծումը և արտադրության մեջ գոյություն ունեցող որոշ անհամամասնությունների վերացումը մեծ չափով կնպաստի այս ճյուղի արտադրանքի թողարկման ինչպես քանակական աճին, արտադրատեսակների անվանացանկի ավելացմանը, այնպես էլ մեքենաների որակական ցուցանիշների բարելավմանը։

Նախատեսվում է ընթացիկ հնգամյակում մեքենաշինական արտադրանքի

ծավալը մեծացնել ավելի քան 2 անգամ: Ավելի մեծ զարկ է տրվելու ճշգրիտ մեքենաշինությանը՝ էլեկտրոնային ու ռադիոարդյունաբերությանը, սարքաշինությանն ու ճշգրիտ հասունացաշինությանը: Մեծ ծավալի այնպիսի աշխատանքներ են ծրագրվում, որոնք պետք է ապահովեն համաշխարհային ստանդարտներին համապատասխանող մեքենաշինական արտադրանքի թողարկումը:

Հայկական ՍՍՀ մեքենաշինության ամենախոշոր պրոբլեմը մնում է սև մետաղների սեփական արտադրության բացակայությունը: Ապացուցված է, որ Հանրապետությունում վերջին տարիներս հայտնագործված ու հետախուզված երկաթի հանքավայրերը բավարար հիմք են տալիս տեղում պղպատաձուլություն կազմակերպելու համար: Այս հարցի դրական լուծումը հանրապետության մեքենաշինության զարգացման մեջ արմատական բարելավում կմտցնի:

Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում շինանյութերի արդյունաբերությունը: Եթե դատելու լինենք հարցի քանակական կողմով միայն և այն ընդհանուր վիճակով, որ արդյունաբերության այս ճյուղը սովորաբար զարգանում է տեղական կարիքները բավարարելու համար, ապա մեր Հանրապետությունը ևս բացառություն կազմել չի կարող: Եվ իսկապես, այս ճյուղի տեղը Հայկական ՍՍՀ արդյունաբերության մեջ բնութագրվում է հետևյալ ոչ մեծ թվերով. ըստ արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի արժեքի՝ 7%, բանվորների թվի՝ 10%, համախառն արտադրանքի՝ մոտավորապես 6%:

Սակայն իրական վիճակն այն է, որ Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերությունն ունի ոչ թե տեղական, հանրապետական, այլ միջհանրապետական, միջշրջանային նշանակություն: Սովետական Հայաստանի այս բացառիկ վիճակը բացատրվում է մի կողմից հանքային շինանյութերի ֆիզիկա-տեխնիկական եզակի հատկանիշներով և մյուս կողմից՝ նրանց հանքավայրերի տեխնիկա-տնտեսական նպաստավոր ցուցանիշներով:

Հանրապետության շինանյութերի արտադրությունը, իբրև ժամանակակից արդյունաբերության ճյուղ, ծնունդ առավ 20-ական թվականների վերջերին. երբ շահագործման հանձնվեցին տուֆի մեքենայացված քարհանքերը Արթիկում: Ներկայումս բնական շինանյութերի արդյունահանումը ընդգրկում է մի քանի խոշոր, բարձր աստիճանի մեքենայացված և բազմաթիվ մանր ձեռնարկություններ, որոնք արտադրում են տուֆ, բազալտ և իբրև որմնանյութ ծառայող այլ քարեր, թեթև լցանյութեր (պեմզա, հրաբխային խարամ, պեռլիտ), ինչպես նաև մարմար, գրանիտե սալեր, խճաքար, շինարարական ավազ և



10. Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը:

այլն։ Հանրապետության համար հիմնական արմնանյութի՝ տուֆի հանույթը կազմում է ավելի քան 1 մլն. մ³ (1970 թ. հասնելու է շուրջ 2 մլն. մ³)։ Մեծ է լցանյութերի արդյունահանության ծավալը։

Մեծ տեսակարար կշիռ ունի ցեմենտի և մածող այլ նյութերի արտադրությունը, որը նույնպես ամբողջապես հենվում է տեղական հումքի վրա։ Այն ներկայացված է ցեմենտի-շիֆերի կոմբինատով և գաջի ու կրի գործարաններով։ Հրազդանի լեռնա-քիմիական կոմպլեքսի ցեմենտի գործարանի կառուցումն ավարտելուց հետո այս շինանյութի թողարկման ծավալը ավելի քան կեռապատկվի։

Շինարարության տարեցտարի աճող ծավալը, նրա մեքենայացման ամրիճանի անընդհատ բարձրացման անհրաժեշտությունը և վերջապես էժան ու բազմապիսի հումքային ռեսուրսների (լցանյութերի) առկայությունը բարենպաստ պայմաններ են ստեղծում հավաքովի երկաթբետոնե և բետոնե կոնստրուկցիաների ու իրերի արտադրության բուռն զարգացման համար։ Այսօր արդեն նա տալիս է շինանյութերի արդյունաբերության ճյուղի ամբողջ համախառն արտադրանքի կեսից ավելին։ Նրա զարգացման բարձր տեմպերը պահպանվելու են առաջիկայում էլ։ Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է, մասնավորապես, լրիվ ավարտել Արթիկի արհեստական տուֆաբլոկների խոշոր գործարանի կառուցումը, ինչպես նաև հանրապետության տարբեր մասերում ստեղծել պատրաստի տների, միջնորմների և երկաթբետոնե այլ կրերի արտադրության ձեռնարկություններ։

Ժամանակակից շինարարությունը, նշված նյութերից բացի, մեծ պահանջ է ներկայացնում նաև այնպիսի արտադրատեսակների նկատմամբ, ինչպիսիք են շիֆերը, տարբեր նպատակի համար օգտագործվող երեսապատման սալերը (մետլախ, կաֆել), հատակի հարդարման պլաստիկ նյութերը, շինարարական ներկերը, խեցեգործական ու հախճապակե իրերը և այլն։ Սրանց մեծ մասի արտադրությունը մինչև վերջին ժամանակներս տեղում բացակայում էր և դրանց գծով հանրապետությունը կախված էր արտաքին (միութենական) շուկայից։ Նրանց արտադրությունը կազմակերպելու շնորհիվ ոչ միայն ներկայումս բավարարվում են ներքին պահանջները, այլև որոշ տեսակների դպալի քանակություն առաքվում է Միության այլ շրջաններ։

Իրենց հումքային բազայով և բուն արտադրության բնույթով շատ նման են արդյունաբերության քննարկվող ճյուղին հրակայուն նյութերի և ապակու-ճենապակու ճյուղերը, որոնք նույնպես ամբողջությամբ տեղական հանքային հումքով են սնվում։ Նրանց երկուսի զարգացման համար էլ հզոր խթան կհանդիսանա նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակումը, որի

շնորհիվ մեծ ծավալով կարտադրվեն այնպիսի նյութեր, որոնք լավագույն հումք են թե հրակայուն նյութերի և թե ապակու արտադրության համար: Այդ հումքի վրա՝ բյուրեղապակու ու որակյալ շշերի խոշոր գործարան է կառուցվում Արզնիում, ապակե տարաների մի այլ ձեռնարկություն ստեղծվում է Հոկտեմբերյանում: Սևանի ավազանում կազմակերպվող ֆորստերիտային հրակայուն նյութերի արտադրության համար որպես լցանյութ կծառայեն Շորժայի խոշոր հանքավայրի մագնեզիտային ապառները:

Սովետական իշխանության տարիներին զարգացման բարձր մակարդակի է հասել և հանրապետության տնտեսական կոմպլեքսում կարևոր տեղ է գրավում ժողովրդական սպառման առարկաների թողարկումը: Այստեղ առաջատար դեր է խաղում տեքստիլ արդյունաբերությունը՝ տալով Հայկական ՍՍՀ արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքի մոտավորապես 1/3 մասը: Նա միավորում է բոլոր հիմնական ենթաճյուղերը ներկայացնող ավելի քան 50 ձեռնարկություններ, որոնց թվում մի քանի խոշոր կոմբինատներ: Ըստ որում, բրդե գործվածքների և բամբակե գործվածքների ենթաճյուղերից յուրաքանչյուրին բաժին է ընկնում ամբողջ ճյուղի համախառն արտադրանքի մոտավորապես 1/3-ը, տրիկոտաժեղենի արտադրությանը՝ 1/5-ը, մետաքսե գործվածքների արտադրությանը՝ 1/10-ը:

Տեքստիլ արդյունաբերությունը հանդիսանում է հանրապետության ամենաբարձր ապրանքայնություն ունեցող ճյուղերից մեկը: Բոլոր տեսակի գործվածքների ու տրիկոտաժեղենի մինչև 80%-ը արտահանվում է: Սա վկայում է այն մասին, որ Հայկական ՍՍՀ-ում տեքստիլ արդյունաբերության զարգացումը պայմանավորող հիմնական գործոնը տեղական սպառումը չէ: Հայկական ՍՍՀ պայմաններում կարևոր դեր են կատարել հումքի՝ բամբակի, մետաքսի և բրդի առկայությունը, ինչպես և բնակչության լրիվ ապահովելու հանգամանքը:

Ճյուղի զարգացման արդի պայմանները բնորոշող գործոնների շարքում հարկ է նշել արհեստական (ացետատային) թելի մեծածավալ արտադրության կազմակերպումը, որը զգալիորեն ուժեղացրեց սեփական հումքային բազան, չնայած որ հումքի որոշ տեսակներ դեռևս ներմուծվում են դրսից:

Հայկական ՍՍՀ ժողովրդական սպառման առարկաների արտադրության կոմպլեքսում հարկ է նշել ապրանքայնության բարձր գործակից ունեցող այնպիսի ճյուղեր ևս, ինչպես կաշվի-կոշիկի (արտահանվում է ամբողջ արտադրանքի մոտավորապես կեսը), պատրաստի հագուստեղենի (ավելի քան կեսը), գորգերի (հիմնական մասը), կենցաղային էլեկտրական բազմատեսակ մեքենաների ու սարքերի (այդ թվում՝ էլեկտրական սառնարանների ու առաս-

սաղային հումքարների), լուսատեխնիկական իրերի ու դաշնամուրների, արդուզարդի իրերի և այլ բազմազան արտադրանքի թողարկումը։

Հայկական ՍՍՀ սննդի արդյունաբերության մեջ որոշակիորեն տարբերվում են արտադրությունների երկու խումբ։ Մեկը՝ ամենամասսայական բնույթի և առաջին անհրաժեշտության կենսամթերքների արտադրությունն է, որը սովորաբար ստեղծվում է ամեն մի շատ թե քիչ խոշոր քաղաքային բնակավայրում, առհասարակ այնտեղ, որտեղ կա սպառող, անկախ նրանից, հումքը առկա է տեղում, թե ներմուծվում է (հացի, հրուշակեղենի, կաթնամթերքների, ոչ-ալկոհոլային խմիչքների արտադրություն)։

Մյուս խումբը Հայկական ՍՍՀ-ի համար մասնագիտական հանդիսացող արտադրություններն են։ Նրանք գյուղատնտեսության առաջատար ճյուղերի՝ խաղողագործության ու հարավային պտղաբուծության արգասիք են, ունեն ապրանքայնության համեմատաբար բարձր գործակից և լրացնում են հանրապետության արտադրական մասնագիտացման նկարագիրը։

Սննդի արդյունաբերությունը ըստ համախառն արտադրանքի ծավալի հանրապետությունում գրավում է երկրորդ տեղը, ըստ բանվորների թվի՝ երրորդ տեղը և արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի արժեքի՝ հինգերորդ տեղը։ Միութենական մասշտաբով նա մասնագիտանում է կոնյակների, տեսակավոր գինիների և մրգերի ու բանջարեղենի պահածոների արտադրության մեջ, որոնց պահանջը, հատկապես հանրապետության սահմաններից դուրս, մեծ է և անընդհատ աճում է։

Ներկայումս գինու-կոնյակի արդյունաբերության ճյուղին պատկանող 25 գործարաններն ու հումքի վերամշակման մի քանի տասնյակ կետերը արտադրում են ավելի քան 50 տեսակի գինիներ ու 10 տեսակի կոնյակներ։ Նրանց ընդհանուր քանակի 70 %-ից ավելին միութենական շուկա է դուրս բերվում ու արտասահման է արտահանվում։

Պահածոների թվով 10 գործարանները թողարկում են ավելի քան 100 մլն. պայմանական տուփ բազմապիսի պահածոներ, որոնց 90 %-ը հանրապետության սահմաններից դուրս է ուղարկվում։

Հայկական ՍՍՀ սննդի արդյունաբերության արտադրատեսակներից միջհանրապետական նշանակություն ունեն նաև ծխախոտը (արտահանվում է նրա 95 %-ը), շվեյցարական պանրատեսակները (արտահանվում է 80 %-ը), հանքային ջրերը (արտահանվում է ավելի քան 75 %-ը)։

Խոսելով սննդի արդյունաբերության զարգացման հեռանկարների մասին, պետք է երկու հանգամանք նկատի ունենալ. վերը նշված արտադրությունների առաջին խմբի ընդարձակման մասշտաբները ուղղակի կախման

մեջ են գտնվում տեղական՝ հանրապետության բնակչության պահանջարկից և սահմանափակվում են նրանով։ Արտադրությունների երկրորդ խումբը պահանջարկի գծով առայժմ սահմանափակում չունի, իսկ ինչ վերաբերում է հումքային բազային, ապա այն արագ թափով ընդլայնվում է։ Ընթացիկ հնգամյակում սննդի արդյունաբերությունը ամբողջությամբ վերցրած կաճի 1,5 անգամ, մինչդեռ գինու ու պտղաբանջարային պահածոների արտադրությունը՝ 2 անգամ։ Առաջիկայում ավելի արագ թափով կզարգանա նաև եթերայուղերի արտադրությունը։

Արդյունաբերությունը, ինչպես նշվեց վերևում, հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կորիզի դեր է կատարում, ուստի և նրա սշխարհագրական առանձնահատկությունների բացահայտումը կարող է բանալի տալ ամբողջ կոմպլեքսի ներքին տերիտորիալ օրինաչափությունները ճիշտ հասկանալու համար։

Նախասովետական Հայաստանի ամբողջ խոշոր արդյունաբերությունը, ինչպես արդեն ասված է, տեղաբաշխված էր ընդամենը ութ բնակավայրերում։ Ըստ որում, նրանցից յոթում հաշվվում էր ընդամենը մեկ-երկուական ձեռնարկություն։

Ներկայումս միայն պետական արդյունաբերության ձեռնարկությունները բաշխված են մոտավորապես 90 բնակավայրերում, որոնք ընդգրկում են հանրապետության բոլոր 33 գյուղական վարչական շրջանները։ Արդյունաբերական այդ 90 կետերն էլ կազմում են ինդուստրիալ արտադրության տեղաբաշխման այն հենքը, որի վրա կառուցվում է Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսը իբրև մեկ տնտեսական ամբողջություն։

Սովետական Հայաստանի զարգացման արդի էտապի տնտեսա-աշխարհագրական կարևորագույն առանձնահատկություններից մեկը պետք է համարել այն, որ արդյունաբերության տեղաբաշխման ընդհանուր պատկերում աստիճանաբար տիրապետող են դառնում արդյունաբերական հանգույցները[1]։ Դա նշանակում է, որ հանրապետությունը սկսելով զարգացման ամենաստորին աստիճանից, երբ գերակշռում էին արդյունաբերական առանձին, մեկուսացված ձեռնարկությունները, անցել է միջին փուլը, որի համար հատուկ է

---

[1] Հայկական ՍՍՀ-ում արդյունաբերական հանգույցների կազմավորման փաստը առաջին անգամ քննարկման է ենթարկել Հ. Ե. Թումանյանը դեռևս 1953 թ., առանձնացնելով Կենտրոնական Էներգետիկ, Լենինականի, Կիրովական—Ալավերդու և Ջանգեզուրի հանգույցները, որոնք միաժամանակ նա կոչում է «արդյունաբերական ռայոններ»։ (Տես՝ Հ. Ե. Թումանյան, Հայկական ՍՍՀ էկոնոմիկան հայրենական պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1953, էջ 92—96)։

այդ ձևնարկությունները միավորող բնակավայրերի՝ արդյունաբերական կենտրոնների լայն տարածումը և հասել է արդյունաբերության տեղաբաշխման ներկա ավելի բարձր մակարդակին։

Արդյունաբերական հանգույց ասելով ժամանակակից տնտեսական աշխարհագրության մեջ հասկանում են համեմատաբար իրար մոտ ընկած արդյունաբերական կենտրոնների ու նրանց կից բնակավայրերի ցանցի միասնությունը, որոնց համար ընդհանուր են տնտեսա-աշխարհագրական դիրքը, աշխատանքային ռեսուրսները, ջրի, էլեկտրաէներգիայի և գազամատակարարման աղբյուրները, տրանսպորտային ցանցը, շինարարական նյութա-տեխնիկական բազան։ Արդյունաբերական հանգույցը բնութագրող կարևոր հատկանիշ են նրա բաղկացուցիչ մասերը հանդիսացող արդյունաբերական կենտրոնների միջև հաստատված կամ հաստատվող արտադրական կապերը։ Վերջիններս կարող են տարբեր ձևեր ունենալ, ընդգրկելով նաև կոմբինացումն ու կոոպերացումը[1]։

Արտադրության տեղաբաշխման ավելի հասուն ձևի՝ արդյունաբերական հանգույցների երևան գալը սերտորեն կապված է որոշակի տերիտորիաների և նրանցում գտնվող բնական հարստությունների, ինչպես նաև աշխատանքային, նյութական ու այլ ռեսուրսների կոմպլեքսային ու բազմակողմանի օգտագործման, տերիտորիայի կազմակերպման որոշակի մակարդակի հետ։ Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման այս փուլը ժամանակագրական իմաստով համընկնում է անցած տասնամյակի հետ, երբ ամբողջ հանրապետության տնտեսության զարգացման ու մասնագիտացման խորացման բնագավառում նոր, որակական տեղաշարժեր ձեռք բերվեցին։ Որպես դրա արգասիք սկսեցին ձևավորվել ու արագ զարգանալ և մի շարք արդյունաբերական հանգույցներ։

Հիմք ունենալով վերը տրված բնորոշումը, Սովետական Հայաստանում կարող ենք առանձնացնել զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող, բայց լրիվ չափով ուրվագծվող, հետևյալ արդյունաբերական հանգույցները՝ Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Հրազդան—Սևանի, Ղափան—Քաջարանի։

Արդյունաբերական ձևնարկությունների օրինաչափորեն ձևավորված

---

[1] *Տե՛ս* В. Н. Горлов, Ю. Г. Саушкин, Е. А. Трофимовская. Практическое значение экономико-географического изучения промышленных узлов. «Вестник Московского университета», серия V, География, 1963, № 1, *ինչպես նաև* Краткая географическая энциклопедия, М., 1962, էջ 303։

Հենց այս 6 խմբերը՝ արդյունաբերական հանգույցներն էլ բնութագրում են Հանրապետության արդյունաբերության տեղաբաշխման ժամանակակից պատկերը։ Այս հանգույցները ընդգրկում են պետական արդյունաբերական ձեռնարկություններ ունեցող բնակավայրերի թվի $^1/_3$ մասը միայն, բայց թողարկում են ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի ավելի քան $^9/_{10}$ մասը։ Այնտեղ կենտրոնացված են նաև արդյունաբերական-արտադրական հիմնական ֆոնդերի ու բանվորների 90 %-ից ավելին, համարյա ամբողջ քաղաքային բնակչությունը։

Նպատակ չունենալով արդյունաբերական հանգույցների ձևավորման ու զարգացման պրոբլեմների մանրամասն վերլուծությունը տալ, փորձենք միայն հիմնավորել նրանց գոյությունը և համառոտակի բնութագրել տնտեսության ժամանակակից վիճակն ու զարգացման հնարավորությունները։

Երևանի արդյունաբերական հանգույցը ամենահզորն ու ամենահասունն է Հայկական ՍՍՀ-ում և ընդգրկում է խոշորագույն արդյունաբերական կենտրոն Երևանը, ինչպես և Արովյան, Նոր Հաճըն, Արզնի, Լուսավան, Էջմիածին, Հոկտեմբերյան, Արտաշատ, Աշտարակ ու Արարատ մանր, փոքր ու միջին մեծության քաղաքներն ու ավանները՝ նրանց միջև ընկած գյուղական բնակավայրերի ամբողջ ցանցի հետ միասին։ Այլ կերպ ասած, նա իր մեջ կենտրոնացնում է Արարատյան դաշտի ու նախալեռնային որոշ շրջանների գրեթե ամբողջ արդյունահանող ու վերամշակող արդյունաբերությունը։

Հանգույցը իրենից ներկայացնում է հարյուրավոր խոշոր կոմբինատների, գործարանների, ֆաբրիկաների և նրանց սպասարկող օժանդակ արտադրությունների մի հզոր կոմպլեքս, որը միավորված է էլեկտրաէներգիայի, ջրի ու գազամատակարարման և հաղորդակցության ճանապարհների մի բարդ սիստեմի մեջ։ Էլեկտրաէներգիայի մատակարարման աղբյուրներ են հանդիսանում Երևանի հզոր ջերմաէլեկտրակենտրոնը և Հրազդանի կասկադի 4 կայանները (Գյումուշի, Արզնիի, Քանաքեռի, Երևանի)։ Ջրամատակարարման համար ստեղծվում է հիդրոտեխնիկական կառուցվածքների մի բարդ կոմպլեքս, որը սնվում է Հրազդան գետից, նախալեռնային ու լեռնային աղբյուրներից և Արարատյան դաշտի արտեզյան ավազանից։ Կառուցված է գազամուղների միասնական ցանց։ Ամբողջ հանգույցի համար միասնական է նաև աշխարհագրական-տրանսպորտային դիրքը։ Հանգույցը տեղավորված լինելով հանրապետության երկաթգծի հիմնական ճյուղերի (Երևան—Սևան, Երևան—Թբիլիսի, Երևան—Բաքու) հատման շրջանում և ունենալով խճուղիների խիտ ցանց, ապահովված է բազմակողմանի ներքին և երեք ուղղության արտաքին տրանսպորտային կապերով։



11. Երևանի արդյունաբերական հանգույցի արտադրական կապերը.

1. Հրակայուն իրեր, 2. պղինձ, 3. ալյումին, 4. էլեկտրաէներգիա, 5. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 6. հաստոցաշինության ու սարքաշինության արտադրանք, 7. դարբնոցա-մամլիչային սարքավորում, 8. ծծմբաթթու, 9. կալցիումի կարբիդ, 10. հանքային շինանյութեր, 13. խեցեգործական շինանյութեր ու շինարարական պլաստիկներ, 14. ապակե թելեր ու գործ-վածքներ, 15. ացետատային մետաքսաթել, 16. մանվածք, 17. ֆերմենտացված ծխախոտ։

Երևանի հանգույցում կենտրոնացված է մոտավորապես 800 հազար քաղաքային բնակչություն, հանրապետության արդյունաբերական բանվորների մինչև $^2/_3$-ը և հիմնական ֆոնդերի կեսից ավելին։ Այնտեղ թողարկվում է արդյունաբերության համախառն արտադրանքի $^3/_4$-ը։

Բարձր զարգացման է հասել հանգույցի հատկապես վերամշակող արդյունաբերությունը, որը աչքի է ընկնում ճյուղային կառուցվածքի բազմապանությամբ և արտադրանքի ապրանքայնության մեծ գործակցով։

Ներկայումս արդեն գերակշռող և միաժամանակ ամենից ավելի հեռանկարային ճյուղը մեքենաշինությունն է, որը ներկայացված է էլեկտրատեխնիկական ու ռադիոէլեկտրոնային արդյունաբերությամբ, սարքաշինությամբ, հաստոցաշինությամբ, ավտոմոբիլային արդյունաբերությամբ և ընդհանուր բնույթի մեքենաշինության որոշ արտադրություններով։ Պրոֆիլային այս ճյուղի ձեռնարկությունները Երևանից բացի գտնվում են Աբովյանում, Լուսավանում, Հոկտեմբերյանում, Նոր Համբրնում, Էջմիածնում։

Արդյունաբերության այս ճյուղը աչքի է ընկնում ներքին բազմապիսի արտադրական կապերի խիտ ցանցով։ Այդ ցանցի տարածական պատկերի համար բնորոշն այն է, որ առավելագույն բևեռացումը նկատվում է Երևանում։ Դա բացատրվում է վերջինիս տիրապետող դիրքով և այն բանով, որ մյուս քաղաքների շատ ձեռնարկություններ ստեղծվել են հանգույցի կենտրոնի արդյունաբերության «պահանջով» և նրա համար օժանդակ դեր են կատարում։ Երևանի հետ արտադրական սերտ կապերի մեջ է գտնվում Լուսավանը՝ իբրև գործիքների ու չուգունե ձուլվածքների հիմնական մատակարարող և մետաղահատ հաստոցաշինության կենտրոն։ Նոր Համբրնը Երևանի սարքաշինության համար արտադրում է անհրաժեշտ տեխնիկական քարեր, Էջմիածինը՝ պլաստմասսայից պատրաստված իրեր ու դետալներ։ Երևանի հետ կոոպերացված են նաև Աբովյանի սարքաշինական ու էլեկտրոնային արդյունաբերությունը և Հոկտեմբերյանի հաստոցաշինությունը։ Միևնույն ժամանակ շատ թույլ են զարգացած այն կապերը, որոնք շրջանցելով Երևանը, հանգույցի մյուս քաղաքները կապում են իրար հետ։

Երևանի արդյունաբերական հանգույցի ճյուղային կառուցվածքում խոշոր բաժին ունի քիմիան, որը, սակայն, գրեթե ամբողջությամբ, կենտրոնացված է Երևանում։ Նա, բացառությամբ քիմիական հումքի որոշ տեսակների ստացումը և էջմիածնի պլաստմասսաների գործարանի հետ ունեցած կոոպերացիան, հանգույցի մյուս կենտրոնների հետ արտադրական կապեր գրեթե չունի։ Առաջիկայում Երևանի հետ սերտ կապերի մեջ գտնվող քիմիական հզոր ձեռնարկություն կստեղծվի Մասիսում։ Նրա համար իբրև հումք կծա-

ռայի Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատում ջերմաօքսիդացնող պիրոլիզի մեթոդով ացետիլենի ստացման ժամանակ անջատվող սինթեզ-գազը։

Երևանում է կենտրոնացված նաև հանգույցի ամբողջ գունավոր մետալուրգիան (ալյումինի գործարան), որի արտադրական կապերից նույնպես հանգույցի մյուս կենտրոնները դուրս են մնում։

Երևանի արդյունաբերական հանգույցի ճյուղային կառուցվածքում մեծ է նաև թեթև, սննդի ու շինանյութերի արդյունաբերության տեսակարար կշիռը։ Տարածական առումով գրեթե ամբողջ հանգույցն ընդգրկող արտադրական կապերով աչքի են ընկնում հատկապես վերջին երկուսը։ Սննդի արդյունաբերության գծով այդ բանը իր արտահայտությունը գտել է գինու ու կոնյակի արտադրության մեջ, իսկ շինանյութերի արդյունաբերության գծով՝ ցեմենտի (Արարատ), լցանյութերի և նրանց վրա հիմնված երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության մեջ։ Վերջիններիս թողարկման խոշոր կենտրոններն են Երևանը, Լուսավանն ու Աբովյանը։

Լենինականի արդյունաբերական հանգույցը ձևավորվելով ու զարգանալով Հանրապետության իր մեծությամբ երկրորդ քաղաքի ու ինդուստրիալ կենտրոնի հիման վրա, միավորում է Լենինականի, Արթիկի, Մարալիկի և կից շրջանում ցրված արդյունաբերական ձեռնարկությունները (Լենգէսը, Ջաջուռի կրի գործարանը, Պեմզաշենի ու Օխչօղլիի խոշոր քարահանքերը, կաթի մի քանի վերամշակման ու պանրի գործարանները)։

Հանգույցի համար տրանսպորտային առանցք է հանդիսանում Լենինական—Արթիկ—Պեմզաշեն երկաթուղագիծը (հնգամյա պլանի համաձայն այն պետք է հասնի մինչև Մարալիկ) և Լենինական—Մարալիկ ավտոխճուղին։ Լենինականի միջոցով ամբողջ հանգույցը երկաթուղային ելք ունի դեպի Երևան, Կիրովական—Թբիլիսի և դեպի Թուրքիա։ Սակայն Սովետական Միության ու Թուրքիայի միջև առևտրական կապերի զարգացման ներկա համեմատաբար ցածր մակարդակի պայմաններում երկաթգծի երրորդ ճյուղավորության տնտեսական նշանակությունը չնչին է։ Նա հանգույցի զարգացման գործում որևէ էական դեր չի կատարում։

Արդյունաբերական հանգույցի էլեկտրամատակարարումը ևս իրագործվում է միասնական ցանցով, որի բաշխիչ կենտրոնն է հանդիսանում Լենինական քաղաքը։ Վերջինս բարձր լարման գծերով միացած է Հանրապետության էներգետիկական սիստեմի հետ, որը նրա համար սնման հիմնական աղբյուր է։

Արդյունաբերական հանգույցագոյացման մյուս գործոնները այստեղ շատ



12. Լենինականի արդյունաբերական հանգույցի արտադրական կապերը.

1. Հրակայուն իրեր, 2. պղինձ, 3. ալյումին, 4. էլեկտրաէներգիա, 5. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 6. հաստոցաշինության ու սարքաշինության արտադրանք, 7. դարբնոցամամլիչային սարքավորում, 8. կալցիումի կարբիդ, 9. ավտոդողեր ու ռետինատեխնիկական իրեր, 10. հանքային շինանյութեր, 11. խեցեգործական շինանյութեր, 12. ապակեթելեր ու գործվածքներ, 13. ացետատային մետաքսաթել, 14. մանվածք։

թույլ են զարգացած։ Դա վերաբերում է նաև հանգույցի արդյունաբերական կետերը իրար միացնող արտադրական կապերին, որոնք հիմնականում սահմանափակվում են Լենինականի ձեռնարկություններով և առավելապես ունեն ներճյուղային բնույթ։ Միջճյուղային կապերը գտնվում են ձևավորման սկզբնական փուլում միայն։ Նրանց զարգացման նախադրյալ պետք է դիտել, մասնավորապես, այն բանը, որ այստեղ և ոչ թե մի այլ տեղ կազմակերպվեց քարհատ ու քար հղկող հաստոցների արտադրությունը, որոնց պահանջը մեծ է հենց Լենինականի արդյունաբերական հանգույցում։

Լենինականի արդյունաբերական հանգույցը իր արտադրական հզորությամբ հանրապետությունում գրավում է երկրորդ տեղը՝ Երևանյանին զիջելով մոտավորապես 7 անգամ։ Նրա առաջատար ճյուղերն են մեքենաշինությունը, տեքստիլ, շինանյութերի և սննդի արդյունաբերությունը։

Լենինականից բացի, մեքենաշինական ձեռնարկություններ են ստեղծվել Արթիկում (վակուումային էլեկտրավառարանների) ու Մարալիկում (մագնիսային ուժեղացուցիչների)։ Այս ճյուղը ամենաերիտասարդն է հանգույցում, ուստի և նրա արտադրական կապերը նոր միայն սկսում են ձևավորվել։

Հանգույցում ստեղծվել է տեքստիլ արդյունաբերության զարգացած կոմպլեքս, որտեղ ընդգրկված են մանվածքային, գործվածքային, ներկման, ինչպես նաև տրիկոտաժեղենի ու գուլպեղենի արտադրությունները, որոնք գրեթե ամբողջությամբ կենտրոնացված են Լենինական քաղաքում։

Հակառակ սրան, հանգույցի մյուս երկու առաջատար ճյուղերը (շինանյութերի և սննդի) չունեն այդպիսի համակենտրոնացում։ Առավել ակնհայտ է շինանյութերի արդյունաբերության ցրված տեղաբաշխումը, չնայած որ ինչպես հանգույցում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում այդ ճյուղի գծով բացառիկ տեղ է պատկանում Արթիկին։ Նրան բաժին է ընկնում տուֆե որմնաքարի հանույթի գլխավոր մասը։

Իր հզորությամբ երրորդ արդյունաբերական հանգույցի համար որպես հիմք ծառայում է Կիրովականը, որը անտեսապես դեպի իրեն է ձգում Սպիտակ քաղաքն ու Փամբակ ավանը։ Նշված արդյունաբերական կենտրոններն ու կետերը նրանց միջև ընկած բնակավայրերի սիստեմի հետ մեկ հանգույցի մեջ միավորող հիմնական գործոններն են՝ նրանց տերիտորիալ մոտիկությունը (15—20 կմ) ու միանման բնական պայմանները, ջրամատակարարման աղբյուրի (Փամբակ գետ) ու էլեկտրամատակարարման ցանցի ընդհանրությունը, հաղորդակցության ճանապարհների միասնությունը։ Ի տարբերություն Լենինականի հանգույցի, այստեղ ավելի ակնառու է արտահայտված շինարարական ինդուստրիայի նյութա-տեխնիկական բազայի ընդհանրու-



13. Կիրովականի արդյունաբերական հանգույցի առաջադրական կապերը.

1. Հրակայուն իրեր, 2. ալյումին, 3. էլեկտրաէներգիա, 4. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 5. հաստոցաշինության ու սարքաշինության արտադրանք, 6. դարբնոցա-մամլիչային սարքավորում, 7. ծծմբաթթու, 8. կալցիումի կարբիդ, 9. ավտոդողեր ու ռետինատեխնիկական իրեր, 10. ացետիլցելյուլոզա, 11. հանքային շինանյութեր, 12. խեցեգործական շինանյութեր ու շինարարական պլաստիկներ, 13. ապակեթելեր ու դործվածքներ, 14. ացետատային մետաքսաթել, 15. մանվածք։

թյունը։ Բայց ավելի թույլ են ու աղքատ Հանգույցի բնակավայրերն իրար միացնող արտադրական կապերը։ Ամենամոտ տարիներս նրանք որոշ չափով կսերտանան՝ կապված այն բանի հետ, որ և՛ Կիրովականում, և՛ Սպիտակում բարձր տեմպերով զարգանում է մեքենաշինությունը, ստեղծվում են նաև փոխադարձաբար իրար հետ կապված տեքստիլ-տրիկոտաժի արդյունաբերության ձեռնարկություններ։

Հակառակ դրան, այդ կապերը զարգացման բարձր աստիճանի են հասել Հանգույցի գլխավոր կենտրոն Կիրովականում, որտեղ ստեղծվել են բավականին հասուն արտադրական կոմպլեքսներ։ Այդպիսիք նախատեսվում է ստեղծել մոտ ապագայում ևս։ Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսանելի հեռանկարում էլ Կիրովականի բացարձակ գերակշռությունը Հանգույցի մյուս կետերի նկատմամբ պահպանվելու է, չնայած նրան, որ Սպիտակի զարգացման տեմպերը նկատելիորեն արագանում են։

Ալավերդու արդյունաբերական հանգույցը *ընդգրկում է համանուն քաղաքը և Ախթալա, Շամլուղ, Թումանյան քաղաքատիպ ավանները՝ Դեբեդ գետի վրա ընկած մյուս բնակավայրերի հետ միասին։ Նրանց բոլորի համար ընդհանուր են թե՛ ջրամատակարարման աղբյուրն ու էլեկտրաէներգիայի բաշխման ցանցը և թե՛ հանգույցի ներքին ու արտաքին հաղորդակցության ճանապարհները։ Ստեղծված է նաև միասնական շինարարական բազա։*

Այս հանգույցի համար հատուկ է նաև հաջորդական տեխնոլոգիական պրոցեսների և դրանից բխող արտադրական սերտ կապերի առկայությունը։ Խոսքը առաջին հերթին գունավոր մետալուրգիայի մասին է, որի շնորհիվ էլ ձևավորվել ու զարգացել է Հանգույցի կորիզը՝ Հանձինս Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի և նրա հումքային կցորդը հանդիսացող Ախթալայի ու Շամլուղի պղնձահանքերի։ Վերջիններիս բազայի վրա գործում է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան։

Այսպիսով, հանրապետությունում Ալավերդու արդյունաբերական հանգույցը դեռևս միակն է, որտեղ հիմնական, տիրապետող ճյուղի տեխնոլոգիական լրիվ ցիկլը սկսվում և ավարտվում է տեղում (հումքի արդյունահանում, հարստացում, մաքուր պղնձի ստացում, քիմիական արդյունաբերություն)։ Ըստ որում, նա տալիս է հանրապետությունում արտադրվող ամբողջ պղինձը, ցինկի ու արճճի կոնցենտրատը, ապնիվ մետաղները, ծծմբաթթուն, պղնձարջասպը։

Եթե հանգույցի կորիզը իսկապես հասել է ավարտվածության բարձր աստիճանի, ապա ամբողջ հանգույցի մասին այդ ասել չի կարելի։ Չնայած վերը նշված հանգույցաստեղծ գործոնների առկայությանը և այն բանին, որ



14. Ալավերդու արդյունաբերական հանգույցի արտադրական կապերը.

1. Հրակայուն նյութեր, 2. պղնձի կոնցենտրատ, 3. պղինձ, 4. էլեկտրաէներգիա, 5. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 6. հատուցաշինության ու սարքաշինության արտադրանք, 7. դարբնոցա-մամլիչային սարքավորում, 8. ծծմբաթթու, 9. կալցիումի կարբիդ, 10. հանքային շինանյութեր, 11. ապակեթելեր ու գործվածքներ, 12. մանվածք:

սպառվող էլեկտրաէներգիայի մեծ մասը նույնպես արտադրվում է տեղում (Ջորագետի ու Այրումի հիդրոէլեկտրակայաններում)՝ բաշխվելով հանգույցի բոլոր բնակավայրերի միջև, վերջիններիս փոխադարձ կապը դեռևս թույլ է։

Հանգույցի արդյունաբերական կառուցվածքում որոշ դեր են խաղում նաև սննդի արդյունաբերությունը (Այրումի ու Դեբեդաշենի պահածոների ու գինու գործարանները) և հրակայուն աղյուսի արտադրությունը (Թումանյան)։

Արդյունաբերության ու նրա միջճյուղային կապերի հետագա զարգացումից բացի, ապագայում կարևոր հանգույցաստեղծ գործոն կարող է հանդիսանալ Դեբեդի կասկադի ասպիճաններից մեկի՝ Շնողի հիդրոէլեկտրակայանի կառուցումը։

Հանրապետության մնացած երկու արդյունաբերական հանգույցները, ի տարբերություն արդեն քննարկվածների, նոր միայն թևակոխում են ձևավորման սկզբնական փուլը։

Ղափան—Քաջարանի արդյունաբերական հանգույցը այսօրվա վիճակով ընդգրկում է համանուն քաղաքները միայն, որոնց համար ընդհանուր են էլեկտրամատակարարման (Ամբարբեկյանգէս—Զանգեզուր բարձր լարման գիծը և Ողջի գետի երկու հիդրոէլեկտրակայանները) ու ջրամատակարարման (Ողջի գետը) աղբյուրը և տրանսպորտային դիրքը։ Ի միջի այլոց, վերջին հատկանիշի ընդհանրությունն էլ նշվում է պայմանական առումով, նկատի ունենալով, որ նրանց երկուսին էլ սպասարկում է նույն երկաթուղին և վերանալով այն բանից, որ Ղափանը գտնվում է անմիջապես երկաթուղու վրա, իսկ Քաջարանը՝ նրանից 40 կմ հեռու (երկաթուղու հետ նա կապվում է ավտոխճուղով)։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ շինարարական ինդուստրիայի ներճյուղային կապերից բացի, այդ երկու քաղաքների միջև ուրիշ արտադրական կապեր համարյա թե գոյություն չունեն։ Թե՛ Ղափանում և թե՛ Քաջարանում հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները իրենց արտադրության բնույթով ոչ թե լրացնում, այլ կրկնում են իրար (հանքաքարի հանույթ ու հարստացում)։

Այս սահմաններում էլ հանգույցը հանդիսանում է մոլիբդենի ու պղնձի կոնցենտրատների խոշորագույն արտադրող հանրապետությունում։ Մյուս ճյուղերը հիմնականում տեղական, սպասարկող բնույթ ունեն, չնայած որ արդեն քայլեր են արվում հանրապետական նշանակության վերամշակող արդյունաբերություն (մեքենաշինություն) ստեղծելու ուղղությամբ։

Ծրագրված է լեռնահանքային արդյունաբերության բազայի վրա Զանգեզուրում (Ղափանում) կառուցել պղնձաձուլական խոշոր կոմբինատ՝ ավարտին հասցնելով գունավոր մետալուրգիական ցիկլը։ Ալավերդու օրինա-



15. Ղափան—Քաջարան արդյունաբերական հանգույցի արտադրական կապերը.

1. պղնձի կոնցենտրատ, 2. էլեկտրաէներգիա, 3. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 4. հատուցաշինության ու սարքաշինության արտադրանք, 5. կալցիումի կարբիդ, 6. ավտոդողեր ու ռետինատեխնիկական իրեր, 7. հանքային շինանյութեր, 8. խեցեգործական շինանյութեր ու շինարարական պլաստիկներ։

կով կստեղծվի արդյունաբերական մի կուռ հանգույց, որտեղ արտադրական սերտ կապերով կենտրոնի հետ կկապվեն մի շարք արդյունաբերական կետեր ևս։ Խոշոր նշանակություն կունենա նաև Արաքս գետի վրա Մեղրու կիրճում խոշոր հիդրոէլեկտրակայանի կառուցումը։

Նկատի ունենալով Ղափան—Քաջարան հանգույցի զարգացման հեռանկարները, նրա սահմանների մեջ ապագայում կարելի է ու պետք է ընդգրկել նաև Ագարակ ու Մեղրի քաղաքատիպ ավանները և Ղափան—Քաջարան—Մեղրի եռանկյան մեջ ընկած բնակավայրերի սիստեմը։

Հրազդան—Սևան արդյունաբերական հանգույցի ուրվագծերը, ինչպես և նախորդինը, նոր միայն ի հայտ են գալիս։ Սակայն նրա ձևավորման պրոցեսը, ի տարբերություն Ղափան—Քաջարան հանգույցի, սկսվելով անհամեմատ ուշ, բավականին արագ տեմպերով է ընթանում։ Դա բացատրվում է 3 հանգամանքով։ Առաջին, Հրազդան—Սևան հանգույցն ունի խիստ բարենպաստ տնտեսա-աշխարհագրական դիրքադրում (տրանսպորտային հարմարավետ դիրքը հանրապետության տերիտորիայի կենտրոնական մասում, Երևանի հզոր հանգույցին մոտիկ գտնվելը և այլն)։ Երկրորդ, այստեղ համեմատաբար արագ թափով կառուցվում է Հրազդանի լեռնա-քիմիական խոշոր կոմպլեքսը և, երրորդ՝ Սևան—Հրազդան կոմպլեքսի հիդրոտեխնիկական կառուցումներից մնացած նյութական ու շինարարական բազան, որը նոր կապիտալ շինարարության ու արդյունաբերության զարգացման համար խթանիչ գործոն հանդիսացավ։

Հանգույցը ընդգրկում է միմյանցից ընդամենը 15—20 կմ հեռավորության վրա ընկած Հրազդան ու Սևան քաղաքները՝ նրանց կից բնակավայրերի հետ միասին։

Տերիտորիալ մոտիկությունից բացի, նրանց մեկ արդյունաբերական հանգույցի մեջ է միավորում նաև տրանսպորտային ցանցի, էլեկտրաէներգիայի ու ջրամատակարարման աղբյուրների ընդհանրությունը։ Նրա համար առանցք են հանդիսանում միևնույն ուղղությունն ունեցող երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհները։ Հանգույցն ընկած է Սևան—Հրազդան հիդրոէներգետիկական սիստեմի գլխամասային կառուցվածքի և առաջին երկու հիդրոէլեկտրակայանների (Սևանի ու Աթաբեկյանի) շրջանում։

Ղափան—Քաջարան հանգույցից տարբերող մյուս առանձնահատկությունն այն է, որ այստեղ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը լինելու է ավելի բազմազան։ Միայն Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատը ունենալու է տարբեր բնույթի մի շարք արտադրություններ, որոնք իրար հետ կապված լինելով միասնական հումքով, նրա վերամշակման միասնական



16. Հրազդան—Սևան արդյունաբերական հանգույցի արտադրական կապերը.

1. Հրակայուն նյութեր, 2. էլեկտրաէներգիա, 3. էլեկտրատեխնիկական մեքենաներ ու իրեր, 4. հատուցաշինության ու սարքաշինության արտադրանք, 5. կալցիումի կարբիդ, 6. ավտոդողեր ու ռետինատեխնիկական իրեր, 7. խեցեգործական շինանյութեր ու շինարարական պլաստիկներ, 8. ապակեթելեր ու գործվածքներ, 9. մանվածք, 10. ֆերմենտացված ծխախոտ։

տեխնոլոգիայով, թողարկելու են ամբողջովին տարբեր բնույթի ու տարբեր կիրառություն ունեցող նյութեր։ Կարևոր օղակ է հանդիսանում կառուցվելիք սղոզպատասխանական գործարանը՝ Հրազդանի երկաթահանքերի հետ միասին։

Հանգույցի մյուս կենտրոնը՝ Սևան քաղաքը արդեն ունի վերամշակող արդյունաբերության մի քանի ձեռնարկություններ, որոնց արտադրանքից հարկ է նշել հատկապես ապակեթելերն ու էլեկտրամեկուսիչ իրերը և գործադիր մեխանիզմները։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության տերիտորիալ կառուցվածքը այս 6 արդյունաբերական հանգույցներով չի սպառվում։ Նրանք, ինչպես արդեն ասվել է, հանրապետության բոլոր արդյունաբերական կետերն ու կենտրոնները, առավել ևս ամբողջ տերիտորիան չեն ընդգրկում։ Շատ վարչական շրջաններ ոչ միայն հեռու են այդ հանգույցների ազդեցությունից, այլև չունեն շատ թե քիչ խոշոր արդյունաբերական կենտրոններ։

Սակայն հարկ է նշել, որ սխալ կլիներ ենթադրել, թե անտեսապես հետամնաց տերիտորիաները անպայմանորեն պետք է կրկնեն արդյունաբերական շրջանների անցած ուղին։ Ներկայումս շրջանային հատակագծման աշխատանքների ոլորտում արդյունաբերական խոշոր կոմպլեքսներ ու հանգույցներ նախագծելու ու կառուցելու բարենպաստ պայմաններ են ստեղծված։ Փակագծերում նշենք, որ մեզ մոտ՝ Հայկական ՍՍՀ-ում, ի տարբերություն Սովետական Միության մի շարք այլ հանրապետությունների, այդ պայմանները դեռևս ինչպես հարկն է չեն օգտագործվում։

Տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդյունաբերական նոր ձեռնարկություններ ստեղծման լայն հնարավորություններ գոյություն ունեն վերը նշված վեց հանգույցներում։ Ապագայում արդյունաբերությունն այստեղ զարգանալու է ավելի արագ թափով, քան հանրապետության մնացած շրջաններում։ Սակայն դա չի նշանակում, թե ինդուստրիալ զարգացման ոլորտի մեջ դեռ չընդգրկված տերիտորիաները արդյունաբերական զարգացման հնարավորություններից զուրկ են։ Գյուղատնտեսությունից ազատվող աշխատուժի, իսկ որոշ տեղերում նաև օգտագործման համար հարմար բնական ռեսուրսների առկայությունը արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու օբյեկտիվ պայմաններ են ստեղծում։ Դա նշանակում է, որ Հայկական ՍՍՀ-ում պարարտ հող կա արտադրողական ուժերի համաչափ տեղաբաշխման օրենքի ըստ ամենայնի կիրառման համար։

Դա նշանակում է, միաժամանակ, որ արդյունաբերության տերիտորիալ կազմակերպման երկու ձևերը՝ տեղաբաշխումը ըստ հանգույցների և ըստ

առանձին ձեռնարկությունների ու մեկուսացված բնակավայրերի, իրար չեն հակասում և կոմունիստական շինարարության արդի փուլում պետք է զարգանան համատեղ։ Հասկանալի է, իհարկե, որ ապագայում այսօրվա մեկուսացված բնակավայրերի մեծ մասը կմիավորվեն նոր հանգույցների մեջ կամ «կնվաճվեն» հների կողմից։ Կարելի է ենթադրել, որ առաջիկա 5—10 տարում այդպիսի մի նոր հանգույց կսկսի ձևավորվել խոշոր հիդրոէներգաշինարարության և Սևանա լճի երկաթահանքերի շահագործման հիման վրա Որոտան գետի ավազանում։

Գլուխ երկրորդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը զարգացել է նույն տնտեսական սրենքների հիման վրա, ինչ որ ամբողջ սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը, և որպես Սովետական Միության հզոր գյուղատնտեսության բաղադրիչ, թեկուզ և փոքր մասը, արտահայտում է խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության բնորոշ հատկությունները։ Միևնույն ժամանակ նա ձևավորվել է կոնկրետ աշխարհագրական շրջանակներում և կրում է իր վրա տերիտորիայի, կլիմայական պայմանների, հողային ֆոնդի, ջրային ռեսուրսների և այլ գործոնների ազդեցությունը։ Սոցիալիստական շինարարության ընթացքում աշխարհագրական միջավայրի գյուղատնտեսական օգտագործումը և գյուղատնտեսության զարգացման տեղական պայմանները ստեղծել են այն ընդհանուր ու տարբերիչ գծերը, որոնք առկա են մի կողմից Հայկական ՍՍՀ, մյուս կողմից Սովետական Միության ու անդրկովկասյան հանրապետությունների գյուղատնտեսության մեջ։

Գյուղատնտեսության նպատակահարմար տեղաբաշխումը, հողագործության և անասնաբուծության մասնագիտացումը պահանջում են հանրապետության բնա-աշխարհագրական և տնտեսական պայմանների ճիշտ հաշվառում, գնահատում և օգտագործում։ Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս նրա տարբեր գոտիներում աշխատանքի և միջոցների միևնույն ներդրումով ստանալ առավելագույն արդյունք։

Սովետական իշխանության տարիներին Հայկական ՍՍՀ-ում ստեղծվել է բազմակողմանի զարգացած խոշոր սոցիալիստական գյուղատնտեսություն։

Այդ ժամանակամիջոցում նշանակալի չափով աճեց գյուղատնտեսական արտադրության ծավալը։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը գրեթե 4 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը։ Ոռոգչական լայն շինարարությունը, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառումը, գյուղատնտեսական աշխատանքի հիմնական տեսակների մեքենայացումը, արտադրական որոշ պրոցեսների էլեկտրիֆիկացումը հանգեցրին գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Տեղի ունեցան արմատական որակական փոփոխություններ գյուղատնտեսության կառուցվածքում, բարձրացավ նրա ինտենսիվ ճյուղերի՝ խաղողագործության, պտղաբուծության, տեխնիկական կուլտուրաների տեսակարար կշիռը, բարելավվեց անասունների ցեղային կազմը, բարձրացավ նրանց մթերատվությունը։ Բարենպաստ բնական ու տնտեսական պայմանների օգտագործման հիման վրա տեղի էր ունենում գյուղատնտեսության մասնագիտացման խորացում և տեղաբաշխման կատարելագործում։

Սովետական Հայաստանի տերիտորիալ-արտադրական կոմպլեքսում, որտեղ գերիշխում են ինդուստրիալ ֆունկցիաները, գյուղատնտեսությունը ստորադաս դեր է կատարում։ Այդ ճյուղը ստեղծում է հանրապետության ազգային եկամտի $^1/_3$-ից պակաս մասը (1913 թվին՝ $^3/_4$-ից ավելի էր), թեկուզ և գյուղատնտեսական արտադրանքի բացարձակ ծավալը և մասշտաբները անընդհատ մեծանում են։ Վերջին տարիներին մեկ աշխատողի հաշվով արդյունաբերության մեջ արտադրվում էր 10 անգամ ավելի համախառն արտադրանք, իսկ նոր ստեղծված արժեքով՝ 1,8 անգամ ավելի, քան գյուղատնտեսության մեջ[1]։

Հանրապետության ժողովրդատնտեսական կոմպլեքսում գյուղատնտեսության դերը գնահատելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն նրանում ստեղծված արդյունքի ծավալը։ Գյուղատնտեսությունը նույնպես ակտիվորեն ներգործում է հանրապետության արտադրական կոմպլեքսի ձևավորման վրա։ Մի շարք ճյուղեր և արտադրություններ, որոնք որոշում են հանրապետության միութենական մասնագիտացումը, զարգանում են տեղական, մեծ մասամբ բարձրարժեք գյուղատնտեսական հումքի վերամշակման հիման վրա։ Հանրապետության պարենային հաշվեկշռի մի զգալի մասը ծածկվում է տեղական գյուղատնտեսական արտադրության հաշվին, իսկ մթերքների որոշ տեսակներ արտահանվում են։ Հանրապետության բնակչության 45%-ը

---

[1] *Տե՛ս* Вопросы планирования и учета национального дохода союзных республик. Изд. АН Армянской ССР, Ереван, 1962, *էջ 69։*

զբաղված է անմիջականորեն գյուղատնտեսության մեջ կամ սպասարկում է նրան։

Երկրի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ Հայկական ՍՍՀ տեսակարար կշիռը կազմում է մոտ 0,5 %, սակայն ինտենսիվ հողագործության որոշ մթերքների (ծխախոտ, խաղող, պտուղներ) մեկ շնչին ընկնող արտադրանքը շատ ավելի մեծ է, քան ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում։

Հանրապետության գյուղատնտեսության առավել սուր և հրատապ հարցերից մեկը արտադրության հիմնական միջոցով՝ հողով ապահովված լինելու պրոբլեմն է։ Բնորոշ գիծը գյուղատնտեսական օգտագործման համար պիտանի հողերի սահմանափակ քանակությունն է։ Ամբողջ հողային ֆոնդի 39,8 %-ը կազմում են գյուղատնտեսության համար անհարմար և չօգտագործվող հողերը։ Անտառների և թփուտների տակ գտնվում է տերիտորիայի 12,7 %-ը։ Գյուղատնտեսական հանդակներին մնում է ամբողջ հողային տարածության միայն 47,5 %-ը, որի կեսից ավելին կազմում են արոտավայրերն ու խոտհարքները։ Գյուղատնտեսական հանդակների ամբողջ տարածության մեջ վարելահողերը գրավում են 35,5 %, իսկ բազմամյա տնկարկները՝ 4,4 %։

Հանրապետության բնակչության մեկ շնչին ամբողջ ՍՍՀՄ-ի համեմատությամբ բաժին են ընկնում համարյա 3,8 անգամ պակաս գյուղատնտեսական հանդակներ և 4,5 անգամ պակաս մշակովի հողեր։ Ցածր է նաև հանրապետության գյուղատնտեսական հանդակներով ապահովվածությունը գյուղական բնակչության 1 շնչի հաշվով (Հայկական ՍՍՀ՝ 1,4 հա, ՍՍՀՄ՝ 5,0 հա)։ Այս պայմաններում զարմանալի չպետք է թվա, որ Հայկական ՍՍՀ-ում բնակչության 1 շնչի հաշվով, Սովետական Միության համեմատությամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը մոտ երկու անգամ պակաս է ստացվում։

Սահմանափակ են նաև վարելահողերի ընդարձակման հնարավորությունները։ Ավելին, վերջին տարիների ընթացքում նույնիսկ տեղի է ունեցել գյուղատնտեսական հանդակների տարածության կրճատում՝ շրջանառությունից հանվելու պատճառով։

Հողային էրոզիայի բոլոր տիպերը, հատկապես հողմայինը և ջրայինը, այդ թվում ոռոգչականը, մեծ վնաս են հասցնում հանրապետության հողային ֆոնդին, որի մոտ $^3/_4$-ը վնասված է տարբեր աստիճանի էրոզիոն պրոցեսներով։ Լեռնային և նախալեռնային շրջաններում մասնատված ռելիեֆի պայմաններում ուժեղ էրոզիայի պատճառով զառիթափ լանջերի հողերը շարքից

17. Հայկական ՍՍՀ հողահաճդակները.

1. ակտիվորեն օգտագործվող հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ), 2. խոտհարք-նևր, 3. անտառներ, 4. արոտավայրեր և այլ հողեր (այդ թվում գյուղատնտեսության մեջ չօգտագործվող հողեր)։

դուրս են գալիս, կրճատելով ակտիվորեն օգտագործվող հանդակների տարածությունը։ Միայն վերջին 10—12 տարվա ընթացքում ավելի քան 160 հազար հեկտարով կրճատվել են հանրապետության վարելահողերը։ Բավական է ասել, որ այդ շրջաններում 3—5° թեքություն ունեցող տեղամասերը մշակման համար բարենպաստ են համարվում, մինչդեռ մի շարք հանրապետություններում և մարզերում այդպիսի դաշտերը դիտվում են իբրև էրոզիայի ենթակա և օգտագործվում են մի շարք սահմանափակումներով։ Ազիզբեկովի, Եղեգնաձորի, Աբովյանի, Ապարանի, Ալավերդու և այլ շրջաններում հողերի հիմնական զանգվածները ընկած են 5—12° և ավելի մեծ թեքությունների վրա։ Դրա հետևանքով հանրապետությունը ամեն տարի կրում է գյուղատնտեսական մթերքների մեծ կորուստներ։ Հակաէրոզիոն միջոցառումները առայժմ չեն կիրառվում բավականաչափ հետևողական ու ինտենսիվ կերպով։ Մինչդեռ ժամանակն է արդեն ոչ միայն վճռականապես պաշտպանել հանրապետության պաղաբեր հողածածկը էրոզիայից, այլև ապահովել գյուղատնտեսական շրջանառությունից դուրս եկած հողերի վերականգնումը։

Բավականին լարված հողային հաշվեկշռի պայմաններում բացառիկ նշանակություն է ձեռք բերում ոչ միայն առկա գյուղատնտեսական տարածությունների պահպանումն ու բարելավումը, այլև հողային նոր զանգվածների յուրացումը, որոնց գլխավոր ռեզերվները գտնվում են Արարատյան դաշտավորությունում։ Այստեղ պետք է յուրացվեն մի կողմից Արարատյան դաշտի աղակալված խոպանը, մյուս կողմից՝ նախալեռների քարքարոտ «ղռերը»։

Հողային ֆոնդի պահպանման ու բարելավման, ինչպես նաև հողային նոր զանգվածների յուրացման միջոցառումները պահանջում են զգալի կապիտալ ներդրումներ։ Եթե վերջիններս կազմակերպված են հաջող, ապա փոխհատուցվում են արագորեն, քանի որ նոր հողերը գլխավորապես դրվում են ինտենսիվ բարձր-ապրանքային կուլտուրաների տակ։

Առկա ողջ հողային ֆոնդի ավելի նպատակահարմար և ինտենսիվ օգտագործումը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանքի ավելացման գլխավոր ռեզերվը։

Հողահանդակները հանրապետության տերիտորիայում ըստ բարձրության գոտիների բաշխված են անհամաչափ (տե՛ս աղյուսակ 18)։ Ընդարձակ ենթալպյան և ալպյան արոտավայրերը, ինչպես նաև խոտհարքները կազմում են լեռնային շրջանների հիմնական ֆոնդը, տարածված են լեռնաշղթաների լանջերին և սարավանդներում, մասնավորապես՝ Լոռու հարթավայրում, Արագածի զանգվածում, Գեղամա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռնաշղթաներում։ Այդ հանդակները, կախված տեղանքի բարձրությունից և խոտածած-

Հայկական ՍՍՀ հողահանդակների բաշխումը ըստ բարձրության գոտիների (1964 թ.)

Հողահանդակներ	Ընդամենը		Այդ թվում ըստ բարձրության գոտիների (մետրերով)													
			390—500		500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր	
	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%
Վարելահողեր	479660	100	1000	0,2	12470	2,6	49540	10,3	84300	17,6	208500	43,5	123570	25,8	280	—
Բազմամյա տնկարկներ	70823	100	270	0,3	6927	9,1	29297	42,0	29318	41,5	5011	7,1	—	—	—	—
Խոտհարքներ	127946	100	—	—	1317	1,0	1660	1,3	13374	10,4	59452	46,5	47419	37,0	4724	3,8
Արոտավայրեր և այլ հողեր	1784514	100	11506	0,0	30153	1,7	125769	7,1	275148	15,4	382003	21,4	500151	28,0	470140	26,4
Անտառներ և թփուտներ	376490	100	—	—	4460	1,1	28480	7,6	140347	37,4	142634	38,0	56008	14,8	4561	1,1
Ամառնա, Արփի լճերը	134826	100	—	—	—	—	—	—	132626	99,0	2200	1,0	—	—	—	—
Ընդամենը գոտում	2974259	100	2420	0,1	55327	1,9	234746	7,9	542486	18,3	930226	31,3	729348	24,5	479705	16,0

կույթի կազմից, օգտագործվում են անասունների գարնանա-ամառային և ամառային արոտի ու խոտհնձի նպատակով։ Ամառվա ամիսներին այստեղ են բերվում անասունները ցածրադիր գոտուց։ Համեմատաբար փոքր չափերի անապատային և կիսանապատային կերահանդակները, որոնք դեռևս օգտագործվում են իբրև ձմեռային արոտավայրեր, գերազանցապես մանր եղջերավոր անասունների համար, գտնվում են Արարատյան գոգավորության ցածրադիր և նախալեռնային մասերում։

Չնայած այն բանին, որ լեռնային շրջաններում հողագործության զարգացման համար պայմանները համեմատաբար քիչ բարենպաստ են, վարելահողերի մի զգալի մասը, հատկապես անջրդի վարելահողերը, տարածված են այդ գոտում։ Նրանք խոշոր զանգվածներով ձգվում են Շիրակի դաշտում և ավելի վեր՝ Սևանա լճի ավազանի մեղմ-ալիքային լանջերում, ինչպես նաև Որոտան գետի ավազանում։ Բացի այդ, վարելահողեր կան լեռնալանջերի և միջլեռնային հովիտների բոլոր փոքրիշատե հարմար տեղամասերում։ Հողային տարածությունների կտրտվածությունը և մանրակոնտուր տարածումը բնորոշ առանձնահատկություն է հանրապետության համարյա բոլոր շրջանների համար։ Վարելահողերի զգալի մասը բազկացած է մինչև 1 ճա հողակտորներից։ Հանրապետության հողամասերի միջին չափերը 100 անգամ ավելի պակաս են, քան Ստավրոպոլի երկրամասում։

Վարելահողերը մանր տեղամասերով թափանցում են նաև լեռնային շրջանները՝ քարաթափվածքների ու ժայռային գոյացությունների, անտառային նոսրացած գանգվածների միջև՝ բարձրանալով մոտավորապես մինչև 2400 մ։ Հողամասերի մանրակոնտուր բնույթը ցայտուն արտահայտված է նաև նախալեռնային գոտում, հատկապես Արփա գետի ավազանի և Ջանգեզուրի մասնատված և էրոզիայի ենթարկված տեղամասերում։

Հանրապետության գյուղատնտեսության բնորոշ առանձնահատկություններից մեկը, որ նույնպես առաջ է գալիս հողա-կլիմայական և ռելիեֆի պայմաններից, հանդիսանում է գյուղատնտեսական ճյուղերի և կուլտուրաների սերտ կապը տերիտորիայի ուղղաձիգ գոտիականության հետ. լեռնային գոտու վերին մասերում անասնաբուծությունը գերակշռում է հողագործության նկատմամբ, գյուղատնտեսությունը ունի նվազ ինտենսիվ բնույթ. այդ գոտու ցածրադիր մասերում անասնաբուծության հետ մեկտեղ աչքի է ընկնում հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլի, ծխախոտի մշակումը, զարգանում է նաև բարձրալեռնային պտղաբուծությունը։ Նախալեռնային և ցածրադիր գոտիներին անցնելիս գյուղատնտեսությունն ավելի բազմազան է դառնում, աճում է նրա ինտենսիվությունը, գերակշռում է ոռոգելի հողագոր-

ծութիւնը։ Այստեղ առաջին պլան են ելնում խաղողագործութիւնը, պտղաբուծութիւնը, տեխնիկական և բանջարա-բոստանային կուլտուրաների մշակումը։

Քանի որ գյուղատնտեսական արտադրության բնական և տնտեսական պայմանները տեղից տեղ զգալիորեն տարբերվում են, այդ պատճառով գյուղատնտեսության ներկա տեղաբաշխումը բավականին բազմապիսի է։ Առանձին շրջանների և նույնիսկ առանձին սովխոզների ու կոլտնտեսությունների մասնագիտացման մեջ հաճախ նկատվում է ունիվերսալիզմի, մեկ տնտեսության մեջ շատ ճյուղեր զուգահեռաբար զարգացնելու ձգտում, որը հանգեցնում է հողային ֆոնդի, մեքենաների և աշխատանքային ռեսուրսների ոչ բավականաչափ ռացիոնալ օգտագործմանը։

Ելնելով համապետական շահերից և տնտեսությունը ռացիոնալ ձևով վարելու պահանջներից, որոնք նախատեսում են լավագույն պայմաններ ունեցող և ծախսումների ամենաբարձր խնայողություն տվող ճյուղերի զերադասելի աճ, նախատեսված են հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները։ Դա ամենից առաջ խաղողագործությունն է, պտղաբուծությունը և անասնաբուծությունը. զգալի չափով պետք է զարգանան ծխախոտագործությունը և բանջարաբուծությունը։

Գյուղատնտեսության մասնագիտացումը էլ ավելի խորացնելու և զարգացնելու կապակցությամբ զգալիորեն կմեծանա Արարատյան դաշտի և նախալեռնային շրջանների, ինչպես նաև հյուսիս-արևելքի և մասամբ ծայր հարավի նշանակությունը որպես ապրանքային խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մասնագիտացած շրջանների։ Արարատյան դաշտում արդյունաբերական ամենախոշոր՝ Երևանի հանգույցի առկայությունը պահանջում է այստեղ զարգացնել մերձքաղաքային տնտեսության հզոր զոնա, իսկ բնական պայմանները թույլ են տալիս խորացնել նրա մասնագիտացումը խաղողագործության, բանջարաբուծության և կաթնատու անասնաբուծության ուղղությամբ։ Մերձքաղաքային զոնաներ կստեղծվեն նաև մյուս խոշոր քաղաքային կենտրոնների շուրջը (Լենինականի, Կիրովականի և այլն)։

Լեռնային շրջանները, ամբողջությամբ վերցրած, հանդես են գալիս իբրև անասնապահական մթերքների հիմնական արտադրողներ։ Ծխախոտի արտադրությամբ մասնագիտանում են հյուսիս-արևելքի, Սևանի ավազանի, մասամբ էլ Արփա և Որոտան գետերի ավազանների շրջանները, ճակնդեղագործությամբ՝ Շիրակի և Փամբակ գետի վերնագավառի տնտեսությունները։ Արարատյան դաշտում բամբակագործությունն արդեն կորցրել է



18. Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մասնագիտացման շրջաններ.

1. Խաղողագործության և պտղաբուծության շրջան՝ զարգացած բանջարաբուծությամբ ու բոստանաբուծությամբ և մերձքաղաքային անասնաբուծությամբ։ 2. Խաղողագործության ու պտղաբուծության շրջան՝ ծխախոտագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնաբուծությամբ, ա—այգեգործության, բանջարաբուծության ենթաշրջան։ 3. Ծխախոտագործության, խաղողագործության և պտղաբուծության շրջան՝ զարգացած անասնաբուծությամբ, մ—չոր մերձարևա-

իր նշանակությունը և տեղը պիջում է այդ շրջանի համար ավելի անհրաժեշտ ու արդյունավետ կուլտուրաներին (բանջարա-բոստանային կուլտուրաներին և կերաբույսերին)։ Ապրանքային կարտոֆիլի արտադրության գլխավոր շրջանները կմնան Լոռու սարահարթը և Սևանի ավազանը։

Գյուղատնտեսության տեղաբաշխման այս ընդհանուր պատկերը աչքի է ընկնում ներքին խայտաբղետությամբ, որը դժվարացնում է գյուղատնտեսության շրջանացման խնդիրը։ Հանրապետության բնական տնտեսական բարդ պայմաններում նրա ճիշտ լուծումը պահանջում է, ամենից առաջ, հնարավորին չափ լրիվ հաշվի առնել այն էական և կայուն գործոնները, որոնք իրար հետ միավորում են գյուղատնտեսության միատարր բնույթ ունեցող շրջանները։ Խիստ արտահայտված լեռնային ռելիեֆը, զուգակցված ուղղահայաց բարձրության բնական այլ առանձնահատկությունների հետ, ոչ միայն մեծ բազմազանություն է առաջացնում տեղից-տեղ անցնելիս, այլ նաև պայմանավորում է միմյանցից մեկուսացած աշխարհագրական շրջանների գոյությունը՝ պարփակ գոգավորությունների, լեռնային սարավանդների, միջլեռնային հովիտների և այլն, որոնցում, իրրև կանոն, ցայտուն արտահայտված են ուղղաձիգ գոտիները։ Հաճախ տարբեր դիրքագրման լանջերն այստեղ իրարից տարբերվում են շատ խիստ կերպով, իսկ ծովի մակարդակից միահավասար բարձրության վրա գտնվող տերիտորիաներն ունեն գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման տարբեր հողային և կլիմայական պայմաններ։

Այդ աշխարհագրական շրջանները բնութագրվում են նաև տնտեսական տարբեր պայմաններով, որոնցում զարգանում է գյուղատնտեսությունը։

դարձային պտղատու կուլտուրաների տարածման ենթաշրջան։ 4. Անասնաբուծության, պտղաբուծության և խաղողագործության շրջան՝ ծխախոտագործության, բանջարաբուծության և շերամապահության օջախներով, մ—շոր միջերկրադարձային պտղատու կուլտուրաների տարածման ենթաշրջան։ 5. Անասնաբուծության շրջան՝ ծխախոտագործության, պտղաբուծության օջախներով և հացահատիկային տնտեսությամբ։ 6. Անասնաբուծության շրջան՝ խաղողագործության, ծխախոտագործության և պտղաբուծության օջախներով, խ—խաղողագործության, պտղաբուծության ենթաշրջան։ 7. Անասնաբուծության, ծխախոտագործության և կարտոֆիլաբուծության շրջան՝ հացահատիկային տնտեսությամբ և պտղաբուծության օջախներով, ծ—ծխախոտագործության, կարտոֆիլաբուծության և լեռնային պտղաբուծության ենթաշրջան։ 8. Անասնաբուծության և կարտոֆիլաբուծության շրջան՝ պտղաբուծության օջախներով։ 9. Անասնաբուծության և ճակնդեղագործության շրջան՝ հացահատիկային տնտեսությամբ։ 10. Անասնաբուծության շրջան՝ կարտոֆիլաբուծության օջախներով և հացահատիկային տնտեսությամբ։ 11. Ամառային արոտավայրերի անասնաբուծական շրջան։ 12. Ձմեռային արոտավայրերի անասնաբուծական շրջան։ 13. Անտառներ։ 14. Երևան քաղաքի տերիտորիան։

Դրանք արտահայտվում են տրանսպորտային ցանցի ոչ միատեսակ աստիճանի զարգացմամբ, արդյունաբերական խոշոր կենտրոններից և գյուղատնտեսական հումքի վերամշակման կետերից նրանց տարբեր հեռավորությամբ, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների, ջրատնտեսական կառուցվածքների տարբեր ապահովվածությամբ և այլն։

Նկատի ունենալով վերը նշված առանձնահատկությունները և հաշվի առնելով շրջանի մեջ միավորվող տերիտորիայի ուղղաձիգ գոտիականությունը, նրա բնա-տնտեսական պայմանները, գյուղատնտեսության առանձին ճյուղերի ու կուլտուրաների ապրանքայնությունը և զարգացման հեռանկարները, առաջարկվում է Հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման շրջանների ընդհանրացած սխեման։ Վերջինս դիտվում է որպես մի փորձ հանրապետության գյուղատնտեսության շրջանացման բարդ հարցի լուծման ճանապարհին[1]։ (Տե՛ս Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մասնագիտացման շրջանների քարտեզը, էջ 124)։

Գյուղատնտեսության կարևոր առանձնահատկությունն է խիստ կախվածությունը ոռոգումից։ Հանրապետությունում, որտեղ հերկման համար գյուրամատչելի ու պիտանի հողերի ռեզերվները սահմանափակ են, Արարատյան դաշտի բոլոր հողերի ոռոգումը, ջրատնտեսական կառուցումների շինարարությունը դեպի նախալեռնային ու լեռնային շրջանները տեղաշարժելը, ոռոգանները ջրարբի դարձնելը հանդիսանում են հողերի բարձր արտադրողական օգտագործման հիմնական պայմանը։

Հանրապետությունում տարվում է անընդհատ ոռոգչական շինարարություն։ 1920—1964 թթ. ընթացքում ջրատնտեսական շինարարության մեջ ներդրված կապիտալ ներդրումները կազմել են մոտ 100 մլն. ռուբլի։ Ոռոգովի հողերի տարածությունը ներկայումս հասնում է մոտ 260 հազար հա, 1913 թ. 97 հազ. և 1920 թ. 61 հազ. հա-ի դիմաց։

Վերջին տարիներին ավարտված կամ սկսված ջրատնտեսական կարևոր կառույցները ոչ միայն ջրովի դարձրին ու դեռ կդարձնեն տասնյակ հազարա-

---

[1] Հայկական ՍՍՀ-ում մինչև հիմա գոյություն ունեցող գյուղատնտեսական շրջանացման սխեմայի համաձայն տերիտորիան բաժանված է 9 գոնաների, որոնցից յուրաքանչյուրը մասնատվում է մի քանի ուղղաձիգ ենթագոնաների (ընդամենը 24 ենթագոնա), իսկ վերջիններս իրենց հերթին կարող են բաժանվել միկրոգոնաների։ Այսպիսի վիճակը ընդգծում է Հանրապետության գյուղատնտեսության շրջանացման հարցի ամբողջ բարդությունը և միաժամանակ անկատար վիճակը։ (Տե՛ս Գ. Խ. Աղաջանյան, Ս. Հ. Խրիմյան, Գ. Ա. Քոչարյան, Ա. Բ. Բաղդասարյան. «Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական գոտիները», Երևան, 1956)։

վոր հեկտար նախկինում չորային, քարքարոտ ու չօգտագործվող հողերը, այլև նրանց մի մասի շնորհիվ կտնտեսվեն միլիոնավոր խորանարդ մետր Սևանի թանկարժեք ջրերը։ Դրանցից արդեն գործում են Նոյեմբերյանի քառաստիճան ջրհան կայանը, Արագածի հյուսիսային լանջին ձգված հանրապետության ամենաբարձրադիր՝ Մանթաշի ջրամբարը, Արագածի արևելյան լանջերին Քասաղ գետի վրա Ապարանի ջրամբարը, Ներքին Սասնաշենի ջրամբարը և շատ այլ ջրատնտեսական օբյեկտներ։

Ոռոգչական շինարարության կարևորագույն կառույցները մերձակա տարիներին կհանդիսանան Արզնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հերթը, Մխչյանի և Արևշատի ջրհան կայանները, Որոտանի և Քասաղի խոշոր սիստեմները, Թալինի ոռոգման սիստեմի երկրորդ հերթը և բազմաթիվ այլ միջին ու փոքր հզորության ջրանցքներ, ջրհան կայաններ, ջրամբարներ։

Հնգամյակում ոռոգելի հողերի տարածությունները կավելանան 60 հազար հեկտարով, իսկ 1966—1975 թթ.՝ 130—140 հազար հեկտարով, կամ ավելի քան 50 %-ով։

Հանրապետությունում արոտավայրերի սիստեմատիկ ջրարբիացման աշխատանքները տարվում են 1956 թվականից։ Արդեն ամառային արոտների ղգալի տերիտորիաներ են ջրարբիացվել Գեղամա լեռներում, Արագածի հարավային լանջերին և այլուր, ընդամենը 170 հազ. հեկտարից ավելի։ Պլանավորված է ջրարբի դարձնել նաև Վարդենիսի, Բարգուշատի, Մեղրու, Փամբակի, Բազումի, Սևանի լեռնաշղթաների ամառային արոտավայրերի հիմնական զանգվածները և այլն։ 1966—70 թթ. ջրարբի կդարձվի ևս 130 հազ. հա։ Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման համար, ոռոգումից բացի, առանձին կարևորություն է ձեռք բերում ամբողջ գյուղատնտեսության լայն քիմիացումը։

Մինչև այժմ հանքային պարարտանյութերը կիրառվում էին ծայր աստիճան անբավարար. նրանք հիմնականում տրվում էին տեխնիկական կուլտուրաներին, մասամբ՝ խաղողի և պտղատու այգիներին, իսկ հացահատիկի ցանքերը պարարտանյութերով ապահովվում էին շատ քիչ։

Թունաքիմիկատների և՝ մեխանիզմների պակասի հետևանքով գյուղատնտեսական բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ մղվող պայքարը քիչ արդյունք էր տալիս։ Դա հանգեցնում էր բերքի կորուստների, որոնք միջին հաշվով տարեկան կազմում էին 20 %, իսկ որոշ տարիների հասնում էին ավելի մեծ չափերի։

Ներկայումս նախատեսված է զգալի չափով ավելացնել հանքային պարարտանյութերի ֆոնդերը։ Պարարտանյութերի, ինչպես նաև բույսերի պաշտ-

19. Հայկական ՍՍՀ ոռոգման բառեզր.

1. գործող խոշոր ոռոգիչ ջրանցքներ, 2. կառուցվող ոռոգիչ ջրանցքներ, 3. ոռոգիչ պոմպակայան կայաններ, 4. ոռոգվող հողեր, 5. ջրարբիացված ամառային արոտավայրեր, 6. գործող ջրամբարներ, 7. կառուցվող և նախագծվող ջրամբարներ։

պանության քիմիական միջոցների ռացիոնալ օգտագործումը և քիմիայի լայն ներդրումը անասնաբուծության մեջ, որոգովի հողագործության միաժամանակյա զարգացման հետ մեկտեղ կտան ժողովրդատնտեսական մեծ էֆեկտ։

Գյուղատնտեսության և հատկապես բուսաբուծության համախառն արտադրանքի կազմում պարզ արտահայտված է բարձր եկամտաբեր և ինտենսիվ ճյուղերի առաջատար դերը։ Այսպես, 1964 թ. բուսաբուծության ամբողջ արտադրանքի $^3/_4$-ից ավելին տալիս էին խաղողագործությունը, պտղաբուծությունը, տեխնիկական, բանջարա-բոստանային կուլտուրաները և կարտոֆիլը, մինչդեռ 1913 թ. այդ ճյուղերի և կուլտուրաների տեսակարար կշիռը կազմում էր բուսաբուծության ողջ արտադրանքի $^1/_3$-ից մի քիչ ավելին։ Խաղողի այգիների տարածությունն ավելացավ 3,5 անգամ, պտղատու այգիներինը՝ 6 անգամ։

Հանրապետության ցանքատարածությունների ներկայիս կառուցվածքը արտացոլում է հողի ինտենսիվ օգտագործման ավելի բարձր մակարդակը, որի հետևանքով զգալիորեն ավելացել է հողատարածության մեկ միավորից ստացվող արդյունքը։ Ցանքատարածությունների կառուցվածքի մեջ հացահատիկի բաժինը զգալիորեն նվազել է։ Չնայած դրան, հացահատիկի համախառն բերքը 1,5 անգամով գերազանցել է 1913 թ. մակարդակը։ Գյուղատնտեսական արժեքավոր կուլտուրաների ցանքատարածությունների տեսակարար կշիռն ու բացարձակ չափերը ավելացել են։

Սովետական իշխանության տարիներին ստեղծվեց գյուղատնտեսության միանգամայն նոր նյութա-տեխնիկական բազա։ Եթե նախահեղափոխական շրջանի գյուղատնտեսության մեջ բանող անասունը էներգիայի միակ աղբյուրն էր հանդիսանում, իսկ 1929 թվին գյուղատնտեսության էներգետիկայում մեխանիկական շարժիչների բաժինը կազմում էր միայն 1,8 %, ապա 1962 թ. սկզբին վերջիններս համարյա լիովին դուրս մղեցին բանող անասունը, որի բաժինը ընկավ մինչև 1,4 %։ Գյուղատնտեսության էներգազինվածությունը հասել է բավական բարձր մակարդակի. 1964 թ. մեկ աշխատողին ընկնում էր 5,3 ձիաուժի, 100 հա ցանքատարածությանը՝ 246 ձիաուժի էներգետիկ կարողություններ։ Մեքենայացված է գյուղատնտեսական արտադրության հիմնական պրոցեսների մի մասը։ Սակայն աշխատատար պրոցեսների մեքենայացման ձեռք բերված մակարդակը դեռևս անբավարար է տակա հնարավորությունների և հատկապես ողջ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հեռանկարի տեսակետից։ Գյուղատնտեսության պրոֆիլային ճյուղերի՝ այգեգործության և խաղողագործության, անասնաբուծության

և բանջարաբուծության առավել աշխատատար պրոցեսներում դեռևս բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը: Մեքենայացման ստորաբաժանումն ապահովում է նախալեռնային և հատկապես լեռնային շրջաններում, որտեղ լանջերի մեծ թեքությունները, հողի քարքարոտությունը և հողակտորների փոքր չափերը խիստ սահմանափակում են մեքենաների կիրառումը: Գյուղատնտեսության բոլոր ճյուղերի կոմպլեքսային մեքենայացումը պահանջում է լեռնային պայմաններին հարմարեցրած մեքենաների լայն օգտագործում:

Հանրապետության գյուղատնտեսության մեջ էլեկտրաէներգիայի օգտագործումը հետզհետե ավելի լայն ու բազմազան է դառնում: Եթե 1950 թ. գյուղական վայրում էլեկտրաէներգիան օգտագործվում էր կենցաղային նպատակներով միայն, ապա ներկայումս գյուղատնտեսության մեջ սպառվող էլեկտրաէներգիայի 40 %-ից ավելին գնում է արտադրական կարիքների համար: Առաջին հերթին էլեկտրիֆիկացվեցին օժանդակ ճյուղերը (էլեկտրատաղացները, փայտի սղոցարանները, ջրի մեխանիկական մատուցումը և օժանդակ արտադրությունները) և առայժմ էլեկտրաէներգիայի մի փոքր մասն է միայն ծախսվում դաշտավարության ու անասնաբուծության աշխատատար պրոցեսները էլեկտրիֆիկացնելու կարիքների վրա:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքում բուսաբուծությունը գերակշռում է անասնաբուծության նկատմամբ (համապատասխանաբար կազմում են 60 և 40 տոկոս): Տերիտորիալ տեսակետից անասնաբուծությունը գերակշռում է հանրապետության շրջանների մեծ մասում և միայն Արարատյան դաշտի ու նախալեռների, ինչպես նաև հյուսիս-արևելքի շրջաններում առաջին տեղն է դուրս գալիս բուսաբուծությունը: Հեռանկարում, շնորհիվ ինտենսիվ ճյուղերի բուռն զարգացման, բուսաբուծությունը կտա գյուղատնտեսության համախառն արտադրանքի շատ ավելի մեծ մասը:

Բուսաբուծության գլխավոր ճյուղերը, որոնք և որոշում են Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մասնագիտացումը, խաղողագործությունը և պտղաբուծությունն են: Ներկայումս խաղողի այգիները (մոտ 36 հազար հա) և պտղա-հատապտղային տնկարկները (36 հազար հա) գրավելով գյուղատնտեսական բոլոր հանդակների 4 %-ից ավելին, տալիս են հանրապետության գյուղատնտեսության ողջ համախառն արտադրանքի $^1/_5$-ը:

Խաղողագործությունն ու պտղաբուծությունը Հայկական ՍՍՀ պայմաններում հանդիսանում են բարձր եկամտաբեր ու շահութաբեր ճյուղեր: Առանձնապես պետք է նշել խաղողագործության բարձր եկամտաբերությունը: Այսպես, հանրապետության կոլտնտեսություններում 1 հա խաղողի այգու

դուս եկամուտը 1960—62 թթ. 2 անգամ ավելի բարձր է եղել, քան ծխախոտինը։ Այն 1 հա բանջարեղենի եկամտից գերազանցում է 3 անգամ, բամբակենուց՝ 5 անգամից ավելի։ Աշխատանքային ծախսումների մեկ միավորին բաժին ընկնող արտադրանքի ծավալով աչքի է ընկնում այգեգործությունը, որտեղ ներդրված աշխատանքի մեկ միավորից ստացվում է 1,5—2 անգամ ավելի շատ արտադրանք, քան գյուղատնտեսության մյուս ճյուղերում։

Հայաստանը խաղողի կուլտուրայի, ինչպես նաև ծիրանի ու դեղձի սընկարկների հնագույն օջախներից մեկն է։ Այստեղ մշակվում են խաղողի և պտուղների տեղական սորտեր, որոնք բարձր են գնահատվում իրենց անփոխարինելի հումք, հատկապես թունդ դեսերտային գինիների և կոնյակի, ինչպես նաև պահածոների արտադրության համար։

Հանրապետության 34 գյուղական վարչական շրջաններից (այդ թվում Երևանի քաղսովետին ենթակա Շահումյանի գյուղական շրջանը) 18-ում զբաղվում են խաղողագործությամբ։ Խաղողի հասունացման վերին հնարավոր սահմանը այս շրջաններում միջին հաշվով ծովի մակարդակից 1400 մ բարձրությունից չի անցնում։ Ինչպես երևում է, բնա-կլիմայական պայմանները որոշակիորեն սահմանափակել են խաղողագործության տերիտորիալ տարածումը։ Սակայն խաղողի մշակման ընդարձակման հնարավորությունները դեռևս զգալի են, այդ թվում նաև զառիթափ ու խիստ զառիթափ (25—40°) լանջերի յուրացման հաշվին, որը մեր հողապահպանության պայմաններում շատ կարևոր հանգամանք է։ Առաջնահերթ խնդիր է նաև գոյություն ունեցող այգիների մեկ միավոր տարածությունից առավել բարձր բերք ստանալը, որը պետք է իրականացվի խաղողագործության հիմնական աշխատանքների մեքենայացման, այգիների նոսրությունը վերացնելու և շրջանների բնա-կլիմայական պայմաններին համապատասխանեցված բարձր բերքատու տեսակների տարածման միջոցով։

Արդյունաբերական խաղողագործությունը հիմնականում տարածված է Արարատյան դոգավորություններում։ Այս շրջանում առաջատար տեղը պատկանում է դեսերտային, կոնյակի և սեղանի սորտերին։ Վերջին տարիներս խոշոր ոռոգչական շինարարության հիման վրա խաղողի այգիների տարածությունները ընդարձակվում են ի հաշիվ նախալեռնային շրջանների նոր ոռոգովի հողերի։ Թալինի, Աշտարակի, Հոկտեմբերյանի չօգտագործվող քարքարոտ հողերի վրա արդեն հիմնվել են արդյունաբերական խաղողագործությամբ զբաղվող մասնագիտացված սովխոզներ։

Արդյունաբերական ուղղության կողքին զարգանում է նաև սեղանի սոր-

տերի արտադրությունը՝ տեղական բնակչության աճող պահանջմունքների բավարարման, ինչպես նաև դեպի երկրի այլ շրջաններ արտահանելու համար։

Արարատյան դոգավորության նախալեռներում խաղողագործությունը զարգանում է կոնյակի, սեղանի թույլ և շամպայնի սորտերի, հյուսիս-արևելքում և Արփայի հովտում՝ սեղանի թույլ և շամպայնի, Զանգեզուրում՝ կիսաքաղցր գինիների համար նախատեսված սորտերի աճեցման գծով։

Պտղաբուծությունը զիջում է խաղողագործությանը ինչպես գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ և կոլտնտեսությունների եկամուտներում ունեցած իր տեսակարար կշռով, այնպես էլ ապրանքայնությամբ և արդյունաբերական նշանակությամբ։ Նախահեղափոխական տարիներին պտղատու առանձին ծառերը, իբրև կանոն, աճեցվում էին խաղողի այգիների շուրջը, միջնակներում և տնամերձ հողամասերում։ Ամբողջովին պտղատու ծառերից բաղկացած այգիներ հանդիպում էին հազվադեպ։ Սովետական իշխանության տարիներին պտղաբուծության ասպարեզում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ։ Կոլտնտեսություններում և սովխոզներում խոշոր հողատարածությունների վրա գցվեցին պտղատու այգիներ, որը հնարավորություն տվեց մեքենայացնել նրանց մշակումը և ստանալ մեծ քանակով ապրանքային արտադրանք։ Պտղատու այգիների արեալները ընդարձակվեցին ոչ միայն նախալեռների նոր յուրացվող հողերի հաշվին, այլև լեռնային շրջաններում։

Ամենամեծ տարածումն ունեն կորիզավորները ու հնդավորները, աննշան քանակությամբ՝ ընկուզապտուղները և մերձարևադարձային կուլտուրաները։ Ապրանքային և արդյունաբերական նշանակություն ունեցող հիմնական կուլտուրաներն են ծիրանը և դեղձը։ Արդյունաբերական պտղաբուծությունը (ծիրանի ու դեղձի, մասամբ էլ խնձորի, տանձի աճեցումը) ամենից ավելի տարածված է Արարատյան դաշտում ու հյուսիս-արևելքում և Մեղրիի շրջանում (կորիզավորներ ու ընկուզապտուղներ)։ Մերձարևադարձայիններից այստեղ աճում են թզենու, արևելյան խուրմայի, նռան ու նշի տեսակները։

Բուսաբուծության ճյուղերի մեջ տեխնիկական կուլտուրաները համախառն արտադրության ծավալով և եկամտաբերության աստիճանով զիջում են միայն խաղողագործությանն ու պտղաբուծությանը։

Մինչև հեղափոխությունը տեխնիկական կուլտուրաներից մշակվում էր միայն բամբակենին, չհաշված կտավհատի և ծխախոտի ոչ մեծ ցանքսերը, որոնք արդյունաբերական նշանակություն չունեին։ Ներկայումս մշակվում է ծխախոտ, շաքարի ճակնդեղ, խորդենի։ Որոշ քանակությամբ պահպանվում է դեռևս բամբակենին, աննշան են կտավհատի ցանքերը։

Ծխախոտի և շաքարի ճակնդեղի կուլտուրաների ներդրումը նախալեռնային ու լեռնային շրջաններում նշանակալի չափով մեծացրեց կոլտնտեսությունների եկամուտները։ Լեռնային շատ շրջանների համար, որտեղ առաջներում գերիշխում էր էքստենսիվ հացահատիկային տնտեսությունը, այդ հանդիսացավ հողագործության ինտենսիվացման և հողի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու կարևոր քայլ։

Ծխախոտագործությունը մեկն է այն ճյուղերից, որոնք որոշում են հանրապետության գյուղատնտեսության միութենական մասնագիտացումը. այն տալիս է ծխախոտի արժեքավոր տեսակների միութենական արտադրության 10—12 %-ը։

Չափազանց աշխատատար և արժեքավոր այս կուլտուրան տարածված է հանրապետության նախալեռնային և լեռնային շրջաններում (մինչև 2000 մ բարձրությունը), հատկապես հյուսիս-արևելքում և Սևանի ավազանում, որտեղ մի շարք շրջանների գյուղատնտեսության մեջ նա գրավում է առաջատար տեղ (օրինակ՝ Շամշադինի, Իջևանի, Մարտունու շրջաններում)։ Այստեղ բուսաբուծության դրամական եկամուտների մոտ $^2/_3$-ը կոլտնտեսություններն ստանում են ծխախոտի իրացումից։ Խաղողից հետո ծխախոտն ամենաեկամտաբեր կուլտուրան է հանրապետությունում, որի աճեցման համար կան հողակլիմայական բարենպաստ պայմաններ։

Միության ծխախոտագործական շրջանների մեջ հանրապետությունը առաջին տեղն է բռնում ծխախոտի բերքատվությամբ (1 հա-ից 15—17 ցենտներ)։ Այդ կուլտուրայի ցանքերը գրավում են մոտ 7,8 հազար հա։ Ծխախոտի արտադրության հետագա մեծացումը հիմնականում պետք է ընթանա բերքատվության բարձրացման ուղղությամբ, քանի որ ցանքերի ընդարձակումը չափավորվում է ծխախոտագործության հնարավոր զարգացման շրջաններում ոռոգովի հողերի սահմանափակությամբ։

Շաքարի ճակնդեղը հանրապետության համար նոր կուլտուրա է։ Այն սկսել է մշակվել 1930-ական թվականներից։ Ներկայումս ցանքատարածությունները անցել են 4 հազար հա-ից։ Ճակնդեղագործությունը կենտրոնացել է Ախուրյանի և Սպիտակի շրջաններում։ Այստեղ, 1400 մ-ից բարձր տարածված լեռնային սևահողերում ստացվում է ճակնդեղի բավականին լավ բերք (միջինը՝ 1 հա-ից 240—280 ցենտներ), բարձր շաքարայնությամբ։ Ամբողջ բերքը վերամշակվում է Սպիտակի շաքարի գործարանում։ Ճակնդեղացան կոլտնտեսությունները բուսաբուծության դրամական եկամուտների $^4/_5$-ը ստանում են շաքարի ճակնդեղի իրացումից։ Նրա արտադրության հետագա աճը նախատեսվում է գլխավորապես բերքատվության բարձրացման և ցան-

քատարածությունների որոշ ավելացման միջոցով՝ Շիրակի նոր ոռոգվող հողերի հաշվին։

Արդյունաբերական նշանակություն ունեցող տեխնիկական կուլտուրաներից առայժմ համեմատաբար քիչ (600 հա-ից փոքր-ինչ ավելի) տարածություն է գրավում խորդենին, որը մշակվում է Արարատյան դաշտում։ Այս կուլտուրան Հայաստանի պայմաններում տալիս է եթերային յուղի բարձր պարունակությամբ արժեքավոր հումք և առաջիկա տարիներում նախատեսված է զգալիորեն ընդլայնել նրա մշակությունը։

Հայկական ՍՍՀ-ում զարգացած է նաև բանջարաբուծությունը։ Նախահեղափոխական ժամանակաշրջանում այն կրում էր բացառապես սպառողական բնույթ։ Սովետական տարիներին բանջարեղենի հիմնական սպառողներ են դարձել քաղաքային խոշոր կենտրոնները և միութենական նշանակություն ունեցող պահածոների արդյունաբերությունը։ Այդ սպառողների կարիքները բավարարելու համար կազմակերպվեցին մասնագիտացված սովխոզներ, ընդլայնվեց բանջարեղենի արտադրությունը կոլտնտեսություններում։ Արարատյան դաշտը հանդիսանում է հանրապետությունում արդյունաբերական նշանակության բանջարեղենի գլխավոր արտադրողը։

Բանջարա-բոստանային կուլտուրաների տարածման արեալը մինչև հեղափոխությունը սահմանափակվում էր հիմնականում մերձարաքսյան գոտյով, իսկ ներկայումս մշակում են գրեթե ամենուրեք. նրանց ընդհանուր տարածությունը 14 հազար հա-ից անցնում է։ Բանջարաբուծության տերիտորիալ բաշխման մեջ նկատվում է որոշակի օրինաչափություն. ցածրադիր շրջաններում աճեցնում են գլխավորապես բոստանային կուլտուրաներ և ջերմասեր բանջարեղեն՝ պոմիդոր, տաքդեղ, բադրիջան, վարունգ, լոբի և այլն, լեռնային շրջաններում՝ նվազ ջերմասեր բանջարեղեն (կաղամբ, գազար, սեղանի ճակնդեղ և այլն)։ Մի քանի նախալեռնային շրջաններում բանջարաբուծությունը կրում է խաղ բնույթ։

Կարտոֆիլը Հայաստանում լայն տարածված կուլտուրա է, այն մշակվում է ամենուրեք, բացառությամբ Արարատյան դաշտի և մի քանի նախալեռնային ու ցածրադիր շրջանների։ Ավելի խոնավ լեռնային շրջաններում կարտոֆիլը մշակում են չոռոգվող հողերում։ Ապրանքային կարտոֆիլ արտադրող մի քանի հին շրջանների կողքին (Սահփանավան, Գուգարք, Ալավերդի, Կրասնոսելսկ), որտեղից դեռևս մինչև հեղափոխությունը այն արտահանվում էր դեպի Անդրկովկասի խոշոր քաղաքները, սովետական տարիներին հանդես եկավ ապրանքային կարտոֆիլամշակման մի նոր գոտի՝

Սևանի ավազանը և մասամբ էլ Արարատյան դոգավորության լեռնային շրջանը։

Բանջարեղենի, բոստանային կուլտուրաների և կարտոֆիլի արտադրության մեծացումը հետագայում պետք է տեղի ունենա մերձքաղաքային և այլ մասնագիտացած խոշոր տնտեսությունների ստեղծման միջոցով։

Հացահատիկային կուլտուրաները հանրապետության ցանքատարածություններում պահպանում են գերակշռող դիրք (գրավում են ընդհանուր ցանքերի կեսից ավելին), բայց տալիս են գյուղատնտեսության համախառն արտադրանքի համեմատաբար փոքր բաժինը (մոտ 5 %)։ Հայկական ՍՍՀ-ն միշտ եղել է հացահատիկ ներմուծող-սպառող հանրապետություն։ Սովետական տարիներին նկատելիորեն աճեց հացահատիկային տնտեսության ինտենսիվությունը։ Չնայած ցանքատարածությունների կրճատմանը, հացահատիկի համախառն բերքը ավելացավ, քանի որ բերքատվությունը բարձրացավ համարյա կրկնակի չափով։ Սակայն մշակվող հացահատիկային կուլտուրաների էֆեկտիվությունը մեծ չէ։ Հացահատիկի արտադրության աշխատատարությունը և նրա ինքնարժեքը շատ ավելի բարձր են, քան Միության մեջ ամբողջությամբ վերցրած։ Հացահատիկը մեծ մասամբ աճեցվում է անջրդի հողերում, և կլիմայի չորության հետևանքով նրա բերքը անկայուն է։ Բարձր և կայուն բերք ստանալու համար նախատեսվում է ընդարձակել հացահատիկի տարածությունը ոռոգովի հողերում։ Հետագայում ավելի կընդարձակվեն կերային հացահատիկի ցանքերը։

Հացահատիկային կուլտուրաների ցանքերը (235 հազար հա) տարածված են ամենուրեք։ Հիմնականում նրանց տարածությունները գտնվում են Շիրակում և Սևանի ավազանում, ինչպես նաև Արարատյան դոգավորության նախալեռներում և Զանգեզուրի լեռնային սարավանդներում։

Հացահատիկային գլխավոր կուլտուրաներն են ցորենն ու գարին։ Ցորենի ցանքերում խիստ գերակշռում է աշնանացանը, որը մշակվում է ցածրադիր և նախալեռնային շրջաններում. գարնանացանը մշակվում է ավելի բարձրում։ Լեռնային գոտում լայնորեն տարածված է գարնանացան գարին։ Հացահատիկայից կուլտուրաներից գերակշռում է ցորենը։

Անասնաբուծությունը գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է։ Շրջանների մեծ մասում գյուղատնտեսական արտադրության մեջ նրան է պատկանում առաջատար դերը։

Սովետական տարիներին հանրապետության անասնաբուծության մեջ տեղի ունեցան զգալի քանակական և որակական փոփոխություններ։ 1913 թ. համեմատությամբ միջին հաշվով մեկ կովից ստացվող կաթը 1964 թ. ավե-

լացավ համարյա 3 անգամ, բրդի միջին խուզը մեկ ոչխարից՝ 1,5—2,0 անգամ: Մթերատու անասունների ճնշող մեծամասնությունը կազմում են ցեղական անասունները, բարելավվել է խոշոր եղջերավոր անասունների հոտի կազմը (մեծացել է կովերի տոկոսը): Անասնաբուծությունը դարձել է գյուղատնտեսության ապրանքային ճյուղը:

Սակայն անասնաբուծության ներկայումս ձեռք բերված մակարդակը դեռևս չի համապատասխանում բնակչության պահանջմունքները սեփական արտադրության հաշվին բավարարելու խնդրին:

Միության այլ շրջանների համեմատությամբ հանրապետությունը աչքի է ընկնում անասունների գլխաքանակի մեծ խտությամբ և մեկ գլուխ անասունին բաժին ընկնող կերահանդակների նվազագույն տարածությամբ: Անասնաբուծության ինտենսիվացման խնդիրները պահանջում են կերային բազայի արմատական վերակառուցում և ընդլայնում, կերամատակարարման շեշտակի մեծացում, բնական կերահանդակների բարելավման և ռացիոնալ օգտագործման հետ զուգահեռ:

Հանրապետության անասնաբուծության համար բնորոշ է անասունները պահելու մսուրա-արոտային սիստեմը: Կերային բազան կոմբինացված է՝ բնական-ցանովի: Արոտներն ու խոտհարքները բարձրորակ և էժան անասնակերի աղբյուր են: Հանրապետության տարեկան կերային հաշվեկշռի մոտ կեսը առայժմ կազմում է արոտային կերը, իսկ որոշ անասնաբուծական շրջաններում նրա տեսակարար կշիռը նույնիսկ հասնում է 70% (Զանգեզուր, Լոռի-Փամբակ): Արոտային շրջանում է ստացվում արտադրանքի մեծ մասը և տեղի ունենում կարևորագույն արտադրական պրոցեսները: Այդպիսի սեզոնայնությունը առանձնապես արտահայտված է լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ գարնանից սկսած անասուններն աստիճանաբար բարձրանում են դեպի ամառային ընդարձակ արոտավայրերը:

Անասնաբուծության ձևավորված մասնագիտացման սիստեմում առաջատար տեղ են գրավում տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը: Խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը երկրորդական նշանակություն ունեցող ճյուղեր են: Աննշան դեր ունեն մեղվաբուծությունը և շերամապահությունը:

Տավարաբուծությունը, որը տալիս է անասնաբուծության համախառն արտադրանքի կեսից փոքր-ինչ պակաս մասը, հիմնականում ունի կաթնամսատու ուղղություն: Հետագայում առավել պետք է ուժեղանա կաթնատու ուղղությունը, որը տնտեսապես ավելի էֆեկտիվ է: Կովերի տեսակարար կշիռը 40%-ի է հասնում; իսկ հետագայում այն կկազմի հոտի մոտ կեսը:

Ցեղային կազմի երկարամյա բարելավման շնորհիվ ներկայումս խոշոր

եղջերավոր անասունների ավելի քան 4/5-ը ցեղական կամ բարելավված անասուններն են։ Առավել տարածվածը հանրապետության համարյա բոլոր շրջանների բազմազան բնական ու կերային պայմաններին լավ հարմարված գորշ-կովկասյանն է, որն աչքի է ընկնում նաև համեմատաբար բարձր մթերատվությամբ։

Աղյուսակ 19

Անասունների գլխաքանակը Հայկական ՍՍՀ-ում
(բոլոր կատեգորիաների տնտեսություններում, ս տ 1-ը հունվարի 1967 թ.)

	Հազ. գլուխ
Խոշոր եղջերավոր անասուններ . . .	689
այդ թվում՝ կովեր	271
Ոչխարներ և այծեր	2298
այդ թվում՝ ոչխարներ	2220
Խոզեր	95

Խոշոր եղջերավոր անասունները հիմնականում գերակշռում են այն շրջաններում, որտեղ բնական լավ կերային բազայի հետ մեկտեղ կան նաև դաշտային կերահայթայթման բարենպաստ պայմաններ։ Դրանց թվին են պատկանում Հանրապետության հյուսիս-արևելքը, հատկապես Լոռու սարահարթը՝ ցեղային անասնաբուծության կազմակերպական կենտրոնն ու տարածողը, Շիրակը, Արարատյան դաշտի, Սևանի ավազանի և Ջանդեղուրի մի քանի շրջանները։

Ոչխարաբուծությունը իր նշանակությամբ հանդիսանում է հանրապետության անասնաբուծության երկրորդ ճյուղը, որը տալիս է նրա համախառն արտադրանքի 1/3-ը։

Հանրապետության լեռնային շրջաններում ոչխարաբուծության ավելի բարձր տնտեսական էֆեկտիվությունը անասնաբուծության մյուս ճյուղերի համեմատությամբ ակներև է։ Ոչխարի մսի ինքնարժեքը զգալիորեն ցածր է, քան տավարի և խոզի մսինը։ Ծախսված աշխատանքի միավորի հաշվով էլ եկամտաբերությունը ավելի բարձր է, քան տավարաբուծությանն է։

Զարգացած է մսա-բրդա-կաթնատու տիպի կիսանրբագեղմ ոչխարաբուծությունը։ Առավել զարգացած ոչխարաբուծական շրջանների թվին են պատկանում Արփա գետի ավազանը, Ջանգեղուրը, Սևանա լճի ավազանը, Արագածի արևմտյան լանջերը։

Մի շարք շրջաններում ոչխարաբուծությունն ու տավարաբուծությունը զարգանում են զուգահեռաբար, որպես անասնաբուծության երկու առաջատար ճյուղեր. դրանց թվին են պատկանում Սիսիանի, Կրասնոսելսկի, Մարտունու, Ղուկասյանի և մի քանի այլ շրջաններ։

Խոզաբուծության գլխավոր շրջանը Հանրապետության հյուսիս-արևելքն

է (Շամշադինի, Իջևանի, Նոյեմբերյանի և Ալավերդու շրջանները), աչքի է ընկնում նաև Արարատյան դաշտը։ Ներկայումս խողարուծությունը տալիս է անասնաբուծության արտադրանքի մոտ 4%-ը։ Խողարուծության հետագա զարգացման և ինտենսիվացման հնարավորությունները տեսմանափակվում են հիմնականում խտացված կերի պակասությամբ։

Անասնաբուծության մնացած ճյուղերից ամենից ավելի զարգացած է թռչնաբուծությունը, որի համար, սակայն, նեղ տեղերից է գլխավորապես կերային բազայի պակասը։ Թռչնաբուծական մթերքների արտադրության մակարդակը ցածր է, թեպետ վերջին ժամանակներս թռչունների գլխաքանակը մեծացել է և մթերատվությունը որոշ չափով բարձրացել։ Արդյունաբերական թռչնաբուծությունը էլ ավելի զարգացնելու նպատակով նախատեսվում է կառուցել մի շարք նոր ֆաբրիկաներ մսի և ձվի արտադրության համար։

Շերամաբուծության զարգացմանը նպաստել են բնա-կլիմայական բարենպաստ պայմանները, կերային ռեսուրսների առկայությունը, երկար տարիների ընթացքում ձեռք բերված արտադրական հարուստ փորձը։ Շերամաբուծության հետագա զարգացումը կապված է թթենու տնկարկների ընդարձակման և մետաքսառդի բարձր-արտադրողական ցեղերի բուծման հետ։ Հանրապետության մետաքսագործական գլխավոր շրջաններն են Զանգեզուրը, հատկապես Մեղրին, և Արարատյան հարթավայրը։

Լավ հնարավորություններ կան նաև մեղվաբուծության համար։ Այն արժեքավոր է ոչ միայն իր արտադրանքով՝ մեղրով ու մոմով, որի ապրանքայնությունը դեռևս ցածր է, այլև այգեգործական, բանջարանոցային և այլ կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում ունեցած դերով։ Մեղվաբուծությունը զարգացած է ամենուրեք. առանձնապես աչքի են ընկնում Սյունիքը, անտառային հյուսիս-արևելքը, Արարատյան դաշտը և Շիրակը։

Գլուխ երեք

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ձևավորման գործում տրանսպորտն ունեցել է առանձնահատուկ կարևոր դեր։ Արդյունաբերական նոր հանգույցների և օգտակար հանածոների արդյունահանման

նոր շրջանների ստեղծման, գյուղատնտեսության մասնագիտացման խորացման հետ մեկտեղ ուժեղանում է հանրապետության շրջանների միջև կատարվող փոխանակությունը, զարգանում են ներհանրապետական տնտեսական կապերը։ Ուժեղանում են հաղորդակցությունն ու փոխանակությունը Հայկական ՍՍՀ և մյուս հանրապետությունների միջև։

Հանրապետության տրանսպորտային ցանցի ներկայիս պատկերը բավականին վառ կերպով արտացոլում է տերիտորիայի լեռնագրական առանձնահատկությունների ազդեցությունը։ Կառուցված երկաթգծերը անցնում են հանրապետության առավել խոշոր գետերի հովիտներով (Դեբեդի, Ախուրյանի, Հրազդանի, Արաքսի)։ Ի տարբերություն երկաթգծերի, անռելս ճանապարհների ցանցն ավելի է զարգացած և տարբեր ուղղություններով ծածկում է հանրապետության տերիտորիան։ Այդ ցանցի կենտրոնը Երևան քաղաքն է, որից հովհարաձև տարածվում են տարբեր նշանակություն և բեռնալարվածություն ունեցող ճանապարհներ։ Այդ ցանցում աչքի են ընկնում մագիստրալային երեք ուղղություն. 1) Երևանից Հրազդան և Ազատև գետերի հովիտներով դեպի Կուրի ավազանը, 2) Երևանից դեպի Զանգեզուր՝ Արաքս, Արփա և Որոտան գետերի հովիտներով և 3) Երևանից Լենինականի վրայով դեպի հյուսիս-արևմուտք։

Փոխադրումների մեջ տրանսպորտի առանձին տեսակների դերը տարբեր է։ Հայկական ՍՍՀ-ի համար բնորոշ է երկաթուղային տրանսպորտի զուգորդումը ավտոմոբիլայինի հետ, քան որում՝ երկաթուղայինը գերակշռում է։ Հանրապետության ընդհանուր բեռնաշրջանառության $^2/_3$-ից ավելին բաժին է ընկնում երկաթուղային տրանսպորտին և միայն $^1/_3$-ը՝ ավտոմոբիլայինին։

Հայկական ՍՍՀ երկաթգծերի երկարությունը 1964 թ. կազմեց 550 կմ, 1913 թ.՝ 363 կմ-ի դիմաց։ Նոր երկաթուղային շինարարությունը սկսված է 1925 թվականից. արտադրողական ուժերի գլխավոր տերիտորիալ տեղաշարժերին համապատասխան աստիճանաբար փոփոխվում էր տրանսպորտային ցանցի աշխարհագրությունը։ Լենինական—Արթիկ—Պեմզաշեն (32 կմ) և Անի—Անիպեմզա (5 կմ) ճյուղավորությունները ելք հանդիսացան շինանյութերի խոշոր հանքավայրերի համար։ Մինջևան—Ղափան ճյուղավորությունը հանրապետության երկաթուղային մագիստրալի հետ կապեց հարավի պղնձահանքային խոշոր շրջանը։ Հանրապետության և նրա մայրաքաղաքի աշխարհագրական ու տրանսպորտային դիրքի մեջ խոշոր ուղղում մտցրեց Ջուլֆա—Մինջևան ճանապարհի կառուցումը (126 կմ), որը 45 կմ տարածության վրա անցնում է Զանգեզուրի ծայրամասով։ Դա հանրապետությանը

ավելց երկրորդ, ավելի կարճ (211 կմ-ով) ելքը դեպի Կասպից ծով և Բաքու, լեռնահանքային հարավը կապեց կենտրոնի և հյուսիսի հետ։

Հրազդան գետի ավազանում կատարվող ջրաէներգետիկական և արդյունաբերական շինարարության կապակցությամբ Երևանից երկաթգծային մի ճյուղավորություն անցկացվեց Հրազդանի հովտով դեպի Սևանա լիճը (81 կմ), այն հանդիսանում է Երևան-Աղստաֆա ապագա մագիստրալի մի մասը, որը ամենակարճ երկաթուղային ելքն է Արարատյան դաշտից դեպի Կուրի հովիտը։ Այդ գծի ստեղծումով սկսվում է երկաթգծերի անմիջական թափանցումը դեպի Հանրապետության ներքին՝ տնտեսական տեսակետից հեռանկարային շրջանները։ Ներկայումս ավարտվում է բոլոր գծերի էլեկտրիֆիկացումը։

Երկաթուղային ցանցով ապահովվածության տեսակետից Հանրապետության տերիտորիայում կան խիստ տարբերություններ։ Արդյունաբերական վայրերի ճնշող մեծամասնությունը գտնվում է հիմնական երկաթգծի և նրա ճյուղավորությունների մոտ։ Այդ կենտրոնները թողարկում են Հանրապետության արդյունաբերական արտադրանքի $^4/_5$-ից ավելին, իսկ ճանապարհի անմիջական ազդեցության ոլորտում գտնվող տերիտորիաները տալիս են Հանրապետության գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի համարյա կեսը։ Երկաթգծերի ցանցից դեռևս դուրս են մնում լեռնարդյունաբերական կարևոր կենտրոններ Քաջարանն ու Դաստակերտը և մի քանի մանր ու միջին արդյունաբերական կենտրոններ։ Երկաթգծերից զուրկ ներքին տերիտորիաները արդյունաբերական զարգացման ոլորտի մեջ մտնում են շատ դանդաղորեն, թեպետև ունեն զգալի չափով հումքային և աշխատանքային ռեսուրսներ։ Երկաթգծերի բացակայությունը հանդիսացավ արդյունաբերության հետ զարգացման գլխավոր պատճառներից մեկը այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Սևանի ավազանը, Զանգեզուրի հյուսիսը, Մարմարիկ, Արփա, Աղստև գետերի հովիտները, Հանրապետության հյուսիս-արևմուտքը։

Երկաթուղային ցանցի խտությամբ Հայկական ՍՍՀ-ն միութենական Հանրապետությունների մեջ գրավում է վերջին տեղերից մեկը։ Չնայած իր փոքր չափերին, նրա տերիտորիայի կեսից ավելին գտնվում է երկաթգծերից 30—90 և ավելի կիլոմետր հեռավորության վրա։

Հանրապետության երկաթուղային տրանսպորտը բացառիկ մեծ դեր է կատարում արտաքին տնտեսական կապերի, մասնավորապես ներմուծման և արտահանման բնագավառում։

Սկզբունքային փոփոխություններ կատարվեցին բեռնաշրջանառության կառուցվածքի մեջ։ Ամենամեծն է արդյունաբերական նշանակություն ունե-

ցող բեռների տեսակարար կշիռը։ Կշռի տեսակետից բեռների ներմուծումը գերազանցում է արտահանմանը, քանի որ Հանրապետությունը ներմուծում է մեծ քանակությամբ մասսայական բնույթի ծանր բեռներ՝ վառելիք, մետաղներ, անտառանյութ, հացահատիկ։ Իսկ արտահանության մեջ գերակշռում են ավելի բարձրարժեք և թեթևաքաշ բեռներ՝ հիմնականում վերամշակող արդյունաբերության արտադրանք։ Այդ պատճառով էլ արժեքային արտահայտությամբ արտահանությունը զգալի չափով, մոտավորապես 45 %-ով գերազանցում է ներմուծմանը[1]։

Տարբերություններ կան նաև հիմնական երկաթգծի երկու գլխավոր հատվածների՝ Երևան—Լենինական—Թբիլիսի և Երևան—Ջուլֆա—Բաքու գծամասերի բեռնահոսանքների մեջ։ Այդ տարբերությունները բխում են դեպի նշված գծամասը ձգտող շրջանների աշխարհագրական դիրքի և էկոնոմիկայի առանձնահատկություններից։ Առաջին գծամասում (Երևան—Լենինական—Թբիլիսի) բեռնահոսանքների հետ մեկտեղ առկա է նաև ուղևորների ինտենսիվ փոխադրահոսանքը։ Այստեղով են կատարվում ներհանրապետական և արտահանրապետական ուղևորությունները, քանի որ տվյալ գիծը իր մեծ մասով անցնում է խիտ բնակված տերիտորիայով, իրար և մայրաքաղաքի հետ է միացնում առավել խոշոր քաղաքային կենտրոնները՝ երկաթուղային ամենակարճ ելքը տալով դեպի Վրաստան, Սև ծովի ափերը, ՍՍՀՄ Եվրոպական մասը։ Բեռնահոսանքներում առաջին տեղը գրավում են շինանյութերը, ապա ածուխը, մեքենաշինական, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքները, մետաղները և այլն։

Երկրորդ գծամասում (Երևան—Ջուլֆա—Բաքու) խիստ գերակշռում են բեռների փոխադրումները։ Առաջատար տեղը պատկանում են նավթաբեռներին, լեռնային արդյունաբերության արտադրանքին։ Այս գծով բեռներն առաքվում են ՍՍՀՄ արևելյան տնտեսական շրջաններից, Եվրոպական մասը և նույն շրջաններից ստացվում հակադարձ ուղղությամբ։

Թբիլիսի—Ջուլֆա երկաթգիծը, որ երկու ճյուղավորումներով ՍՍՀՄ երկաթուղային ցանցը միացնում է Թուրքիայի (Լենինական—Կարսի վրայով) և Իրանի հետ (Ջուլֆա—Թավրիզի վրայով), ունի տարանցիկ նշանակություն։ ՍՍՀՄ-ի և այդ երկրների միջև տնտեսական կապերի աշխուժացման դեպքում մեծապես կաճի հանրապետության երկաթգծերի դերը, իբրև տարանցիկ ուղիների։

---

1 Գ. Ալավերդյան, Հայկական ՍՍՌ-ի տնտեսական կապերը այլ հանրապետությունների հետ։ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1962, № 5։

երկաթուղիների բեռնաշրջանառության արագ ավելացում սպասվում է նաև ապագայում: Գոյություն ունեցող ցանցի և թողարկման ներկա կարողության պայմաններում արդեն իսկ բարձր բեռնալարվածություն ունեցող մեր երկաթուղիները ի վիճակի չեն լինի լիովին ապահովելու սպասվող փոխադրումները: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն զգալիորեն բարձրացնել գոյություն ունեցող ճանապարհների թողարկման կարողությունը, այլև կառուցել նոր ճանապարհներ: Այդ խնդրի իրականացումը միաժամանակ հնարավորություն կստեղծի հանրապետության մի շարք շրջանների արագ զարգացման համար, նրանց բազմազան ռեսուրսների յուրացման հիման վրա: Առավել կարևոր և առաջնահերթ պետք է համարել հետևյալ ճանապարհների կառուցումը. 1) Հրազդան—Ադամաֆա (Համզաչիմանից դեպի Կիրովական ճյուղավորությամբ), որը համարյա կիսով չափ կկրճատի Երևանի և Թբիլիսիի միջև ընկած տարածությունը և Արագածի դանգվածը շրջափակելով երկաթուղային օղակով, համարյա 6 անգամ կկրճատի Կիրովականի և Հրազդան—Սևանի արդյունաբերական հանգույցների միջև ընկած ճանապարհը, 2) Լենինական—Բաթումի (Ղուկասյանից դեպի Կալինինո—Ստեփանավան—Կիրովական տանող ճյուղավորությամբ) երկաթուղագիծը անցնելով հյուսիս-արևմուտքի լեռնային թույլ զարգացած և լոռու անասնաբուծական շրջաններով, կտա նոր, ավելի կարճ երկաթուղային ելք դեպի Սև ծով: Այս բեռնահոսանքներում կարևոր տեղ կգրավեն շինանյութերը, որոնք ծովային ճանապարհով կարող են արտահանվել դեպի երկրի հարավը: 3) Սևանի ավազան—Ջանգեզուր գիծը (Ղափանից դեպի Ստեփանակերտ—Ղազախ (Ադրբեջան) և Ջերմուկից Արազդայան ճյուղավորություններով), որը նախ Սևանի ավազանը՝ իր հանքային ու կուրորտային ռեսուրսներով հանդերձ կմիացնի հանրապետության հիմնական երկաթուղային ցանցին, Սևանը կդարձնի Միության եզակի բարձրալեռնային առողջարաններից մեկը, կարագացնի ավազանի տնտեսության, առանձնապես լեռնահանքային արդյունաբերության զարգացումը: Երկրորդ՝ Զանգեզուրը, որի ընդերքը պարունակում է ոչ միայն պղնձա-մոլիբդենային, այլև տասնյակ այլ տեսակի արդյունաբերական նշանակության մետաղային և ոչ մետաղային հանածոներ և ունի բազմաթիվ հանքային աղբյուրներ ու կուրորտային վայրեր, այդ գծի շնորհիվ նոր, հզոր խթան կստանա բազմակողմանի տնտեսական զարգացման համար: Վերջապես, Արփա գետի հովտի շրջանների տնտեսությունը և մասնավորապես Ջերմուկ առողջարանը կստանան զարգացման լայն ասպարեզ: Այսպիսով, Սևանի ավազանը և հանրապետության ամբողջ հարավը (որոնք գրավում են նրա տերիտորիայի $^1/_3$-ը)՝ երկաթուղային տեսակետից այդ դեպում «խոպան»

շրջանները կարող են ամենակարճ տրանսպորտային կապերով միանալ միմյանց և Հայկական ՍՍՀ ու Ադրբեջանական ՍՍՀ հարևան շրջանների հետ։

Հայկական ՍՍՀ-ում աշքի են ընկնում երկաթուղային երկու հանգույցներ՝ Երևանը և Լենինականը։ Երբեմնի փակուղում գտնված Երևան կայարանը ներկայումս դարձել է հանրապետության ամենախոշոր երկաթուղային հանգույցը։ Մասիս տեսակավորման կայարանի հետ մեկտեղ Երևանը կապում է մի հանգույց, որտեղ միանում են երեք ուղղության գծերը. 1) Լենինական—Թբիլիսի (դեպի Կարս տանող ճյուղավորությամբ), 2) Ջուլֆա—Բաքու (դեպի Թավրիզ ճյուղավորությամբ) և 3) դեպի Հրազդան՝ որը հետագայում Աղստաֆա կայարանի մոտ միանալու է Անդրկովկասյան մագիստրալի հետ։ Երևանի հանգույցին բաժին է ընկնում հանրապետության բոլոր երկաթուղիների բեռնաշրջանառության կեսից ավելին։ Նա կատարում է համահանրապետական նշանակություն ունեցող ուղևորային, ապրանքային և տեսակավորման կայարանի ֆունկցիաները։

Անհամեմատ պակաս է Լենինականի հանգույցի նշանակությունը, այստեղ հանդիպում են Թբիլիսիից, Երևանից, Կարսից (Թուրքիա) եկող գծերը և դեպի շինանյութերի հանույթի կարևորագույն շրջանը՝ Արթիկ և Պեմզաշեն գնացող ճյուղավորությունը։

Հայկական ՍՍՀ համար, որտեղ երկաթուղային ցանցի խտությունը և ճանապարհների երկարությունը մեծ չեն, իսկ երկաթուղիների ազդեցության ոլորտները սահմանափակված են գլխավորապես ծայրամասային շրջաններով, անռելս ճանապարհների և ավտոմոբիլային տրանսպորտի նշանակությունը բացառիկ մեծ է։ Հանրապետության տերիտորիայի մեծ մասում ավտոմոբիլայինը հանդիսանում է տրանսպորտի գլխավոր, իսկ մի շարք շրջաններում՝ միակ տեսակը։ Ժողովրդատնտեսական բեռների փոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը զգալիորեն մեծ է երկաթուղային փոխադրումներից (մոտավորապես 6 անգամ)։ Հանրապետության ընդհանուր բեռնաշրջանառության մեջ նրա տեսակարար կշիռը, համեմատաբար կարճ անցուրդների (վազքի) պատճառով, երկու անգամ պակաս է երկաթուղային տրանսպորտի բաժնից։

Ի տարբերություն երկաթգծերից, որոնց հիմնական մասը կառուցվել էր դեռևս նախքան հեղափոխությունը, անռելս ճանապարհները իրենց ճնշող մեծամասնությամբ ստեղծված են սովետական տարիներին։ Ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը ներկայումս կազմում է 8000 կմ, որի կեսից ավելին ունի ամուր ծածկ։

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին անցկացվեցին երկու շատ կարևոր

անուել ճանապարհներ՝ Թիֆլիս—Ախտաֆա—Սևան—Երևան և Թիֆլիս—Ջալալօղլի (Ստեփանավան)— Ղարաքիլիսա (Կիրովական)—Ալեքսանդրապոլ (Լենինական)։ Առանձնահատուկ կարևորություն ձեռք բերեց առաջին ճանապարհը (Թիֆլիս—Սևան—Երևան), որը հեշտացնում էր Արաքսի հարուստ հովտի մերձեցումը ռուսական շուկային։ Հայաստանի մնացած ամբողջ տերիտորիան խիստ տուժում էր ճանապարհաղրկությունից և մնում սպասելիս մասնատված էր դժվարանցանելի լեռնային արգելքներով։

Ներկայումս ստեղծված է անուել ճանապարհների ճյուղավորված ցանց։ Նրանց մի մասը կատարում է մերձակա երկաթուղային կայարանների համար բեռնամատույց ուղիների ֆունկցիա, մյուս մասը սպասարկում է հանրապետության երկաթուղիներից հեռու ընկած տերիտորիաները։ Անուել ճանապարհներով տերիտորիայի ապահովվածությունը շատ ավելի բարձր է, քան երկաթգծերով։ Ամբողջ հանրապետության տերիտորիայի մոտավորապես $^3/_4$-ը գտնվում է գլխավոր անուել ճանապարհներից ոչ ավելի, քան 15 կմ հեռավորության վրա[1]։

Անուել ճանապարհներից բեռնալարվածությամբ առավել աչքի է ընկնում Երևան—Սևան—Իջևան—Դաղախ (Ադրբեջանական ՍՍՀ) խճուղին։ Երևան—Սևան երկաթգծի կառուցումից հետո բեռնահոսանքների մի մասը անցնում է երկաթուղուն, բայց խճուղային մագիստրալի բեռնալարվածությունը չի նվազում, քանի որ այդ ճանապարհի ձգողությանը ենթակա շրջաններում տեղաբաշխվում են արդյունաբերական նոր օջախներ և քաղաքային նոր բնակավայրեր։ Այդ մագիստրալով կատարվում են նաև ուղևորների տարանցիկ փոխադրումներ Երևանի և Անդրկովկասյան մյուս հանրապետությունների մայրաքաղաքների, սևծովյան և կովկասյան առողջարանների միջև։

Տրանսպորտային չափազանց կարևոր զարկերակներ են հանդիսանում նաև մյուս ճանապարհները, որոնք Երևանից տարածվում են դեպի հանրապետության բոլոր կողմերը։ Մի խումբ ճանապարհներ մայրաքաղաքը միացնում են Արարատյան գոգավորության խիտ բնակեցված շրջանների՝ խաղողագործության-այգեգործության, բանջարաբուծության օջախների և արդյունաբերական հումքի աղբյուրների հետ (Երևան—Էջմիածին—Հոկտեմբերյան, Երևան—Աշտարակ—Օշական, Երևան—Արտաշատ—Արարատ, Երև-

[1] Հայկական ՍՍՀ ատլաս, Երևան—Մոսկվա, 1961, էջ 93։ Կ. Ն. Խուրշուդյան, Ավտոմոբիլային տրանսպորտի և ճանապարհային շինարարության զարգացումը Հայկական ՍՍՀ-ում, Երևան, 1961։

վան—Գառնի, Երևան—Աբովյան—Արզնի)։ Ճանապարհների մյուս խումբը Երևանն ու Արարատյան դոգավորությունը կապում է Հանրապետության մնացած շրջանների հետ։ Այդ խմբի մեջ, ամենից առաջ, մտնում են Երևան—Աշտարակ—Վ. Թալին—Լենինական, Երևան—Սևան—Բասարգեչար, Երևան—Արագածյան—Եղեգնաձոր—Բազարչայ—Գորիս—Ղափան, Երևան—Սևան—Դիլիջան—Կիրովական—Ստեփանավան և Երևան—Ապարան—Սպիտակ ճանապարհները։

Անդրկովկասյան մյուս հանրապետությունների հետ Հայկական ՍՍՀ-ն կապված է մի քանի անուղղակի բարեկարգ ճանապարհներով։

Հայկական ՍՍՀ-ի մեծ հեռավորությունը Միության շատ տերիտորիաներից, ինչպես նաև հանրապետության լեռնային բնույթը արդյունավետ են դարձնում օդային տրանսպորտի աշխատանքը, ամենից առաջ միջշրջանային, ինչպես նաև ներհանրապետական տնտեսական կապերի բնագավառում։

Մեկ տասնյակի հասնող մշտական օդային գծերը մայրաքաղաքը կապում են հեռավոր լեռնային շրջանների հետ։ Երևանը կանոնավոր գործող ուղերթերով կապված է երկրի շատ խոշոր քաղաքների և կուրորտների հետ։

1960 թվականին Ղարադաղ—Ղազախ—Երևան գազամուղի շինարարության ավարտումով Հայկական ՍՍՀ-ն ստացավ տրանսպորտի մի նոր տեսակ՝ խողովակամուղային տրանսպորտը։

Ղազախից (Ադրբեջանական ՍՍՀ) մագիստրալային գազամուղը Ադամևի հովտով հասնում է Դիլիջան, որտեղից մի գիծը գնում է Կիրովական—Սպիտակ—Լենինական և Ալավերդի (վերջինս միացված է նաև Ստավրապոլ—Թբիլիսի գազամուղի հետ), մյուսը՝ դեպի Սևան—Հրազդան—Լուսավան—Արզնի—Երևան, և այնուհետև՝ Արտաշատ—Արարատ։ Ավարտվում է Երևան—Էջմիածին—Հոկտեմբերյան գազամուղը։ Հետագայում նոր գծեր են կառուցվելու՝ Հոկտեմբերյան—Թալին—Լենինական, Սևանա լիճն օղակող խողովակաշարը, Ալավերդի—Նոյեմբերյան մայրուղին, իսկ Եվլախ—Ստեփանակերտ—Գորիս—Սիսիան—Նախիջևան գազամուղը կապահովի բնական գազով նաև Զանգեզուրը։

Տրանսպորտի զանազան ձևերի համաձայնեցված աշխատանքը հնարավորություն տվեց զարգացնել ներհանրապետական՝ միջշրջանային տրանսպորտային-տնտեսական կապերը։ Հանրապետության արտադրողական ուժե-

րի արագ զարգացումը, նրա արտադրական մասնագիտացման հետագա խորացումը, բեռնագոյացման նոր կենտրոնների առաջացումը, ժողովրդա-տնտեսական ողջ կոմպլեքսի տերիտորիալ կառուցվածքի առավել բարդացումը ի վերջո հանգեցնելու է բեռնահոսանքների էլ ավելի մեծացման: Այդ հանգամանքը պահանջում է ինչպես տրանսպորտային ցանցի հետագա կատարելագործում, այնպես էլ տրանսպորտի տարբեր ճևերի համագործակցված աշխատանքի բարելավում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ

Գլուխ առաջին

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ ԻԲՐԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴ։ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության առանց բացառության բոլոր ճյուղերի աննախընթաց վերելքը հանգեցրեց հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի քանակական ու որակական վիթխարի տեղաշարժերի։ Այդ ճյուղերը հաճախ ռելիեֆի, հողա-կլիմայական, բնակչության ու աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխման, տեխնիկական ու տնտեսական պայմանների նկատմամբ տարբեր պահանջներ ունեն։ Ավելին, այս կամ այն տերիտորիայում, զարգացման այս կամ այն կոնկրետ ժամանակահատվածում նրանց զարգացման շահերը կարող են նույնիսկ խաչաձևվել։

Այս բոլորը, միասին վերցրած, աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանումը, արտադրողական ուժերի տեղաբաշխումն ու տերիտորիայի կազմակերպումը և իրրև արդյունք այս բոլորի՝ ժողովրդական տնտեսության տերիտորիալ կառուցվածքի ձևավորումը վերածում են մի բարդ ու ներքին հակասություններով լի պրոցեսի։

Սովետական Հայաստանում այդ պրոցեսը ավելի է բարդանում՝ կապված այն հանգամանքի հետ, որ համեմատաբար փոքր տարածություն ունեցող տերիտորիայի զանազան մասերի միջև գոյություն ունեն խորը տարբերություններ։ Ըստ որում այդ տարբերությունները վերաբերում են թե՛ բնական ամբողջ կոմպլեքսին, թե՛ այդ կոմպլեքսի տնտեսական յուրացման պայմաններին։

Հասկանալի է, որ այս բոլոր գործոնների ըստ ամենայնի հաշվառումը արտադրողական ուժերի տեղաբաշխման գիտական պլանավորման անհրաժեշտ պայմաններից մեկն է։

Արտադրության գիտականորեն հիմնավորված տերիտորիալ կառուց-

վածքի ստեղծումը պլանային տնտեսություն ունեցող ամեն մի երկրի զարգացման կարևորագույն պրոբլեմներից է։ Այդ բանի վրա իր ժամանակին հատուկ ուշադրություն են դարձրել մարքսիզմի կլասիկները։ Կ. Մարքսը, անդրադառնալով այս հարցին, բերում է Շառլ Կոնտի հետևյալ միտքը. «Մի ժողովուրդ չի կարող բարօրության ու հզորության իր բնությունից բխող աստիճանին հասնել, եթե հողի այն մասը, որը նրան կերակրում է, այնպիսի նախանշում չստանա, որն ամենից ավելի է համապատասխանում ընդհանրական շահի հետ։ Ժողովրդի հարստությունները մեծապես զարգացնելու համար պետք է ըստ կարելույն եզակի ու, որն ամենից գլխավորն է, լուսավորված կամք իր ձեռքն առնի իր երկրամարզի ամեն մի առանձին կտորի տնօրինությունը և յուրաքանչյուր կտոր ծառայեցնի մյուս բոլորի ծաղկմանն օժանդակելուն»[1]։

Իսկապես, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը, արտադրության տերիտորիալ ճիշտ համամասնությունների հաստատումը անմիջականորեն կապվում են այնպիսի պրոբլեմների լուծման հետ, ինչպիսիք են հասարակական աշխատանքի արտադրողականության անշեղ վերելքի ապահովումը, արդյունավետության բարձրացումը, արտադրության տնտեսական կապերի ռացիոնալացումը երկրի ներսում, նոր բնական ռեսուրսների ներգրավումը հասարակական արտադրության ոլորտում, տնտեսապես հետ մնացող տերիտորիաների արդյունաբերական զարգացումը, քաղաքի ու գյուղի միջև էական տարբերությունների վերացումը։

Նախասովետական Հայաստանում գոյություն ունեցող համեմատաբար մանր արդյունաբերական կետերը ի վիճակի չէին տերիտորիաների կազմակերպող, համախմբող կենտրոնի դեր կատարել։ Բացակայում էին տնտեսական սերտ կապերը տերիտորիայի տարբեր մասերի միջև։

Սովետական իշխանության տարիներին արտադրողական ուժերի տեղաբաշխման մեջ կատարված տեղաշարժերը ընթանում էին միաժամանակ երկու՝ արտադրության ընդլայնական տարածման և նրա տերիտորիալ համակենտրոնացման ուղիով, չնայած որ անցած ժամանակաշրջանում երկրորդ ուղղությունը գերիշխող էր։

Այդ արմատական փոփոխությունների արգասիքը եղավ այն, որ, ինչպես նշվեց նախորդ գլուխներում, Հայկական ՍՍՀ-ի սահմաններում ձևավորվեց ու գնալով ավելի ամրապնդվում է մեկ միասնական տերիտորիայարտադրական կոմպլեքս։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատոր III, մաս II, Երևան, 1949, էջ 160։

Զարգացման արդի փուլում հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կատարելագործմանը, արտադրության տերիտորիալ կազմակերպմանը շատ բանով կնպաստի գիտականորեն հիմնավորված տնտեսական շրջանացումը:

Մարքսիստական տնտեսա-աշխարհագրական գիտությունը գտնում է, որ տնտեսական շրջանացումը լայն իմաստով արտադրության տեղաբաշխման, նրա տերիտորիալ առանձնահատկությունների ճանաչման գիտական միջոց է: Տնտեսական շրջանցման հիմնական խնդիրը աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման հետևանքով ծագած ու օբյեկտիվորեն՝ մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող տարբեր մասշտաբի ժողովրդա-տնտեսական տերիտորիալ կոմպլեքսների հայտնաբերումը, նրանց կառուցվածքի ու սահմանների ճշտումն է: Տնտեսական շրջանացումը տնտեսա-աշխարհագրական գիտության այն հիմնական ու ընդհանուր մեթոդներից մեկն է, առանց որի անհնար է որևէ երկրի (լինի այն սոցիալիստական թե կապիտալիստական, մեծ թե փոքր) աշխարհագրական ուսումնասիրությունը ժամանակակից մակարդակով: Նա հնարավորություն է ընձեռում որոշակի, գիտականորեն հիմնավորված սխեմով ուսումնասիրել տնտեսության տերիտորիալ կոմպլեքսները (դա նույնն է, թե տնտեսության տերիտորիալ դասդորդումները), ճանաչել դրանք, բացահայտել ու գնահատել տերիտորիաների բնական, դեմոգրաֆիական ու տեխնիկա-տնտեսական պոտենցիալը:

Ճանաչողական միջոց լինելուց բացի, տնտեսական շրջանացումը սոցիալիստական երկրների համար ձեռք է բերում նաև արտադրողական ուժերի տեղաբաշխման հեռանկարային պլանավորման մեթոդի նշանակություն: Նրա բացահայտած տնտեսական շրջանները ծառայում են իբրև պլանավորման օբյեկտ: Իսկ քանի որ ժողովրդա-տնտեսական պլանավորումը միասնական է և ընդգրկում է ամբողջ երկիրը, այդքանով էլ ապահովվում է նրա բոլոր շրջանների համամասնական ու նպատակահարմար զարգացումը:

Տնտեսական շրջանացման աշխատանքները համապետական մասշտաբով առաջին անգամ սկսվել են Սովետական Ռուսաստանում: Նրանք բխել են երկրի սոցիալիստական վերակառուցման գործնական պահանջներից: Տնտեսական շրջանացման ժամանակակից տեսությունը մշակվել է Սովետական Միությունում և համաշխարհային լայն ճանաչում է գտել:

Սկզբից հեթ տեսական ու գործնական աշխատանքների կենտրոնը դարձավ Սովետական Ռուսաստանի նորաստեղծ Պետպլանը: Քիչ ավելի ուշ Ռուսաստանի Կենտգործկոմին կից ստեղծվեց տնտեսական շրջանացման հա-

տուկ հանձնաժողով, որի աշխատանքները ղեկավարում էր Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։

Հանձնաժողովի մշակած թեզիսները և տնտեսական շրջանների սխեման դրվեցին լայն քննարկման։ Նրանք, որոշ ուղղումներով, արժանացան նաև Համկ(բ)կ քաղբյուրոյի և կուսակցության 12-րդ համագումարի հավանությանը, որից հետո սկսվեց շրջանացման իրագործումը կյանքում։

Սկսված աշխատանքների սկզբունքային նշանակություն ունեցող առանձնահատկությունն այն էր, որ խոշոր տնտեսական շրջանների առանձնացումը ուղեկցվում էր ամբողջ երկրի վարչա-տերիտորիալ բաժանման վերակառուցումով։ Բանը նրանումն է, որ հենց առաջին քայլերից պարզ դարձավ, որ ցարական Ռուսաստանից ժառանգություն մնացած վարչա-տերիտորիալ միավորների հիման վրա անհնար է կատարել տնտեսական շրջանացումը մի երկրի, որի նպատակը սոցիալիստական տնտեսաձևի կառուցումն է։ Ձեռնամուխ եղան երկրի վարչա-տերիտորիալ ռեֆորմի նախապատրաստմանը, որը դիտվեց իբրև տնտեսական շրջանացմանը ենթակա և նրա բաղկացուցիչ մասը կազմող հարց։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1-ին հնգամյա պլանի հիմքում արդեն դրվեց շրջանացման նոր սխեման, իսկ 1929—31 թթ. ամբողջ երկրում ավարտվեց անցումը վարչա-տերիտորիալ նոր բաժանմանը, որի հիմքում ևս ընկած էին տնտեսական և բնա-պատմական գործոնները՝ տերիտորիայի արտադրական մասնագիտացումը, ներքին և արտաքին տնտեսական կապերը, հաղորդակցության միջոցների վիճակը, բնակչության արտադրական ու կենցաղային առանձնահատկությունները և այլն։

Հետագայում ՍՍՀՄ տնտեսական շրջանացումը ենթարկվեց մի շարք փոփոխությունների։ Եթե առաջին հնգամյա պլանը կազմվեց ըստ 24 տնտեսական շրջանների, երկրորդ հնգամյա պլանը՝ ըստ 32 շրջանների, երրորդ հնգամյա պլանի համար ելակետ ընդունվեցին միութենական հանրապետությունները և Ռուսական Ֆեդերացիայի 9 շրջանները, ապա պատերազմական տարիներին ու նրանից հետո աստիճանաբար ձևավորվեց 13 մասից բաղկացած շրջանացման սխեման, որը հիմք ծառայեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 4-րդ, 5-րդ և 6-րդ հնգամյա պլանների տերիտորիալ մասի մշակման համար։

Տնտեսական շրջանացման ժամանակակից՝ 1961 թ. ընդունված սխեմայի համաձայն ՍՍՀՄ տերիտորիան բաժանվեց 17 խոշոր տնտեսական կամ, այլ կերպ ասած, տնտեսա-աշխարհագրական շրջանների, որոնցից 10-ը ՌՍՖՍՀ-ում են, 3-ը՝ Ուկրաինայում, 1-ը ընդգրկում է Ղազախական ՍՍՀ-ն, մեկական

շրջան ստեղծված են Միջին Ասիայում, Մերձբալթիկայում (Արևմտյան տնտեսական շրջան) և Անդրկովկասում[1]: Բելոռուսական և Մոլդովական հանրապետությունները խոշոր շրջանների մեջ չէին մտնում և դիտվում էին իբրև ինքնուրույն տնտեսական միավորներ[2]:

Տնտեսական շրջանացման՝ իբրև գիտական մեթոդի կիրառումը Սովետական Միության ժողովրդական տնտեսության բարդ կոմպլեքսի ղեկավարման, նրա տերիտորիալ կառուցվածքի կատարելագործման համար տվել ու տալիս է հսկայական դրական արդյունք: Նա տնտեսության սոցիալիստական սիստեմի, տնտեսության պլանային վարման անժխտելի ու ամենացայտուն առավելություններից մեկն է:

Այս մեթոդը հաջողությամբ կիրառվում է նաև Եվրոպայի մի շարք սոցիալիստական երկրներում: Օրինակ, Ռումինիայում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում գիտականորեն հիմնավորված տնտեսական շրջանացման հիման վրա անցկացվել է վարչա-տերիտորիալ բաժանման ռեֆորմ, որի հետևանքով այնտեղ ձևոք է բերվել տնտեսական ու վարչական տերիտորիալ միավորների միասնություն:

Վերջապես, պետք է նշել, որ տարբեր մասշտաբի տերիտորիալ կոմպլեքսները օբյեկտիվորեն գարգանում են նաև կապիտալիստական երկրներում: Բայց եթե սոցիալիստական երկրներում համապետական պլանների միջոցով հնարավոր է լինում կարգավորել ու ղեկավարել տնտեսական շրջանների գարգացումը, ապա կապիտալիզմի օրոք այդ բանը բացառվում է: Կապիտալիստական երկրների տնտեսական շրջանների ձևավորումն ու գարգացումը ընթանում են տարերային ձևով: Այդ պատճառով էլ նրանց տնտեսական շրջանացումը ունի լոկ ճանաչողական նշանակություն և կատարվում է այդ երկրների տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրությունը հեշտացնելու, նրա գիտական մակարդակը բարձրացնելու նպատակով:

Սովետական Միության ժողովրդական տնտեսության պլանների տերիտորիալ մասի մեջ մինչև այժմ ընդգրկվում են միայն խոշոր տնտեսական շրջաններն ու միութենական հանրապետությունները: Հայկական ՍՍՀ-ի, ինչպես նաև մարզային բաժանում չունեցող մյուս հանրապետությունների տնտեսության հեռանկարային տեղաբաշխման ամբողջական պատկերը ստաց-

---

[1] Տե՛ս Постановление ЦК КПСС и Совета Министров СССР от 26 апреля 1961 г. «Об экономическом районировании СССР и организации советов по координации и планированию в крупных экономических районах».

[2] Ներկայումս Բելոռուսիան ևս դիտվում է իբրև ինքնուրույն տնտեսական շրջան:

վում է ոչ թե տերիտորիայի տարբեր մասերի տնտեսական զարգացման կոմպլեքսային պլանավորումից, այլ ճյուղերի, հաճախ միայն մեխանիկական դումարից։

Ներկայումս, երբ պահանջվում է ժողովրդատնտեսական պլանավորումը դնել նոր, ավելի կայուն ու օբյեկտիվ հիմքերի վրա, ուժեղացնել նրա կոմպլեքսայնությունը, լիովին արմատախիլ անել վոլյունտարիզմը, առավել մեծանում է տնտեսական շրջանացման գիտական ու գործնական նշանակությունը։ Կյանքը գիտության առաջ դնում է նոր խնդիրներ, որոնց շարքում առաջնակարգ տեղ է գրավում մարզային բաժանում չունեցող, համեմատաբար փոքր հանրապետությունների ներքին շրջանացման հարցերի մշակումը[1]։

Հայկական ՍՍՀ-ում վարչա-տերիտորիալ բաժանման առաջին կարգի՝ ամենախոշոր միավորը վարչական շրջանն է։ Նա ունի իր դեկավար օրգանները, որոնց տնօրինությանն են հանձնված օրենքով հաստատված սահմաններ ունեցող որոշակի տերիտորիաներ։

Սակայն այդ շրջանները չեն կարող փոխարինել ներհանրապետական տնտեսական շրջաններին և ծառայել իբրև տերիտորիալ միավոր ժողովրդատնտեսական պլանավորման համար հետևյալ հիմնական պատճառներով. 1) Նրանք ստեղծված են պետական օպերատիվ դեկավարումը տեղում ապահովելու, այն ժողովրդական դանդվածներին մոտեցնելու համար։ 2) Նրանց քանակը մեծ է և դա որոշակի անհարմարություններ է ստեղծում պլանավորման համար (ներկայումս գյուղական վարչական շրջանների և նրանց իրավունքներին հավասարեցված քաղաքների թիվը կազմում է 46)։ 3) Թե՛ տարածությամբ, թե՛ բնակչության թվով նրանք շատ փոքր են։ Վարչական շրջանների միջին տարածությունը առ 1-ի հուլիսի 1967 թ. կազմում է ընդամենը 970 կմ², իսկ բնակչության միջին թիվը 1967 թ. հունվարի 1-ի վիճակով չի հասնում նույնիսկ 38 հազարի։ Այդ շրջանները չունեն տնտեսական համապատասխան հզորություն և չեն կարող ապահովել հանրապետական մասշտաբի շատ թե քիչ խոշոր միջոցառումների իրականացումը։

Հայկական ՍՍՀ-ի համար ժողովրդական պլանավորման տերիտորիալ միավորները կարող են լինել տնտեսական շրջանները, որոնք օբյեկտիվորեն

[1] Սովետական Միությունում այդ ուղղությամբ առաջին լուրջ քայլերն արդեն արվում են։ Ներքին շրջանացման հարցերին առանձնահատուկ ուշադրություն նվիրեցին ՍՍՀՄ աշխարհագրական ընկերության վերջին՝ 3-րդ և 4-րդ համագումարները։ Որոշ տեղերում, օրինակ, Վրաստանի և Մերձբալթյան հանրապետություններում, կապված մասնավորապես շրջանային հատակագծման, արտադրության տերիտորիալ կազմակերպման խնդիրների հետ, այդ աշխատանքները մեծ ծավալ են ստացել։ Այդ մասին տե՛ս Д. И. Богорад, Конструктивная география района, М., 1965.

գոյություն ունեն բնության մեջ, առաջացել են աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման որոշակի էտապում[1] և պլանային տնտեսության պայմաններում ապրում են նոր բուռն զարգացում: Գիտության խնդիրն է հայտնաբերել ու հիմնավորել այդ շրջանները, բացահայտել նրանց բնական ու տնտեսական պոտենցիալը և օժանդակել պլանավորող օրգաններին՝ որոշելու նրանց հետանկարային զարգացման հիմնական ուղղությունները, բնական, աշխատանքային և նյութական ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործումը:

Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացման աշխատանքները սկսվել են դեռևս 20-ական թվականների կեսերից: Հանրապետության Պետպլանին կից ստեղծված շրջանացման հանձնաժողովը կարողացավ մի քանի տարվա ընթացքում հսկայական աշխատանք կատարել Սովետական Հայաստանի ամբողջ տերիտորիայի ու նրա տարբեր մասերի բնական պայմանների, բնակչության ու տնտեսության ուսումնասիրման և նրանց շրջանացման ուղղությամբ: Հիմնվելով ՍՍՀՄ տնտեսական շրջանացման մեթոդոլոգիական դրույթների վրա և կիրառելով դրանք Հայկական ՍՍՀ-ի, իբրև հետամնաց տնտեսություն և լեռնային բարդ ռելիեֆ ունեցող երկրի յուրահատուկ պայմաններում, հանձնաժողովը ներկայացրեց վարչա-տնտեսական շրջանացման իր սխեման, որը և դրվեց 1929—1930 թթ. անցկացված վարչա-տերիտորիալ բաժանման ռեֆորմի հիմքում (տե՛ս «Տնտեսության զարգացման ու տեղաբաշխման պատմա-աշխարհագրական մի քանի հարցեր» գլուխը):

Հանձնաժողովի առաջարկած սխեմայում հանրապետության տերիտորիան, վարչա-տերիտորիալ միավորներից բացի, բաժանվում էր նաև հինգ տնտեսական շրջանների[2] (տե՛ս սխեման): Սակայն, ցավոք, այդ շրջանները մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չօգտագործվեցին պլանավորման համար և հանրապետության արտադրողական ուժերի տերիտորիալ կազմակերպման գործում որևէ դեր չխաղացին:

Սովետական Հայաստանի տնտեսական շրջանացման նոր, առանդուն

---

1 Տարբեր կարգի տնտեսական շրջանների առաջացումը սովորաբար կապում են արտադրության զարգացման կապիտալիստական դարաշրջանի հետ, երբ բավարար աստիճանի է բարձրանում աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանումը:

2 Տե՛ս Г. **Кочарян**, Проблема районирования в ССР Армении, «Экономический вестник Армении», № 3, 1926; **Г. Кочарян**, К проблеме районирования, «Экономический вестник Армении», № 1, 1929;

Գ. Քոչարյան, Հայաստանի շրջանացումը, «Նոր ուղի», № 6, 1929, Ա. Ավդալբեգյան, Խորհրդային Հայաստանի շրջանացումը, Երևան, 1930: Արտատպված «Սոցիալիստական տարրեմում»-ից:

փորձել կատարվեցին հետպատերազմյան տարիներին, որոնք որոշակի ներդրում են այդ բարդ ու դժվարին պրոբլեմի լուծման գործում: Սակայն դրանք կենտրոնացված էին ոչ թե պլանավորող օրգաններում, այլ գիտական հիմնարկներում: Բացի այդ, նրանց մի մասի վրա խորը կնիք էր թողել այն ժամանակ տնտեսական աշխարհագրության մեջ տարածված այն կարծիքը, որ մարզային բաժանումից զուրկ հանրապետությունների տնտեսական շրջանացումը կարող է միայն ճանաչողական նշանակություն ունենալ:



I ԵՐԵՎԱՆԻ
II ԼԵՆԻՆԱԿԱՆԻ
III ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ
IV ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ
V ՋԱՆԳԵԶՈՒՐԻ

20 ա. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը ըստ Գ. Ա. Քոչարյանի *(1929 թ.)*:

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի և ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտի մի խումբ աշխատակիցների՝ 1955 թ. հրատարակված սխեմայի համաձայն հանրապետությունը բաժանվում էր 8 տնտեսական շրջանների (տե՛ս գծագիրը): Սակայն աշխատության մեջ[1] ըստ էության բացակայում է շրջանացման հիմնավորումը: Բերվող միակ բացատրությունն այն է, որ «Հայաստանի տերիտորիայում ըստ բնության և տնտեսական զարգացման առանձահատկությունների և հաշվի առնելով հետագա հեռանկարները, կարելի է առանձնացնել ութ տնտեսական շրջան»[2]:

Մեկ տարի անց նոր սխեմայով հանդես եկավ Գ. Ա. Քոչարյանը[3], որը ելակետ ընդունելով Ն. Ն. Կոլոսովսկու արտադրական ցիկլերը, հանրապետությունը բաժանում էր 5 տնտեսական շրջանների (տե՛ս գծագիրը):

---

1 Армянская ССР, ответ. редакторы: А. О. Марухян, Э. М. Мурзаев, С. Н. Рязанцев, М., Географгиз, М., 1955.

2 *Նույն տեղը, էջ 119:*

3 *Տե՛ս* **Г. А. Кочарян,** К вопросу о внутреннем районировании Армянской ССР, *Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հ. 58, Աշխարհագրական գիտությունների սերիա, պրակ 3, Երևան, 1956:*



20 բ. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը ըստ Հայկական ՍՍՀ Գ.Ս. տնտեսագիտության և ՍՍՀՄ Գ.Ս. աշխարհագրության ինստիտուտների *(1955 թ.)*։



20 դ. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը ըստ Գ. Ա. Քոչարյանի *(1956 թ.)*։

20 գ. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը ըստ Ս. Հ. Խրիմյանի *(1957 թ.)*։

20 ե. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը ըստ «Հայկական ՍՍՌ ատլասի» գիտահանրագրական խորհրդի *(1961 թ.)*։

Տնտեսական շրջանացման սկզբունքների ու սխեմայի լուրջ գիտական վերլուծության մենք հանդիպում ենք նաև Ս. Հ. Խրիմլյանի մոտ[1]. ըստ նրա Հայկական ՍՍՀ-ում առանձնանում են 4 տնտեսական շրջաններ (տե՛ս պծագիրը, էջ 155)։

Սովետական Հայաստանի տնտեսական շրջանացման մի շարք տարբերակներ, բայց առանց համապատասխան բացատրականների, առաջարկվել են այլ հեղինակների կողմից ևս։ Այդպիսիներից հայտնի են, օրինակ, Սովետական մեծ հանրագիտարանի (հատոր 3-րդ, 1950 թ.), Հայկական ՍՍՌ ատլասի գիտա-խմբագրական խորհրդի (1961 թ.), Գ. վ. Պլեխանովի անվան Մոսկվայի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսական աշխարհագրության ամբիոնի (1965 թ.)[2] և ուրիշ սխեմաներ։

Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացման բարդ պրոբլեմի լուծմանը շատ բանով կարող են նպաստել նախկինում առաջարկված բոլոր սխեմաների ուշադիր ուսումնասիրությունն ու ըստ ամենայնի օգտագործումը։

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այսպես կոչված ճյուղային շրջանացման աշխատանքները։ Ի տարբերություն ընդհանուր (ինտեգրալ) տնտեսական շրջանացմանն, երբ տերիտորիայի գնահատման նկատմամբ գրսևորվում է կոմպլեքսային մոտեցում, ճյուղային շրջանացումը ելնում է առանձին ճյուղերի զարգացման օրինաչափություններից։ Այդպիսիք են, օրինակ, արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, ջրատնտեսական, քաղաքաշինարարական, առևտրական և այլ ճյուղային շրջանացումները, որոնք ավելի նեղ ու կոնկրետ պրոբլեմների լուծման նպատակ են հետապնդում։ Նրանք չկարողանալով և նպատակ էլ չդնելով փոխարինել ընդհանուր տնտեսական շրջանացմանը, հարուստ նյութ են մատակարարում վերջինիս համար։ Սա էլ, իր հերթին, կարող է օգնել ճյուղային շրջանացման բազմաթիվ հարցերի ճիշտ, գիտական լուծմանը։

Խիստ էական է ընդհանուր ֆիզիկա-աշխարհագրական ու բնության առանձին տարրերի շրջանացման նյութերի օգտագործումը։ Նա օգնում է հատկապես տնտեսական շրջանների բնական պոտենցիալի և արտադրողական ուժերի զարգացման հեռանկարների ճիշտ գնահատմանը։

Ամեն մի երկրի, առավել ևս բնական ու տնտեսական ծայրահեղ բարդ պայմաններ ունեցող Հայկական ՍՍՀ-ի տնտեսական շրջանացումը իրենից

---

[1] Տե՛ս Ս. Խրիմլյան, Տնտեսական շրջանացման և Հայկական ՍՍՌ տնտեսական շրջանների հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1957, № 8։

[2] Տե՛ս Экономические районы СССР, Изд-во «Экономика», М., 1965.

ներկայացնում է մի բարդ պրոբլեմ, որը լուծելու համար, բնականաբար, հարկ է տրոհել այն բաղկացուցիչ մասերի և քննարկել առանձին-առանձին:

Մեր կարծիքով, Սովետական Հայաստանի տնտեսական շրջանացման համար ինքնուրույն հետաքրքրություն ներկայացնող հարցեր են՝ 1. շրջանացման տեսական սկզբունքների մշակումը, 2. օբյեկտիվորեն գոյություն ունեցող ու զարգացող տնտեսական շրջանների բացահայտումն ու նրանց առկայության հիմնավորումը, 3. տնտեսական շրջանների սահմանների ճշտումը, 4. շրջանների տնտեսության բնութագրումն ու պոտենցիալի գնահատումը:

ՍՍՀՄ տնտեսական շրջանացման (խոսքը խոշոր շրջանների առանձնացման մասին է) սկզբունքները, որոնք հիմնականում մշակվել են 20-ական թվականներին և որոշ ճշտումներով ու փոփոխություններով ընդունվում են նաև ներկայումս, հանգում են շրջանի կոմպլեքսայնությանը, տնտեսական ուվարտվածությանը (սա չպետք է շփոթել ինքնաբավ-ինքնամփոփ տնտեսության հասկացության հետ), միութենական մասշտաբի տնտեսական մասնագիտացմանը, սեփական վառելիքա-էներգետիկական բազայի առկայությանը, տնտեսության զարգացման հեռանկարները ըստ ամենայնի հաշվի առնելուն, բավարար չափով զարգացած ու ամբողջական տրանսպորտային սիստեմի առկայությանը և այլն: Ենթադրվում է, որ Սովետական Միության խոշոր տնտեսական շրջանում տնտեսության ժամանակակից բոլոր հիմնական ճյուղերը ներկայացված պետք է լինեն, և աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման միութենական սիստեմում նա անկախ, ինքնուրույն դեր պետք է կատարի:

Այս ելակետային դրույթները մեթոդոլոգիական հիմք են հանդիսանում տնտեսական շրջանացման բոլոր տաքսոնոմիական աստիճանների, այդ թվում և մարզային բաժանում չունեցող հանրապետությունների շրջանացման համար: Սակայն, ի նկատի ունենալով տնտեսական շրջանացման տարբեր աստիճանների առանձնահատկությունները, գիտական ու գործնական կոնկրետ նպատակները, նրանցից յուրաքանչյուրի համար պետք է մշակվեն ու կիրառվեն յուրահատուկ սկզբունքներ:

Ելնելով Սովետական Հայաստանի տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի արդի վիճակից և նպատակ դնելով առավելագույն չափով օգտակար լինել արտադրողական ուժերի տեղաբաշխման հեռանկարային պլանավորմանը, մենք գտնում ենք, որ հանրապետական կարգի տնտեսական շրջան պետք է դիտվի ամեն մի տերիտորիա, եթե բավարարում է հետևյալ պահանջներին (նկատի ունենալով ոչ միայն ներկա վիճակը, այլև զարգացման տենդենցներն ու հեռանկարները).

1. Ունի տերիտորիայի կազմակերպող տնտեսական կորիզի դեր կատարող բավարար հզորության կենտրոն: Հայկական ՍՍՀ-ի ռելիեֆային բարդ պայմաններում այս հատկանիշը ստանում է առանձնահատուկ նշանակություն նաև այն պատճառով, որ չնայած Երևանի վիթխարի դերին, Հանրապետության տերիտորիայի զգալի մասի տրանսպորտային կապը նրա հետ չի ապահովում այդ տերիտորիաների արտադրական, կուլտուրական և կենցաղային պահանջների լրիվ բավարարումը, և տեղական նշանակության կենտրոնի կազմավորումը կենսական նշանակություն է ձեռք բերում:

2. Ունի համեմատաբար միասնական արտադրական մասնագիտացում: Հայկական ՍՍՀ-ի բնական պայմանների ու ռեսուրսների խիստ ընդգծված բազմազանությունը լուրջ արգելք է հանդիսանում շատ թե քիչ ընդարձակ տարածություններ ընդգրկող միատեսակ արտադրական մասնագիտացման համար: Հանրապետության տերիտորիայի մեծ մասի համար առայժմ բնորոշը տնտեսական խայտաբղետությունն է: Արտադրական ընդհանուր մասնագիտացումը տնտեսական շրջանի այն հատկանիշներից է, որոնց հետագա զարգացմանը պետք է նախորդի հասարակական աշխատանքի տնտեսման և ամբողջ հանրապետության զարգացման շահերի հաշվառման վրա կառուցված լուրջ գիտական հիմնավորումը: Տնտեսական շրջանացման նպատակը պետք է լինի ոչ միայն և ոչ այնքան արձանագրել տերիտորիաների արտադրական մասնագիտացման արդի վիճակը, ինչքան բացահայտել դրա բարելավման ու նպատակահարմար զարգացման ուղղություններն ու հնարավորությունները:

3. Ունի զարգացման բավարար մակարդակի հասած ներքին տնտեսական կապերի շատ թե քիչ կայուն սիստեմ: Եթե արտաքին տնտեսական կապերը տնտեսական շրջանների միջև աշխատանքի որոշակի բաժանման, նրանց հանրապետական կամ միութենական մասշտաբի մասնագիտացման արգասիք են, ապա ներշրջանային տնտեսական կապերը արդյունք են շրջանի կոմպլեքսային զարգացման: Սակայն հանրապետական տնտեսական շրջանի կոմպլեքսային զարգացումը թե՛ քանակապես և թե՛ որակապես տարբերվում է ՍՍՀՄ տնտեսական շրջանի կոմպլեքսային զարգացումից: Նա իր թույլ հզորության, բնական ու տնտեսական ռեսուրսների սահմանափակության պատճառով չի կարող հիմնական արտադրանքների գծով բավարարել իր սեփական կարիքը, որպիսի պահանջ դրվում է ՍՍՀՄ տնտեսական շրջանի առաջ: Բացի այդ, վերջինս իրենից ներկայացնում է միութենական մասշտաբի տերիտորիալ-արտադրական կոմպլեքս և ընդգրկում է ժամանակակից արտադրության բոլոր հիմնական ճյուղերը: Հանրապետական շրջանի արտադրության ճյուղերը շատ ավելի սակավաթիվ են: Ընդ որում, դրանց մեծ մասը կոչված է սպասարկելու

այն մեկ կամ երկու ճյուղը, որոնք բնորոշում են տնտեսական շրջանի մասնագիտացումը հանրապետությունում:

Ներքին տնտեսական կապերի ռացիոնալացումը, նոր կապերի հաստատումն ու սերտացումը պատկանում են այն հարցերի թվին, որոնք ամենից ավելի են ենթակա պլանային կարգավորման: Այս իմաստով էլ նրա գիտական լուծումը որոշակիորեն կապվում է տնտեսական շրջանացման հետ, ուսում և այդ հատկանիշի վերլուծությունը պետք է հենվի, ավելի շատ, հեռանկարային տվյալների վրա:

4. Տնտեսական շրջանը պետք է ունենա շատ թե իչ միասնական տրանսպորտային կողմնորոշում և ամբողջական տրանսպորտային ցանց, որը կարող է ապահովել մասնավորապես շրջանի ծայրամասերի և տնտեսական կենտրոնի կապը: Մեր հանրապետության լեռնային դժվարին պայմաններում տրանսպորտի շրջանաստեղծ դերը առանձնակի ուժով է արտահայտվում: Ճանապարհային ցանցի, առաջին հայացքից նույնիսկ ոչ մեծ թվացող, լրացումը և փոփոխությունը կարող են զգալի հետքեր թողնել տնտեսական շրջանի կազմի, սահմանների, արտադրական մասնագիտացման վրա: Ուստի և՛ տնտեսական շրջանացում կատարելիս, և՛ արտադրողական ուժերի զարգացումն ու տեղաբաշխումը պլանավորելիս այս հարցերը արժանի են հատուկ ուշադրության:

5. Տնտեսական շրջանը պետք է ունենա հանրապետական նշանակության ժողովրդա-տնտեսական կոնկրետ պրոբլեմ, որը զարգացման տվյալ էտապում ընդհանուր է շրջանի բոլոր տերիտորիանների կամ նրանց մեծ մասի համար: Թե՛ ժամանակի և թե՛ տարածական առումով, որպես կանոն, ժողովրդատնտեսական կոնկրետ պրոբլեմները փոխում են իրենց ծավալն ու նշանակությունը, ներթափանցում իրար մեջ: Այս հանգամանքը դժվարացնում է որոշել, թե տվյալ տերիտորիայի համար զարգացման տվյալ էտապում որն է ժողովրդատնտեսական գլխավոր պրոբլեմը: Բայց այդպիսի պրոբլեմի բացահայտումը ավելի հիմնավորված է դարձնում տնտեսական շրջանացումը, հետևապես և բարձրացնում է նրա գիտական ու գործնական նշանակությունը:

Հայկական ՍՍՀ բնական ռեսուրսների առանձնահատկությունների, տնտեսության տեղաբաշխման ու նրա հեռանկարային զարգացման կարևոր, այդ թվում և տերիտորիալ պրոբլեմների՝ նշված սկզբունքների վրա խարսխվող ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հանրապետության զարգացման ներկա էտապում օբյեկտիվորեն դոյություն ունեն և զարգանում են շրջանային տերիտորիալ-արտադրական 5 կոմպլեքսներ, որոնք Հանրապետության ընդհանուր տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի առաջին կարգի բաղկա-

ցույցիչ մասերն են։ Հենց նրանք էլ իրենցից ներկայացնում են հանրապետական տնտեսական շրջանները՝ Աբաբատյան, Շիրակի, Մեծամորեդյան, Սևան-Աղստևի և Սյունիքի *(տե՛ս գծագիր 21)*։

Տնտեսական շրջանների բացահայտումն ու նրանց գոյության հիմնավորումը, որոնք ելնում են տերիտորիայի կազմակերպիչ տնտեսական կորիզի առկայությունից և քննարկված մյուս սկզբունքներից, դեռևս տնտեսական շրջանացման սխեմայի հիմնավորում չի նշանակում։ Դրա համար խիստ կարևոր է նաև շրջանների սահմանների որոշման հարցը։ Ըստ որում, եթե տնտեսական շրջանի առկայությունը հաստատելու կամ ժխտելու համար հիմք են ծառայում վերոհիշյալ, համեմատաբար սակավաթիվ հատկանիշները, ապա նրանց սահմանների կոնկրետացման ու ճշտման համար հարկ է լինում գործ ունենալ բազմաթիվ, չնայած պակաս էական, գործոնների հետ։

Հանրապետության բոլոր տնտեսական շրջանների համար ընդհանուրն այն է, որ տնտեսությունը հիմնականում կենտրոնացված է միջլեռնային դոդավորությունների ու լեռնահովիտների ցածրադիր գոտում։ Նրան հաջորդող նախալեռնային կամ միջին լեռնային գոտում արտադրության խտությունը նկատելիորեն իջնում է, իսկ բարձր լեռնային գոտում արդեն (ծովի մակարդակից 2500 մ բարձր) լեռնաշղթաների մերձկատարային ընդարձակ տարածությունները ամբողջովին յուրացված չեն կամ օգտագործվում են տարվա մի քանի ամիսներին միայն։ Դրանք հանրապետության ամենաանպատշտ բնական պայմաններ ունեցող և առավել դժվարամատչելի մասերն են։ Եվ իսկապես, ծովի մակարդակից հաշված 2400 մ-ից բարձր բնակավայրեր ու մշտական բնակչություն այլևս չկա։ Հողագործությունը լրիվ բացակայում է, էլ չենք խոսում արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության մյուս հյուղերի մասին։ Նկատելիորեն նվազում են տերիտորիայի արտադային հնարավորությունները։ Եթե, օրինակ, 1000—1500 մ բարձրության վրա արտադային շրջանը տևում է մինչև 200 օր, ապա 2500 մ-ից բարձր գոտում նրա տևողությունը ավելի քան կրկնակի անգամ պակաս է։

Լեռնագրությունը իր պայմաններն է թելադրում նաև տրանսպորտին։ Հանրապետության ճանապարհային ցանցը իր հիմնական կոնտուրներով կրկնում է լեռնագրության խոշոր ձևերը։ Նա նույնպես, ինչպես և բնակչությունն ու արտադրողական ուժերի մնացած բոլոր տարրերը, հիմնականում կենտրոնացված է միջլեռնային իջվածքներում ու գետահովիտներում։ Վերջիններս, իրրև բնակչության արտադրական գործունեության հիմնական կենտրոններ, սահմանազատվում են միմյանցից բարձր լեռնային գոտու տրնտեսապես չյուրացված տարածություններով։ Հասկանալի է, որ տնտեսական

21. Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացման սխեմա.

Քարտեզի վրա թվերով նշանակված են՝ հռոմեականով՝ տնտեսական շրջանները, արաբականով՝ ենթաշրջանները.

I. Արարատյան	*1. Մերձարաքսյան, 2. Միջինհրազդանյան, 3. Ապարանի։*
II. Շիրակի	*4. Հարավային, 5. Կենտրոնական, 6. Հյուսիսային։*
III. Մերձդեբեդյան	*7. Լոռու, 8. Փամբակի, 9. Ստորինդեբեդյան։*
IV. Սևան-Ազատևի	*10. Հյուսիսային, 11. Կենտրոնական, 12. Հարավային։*
V. Սյունիքի	*13. Արփայի, 14. Որոտանի, 15. Հարավային։*

շրջանների սահմանները ճշտելիս այդ յուրահատուկ տնտեսական «սպիտակ բծերը» անտեսել չի կարելի։

Սոցիալիստական պլանային տնտեսության պայմաններում տնտեսական շրջանացման և վարչա-տերիտորիալ բաժանման միասնությունը ենթադրում է, որ նրանց միավորների սահմանները հնարավորին չափ պետք է համընկնեն։ Սրա նպատակահարմարությունը բխում է նաև այն բանից, որ տնտեսության ստորին օղակների վարչական ղեկավարությունը, ինչպես նաև պաշտոնական վիճակագրությունը իրականացվում են ըստ վարչական բաժանման միավորների։

Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը հիմնականում ճիշտ է արտահայտում բնական ու տնտեսական պայմանների տարածական առանձնահատկությունները։ Ուստի և տնտեսական շրջանացման առաջարկվող սխեման, որպես սկզբունք, չի «կոտրում» վարչական շրջանների սահմանները, չի խախտում նրանց ամբողջականությունը։ Միաժամանակ պետք է նշել, որ տնտեսության տերիտորիալ կառուցվածքի մեջ վերջին տարիներս կատարված և ապագայում սպասվող տեղաշարժերը թելադրում են մի քանի վարչական շրջանների սահմանների որոշ ճշտումներ ու փոփոխություններ։ Դա վերաբերում է, մասնավորապես, Թալինի, Ապարանի ու Կրասնոսելսկի շրջաններին։

Թալինի ջրանցքի կառուցման կապակցությամբ Թալինի շրջանի հարավային մասը, որն ընդգրկում է ամբողջ շրջանի տարածության $^1/_3$-ը և բնակչության $^1/_{10}$-ը, մասնագիտանում է խաղողագործության և այգեգործության գծով։ Այդ իմաստով էլ նա հանդիսանում է Արարատյան դաշտի շարունակությունը։ Տերիտորիայի հյուսիսային մասը տիպիկ անասնապահական-հացահատիկային շրջան է՝ շինանյութերի արդյունաբերության առանձին օջախներով։ Նա հարում է Շիրակի դաշտին ու Արագածին։

Տնտեսական զարգացման պայմանների տարբերությունը որոշակի անջրպետ է ստեղծում նաև Ապարանի շրջանի հյուսիսային ու հարավային մասերի միջև։ Իր հողակլիմայական պայմաններով ու գյուղատնտեսության մասնագիտացմամբ շրջանը ամբողջությամբ վերցրած Շիրակի շարունակությունն է կազմում։ Սակայն վերջերս կառուցված Ապարանի ջրամբարը էական փոփոխություններ մտցրեց շրջանի հարավային մասի տնտեսական զարգացման հեռանկարների մեջ։ Նախ և առաջ այն վերածվեց Արարատյան դոգավորության ջրատնտեսական հանգույցի բաղկացուցիչ, անբաժանելի մասի։ Ջրամբարի շնորհիվ այդ տերիտորիան մոտ ժամանակներս կմտնի Հանգստի ու տուրիզմի՝ Հանրապետության հայտնի շրջանների շարքը։ Այդ

բանն իր որոշակի կնիքը կթողնի տնտեսության բնույթի ու մասնագիտացման վրա։ Այս բոլորի հետևանքով պետք է ենթադրել, որ Ապարանի շրջանի հարավային ու հյուսիսային մասերի տնտեսական զարգացման ուղիները «բաժանվում են»։

Մեր կարծիքով, որոշակի նպատակահարմարություն է ներկայացնում նաև Կրասնոսելսկի շրջանի սահմանների փոփոխությունը։ Ըստ որում դա հիմնավորվում է ոչ միայն հեռանկարային մոմենտներով, այլև գյուղատնտեսության զարգացման բնական պայմաններով։ Եթե Գետիկի հովիտը, հատկապես նրա միջին հատվածում, բարենպաստ է այգեգործության զարգացման համար, ապա Արեգունի լեռնաշղթայի ջրբաժանը և Սևանի ավազանին պատկանող մասը տիպիկ անասնապահական շրջաններ են։ Ավելի էականն այն է, որ Շորժայի հրակայուն ապառների բազայի վրա կառուցվող խոշոր կոմբինատը ըստ էության կտրված է լինելու Կրասնոսելսկի շրջանի հյուսիսային, հյուսիս-արևելյան տերիտորիաներից։ Նրան սպասարկելու են լճափով անցնող խճուղին ու կառուցվող երկաթուղին։

Հայկական ՍՍՀ վարչական շրջանների սահմանների հետագա ճշտումը կհեշտացնի տնտեսության ճյուղերի օպերատիվ ղեկավարումը, ինչպես և բարենպաստ պայմաններ կստեղծի տնտեսության զարգացումը ավելի ճիշտ պլանավորելու և արտադրական մասնագիտացումը ավելի խորացնելու համար։

Բայց քանի դեռ այդ շրջանների սահմանները վերանայված ու փոփոխված չեն, նպատակահարմար ենք գտնում տնտեսական շրջանացման սխեմայում ևս դրանք չտրոհել, ընդգծելով միաժամանակ, որ Արարատյան ու Շիրակի տնտեսական շրջանների սահմանը Թալինի և Ապարանի վարչական շրջաններին վերաբերող հատվածում պայմանական է և տնտեսության տերիտորիալ առանձնահատկությունների լրիվ պատկերը չի արտահայտում։

Տնտեսական շրջանների սահմանների ճշտման համար էական է տերիտորիայի այս կամ այն հատվածի այսպես կոչված տնտեսական հարաձգումը, որը բնորոշվում է տրանսպորտային, արտադրական, կուլտուրական, առևտրական, կենցաղային սպասարկման և այլ կապերով։ Հայկական ՍՍՀ յուրահատուկ պայմաններում, երբ մեկ արդյունաբերական ու կուլտուրական կենտրոնի՝ մայրաքաղաքի բացարձակ գերակշռությունը մնացած տերիտորիաների նկատմամբ ակնհայտ է, անհրաժեշտ է դառնում ներհանրապետական տնտեսական կապերի գոյություն ունեցող խմբերի մանրամասն վերլուծությունը։ Պարզվում է, որ Երևան քաղաքի տնտեսական դերի համեմատ նրա և հանրապետության շրջանների ու մյուս քաղաքների միջև ստեղծված

կապերը շատ ավելի էական են, բովանդակալից ու բազմազան, քան շրջաններն իրար միացնող կապերը։ Առաջին խումբը ներկայացնող կապերը ընդգրկում են հանրապետության ամբողջ տերիտորիան, վերածելով այն մի տնտեսական ամբողջության՝ միասնական տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի։ Եթե դրանք կոչենք ներհանրապետական առաջին կարգի տնտեսական կապեր, ապա հանրապետության առանձին մասերում տեղական ֆունկցիաներ կատարող կապերը կլինեն ներհանրապետական երկրորդ կարգի կամ ներշրջանային տնտեսական կապեր։ Հենց այս վերջիններս էլ այն կապերն են, որոնք պետք է հաշվի առնել տնտեսական շրջանները սահմանագծելիս։

Տեղի սղության պատճառով հնարավորություն չունենալով քննարկման ենթարկել թվարկված բոլոր կապերը առանձին-առանձին, ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում հանրապետության մարդատար ավտոմոբիլային կապերի պարզեցված սխեման։ Այս կապերը, սպառիչ չլինելով հանդերձ, միաժամանակ պատկերացում են տալիս գլխավոր արտադրողական ուժի՝ բնակչության տեղաշարժերի, հետևապես և թվարկված մյուս կապերի ինտենսիվության ու ուղղությունների մասին։

Միաժամանակ, հեշտ է կռահել, որ առաջին և երկրորդ կարգի կապերի նույնացումը կարող է հանգեցնել կամ շրջանային տարբերությունների վերացմանը, կամ Արարատյան (կենտրոնական) տնտեսական շրջանի սահմանների չարդարացված ընդարձակմանը։

Ինչպես հիշատակեցինք վերևում, տնտեսական շրջանացումը իրենից ներկայացնում է մի բարդ ու բազմաստիճան սիստեմ։ Ըստ որում, նրա արմատական հարցերը լուծվում են ամենախոշոր՝ առաջին կարգի միավորները որոշելիս։ Այդպիսիք Հայկական ՍՍՀ-ի համար հանրապետական տնտեսական շրջաններն են։ Սակայն վերջիններս, ինչպես երևում է նյութերի ուսումնասիրությունից և քննարկված սկզբունքներից ու հատկանիշներից, ավել կամ պակաս չափի կոմպլեքսային զարգացման արդյունք են։ Դա նշանակում է, որ նրանց սահմաններում միավորված են բնական ու տնտեսական էական տարբերություններ ունեցող տերիտորիաներ, որոնց առանձնացումն ու բնութագրումը նույնպես տվյալ երկրի տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրության պրոբլեմի մեջ է մտնում։

Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանների ներքին տերիտորիալ տարբերու-

22. Մարդատար ավտոտրանսպորտային կապերի պարզեցված սխեմա:

բյունների բացահայտման, այլ կերպ ասած, տնտեսական ենթաշրջանների առանձնացման հիմքում, մեր կարծիքով, պետք է դնել տերիտորիայի տնտեսության միատարրության սկզբունքը[1]։

Գլուխ երկրորդ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արարատյան տնտեսական շրջան։ Նրա սահմանների մեջ մտնում են Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Արտաշատի, Վեդու, Աբովյանի, Աշտարակի ու Ապարանի վարչական շրջանները, մայրաքաղաք Երևանը և հանրապետական ենթակայության քաղաքներ Էջմիածինն ու Հոկտեմբերյանը (պայմանականորեն տնտեսական շրջանի կազմից դուրս է թողնվում Թալինի շրջանի հարավային մասը և նրա մեջ է մտցվում Ապարանի շրջանի հյուսիսային կեսը)։

Այս սահմաններում շրջանի տերիտորիան հավասար է 6,11 հազար կմ² (հանրապետության ընդհանուր տարածության 20,5 %)։ Այստեղ բնակվում է 1100 հազար մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ընդհանուր թվի շուրջ 50%-ը։

Տնտեսական հզորության ու հնարավորությունների առումով Արարատյան շրջանը բացառիկ տեղ է գրավում։ Արտադրանքի ծավալով, արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, տնտեսության կառուցվածքի բարդության ու ավարտվածության աստիճանով նա մեծ չափով առաջ է անցել մնացած տնտեսական շրջաններից։ Ավելին, տնտեսության մի շարք ցուցանիշներով Արարատյան շրջանը գերազանցում է նրանց՝ նույնիսկ միասին վերցրած։ Դրանով էլ որոշվում է նրա բացարձակ գերակշիռ դերը Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում։ Այսպես, Արարատյան տնտեսական շրջանին բաժին է ընկնում հանրապետության արդյունաբերության մեջ զբաղվածների մոտավորապես 60%-ը, արդյունաբերության համախառն արտադրանքի $^3/_4$-ը, ջրովի հողատարածությունների կեսը, բազմամյա տնկարկների $^3/_4$-ը։

---

[1] Հետաքրքրական է նշել, որ երկար ժամանակ ուսումնասիրողների մի մասի մոտ այն կարծիքն էր տիրապետում, որ միատարրության սկզբունքը պետք է հանրապետությունների ու մարզերի առաջին կարգի տնտեսական շրջանների առանձնացման համար կիրառվի։ Իր ժամանակին եթե դա ինչ-որ չափով բավարարում էր հարթավայրային, միապաղաղ բնություն ու տնտեսություն ունեցող մարզերի պահանջները, ապա բարդ ու բազմազան պայմաններ ունեցող Հայկական ՍՍՀ-ի համար նա սկզբից լեռ անընդունելի էր։ Նույնիսկ ենթաշրջանների համար ավելի դեպքում նա կիրառվում է որոշ վերապահումներով։

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը բնութագրում են նաև հետևյալ թվերը. բնակչության խտությունը 1 կմ² վրա 180 մարդուց անցնում է, հանրապետության միջին ցուցանիշը գերազանցելով 2 անգամ, քաղաքներում բնակվում է բնակչության ավելի քան 70%-ը (հանրապետությունում՝ 55%-ը), աշխատանքային ռեսուրսների բաժինը բնակչության ընդհանուր թվում (54,3%) նույնպես ավելի բարձր է, քան միջին հաշվով հանրապետությունում (52,2%):

Արարատյան տնտեսական շրջանի արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակը հանգեցրել է նրան, որ ավելի ցայտուն է ի հայտ գալիս տնտեսության կոմպլեքսայնությունը: Նա ոչ միայն քանակական տեսակետից բացարձակ գերակշռություն ունի հանրապետությունում, այլև հանդիսանալով Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի կորիզը, իր մեջ խտացնում է վերջինիս գլխավոր որակական առանձնահատկությունները:

Եթե աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման միութենական սիստեմում հանրապետության արտադրական մասնագիտացումը որոշում են արդյունաբերության 6 և գյուղատնտեսության 5 ճյուղեր, ապա Արարատյան շրջանը վճռական դեր է խաղում արդյունաբերության 4 և գյուղատնտեսության 3 ճյուղերի զարգացման մեջ:

Արդյունաբերության այդ 4 ճյուղերի՝ մեքենաշինության, քիմիական, սննդի և տեքստիլ արդյունաբերության համախառն արտադրանքի 60-ից 90%-ը կենտրոնացված է Արարատյան շրջանում: Նրան բաժին է ընկնում ևս մեկ ճյուղի՝ շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքի կեսից ավելին: Սակայն, ի տարբերություն մյուս ճյուղերի, նա ապրանքայնության անհամեմատ ցածր գործակից ունի և հիմնականում շրջանի ներքին պահանջներն է բավարարում[1]: Ուստի և սխալ կլինի շինանյութերի արդյունաբերությունը Արարատյան շրջանի մասնագիտացման ճյուղերի շարքը դասել:

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական արտադրության մեջ Արարատյան շրջանի նշանակությունը բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով. այնտեղ գտնվում է հանրապետության խաղողի այգիների ընդհանուր տարածության

---

[1] Արարատյան շրջանի շինանյութերի արդյունաբերության ենթաճյուղերից ամենամեծ ապրանքայնություն ունի մարմարի արտադրությունը, որը, սակայն, բացարձակ քանակության փոքրության պատճառով շոշափելի ազդեցություն չի թողնում ամբողջ ճյուղի ցուցանիշի վրա: Ինչ վերաբերում է ցեմենտին, ապա Հրազդանի գործարանի կառուցումը ավարտելու հետևանքով նրա ապրանքայնության գործակիցը գնալով պակասելու է:

մինչև 90%-ը, պաղատու այգիների 47%-ը, բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրության մոտավորապես 90%-ը։ Շրջանի դերը մեծ է հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման մյուս երկու ճյուղերի՝ անասնաբուծության ու ծխախոտագործության գծով ևս։

Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ Արարատյան շրջանը մենաշնորհային դիրք ունի շատ արժեքավոր տեխնիկական էթերայուղատու կուլտուրայի՝ խորդենու մշակության մեջ։ Միաժամանակ նա տալիս է հանրապետությունում արտադրվող բուժոժի ավելի քան 40%-ը։

Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը Արարատյան շրջանում պայմանավորվում է հիմնականում երկու գործոնով՝ համեմատաբար ընդարձակ հողատարածությունների ոռոգման և գյուղատնտեսական արտադրանքը տեղում սպառելու հնարավորություններով։

Արարատյան շրջանը առանձնահատուկ դեր է կատարում Հայկական ՍՍՀ տնտեսության տարբեր ճյուղերի համար որակյալ կադրերի պատրաստման, ինչպես նաև արտադրողական ուժերի արագ զարգացումն ու արտադրության տեխնիկական առաջընթացը ապահովող միջոցառումների մշակման և ընդհանրապես ոչ-նյութական արտադրության ոլորտի զարգացման գործում։ Արարատյան տնտեսական շրջանում են կենտրոնացված հանրապետության գիտական հիմնարկների $^3/_4$-ը և 12 ԲՈՒՀ-երից՝ 11-ը։ Մի շարք գիտահետազոտական հիմնարկներ համապատասխան ճյուղերի գծով միութենական գլխավոր կենտրոնների են վերածվել։

Վերջին տարիներս պլանավորող օրգանները աշխատանք են տանում Արարատյան շրջանում (հատկապես Երևանում) արտադրողական ուժերի զարգացումը որոշ չափով սահմանափակելու և նրանք հանրապետության ետ մնացող շրջաններում տեղաբաշխելու ուղղությամբ։ Սակայն տնտեսության զարգացման համար այստեղ ստեղծված օբյեկտիվ պայմանները այնքան գրեթե են, որ հանրապետության տերիտորիայի տարբեր մասերի տնտեսական զարգացման տեմպերը իրար մոտեցնելու ձգտումներն ու միջոցառումները դեռևս շոշափելի արդյունք չեն տալիս։ Ճիշտ է, տնտեսապես ետ մնացող շատ շրջաններում ստեղծվեցին վերամշակող արդյունաբերության ձեռնարկություններ, արտադրական օգտագործման ոլորտի մեջ ներգրավվեցին բնական ռեսուրսներով հարուստ նոր տերիտորիաներ, ահմանափակումներ դրվեցին Երևանում նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման վրա. բայց Արարատյան տնտեսական շրջանը, այնուհանդերձ, զարգանում էր ու զարգանում է ավելի արագ տեմպերով, քան մյուս շրջանները։ Նա շարունակում է դեպի իրեն ձգել նոր կապիտալ ներդրումների ու շինարարության հիմ-

նական մասը։ Սրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ զարգացման ներկա փուլում արդյունաբերական արտադրանքի թողարկման աճը հիմնականում տեղի է ունենում գործող ձեռնարկությունների ընդլայնման ու վերակառուցման հաշվին, իսկ այդպիսիք, ինչպես նշվեց վերևում, Արարատյան շրջանում ավելի շատ են, քան մնացած բոլոր շրջաններում միասին վերցրած։ Դա նշանակում է, որ այսուհետև ևս, համենայն դեպս առաջիկա 10—15 տարում, Արարատյան տնտեսական շրջանը զարգանալու է ավելի արագ թափով և իր դիրքերը հանրապետության ժողովրդատնտեսական կոմպլեքսում ավելի է ամրապնդելու։

Տնտեսական շատ ազդեցիկ գործոնների հետ միասին (հզոր նյութատեխնիկական բազայի, որակյալ բանվորական, ինժեներա-տեխնիկական ու գիտա-տեխնիկական կադրերի առկայությունը, հարմար տրանսպորտային դիրքը և այլն) այս հարցում էական դեր է կատարելու նաև այնպիսի օբյեկտիվ նախադրյալը, ինչպիսին հանքային ու գյուղատնտեսական մի շարք արժեքավոր հումքատեսակների առկայությունն է, որը արդյունաբերության զարգացման համար նոր հեռանկարներ է բացում։

Խիստ նպաստավոր նախադրյալ է նաև այն, որ այստեղ, համեմատած մյուս տնտեսական շրջանների հետ, ոչ միայն քաղաքային, այլև գյուղական բնակչության առավելագույն աճ է նկատվում։ Միայն Արարատյան դաշտն է, որտեղ գյուղական բնակչությունը ավելանում է նաև հարևան շրջաններից կատարվող միգրացիայի շնորհիվ։ Լեռնային շրջաններից պետականորեն կազմակերպված վերաբնակեցում է կատարվում Արարատյան գոգավորության նորոգվող ու յուրացվող տերիտորիաներում։

Արդյունաբերության հետագա զարգացումը ընթանալու է վերը նշված մասնագիտացման ճյուղերի՝ մեքենաշինության (էլեկտրատեխնիկական, սարքաշինական, այդ թվում էլեկտրոնային ու ռադիոէլեկտրոնային, հաստոցաշինական, ավտոմոբիլային), քիմիական (պոլիմերների ու մոնոմերների սինթեզում, կենցաղային քիմիա, բույսերի պաշտպանության ու աճի խթանման միջոցների, քիմիական ռեակտիվների ու դեղորայքի արտադրություն), տեքստիլ-տրիկոտաժեղենի, ինչպես նաև խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության արտադրանքի վերամշակման վրա հիմնվող սննդի արդյունաբերության հետագա ուժեղացման ու ամրապնդման ուղղությամբ։

Արարատյան տնտեսական շրջանում ամենամոտ տարիներս հիմնադրվող ճյուղերից են որակյալ պողպատաձուլությունը (Երևան), աղնիվ մետաղների արտադրությունը (ոսկու կորզման Արարատի գործարանը) և դիատոմիտների արդյունահանումը։ Ավելի հեռավոր ապագայի համար մեծ հետաքրքրություն

են ներկայացնում Կապուտանի հանքավայրի երկաթն ու ապատիտները և Երևանի ավազանի կերակրատաղը։ Բացառված չէ, որ մոտ ժամանակներս հենց Արարատյան դաշտը կդառնա հանրապետության բնական գազի արտադրության կենտրոնը։

Գյուղատնտեսական մասնագիտացման ներկայումս տիրապետող ուղղությունը կպահպանվի ու ավելի կամրապնդվի ապագայում։ Այդ նպատակին է ծառայելու ինչպես հարթավայրի (խոսքը աղակալած հողերի մասին է), այնպես էլ նախալեռնային գոտու նոր հողատարածությունների յուրացումը, որոնք հիմնականում բազմամյա տնկարկների ընդարձակման ու բանջարաբուծության ընդլայնման համար են օգտագործվելու։ Գյուղատնտեսության այդ ճյուղերի զարգացման համար խթանիչ գործոն են հանդիսանում գինու-կոնյակի ու պահածոների արդյունաբերության արագ աճը և մեծաքանակ քաղաքային բնակչության առկայությունը (1980-ական թվականներին Արարատյան շրջանի քաղաքային բնակչությունը կհասնի 1,5 մլն-ի)։ Վերջին հանգամանքը նպաստելու է մերձքաղաքային տիպի զարգացած տնտեսության ստեղծմանը։

Զարգացման ներկայիս փուլում, ինչպես և տեսանելի հեռանկարում Արարատյան շրջանի տնտեսության համար ընդհանուր բնույթի պրոբլեմներ են ջրամատակարարումը և տերիտորիայի՝ հողատարածությունների ռացիոնալ օգտագործումը։

Առաջին պրոբլեմն ընդգրկում է շրջանի բացարձակապես բոլոր տերիտորիաները և միատեսակ հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդական տնտեսության ջուր սպառող ու ջուր օգտագործող բոլոր ճյուղերի համար (գյուղատնտեսական ոռոգում, արոտների ջրարբիացում, արդյունաբերություն, կոմունալ տնտեսություն, հիդրոէներգետիկա, կուրորտային ու սպորտային գործի և բնակչության մասսայական հանգստի կազմակերպում)։ Արտադրողական ուժերի անշեղ վերելքն իր հետ բերում է ջրի պահանջարկի անընդհատ ավելացում։ Բայց մյուս կողմից տեղական ջրային ռեսուրսները խիստ սահմանափակ են։ Արարատյան շրջանը հատող շատ թե քիչ խոշոր միակ գետը՝ Հրազդանը սնվում է Հարևան շրջանից, իսկ Արաքսը սահմանային է և, որ պակաս կարևոր չէ, հոսում է տերիտորիայի ամենացածր նիշերով։ Վերջին հանգամանքը խիստ դժվարացնում է գետի ջրի օգտագործումը բարձրադիր տերիտորիաների համար։

Ժողովրդատնտեսական այս պրոբլեմը ավելի է սրվում նաև կապված այն բանի հետ, որ վերջին տարիներս Սևանի ջրերի դարավոր պաշարների օգտագործումը անընդհատ պակասում է, իսկ 1970 թ. սկսած ամբողջովին դադարեցվելու է։ Հարցը նրանումն է, որ մինչև վերջերս Արարատյան շրջանի

ոռոգվող հողատարածությունների կեսը և քաղաքային բնակավայրերի մի զգալի մասը սնվում էր Հրազդանի ջրով։ Նրանով են, մասնավորապես, սնվում հանրապետության այնպիսի կարևոր ոռոգիչ սիստեմներ, ինչպիսիք են Արտաշատի, Ստորին Հրազդանի, Արզնի-Շամիրամի, էջմիածնի, Կոտայքի ջրանցքները։ Արփա-Սևան թունելը կառուցելուց հետո Հրազդան գետը Արարատյան շրջանին կարող է տալ տարեկան ընդամենը 500 մլն. մ³ ջուր, որից ոռոգման սեզոնում, այսինքն՝ գյուղատնտեսության համար, ոչ ավելի, քան 380 մլն. մ³, Ջրի այդ քանակությունը անբավարար է ոչ միայն նոր ջրանցքներ կառուցելու ու նոր տերիտորիաներ յուրացնելու, այլև արդեն յուրացված տարածությունները հագեցնելու համար։

Արդեն սկսված է միջոցառումների մի բարդ կոմպլեքսի իրականացումը, ըստ որի լուծվում է երեք կարևոր հարց՝ տեղական ջրային ռեսուրսների լրիվ մոբիլիզացումը և նրանց ռացիոնալ օգտագործումը, շրջանի մակերեսային ջրային ռեսուրսների տարածական վերաբաշխումը և Արարատյան ստորերկրյա ջրային ավազանի պաշարների նպատակահարմար օգտագործումը։

Արարատյան շրջանի ջրամատակարարման հարցի կարգավորման նպատակ են հետապնդում, մասնավորապես, Ապարանի ջրամբարի կառուցումը Քասաղ գետի վրա, Այղր լճի նոր հզոր պոմպակայանների և նրանցից սկիզբ առնող ոռոգիչ ջրանցքի, Մխչյանի պոմպակայանի կառուցումն ու այլ ջրատեխնիկական միջոցառումները։ Իր լուծմանն է սպասում ստորերկրյա ջրերի օգտագործման և դրա ժամանակ առաջացող աղակալման ու ճահճակալման վտանգի վերացման խնդիրը։

Մյուս առաջնահերթ ժողովրդատնտեսական պրոբլեմը՝ տերիտորիայի ռացիոնալ օգտագործումը ևս հանրապետության ոչ մի շրջանում այնպիսի սրություն չի ընդունել, ինչպես Արարատյան շրջանում է։ Եվ դա հասկանալի է։ Այստեղ մի կողմից բնակչության և ընդհանրապես բազմաճյուղ արտադրության մեծ խտություն գոյություն ունի (ըստ որում խոշոր ծավալի նոր կապիտալ շինարարության շնորհիվ նա գնալով ավելի ու ավելի մեծանում է), մյուս կողմից, հատկապես հարթավայրային մասում, ակնհայտ են դյուղատնտեսության զարգացման համար հողակլիմայական բարենպաստ պայմանները և տերիտորիայի գյուղատնտեսական յուրացվածության բարձր աստիճանը։ Այդ բանը պարզորոշ կերպով երևում է հողահանդակների բաշխման № 20 աղյուսակից[1]։

[1] Այս, ինչպես և հաջորդ տնտեսական շրջանների նույն տիպի աղյուսակները կազմված են քարտեզաչափական հաշվումների եղանակով։

Արարատյան տնտեսական շրջանի տերիտորիայի բաշխումը ըստ վարչական շրջանների, հողահանդակների ու բարձրության գոտիների

Բարձրության գոտիներ մետրերով՝ ծովի մակարդակից հաշված / Վարչական շրջաններ ու հողահանդակներ	500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր		Ընդամենը	
	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Աբովյանի շրջան														
Վարելահողեր	—	—	—	—	3400	15,1	9240	35,2	2980	16,5	—	—	15620	18,4
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	3745	17,0	800	3.0	—	—	—	—	4545	5,4
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1730	6,6	1007	5,5	—	—	2737	3,2
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	11500	52,4	14440	55,2	13880	78,0	18400	100,0	58220	69,0
Անտառներ	—	—	—	—	3413	15,5	—	—	—	—	—	—	3413	4,0
Ընդամենը	—	—	—	—	22058	100,0	26210	100,0	17867	100,0	18400	100,0	84535	100,0
Ապարանի շրջան														
Վարելահողեր	—	—	—	—	—	—	12100	40,0	12250	32,0	—	—	24350	25.5
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	71	0,2	—	—	—	—	71	0,0
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1100	3.6	1648	4,2	—	—	2748	2,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	16200	52,0	21100	55,4	25841	98,0	63141	66,2
Անտառներ	—	—	—	—	—	—	1300	4,2	3264	8,4	600	2,0	5164	5,4
Ընդամենը	—	—	—	—	—	—	30771	100,0	38262	100,0	26441	100,0	95474	100,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Աջտարակի շրջան														
Վարելահողեր	—	—	250	8,1	10680	25,5	3920	17,6	350	3,6	—	—	15200	16,4
Բազմամյա տնկարկներ	—	—	500	16,2	7149	17,2	100	0,5	—	—	—	—	7749	8,3
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	874	3,9	—	—	—	—	874	0,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	2340	75,7	23920	57,3	159 0	71,5	8378	85,0	16300	100,0	66888	71,7
Անտառներ	—	—	—	—	—	—	1380	6,5	1105	11,4	—	—	2485	2,7
Ընդամենը	—	—	3090	100,0	41749	100,0	22224	100,0	9833	100,0	16300	100,0	93196	100,0
Աբոտաշատի շրջան														
Վարելահողեր	—	—	4860	23,0	800	4,3	960	8,7	680	18,1	—	—	7300	13,4
Բազմամյա տնկարկներ	—	—	4220	20,0	2400	13,0	—	—	—	—	—	—	6620	12,2
Խոտհարքներ	—	—	—	—	200	1,1	543	4,9	300	8,2	—	—	1043	1,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	12000	57,0	13956	75,5	8050	72,4	2080	55,5	—	—	36086	66,5
Անտառներ	—	—	—	—	1100	6,1	1550	14,0	717	19,2	—	—	3367	6,0
Ընդամենը	—	—	21080	100,0	18456	100,0	11103	100,0	3777	100,0	—	—	54416	100,0
Էջմիածնի շրջան														
Վարելահողեր	—	—	14640	28,1	100	1,7	—	—	—	—	—	—	14740	25,3
Բազմամյա տնկարկներ	—	—	7821	15,1	750	12,5	—	—	—	—	—	—	8571	14,8
Խոտհարքներ	—	—	500	0,9	158	2,6	—	—	—	—	—	—	658	1,3
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	29010	55,5	4932	82,1	—	—	—	—	—	—	33942	58,1
Անտառներ	—	—	200	0,4	71	1,1	—	—	—	—	—	—	271	0,5
Ընդամենը	—	—	52171	100,0	6011	100,0	—	—	—	—	—	—	58182	100,0
Հոկտեմբերյանի շրջան														
Վարելահողեր	—	—	10500	20,3	100	0,5	—	—	—	—	—	—	10600	15,2
Բազմամյա տնկարկներ	—	—	9980	19,4	2259	12,2	—	—	—	—	—	—	12239	17,2
Խոտհարքներ	—	—	—	—	77	0,3	—	—	—	—	—	—	77	0,1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	30648	59,4	15750	85,1	—	—	—	—	—	—	46398	66,2
Անտառներ	—	—	508	0,9	350	1,9	—	—	—	—	—	—	858	1,3
Ընդամենը	—	—	51636	100,0	18536	100,0	—	—	—	—	—	—	70172	100,0
Վեդու շրջան														
Վարելահողեր	—	—	7960	34,7	1140	3,2	1200	5,7	800	2,8	—	—	11100	7,9
Բազմամյա տնկարկներ	500	21,6	3500	15,3	1206	3,4	—	—	—	—	—	—	5206	3,7
Խոտհարքներ	1317	56,8	—	—	—	—	200	0,9	300	1,0	—	—	1817	1,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	503	21,6	11497	50,0	32020	90,0	17300	81,5	24865	85,5	28600	99,3	114785	81,5
Անտառներ	—	—	—	—	1160	3,4	2537	11,9	3120	10,7	200	0,7	7017	5,5
Ընդամենը	2320	100,0	22957	100,0	35526	100,0	21237	100,0	29085	100,0	28800	100,0	139925	100,0
f. Երևան														
Վարելահողեր	—	—	650	10,8	420	4,4	—	—	—	—	—	—	1070	6.9
Բազմամյա տնկարկներ	—	—	1014	16,7	1710	18,2	—	—	—	—	—	—	2724	17,6
Խոտհարքներ	—	—	—	—	53	0,6	—	—	—	—	—	—	53	0,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	4092	67,5	5649	60,1	—	—	—	—	—	—	9741	62,7
Անտառներ	—	—	300	5,0	1568	16,7	—	—	—	—	—	—	1868	12,4
Ընդամենը	—	—	6056	100,0	9400	100,0	—	—	—	—	—	—	15456	100,0
Աբարայանի տնտեսական շրջան														
Վարելահողեր	—	—	38860	24,8	16640	11,2	27420	24,6	17060	17,2	—	—	99980	16,4
Բազմամյա տնկարկներ	500	21,6	27035	17,2	19219	12,8	971	0,8	—	—	—	—	47725	7,9
Խոտհարքներ	1317	56,8	500	0,3	488	0,3	4447	4,0	3255	3,3	—	—	10007	1,6
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	503	21,6	89587	57,0	107727	70,6	71940	64,5	70303	71,1	89141	99,0	429201	70,1
Անտառներ	—	—	1008	0,7	7662	5,1	6767	6,1	8206	8,4	800	1,0	24443	4,0
Ընդամենը	2320	100,0	156990	100,0	151736	100,0	111545	100,0	98824	100,0	89941	100,0	611356	100,0

Պարզ է, որ նման պայմաններում ժողովրդատնտեսական կարևորագույն նշանակություն է ստանում այն հարցը, թե ինչ նպատակի համար է օգտագործվում այս կամ այն տերիտորիան, ինչպես է ապահովվում արտադրության տարբեր ճյուղերի զարգացման ներդաշնակությունը։ Այս հարցերը բազմակողմանիորեն հաշվի առնելու անհրաժեշտությունը ավելի ընդգծված է Արարատյան գոգավորության հարթավայրային մասի համար, որտեղ գերակշռում են ամենից ավելի արժեքավոր գյուղատնտեսական հանդակները՝ վարելահողերն ու բազմամյա տնկարկները և նոր շինարարության համար բավարար քանակության ընդարձակ տարածություններ չկան։ Մինչդեռ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս այդ գոտում շարունակվում է արդյունաբերական ու քաղաքացիական լայն ծավալի շինարարություն, որի տնտեսական նպատակահարմարությունը միշտ չէ, որ անվիճելի է։ Այս բոլորից բխում է, որ գյուղատնտեսական օգտագործման հողատարածությունների հետագա կրճատումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ընդարձակ հրապարակներ պահանջող շինարարությունը այս գոտում խիստ չափով սահմանափակել։

Հայկական ՍՍՀ և ոչ մի մասում գլխավոր արդյունաբերական հանգույցի շրջանասահմանները այնքան ցայտուն ու վճռական չէ, ինչքան Արարատյան տնտեսական շրջանում։ Դա բացատրվում է ոչ միայն հանգույցի տնտեսական մեծ հզորությամբ, այլև այդ հանգույցի կենտրոնական օղակի՝ Երևանի, իբրև մայրաքաղաքի բացառիկ դերով։

Երևանը, ինչպես հայտնի է, Սովետական Միության ամենաարագ աճող քաղաքներից է։ Անցած 45 տարիների ընթացքում նրա բնակչության թիվը ավելի քան քսանապատկվել է, հարյուրապատիկ անգամ ավելացել է արդյունաբերական արտադրանքի ծավալը։ Ահռելի նման բարձր տեմպերի հետևանքով Երևանը ներկայումս մտել է Սովետական Միության 25 խոշորագույն քաղաքների շարքը։ Իր արդյունաբերական հզորությամբ Անդրկովկասի քաղաքների թվում նա 2—3-րդ տեղերն է բաժանում։ Այնտեղ գործում են ավելի քան 200 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց 98%-ը կառուցված է սովետական իշխանության տարիներին։ Մնացած 2%-ը, որոնք հիմնադրվել են նախահեղափոխական շրջանում, արմատական վերակառուցման են ենթարկվել և ըստ էության նույնպես նոր ձեռնարկություններ են։

Հայկական ՍՍՀ տնտեսական կոմպլեքսում և բուն տնտեսական շրջանում Երևանի դերը շատ բարձր ցուցանիշներով է բնութագրվում։ Նրան բաժին է ընկնում շրջանի ամբողջ բնակչության ավելի քան 65%-ը, քաղաքային բնակչության մոտավորապես 90%-ը, հանրապետության հիմնական արդյունաբերական ֆոնդերի, արդյունաբերության բնագավառի աշխատողների և

համախառն արտադրանքի արժեքի 42—63%-ը։ Նրա տեսակարար կշիռը ավելի բարձր է ոչ-նյութական արտադրության գծով։ Օրինակ, Երևանում են կենտրոնացված հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ավելի քան 9/10-ը, տեխնիկումների սովորողների 65%-ը, գիտական հիմնարկների ավելի քան 80%-ը։ Վերջապես, այնտեղ է իրացվել հանրապետության բոլոր տարիների կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի մոտավորապես 1/3-ը։

Համեմատաբար փոքր հանրապետությունում Երևանի նման հզոր կենտրոնի գոյությունը պատճառաբանվում է մի շարք հանգամանքներով։ Հայկական ՍՍՀ ստեղծումով Երևանը իբրև երկրի մայրաքաղաք ձեռք բերեց կարևորագույն վարչական ֆունկցիաներ, որի հետևանքով այնտեղ կենտրոնացան կառավարական ու հանրապետական գերատեսչական օրգաններն ու հիմնարկները։ Չափազանց կարևոր է այն, որ նախկինում հետամնաց, ագրարային Լրկրի սոցիալիստական վերակառուցման համար անհրաժեշտ էր պրոլետարական խոշոր կենտրոն ստեղծել։ Նման պայմաններում, հասկանալի է, որ այն ժամանակ համեմատաբար սահմանափակ կապիտալ ներդրումների հիմնական մասը պետք է կենտրոնանար հանրապետության մայրաքաղաքում։

Երևանի այդպիսի արագ զարգացումը Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ձևավորման համար այն նշանակությունն ունեցավ, որ հանձին նրա ստեղծվեց մի հզոր կազմակերպիչ կենտրոն, որի շուրջը անտեսապես համախմբվեցին հանրապետության բոլոր մոտիկ ու հեռավոր շրջանները։ Առանց այդպիսի համախմբման տնտեսական-վարչական խոշոր կենտրոնի շուրջը, պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Հայկական ՍՍՀ-ն չէր կարող դառնալ տնտեսական մի ամբողջություն։ Այս իմաստով էլ միանգամայն ճիշտ ու արդարացված պետք է համարել տնտեսականայն քաղաքականությունը, որն ապահովում էր Երևան քաղաքի զարգացման առաջ անցնող տեմպերը։ Դա այն ամենակարճ ուղին էր, որն ի վերջո հանգեցրեց հանրապետության ինդուստրիալ զարգացման ներկա մակարդակին և միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի գոյացմանը։

Կասկածից վեր է, որ հանրապետական նշանակություն ունեցող նման կենտրոնը ավելի մեծ ու վճռական դեր է խաղում ներհանրապետական տնտեսական շրջանի ձևավորման գործում։ Ներկայումս այնպիսի վիճակ է ստեղծվել, երբ Արարատյան շրջանի գրեթե ամբողջ տնտեսական կյանքը Երևանի պահանջներին է ենթարկված։ Գնալով ավելի ակնառու է դառնում այն փաստը, որ շրջանի ամենահեռավոր տերիտորիաներն էլ կենտրոնական

արդյունաբերական հանգույցի և իր՝ Երևանի «օժանդակ արտադրամասերի» ֆունկցիաներ են ձեռք բերում։

Բուն Երևանի զարգացման ներկայիս տեմպերը նախկինի համեմատությամբ որոշ չափով ընկել են։ Բայց, դրան հակառակ, մեծ թափ է ստացել նրա հարևան կենտրոնների՝ արդյունաբերական հանգույցի փոքր քաղաքների զարգացումը։ Դրա հետևանքով էլ Երևանի արդյունաբերական հանգույցի տեսակարար կշիռը Արարատյան տնտեսական շրջանում անընդհատ մեծանում է։

Արարատյան շրջանի ներսում նկատվում են արտադրության զարգացման բնական ու տնտեսական պայմանների որոշակի տարբերություններ, որոնք հիմք են տալիս (շատ սխեմատիկ ձևով) այնտեղ առանձնացնել Մերձարաքսյան, Միջինհրազդանյան և Ապարանի ենթաշրջանները[1]։

1. Մերձարաքսյան ենթաշրջան։ Ընդգրկում է Հոկտեմբերյանի, էջմիածնի, Արտաշատի և Վեդու վարչական շրջանները և Հանրապետական ենթակայության էջմիածին ու Հոկտեմբերյան քաղաքները։ Արտադրական մասնագիտացման մեջ աչքի են ընկնում խաղողագործությունը, պտղաբուծությունն ու նրանց արտադրանքը վերամշակող սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը և մերձքաղաքային բնույթի բանջարաբուծությունը։ Հողագործությունը բացառապես հենվում է արհեստական ոռոգման վրա։ Բացի Երարատից (ցեմենտի արդյունաբերություն), մնացած բոլոր արդյունաբերական կենտրոնների մասնագիտացման մեջ վճռական դերը սննդի արդյունաբերությանն է պատկանում (Հոկտեմբերյան, էջմիածին, Արտաշատ, Վեդի, Վերին Արտաշատ, Այգեզարդ, Դալար, Բուրաստան)։ Սննդի արդյունաբերությունը այդ բնակավայրերի արտադրական դեմքը որոշելու է ապագայում էլ։

Ենթաշրջանի միջին մեծության այլ ձեռնարկություններից հարկ է նշել Հոկտեմբերյանի հաստոցաշինական և էջմիածնի պլաստմասսաների գործարանները։

2. Միջինհրազդանյան ենթաշրջան։ Սրա մեջ մտնում են Արարատյան դոգավորության երկու նախալեռնային վարչական շրջանները՝ Աշտարակի և Աբովյանի։ Երևան քաղաքը տերիտորիալ տեսակետից գտնվում է այս և նախորդ ենթաշրջանների սահմանագլխին, բայց տնտեսական-արտադրական

[1] Տնտեսական ենթաշրջանների ճիշտ սահմանագծման ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, պետք է ելնել տերիտորիաների միատարրության, արտադրողական ուժերի զարգացման պայմանների նմանության սկզբունքից։ Դա նշանակում է, որ այս դեպքում ավելի հաճախ պետք է հատվեն վարչական շրջանների սահմանները։ Այդ աշխատանքը թողնելով հետագա ավելի մանրազնին հետազոտությունների համար, ներկայումս տնտեսական ենթաշրջանները առանձնացնում ենք որոշ պայմանականությամբ՝ անխախտ թողնելով վարչական շրջանների ամբողջությունը։

առումով ավելի ճիշտ կլիներ այն միացնել Միջինհրազդանյան ենթաշրջանին՝ նկատի ունենալով այն, որ երևանը ներկայումս, առավել ևս մոտ ապագայում արտադրական առումով ավելի շատ է կապված լինելու իրենից հյուսիս՝ նույն Հրազդան գետի վրա ընկած նոր զարգացող արդյունաբերական կենտրոնների հետ (Աբովյան, Նոր Հաճըն և այլն)։

Ենթաշրջանը կարելի է բնութագրել իբրև էլեկտրաէներգիայի, բազմապիսի վերամշակող արդյունաբերության, արագ զարգացող խաղողագործության և մերձքաղաքային գյուղատնտեսության գենտրոն։

3. Ապարանի ենթաշրջանը աչքի է ընկնում զարգացած անասնաբուծությամբ ու հացահատիկային տնտեսությամբ։ Նոր միայն հիմք է դրվել վերամշակող արդյունաբերությանը (Ապարան քաղաքատիպ ավանում)։ Ամառանոցային վայր դառնալու բարենպաստ պայմաններ կան[1]։

Շիրակի տնտեսական շրջանի մեջ մտնում են Ղուկասյանի, Ամասիայի, Ախուրյանի, Անիի, Արթիկի և Թալինի վարչական շրջանները (վերջինը՝ պայմանականորեն, քանի որ նրա հարավային մասի որոշ տերիտորիաներ տնտեսական մասնագիտացման առումով հարում են Արարատյան շրջանին) և Լենինական ու Արթիկ հանրապետական ենթակայության քաղաքները։ Շրջանի ընդհանուր տերիտորիան կազմում է 3,98 հազար կմ², որտեղ բնակվում է շուրջ 300 հազար մարդ։ Իր տնտեսական պոտենցիալով նա հանրապետությունում երկրորդ տեղն է գրավում՝ մի քանի անգամ զիջելով Արարատյան շրջանին։ Շիրակին բաժին է ընկնում Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ավելի քան 11%-ը և արդյունաբերական-արտադրական անձնակազմի մոտավորապես $^1/_6$ մասը, ընդհանուր ցանքատարածությունների (ներառյալ կազմում և հացահատիկի) ավելի քան 25%-ը, արոտների ու խոտհարքների 15%-ը, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի շուրջ $^1/_5$-ը։

Տերիտորիայի հիմնական մասը 1500 մ-ից ավելի բացարձակ բարձրություն ունի, այսինքն՝ ընկած է լեռնային ու բարձրալեռնային գոտում։ Դրա հետևանքով հողակլիմայական պայմանները համեմատաբար խիստ են և անբարենպաստ՝ հարավային կուլտուրաների մշակության համար։

Չնայած տերիտորիայի բարձրադիր վիճակին, նա աչքի է ընկնում խոնավության որոշ դեֆիցիտով, որը հանգեցնում է արհեստական ոռոգման անհրաժեշտությանը (ինտենսիվ հողագործության դեպքում)։

---

[1] Արարատյան տնտեսական շրջանի մեջ Ապարանի վարչական շրջանի միայն հարավային էսը մտցնելու դեպքում, երրորդ ենթաշրջանը առանձնացնելու հարկ չի լինի, նա կմիացվի Միջինհրազդանյան ենթաշրջանին։

Ջրամատակարարման հարցի կարգավորման համար որոշ նշանակություն ունեցավ Ախուրյան գետի վերին հոսանքում 15 մետր բարձրությամբ պատվարի կառուցումը, որի շնորհիվ նախկին Արփի լիճը զգալի չափով ավելացնելով իր մակերեսը (նախկին 4,5 կմ² փոխարեն 22 կմ²), վերածվեց արհեստական ջրամբարի։ Նախատեսվող ջրատեխնիկական կառուցումների շարքում առանձնակի տեղ է գրավում Ախուրյանի ջրամբարը, որը 300 մլն. մ³ ջրի ծավալով խոշորագույնն է լինելու Հանրապետությունում և նոր ընդարձակ հողատարածություններ կարող է ոռոգել ոչ միայն Շիրակի, այլև Արարատյան տնտեսական շրջանում։

Շիրակի շրջանի ինդուստրիալ զարգացման համար բնական պայմանների անբարենպաստ լինելը ընդգծվում է հատկապես ընդերքի հայտնաբերված հարստությունների պակաս բազմազանությամբ։ Ժողովրդատնտեսական հետաքրքրություն ներկայացնող օգտակար հանածոների շրջանակը սահմանափակվում է շինանյութերով (հրաբխային տուֆ, պեմզա, խարամ, պեռլիտ, բազալտ, կրաքար, շինարարական ավազ)։ Սակայն, կարևոր է նշել, որ նրանց մի զգալի մասը խիստ բարձր որակի են, ունեն գործնականում անսպառ պաշարներ, իսկ հանքավայրերի ճնշող մեծամասնությունը աչքի է ընկնում տրանսպորտային հարմար դիրքադրումով։ Այս բոլորի հետևանքով Շիրակի բնական շինանյութերը աչքի են ընկնում լավագույն տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով և շահագործման պայմաններով՝ բարենպաստ հիմք ստեղծելով նրանց արդյունահանման ու վերամշակման համար։

Բայց, մյուս կողմից, այստեղ լրիվ չափով բացակայում են ոչ միայն վառելիքային ռեսուրսները, որը բնորոշ է ամբողջ Հանրապետության համար, այլև մետալուրգիական ու քիմիական հումքը։ Խիստ սահմանափակ են նաև հիդրոէներգետիկական ռեսուրսները, որոնց ընդհանուր պաշարը չի անցնում 60 հազ. կվտ-ից, այսինքն՝ կազմում է Հանրապետության հիդրոէներգապոտենցիալի շուրջ 3%-ը։

Ինչպես տեսնում ենք, բնական պայմանների ամբողջ կոմպլեքսը ընդհանուր առմամբ քիչ է նպաստում շրջանի արդյունաբերական զարգացմանը։ Այդ տեսակետից նա ավելի վատ պայմաններում է գտնվում, քան Հայկական ՍՍՀ մնացած բոլոր տնտեսական շրջանները։ Բայց մյուս կողմից նա իր արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, ինչպես արդեն ասվեց, Հանրապետությունում գրավում է երկրորդ տեղը։ Բացառությամբ Արարատյան շրջանի, նա Հանրապետության մնացած շրջաններին գերազանցում է տերիտորիայի յուրացվածության աստիճանով ևս։ Ամբողջ Շիրակի և նրա մեջ մըտ-

նող վարչական շրջանների հողատարածությունների օգտագործման բնույթի մասին գաղափար է տալիս № 21 աղյուսակը (տե՛ս էջ 182—183)։

Շիրակի շրջանի բնական պայմանների ընձեռած հնարավորությունների և նրա տնտեսական զարգացման մակարդակի միջև գոյություն ունեցող ներկա անհամապատասխանության հիմնական պատճառը պետք է որոնել տնտեսական գործոնների, առաջին հերթին բարենպաստ տրանսպորտային դիրքավորության և պատմականորեն ձևավորված համեմատաբար մեծաքանակ աշխատանքային ռեսուրսների մեջ։

Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը (45%) այստեղ ավելի ցածր է, քան միջին հաշվով հանրապետությունում (55%)։ Հանրապետության միջին ցուցանիշներից ցածր է նաև բնակչության զբաղվածության աստիճանը։ Խոսքը վերաբերում է հատկապես գյուղատնտեսական բնակչությանը։ Հարցը նրանումն է, որ տեղի գյուղատնտեսական արտադրության կառուցվածքում համեմատաբար պակաս աշխատատար ճյուղերի՝ հացահատիկային տնտեսության և արոտային անասնաբուծության գերակշռությունը հանգեցնում է զգալի թվով թաքնված աշխատանքային ռեզերվների գոյացմանը։

Տնտեսության ժամանակակից կառուցվածքի և սպասվող տեղաշարժերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի տնտեսական շրջանի համար կարելի է առանձնացնել արտադրական մասնագիտացման հետևյալ ճյուղերը. տեքստիլ-տրիկոտաժեղենի արդյունաբերությունը, մեքենաշինությունը, հանքային շինանյութերի (տուֆե որմնաքարեր, պեմզա, պեռլիտ, հրաբխային խարամ, կիր և այլն) արտադրությունը, կաթնատու և մսա-բրդատու անասնաբուծությունը, արդյունաբերական ճակնդեղագործությունն ու հացահատիկային տնտեսությունը։

Շրջանի արդյունաբերական ու գյուղատնտեսական համախառն արտադրանքի հիմնական մասը այս ճյուղերին է բաժին ընկնում։ Նրանք մեծ տեսակարար կշիռ ունեն հանրապետության համապատասխան ճյուղերի արտադրանքի մեջ նաև։ Այսպես, Շիրակում թողարկվում է հանրապետությունում արտադրվող հանքային շինանյութերի $^{2}/_{3}$-ը, տեքստիլ-տրիկոտաժեղենի $^{1}/_{3}$-ը, մեքենաշինական արտադրանքի $^{1}/_{10}$-ը։ Դրանց մի չնչին քանակությունն է միայն սպառվում տեղում։ Հիմնական մասը արտահանվում է մյուս տնտեսական շրջանները և հարևան հանրապետությունները։

Կարևոր ճյուղերից է նաև սննդի արդյունաբերությունը, որի բաժինը հանրապետությունում հասնում է 7%-ի։ Շրջանի արդյունաբերության մեջ նրա

տեղը բնութագրվում է՝ ըստ համախառն արտադրանքի շուրջ 15%, ըստ աշխատող անձնակազմի թվի 6%[1]։

Հանրապետության գյուղատնտեսական որոշ մթերքների արտադրության մեջ ևս Շիրակի շրջանի տեսակարար կշիռը գգալի է (կաթի մոտ 1/5-ը, բրդի 1/4-ը, շաքարի ճակնդեղի 2/3-ը և հացահատիկի (հիմնականում ցորենի) 1/3-ը)։

Միասնական արտադրական մասնագիտացման հետ մեկտեղ Շիրակի տնտեսական շրջանի ձևավորման վճռական գործոն է հանդիսանում Լենինականի արդյունաբերության հանգույցը, որի արտադրական կորիզի դեր է կատարում Լենինական քաղաքը։

Լենինականը Հայկական ՍՍՀ երկրորդ քաղաքային բնակավայրն է, արդյունաբերական ու կուլտուրական կենտրոնը։ Բնակչության քանակով (130 հազար) ու տնտեսական ֆունկցիաներով նա գերակշռող դիրք է գրավում Շիրակի շրջանում՝ ունենալով նրա ամբողջ բնակչության շուրջ 45%-ը, քաղաքային բնակչության 66%-ը, արդյունաբերության համախառն արտադրանքի ավելի քան 4/5-ը, արդյունաբերական-արտադրական անձնակազմի 77%-ը։ Արտադրական ֆունկցիաներից բացի, զարգացման որոշ աստիճանի են հասել ոչ-արտադրական՝ սպասարկման ֆունկցիաները, որոնց ազդեցության ոլորտում է գտնվում շրջանի բնակավայրերի ու բնակչության ճնշող մեծամասնությունը։

Լենինականի՝ իբրև Շիրակի շրջանի տերիտորիան տնտեսապես համախմբող կենտրոնի դերը ընդգծվում է նաև տրանսպորտային նշանակությամբ։ Այստեղ հանգուցվում են 4 երկաթուղիներ, որոնցից մեկը (Լենինական—Պեմդաշեն—ապագայում Մարալիկ) տեղական, երկուսը (դեպի Երևան—Ջուլֆա և Կիրովական—Թբիլիսի) հանրապետական ու միութենական և մեկը (Լենինական—Կարս—Անկարա) միջազգային նշանակության։ Լենինականը կենտրոնական դիրք ունի նաև շրջանի խճուղային և էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցի նկատմամբ։

Լենինականի հեռանկարային զարգացումը պայմանավորող վճռական գործոններ առաջիկայում էլ մնալու են արդյունաբերության արդեն ստեղծված նյութա-տեխնիկական համեմատաբար հզոր բազան, հարմարավետ տրանսպոր-

---

[1] Շիրակի յուրաքանչյուր բնակչին երկու անգամ ավելի պակաս սննդի արդյունաբերության արտադրանք է ընկնում, քան հանրապետության միջին ցուցանիշն է։ Բացի այդ, անհամեմատ փոքր է այդ ճյուղի ապրանքայնությունը. արտադրվող սննդամթերքների հիմնական մասը տեղական սպառում ունի։ Քանակական այդպիսի ցուցանիշները հիմք չեն տալիս սննդի արդյունաբերությունը Շիրակի տնտեսական շրջանի համար մասնագիտական ճյուղ համարել։

Շիրակի տնտեսական շրջանի տերիտորիայի բաշխումը
ըստ վարչական շրջանների, հողահանդակների ու բարձրության գոտիների

Բարձրության գոտիներ մետրերով՝ ծովի մակարդակից հաշված / Վարչական շրջաններ ու հողահանդակներ	800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր		Ընդամենը	
	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ախուրյանի շրջան												
Վարելահողեր	—	—	11000	65,0	16300	49,0	2110	20,0	—	—	29410	48,0
Բազմամյա տնկարկներ	—	—	260	1,5	200	0,6	—	—	—	—	460	0,7
Խոտհարքներ	—	—	512	3,0	1010	3,0	—	—	—	—	1522	2,3
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	4594	27,0	15960	47,4	8690	80,0	—	—	29244	48,0
Անտառներ	—	—	624	3,5	—	—	—	—	—	—	624	1,0
Ընդամենը	—	—	16990	100,0	33470	100,0	10800	100,0	—	—	61260	100,0
Ամասիայի շրջան												
Վարելահողեր	—	—	—	—	6000	36,1	7800	21,6	—	—	13800	22,5
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	14	0,0	—	—	—	—	14	0,0
Խոտհարքներ	—	—	—	—	4113	24,6	5716	15,8	—	—	9829	16,0
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	6280	37,5	22745*	62,6	8080	100,0	37105	61,0
Անտառներ	—	—	—	—	298	1,8	—	—	—	—	298	0,5
Ընդամենը	—	—	—	—	16705	100,0	36261*	100,0	8080	100,0	61046*	100,0
Անիի շրջան												
Վարելահողեր	—	—	6340	44,5	11000	42,6	900	33,5	—	—	18240	42,5
Բազմամյա տնկարկներ	—	—	7	0,2	—	—	—	—	—	—	7	0,0
Խոտհարքներ	—	—	—	—	199	0,4	—	—	—	—	199	0,5
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	7866	55,3	14810	57,0	1780	66,5	—	—	24456	57,0
Անտառներ	—	—	8	—	—	—	—	—	—	—	8	0,0
Ընդամենը	—	—	14221	100,0	26009	100,0	2680	100,0	—	—	42910	100,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Արթիկի շրջան												
Վարելահողեր	—	—	—	—	11000	57,6	5770	41,0	—	—	16770	34,0
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	65	0,3	—	—	—	—	65	0,1
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	100	0,7	4	0,0	104	0,2
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	7853	41,0	8215	58,3	16350	100,0	32418	65,0
Անտառներ	—	—	—	—	224	1,1	—	—	—	—	224	0,7
Ընդամենը	—	—	—	—	19142	100,0	14085	100,0	16354	100,0	49581	100,0
Թալինի շրջան												
Վարելահողեր	—	—	4200	6,8	14760	39,8	3540	28,7	—	—	22500	17,3
Բազմամյա տնկարկներ	200	3,0	3964	6,3	100	0,2	—	—	—	—	4264	3,2
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	458	3,7	50	0,5	508	0,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	6000	97,0	54087	86,6	22140	60,0	8400	67,6	10650	99,5	101277	79,0
Անտառներ	—	—	211	0,2	—	—	—	—	—	—	211	0,1
Ընդամենը	6200	100,0	62462	100,0	37000	100,0	12398	100,0	10700	100,0	128760	100,0
Դուկասյանի շրջան												
Վարելահողեր	—	—	—	—	3300	39,4	11050	31,2	—	—	14350	26,4
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	9	0,1	—	—	—	—	9	0,0
Խոտհարքներ	—	—	—	—	2132	25,0	3110	8,8	—	—	5242	9,2
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	3020	35,5	21178	60,0	10631	100,0	34829	64,4
Անտառներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ընդամենը	—	—	—	—	8461	100,0	35338	100,0	10631	100,0	54430	100,0
Շիրակի տնտեսական շրջան												
Վարելահողեր	—	—	21540	23,0	62360	44,0	31170	28,0	—	—	115070	29,0
Բազմամյա տնկարկներ	200	3,0	4231	4,5	388	0,2	—	—	—	—	4819	1,1
Խոտհարքներ	—	—	512	0,4	7454	5,3	9384	8,4	54	0,1	17404	4,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	6000	97,0	66547	72,0	70063	50,0	71008*	63,6	45711	99,9	259329*	65,4
Անտառներ	—	—	843	0,1	522	0,5	—	—	—	—	1365	0,1
Ընդամենը	6200	100,0	93673	100,0	140787	100,0	111562*	100,0	45765	100,0	397987*	100,0

* *Այդ թվում Արփի լճի մակերեսը՝ 2 200 հեկտար։*

տային դիրքը, քաղաքի և գյուղական հարևան շրջանների աշխատանքային ռեսուրսները, քաղաքի ընդարձակման համար բարենպաստ ռելիեֆի առկայությունը: Սրանք ազդակներ են, որոնք սոցիալիստական պլանային տնտեսավարության պայմաններում կարող են թուլացնել քաղաքի զարգացումն արգելակող գործոնները (որոնք, ի միջի այլոց, բավականին ուժեղ են) և վերջին հաշվով ապահովել Լենինականի նշանակության հետագա մեծացումը Շիրակի շրջանի համար:

Վերջին տարիներս Շիրակի տերիտորիայի մեծ մասում փոքր ու միջին մեծության արդյունաբերական կետերի ու կենտրոնների մի ամբողջ ցանց է ստեղծվել: Նրանցում զարգանում է շինանյութերի, մեքենաշինական ու յուղապանրագործական արդյունաբերությունը: Նոր կենտրոններից խոշորագույնը Արթիկ քաղաքն է (ավելի քան 11 հազար բնակիչ)՝ Շիրակի տնտեսական շրջանի երկրորդ կենտրոնը: Տուֆի արդյունահանումից և արհեստական տուֆաբլոկների արտադրությունից բացի, որոնք քաղաքի արդյունաբերության գլխավոր ճյուղերն են կազմում, այստեղ ստեղծվել են նաև մեքենաշինական, տեքստիլ-տրիկոտաժեղենի ու կարի արտադրություններ:

Շրջանային կամ հանրապետական նշանակության արդյունաբերական կետերի են վերածվում Մարալիկը (մեքենաշինություն), Անիպեմզան (պեմզայի, տուֆի, բազալտի արդյունահանում), Արագածը (պեռլիտի արդյունահանում և վերամշակում), Ջաջուռը (կրի արտադրություն):

Շիրակի տնտեսության տերիտորիալ կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ կարելի է առանձնացնել երեք ենթաշրջան՝ Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային:

1. Հյուսիսային ենթաշրջանը (Աշոցք) ընդգրկում է Ախուրյան գետի ավազանի վերին մասը՝ Ամասիայի ու Ղուկասյանի վարչական շրջանները: Նա ոչ միայն Շիրակում, այլև ամբողջ հանրապետությունում բացառիկ վիճակում է գտնվում. այստեղ բացակայում են ժամանակակից շատ թե քիչ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները: Այդպիսիք չեն նախատեսվում նաև մոտ ապագայում, որն, իհարկե, բխում է արդյունաբերության զարգացման համար բարենպաստ օբյեկտիվ պայմանների բացակայությունից: Բայց հաշվի առնելով տեղի բնակչության համար բարձր զբաղվածություն ապահովելու, նրան ինդուստրիալ արտադրության ոլորտի մեջ ներգրավելու և շրջանի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը վերացնելու անհրաժեշտությունը, հարկ է գտնե շրջկենտրոններում հիմնել ոչ մեծ ինքնուրույն արդյունաբերական ձեռնարկություններ կամ Լենինականի տեքստիլ ու մեքենաշինական գործարանների մասնաճյուղեր:

Այսօրվա վիճակով Հյուսիսային ենթաշրջանի տնտեսությունը շատ պարզունակ է՝ կաթնատու անասնաբուծություն, պանրագործություն և որոշ չափով էլ հացահատիկի մշակություն։

2. Կենտրոնական ենթաշրջանը (տարածական առումով համընկնում է Ախուրյանի վարչական շրջանի հետ) աչքի է ընկնում նրանով, որ այստեղ կենտրոնացված են ամբողջ Շիրակի հարթավայրային և ոռոգման ջրով ապահովված լավագույն վարելահողերը, շաքարի ճակնդեղի ամբողջ արտադրությունը և ցորենի արտադրության զգալի մասը։ Ենթաշրջանի գյուղատնտեսության վրա տարեցտարի ուժեղանում է Լենինականի ու նրա արդյունաբերության ազդեցությունը, գնալով ավելի ակնհայտ է դառնում նրա մերձքաղաքային բնույթը (բանջարաբուծություն, կաթնատու անասնապահություն)։

3. Հարավային ենթաշրջանի (Արթիկի, Անիի, Թալինի վարչական շրջանները) բնորոշ առանձնահատկությունը տերիտորիալ տեսակետից ապակենտրոնացված, արագ զարգացող արդյունաբերությունը և ոչ ինտենսիվ գյուղատնտեսությունն են։ Վերջինս մասնագիտանում է անասնաբուծության (հիմնականում մսա-բրդատու ուղղության) և հացահատիկի արտադրության մեջ։ Ենթաշրջանի տնտեսական զարգացման հեռանկարները կապվում են հարուստ ու բազմազան հանքային շինանյութերի արդյունահանման հետագա ընդլայնման և ընդարձակ հողատարածությունների ոռոգման հետ, որը կարող է ապահովվել Ախուրյանի ջրամբարի կառուցման և Արագածի ջրային ռեսուրսների օգտագործման միջոցով։

Մեծամերեզյան տնտեսական շրջանը ֆիզիկա-աշխարհագրական տեսակետից համընկնում է Դեբեդ գետի ավազանի հետ։ Նրա մեջ միավորված են Կալինինոյի, Ստեփանավանի, Սպիտակի, Գուգարքի, Ալավերդու, Նոյեմբերյանի վարչական շրջաններն ու Կիրովական, Ալավերդի հանրապետական ենթակայության քաղաքները։

Տնտեսական կարողությամբ ու ինդուստրիալ զարգացման մակարդակով նա հանրապետությունում միջին տեղ է գրավում՝ մի քանի անգամ ետ մնալով Արարատյանից, աննշան չափով զիջելով Շիրակին, մեծ չափով գերազանցում է Սևան—Աղստևի ու Սյունիքի տնտեսական շրջաններին։ Նրա տերիտորիան կազմում է 4,37 հազ. կմ² (հանրապետության 14,7%-ը), բնակչությունը՝ մոտ 300 հազար մարդ (հանրապետության 13,6%-ը)։ Հայկական ՍՍՀ արտադրական կոմպլեքսում նրա տեղը բնութագրող ցուցանիշներն են՝ արդյունաբերական-արտադրական անձնակազմի ընդհանուր թվի ավելի քան 11%-ը, արդյունաբերության համախառն արտադրանքի նույնպես 11%-ը, կերային հան-

դակների ընդհանուր տարածության շուրջ 20%-ը, պտղատու այգիների մինչև 25%-ը։

Արտադրողական ուժերի զարգացման բնական պայմանների կոմպլեքսում հարկ է նշել հետևյալ կարևոր առանձնահատկությունները։ Առաջինը մակերևույթի խիստ մեծ մասնատվածությունն ու բարդ լեռնագրությունն է, որը խոր կնիք է թողնում հատկապես հաղորդակցության ճանապարհների և բնակչության տարաբնակեցման վրա։ Բարդ լեռնագրության ընդհանուր ֆոնի վրա աչքի են ընկնում լոռվա հարթությունը և մի քանի ոչ ընդարձակ, համեմատաբար տափարակ հովիտներ ու սարահարթեր, որոնք էլ հանդիսանում են բնակչության ու մասնավորապես գյուղատնտեսական արտադրության կենտրոնացման վայրեր։

Շրջանի համար բնորոշ է հողակլիմայական պայմանների մեծ բազմազանությունը, կապված մասնավորապես տերիտորիայի հիպսոմետրիկ մեծ տարբերությունների հետ։ Ցածրավայրային գոտում արհեստական ոռոգման դեպքում բարենպաստ պայմաններ կան խաղողագործության, հարավային պտղաբուծության, ինչպես և մերձարևադարձային որոշ կուլտուրաների մշակության համար։ Նախալեռնային գոտին հանդես է գալիս իբրև հացահատիկի, շաքարի ճակնդեղի ու բարեխառն կլիմայական պայմաններին հատուկ պտղաբուծության շրջան։ Այստեղ նույնպես արհեստական ոռոգման կարիք է զգացվում։ Հաջորդ՝ լեռնային գոտում լայն տարածում ունեն խոտհարքներն ու ամառային արոտները։ Շրջանի տերիտորիայի ուղղաձիգ բաշխվածության ու տնտեսական օգտագործման հիմնական գծերը երևում են № 22 աղյուսակից։

Մերձգեղեզյան շրջանի երրորդ առանձնահատկությունը խոշոր ինդուստրիայի զարգացման այն բարենպաստ պայմաններն են, որոնք ստեղծվել են մետաղային ու ոչ-մետաղային բազմապիսի օգտակար հանածոների առկայության շնորհիվ։

Վերջապես, չորրորդ առանձնահատկությունը, որը նույնպես արտադրողական ուժերի զարգացումը խթանում է, դա Դեբեդ գետի ջրային ու հիդրոէներգետիկական համեմատաբար հարուստ ռեսուրսներն են։

Շրջանի տնտեսության ավանդական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, իր տարբերություն Շիրակի, զարգացման ավելի բազմազան պայմաններ ունի։ Վերջին հանգամանքով էլ հենց բացատրվում է նրա բազմաճյուղությունն ու բարդությունը, որով նա ավելի շատ Արարատյան շրջանի գյուղատնտեսությանն է նմանվում։ Այստեղ առաջատար դեր են խաղում կաթնա-մսատու անասնաբուծությունը և պտղաբուծությունը։ Շրջանը կարևոր տեղ է բռնում նաև կարտոֆիլի ու շաքարի ճակնդեղի արտադրության գծով։

Գյուղատնտեսության խոշոր դերի մասին է խոսում այն, որ նրա մեջ զբաղված է շրջանի ամբողջ բնակչության մոտավորապես կեսը։ Դա ավելի բարձր է, քան հանրապետության միջին ցուցանիշը։

Այնուհանդերձ, Մերձդեբեդյան շրջանի արտադրական դեմքը որոշող ճյուղը արդյունաբերությունն է, որի զարգացման համար առկա են թե՛ տնտեսական, թե՛ բնական բարենպաստ պայմաններ։ Շրջանը Հայկական ՍՍՀ տերիտորիայի մեծ մասի և Անդրկովկասի նկատմամբ տնտեսա-աշխարհագրական հարմարավետ դիրք ունի՝ նրա միջով են անցնում տնտեսական մեծ կարևորություն ունեցող երկաթուղին և մի քանի ավտոմոբիլային ճանապարհներ, նրան կից տերիտորիաները մեծ մասամբ աչքի են ընկնում տնտեսության զարգացման բարձր մակարդակով։ Շրջանը համեմատաբար հարուստ է աշխատանքային ռեսուրսներով։

Եթե ընդերքի հարստությունների (պղինձ, հրակայուն կավեր) օգտագործման հետևանքով ձևավորվեց ու հաջողությամբ զարգանում է Ալավերդու արդյունաբերական հանգույցը, ապա Դեբեդ գետի հիդրոէներգետիկական ռեսուրսների թեկուզ և մասնակի յուրացումը՝ Զորագետի հիդրոէլեկտրակայանի կառուցումը պայմանավորեց քիմիական արդյունաբերության ծնունդը Կիրովականում։ Սրա հիման վրա պատմական կարճ ժամանակամիջոցում Կիրովականը վերածվեց Հանրապետության երրորդ արդյունաբերական կենտրոնի և Դեբեդի տնտեսական շրջանի արտադրական հիմնական կորիզի։

Շրջանի խոշոր արդյունաբերական կենտրոնները՝ Կիրովականը, Ալավերդին, Ստեփանավանը, Սպիտակը երևան գալով ու զարգանալով քննարկված բնական ու տնտեսական նախադրյալների շնորհիվ, իրենք ներկայումս արդյունաբերական նոր ձեռնարկություններ ձգող լուրջ գործոնի են վերածվել։ Այդ և մնացած արդյունաբերական կենտրոններն ու կետերն էլ ձևավորում են Մերձդեբեդյան շրջանի տնտեսական կմախքը։ Հատկանշական է, որ նրանց գերակշիռ մեծամասնությունը ընկած է երկաթուղագծի և նրան զուգահեռ անցնող ավտոխճուղու վրա, որոնք շրջանի տնտեսական առանցքի դեր են կատարում։

Տերիտորիայի կազմակերպող կորիզի դեր կատարում են Կիրովականի ու Ալավերդու արդյունաբերական հանգույցները, որտեղ կենտրոնացված են շրջանի բնակչության ավելի քան $^1/_3$-ը և արդյունաբերական համախառն արտադրանքի շուրջ 90%-ը։ Սակայն նրանցից յուրաքանչյուրի նշանակությունը շրջանի ձևավորման համար տարբեր է։ Չնայած որ Ալավերդին (Շամլուղի ու Ախթալայի հետ միասին) իրև արդյունաբերական կենտրոն ավելի վաղ է հանդես եկել, նրա շրջանաստեղծ ֆունկցիաները ավելի թույլ են

Մեր ձեղքեղյան տնտեսական շրջանի տերիտորիայի բաշխումը ըստ վարչական շրջանների, հողահանդակների ու բարձրության գոտիների

Բարձրության գոտիներ մետրերով՝ ծովի մակարդակից հաշված / Վարչական շրջաններ ու հողահանդակներ	360		500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր		Ընդամենը	
	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ալավերդու շրջան																
Վարելահողեր	—	—	1200	14,1	800	7,2	4700	10,1	1400	3,9	790	8,9	—	—	8890	7,9
Բազմամյա տնկարկներ	—	—	850	10,0	500	4,5	500	1,7	259	0,7	—	—	—	—	2109	1,9
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	2517	5,6	4080	11,3	—	—	—	—	6597	5,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	4220	49,6	3200	28,8	10058	20,6	13770	38,0	5801	65,5	1080	100,0	38129	34,0
Անտառներ	—	—	2240	26,3	6600	59,5	28602	62,0	16700	46,1	2265	25,6	—	—	56407	50,3
Ընդամենը	—	—	8510	100,0	11100	100,0	46377	100,0	36209	100,0	8856	100,0	1080	100,0	112132	100,0
Գուգարքի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	2600	17,8	2420	8,0	—	—	—	—	5020	6,3
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	846	5,8	340	1,1	—	—	—	—	1186	1,5
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	3893	13,0	4480	17,7	1100	11,4	9473	11,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	4973	34,0	11180	37,9	16420	65,0	7180	75,0	39753	50,0
Անտառներ	—	—	—	—	—	—	6205	42,4	11820	40,0	4429	17,3	1330	13,6	23784	30,3
Ընդամենը	—	—	—	—	—	—	14624	100,0	29653	100,0	25329	100,0	9610	100,0	79216	100,0
Կալինինոյի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	3280	32,0	10140	23,6	—	—	—	—	13420	19,5
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	50	0,5	52	0,1	—	—	—	—	102	0,1
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	3433	33,4	11640	27,2	—	—	—	—	15073	22,0
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	3520	34,1	20334	47,5	9030	100,0	7040	100,0	39924	58,0
Անտառներ	—	—	—	—	—	—	—	—	438	1,6	—	—	—	—	438	0,4
Ընդամենը	—	—	—	—	—	—	10283	100,0	42604	100,0	9030	100,0	7040	100,0	68957	100,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Նոյեմբերյանի շրջան																
Վարելահողեր	1000	65,3	3400	21,9	2900	19,6	700	4,3	—	—	—	—	—	—	8000	15,0
Բազմամյա տնկարկներ	200	13,1	3017	19,3	200	1,4	—	—	—	—	—	—	—	—	3417	6,3
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1008	6,2	310	5,4	—	—	—	—	1318	2,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	330	21,6	7700	49,5	3800	25,7	2700	16,7	2620	46,0	—	—	—	—	17150	31,9
Անտառներ	—	—	1400	9,3	7960	53,3	11760	72,8	2790	48,6	—	—	—	—	23910	44,4
Ընդամենը	1530	100,0	15517	100,0	14860	100,0	16168	100,0	5720	100,0	—	—	—	—	53795	100,0
Սպիտակի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	600	50,0	12020	37,4	3000	13,0	—	—	15620	26,2
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	—	—	670	2,1	—	—	—	—	670	1,1
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	500	1,5	700	3,0	—	—	1200	2,0
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	600	50,0	18160	56,5	19060	83,0	3283	100,0	41103	69,0
Անտառներ	—	—	—	—	—	—	—	—	724	2,5	300	1,0	—	—	1024	1,7
Ընդամենը	—	—	—	—	—	—	1200	100,0	32074	100,0	23060	100,0	3283	100,0	59617	100,0
Ստեփանավանի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	8850	44,4	670	2,7	400	2,6	—	—	9920	15,5
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	444	2,2	100	0,4	—	—	—	—	544	0,9
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1809	9,0	4430	18,7	1250	8,3	—	—	7489	11,6
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	8400	42,0	14260	60,0	13112	86,5	4790	100,0	40562	64,0
Անտառներ	—	—	—	—	—	—	476	2,4	4260	18,2	400	2,6	—	—	5136	3,0
Ընդամենը	—	—	—	—	—	—	19979	100,0	23720	100,0	15162	100,0	4790	100,0	63651	100,0
Մեծաղբեղյան տնտեսական շրջան																
Վարելահողեր	1000	65,3	4600	19,2	3700	14,3	20730	19,1	26650	15,6	4190	5,1	—	—	60870	13,9
Բազմամյա տնկարկներ	200	13,1	3867	16,1	700	2,7	1840	1,7	1421	0,8	—	—	—	—	8028	1,8
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	8767	8,1	24853	14,6	6430	7,9	1100	4,2	41150	9,4
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	330	21,6	11920	49,6	7000	27,0	30251	28,0	80324	47,3	63433	78,0	23373	90,4	216621	49,5
Անտառներ	—	—	3640	15,1	14560	56,0	47043	43,1	36732	21,7	7394	9,0	1330	5,4	110699	25,4
Ընդամենը	1530	100,0	24027	100,0	25960	100,0	108631	100,0	169980	100,0	81437	100,0	25803	100,0	437368	100,0

զարգացած։ Դա բացատրվում է լեռնահանքային ու մետալուրգիական արդյունաբերության բնույթով (նրանք խիստ տեղայնացված են և ընդարձակ տերիտորիաներ չեն ընդգրկում իրենց արտադրական ոլորտի մեջ) և այն հանգամանքով, որ Ալավերդին մինչև այժմ էլ զուտ արդյունաբերական կենտրոն է, և շրջակա տերիտորիաների հետ սերտ կապեր ստեղծող այլ, մասնավորապես սպասարկման, ֆունկցիաները սահմանափակ զարգացում են ստացել։

Այլ է Կիրովականի վիճակը։ Նրա արդյունաբերությունը հիմնվել է շատ ավելի ուշ՝ 30-ական թվականների կեսերին միայն։ Բայց զարգացման խիստ բարձր տեմպերի հետևանքով Կիրովականը շուտով առաջ անցավ Ալավերդուց՝ վերածվելով Հայկական ՍՍՀ հյուսիսային մասի խոշորագույն արդյունաբերական կենտրոնի։ Հետպատերազմյան շրջանում ստեղծվեցին նոր արտադրություններ, հարստացավ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը։ Եթե ամբողջ Հանրապետության քաղաքային բնակչությունը 1926 թ. համեմատությամբ յոթնապատկվել է, ապա Կիրովականի բնակչության թիվը աճել է 9 անգամ։ Արդյունաբերական ֆունկցիայից բացի, հաջողությամբ զարգանում են խոշոր տնտեսական-կուլտուրական կենտրոնին հատուկ այլ բնույթի, այդ թվում և շրջանաստեղծ ֆունկցիաները։

Տնտեսական շրջանի համար հատկանշական է նաև այն, որ գլխավոր մասնագիտացման ճյուղերն ունեն անդրկովկասյան ու միութենական նշանակություն։ Այնտեղ կենտրոնացված է Հայկական ՍՍՀ ու Անդրկովկասի ամբողջ պղնձաձուլությունը։ Այնտեղ զարգանում է նաև միութենական նշանակության քիմիական արդյունաբերություն, որը մասնագիտանում է ացետատային մետաքսի, կալցիումի կարբիդի, ծծմբաթթվի, պղնձարջասպի, ազոտային պարարտանյութերի, պլաստմասսաների, արհեստական տեխնիկական քարեթի թողարկման մեջ։ Արագ տեմպերով զարգանում են ճշգրիտ հաստոցաշինությունը, ավտոմատացման միջոցների ու սարքերի, հրակայուն աղյուսի արտադրությունը։ Սրանց արտադրանքի հիմնական մասը նույնպես շրջանի սահմաններից դուրս է ուղարկվում։ Հանրապետական նշանակություն ունի սննդամթերքների (շաքարի, պահածոների, գինու, պանրի, յուղի) ու տեքստիլ-տրիկոտաժեղենի որոշ տեսակների արտադրությունը։

Մասնագիտացման այս ճյուղերն էլ կազմում են Մերձդեբեդյան շրջանի արդյունաբերության, հետևապես և ամբողջ տնտեսության հիմքը։ Ըստ որում արդյունաբերության համախառն արտադրանքի մոտավորապես կեսը բաժին է ընկնում գունավոր մետալուրգիային ու քիմիական արդյունաբերությանը։

Մոտ ապագայում Մերձդեբեդյան շրջանի տնտեսության ո՛չ ճյուղային և ո՛չ էլ տերիտորիալ կառուցվածքում սկզբունքային, որակական փոփոխու-

բյուններ չեն սպասվում: Հիմնական տեղաշարժերը քանակական բնույթ են ունենալու: Ջարգացումը առաջին հերթին ընթանալու է արդեն ձևավորված մասնագիտացման ճյուղերի հետագա ամրապնդման, ընդլայնման ու կատարելագործման ուղղությամբ: Ստեղծվելիք նոր արտադրությունները (հիդրոէլեկտրակայանների կառուցում, որոշ ոչ-մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի շահագործում) շրջանի տնտեսական վիճակի մեջ արմատական փոփոխություններ մտցնել չեն կարող:

Մերձդեբեդյան շրջանի սպեցիֆիկ ժողովրդատնտեսական պրոբլեմներից առաջնակարգ հետաքրքրություն են ներկայացնում արդյունաբերության առաջատար ճյուղի՝ գունավոր մետալուրգիայի հումքային բազայի ընդլայնումը և տեղական հիդրոէներգետիկական ռեսուրսների յուրացման միջոցով շրջանի էլեկտրաէներգետիկական բազայի ուժեղացումը:

Հայտնի է, որ Դեբեդը հանրապետության հիդրոէներգետիկական ամենամեծ պոտենցիալ ունեցող գետն է: Նրա ընդհանուր հզորությունը կազմում է մոտավորապես 400 հազ. կվտ՝ տարեկան շուրջ 1,2 մլրդ. կվտ–ժ արտադրողականությամբ: Ներկայումս օգտագործվում է այդ հզորության $^{1}/_{10}$-ից էլ պակաս մասը:

Դեբեդի ավազանի ջրային ռեսուրսների կոմպլեքսային օգտագործումը և Դեբեդի կասկադի մյուս աստիճանների կառուցման միջոցով գետի էներգետիկական կարողությունների լրիվ յուրացումը լուրջ օժանդակություն կլինի ոչ միայն իր՝ Մերձդեբեդյան տնտեսական շրջանի, այլև ամբողջ Հանրապետության արտադրողական ուժերի հետագա զարգացմանը: Շրջանի էլեկտրամատակարարումը բարելավելուց բացի, նա կխթանի նոր հողատարածություններ յուրացմանը, որոնք նախատեսվում են գերազանցապես խաղողի ու պտղատու այգիների տակ դնել:

Արտադրության օբյեկտիվ հիմքի՝ բնական պայմանների խիստ ընդգծված բազմազանությունը դժվարացնում է տնտեսական միատարրություն ունեցող տերիտորիաների անջատումը: Այնուամենայնիվ, բավարար հիմք կա՝ Մերձդեբեդյան շրջանը ևս երեք ենթաշրջանների բաժանելու համար:

1. Լոռու ենթաշրջանն ընդգրկում է Կալինինոյի ու Ստեփանավանի վարչական շրջանները կամ, այլ կերպ ասած, Ջորագետի ավազանը, որի հատակային ընդարձակ մասը հարթավայրային տարածություն է՝ ընկած 1000-ից 1500 մ բացարձակ բարձրության վրա: Լոռու դաշտում, Հանրապետության հիպսոմետրիկ այս նիշերն ունեցող տերիտորիաների համեմատությամբ, տեղումները հասնում են առավելագույնին՝ տարեկան 600—800 մմ: Այստեղ են գտնվում Հանրապետության ամենահարուստ խոտհարքներն ու արոտավայ-

բերը։ Օրինաչափ է, որ այսպիսի պայմաններում տնտեսության մասնագիտացման ճյուղերի մեջ առաջնությունը պատկանում է կաթնային ուղղության ցեղային անասնաբուծությանը, որի հիման վրա այստեղ լայն զարգացում է ստացել այսպես կոչված խոշոր (շվեյցարական) պանիրների արտադրությունը։ Ենթաշրջանից արտահանվում են նաև ցեղային անասուններ։ Գյուղատնտեսության երկրորդ ապրանքային ճյուղը կարտոֆիլաբուծությունն է։ Հացահատիկային տնտեսությունը տեղական նշանակություն ունի։

Ենթաշրջանի արդյունաբերական զարգացման մակարդակը համեմատաբար ցածր է։ Ուշադրություն է գրավում այն, որ նրա ձեռնարկությունները ապակենտրոնացված տեղաբաշխում ունեն։ Ստեփանավանից բացի, արդյունաբերական փոքր ձեռնարկություններ կան Շահնազարում (գորգագործություն), Կալինինոյում, Ուռուտում, Լոռպլեմտոփխոզ ավանում և էլի մի քանի գյուղերում (պանրագործարաններ ու շինանյութերի արտադրության ձեռնարկություններ)։ Ենթաշրջանի միակ քաղաքի՝ Ստեփանավանի (12 հազար բնակիչ) արդյունաբերությունը ներկայացված է տեքստիլ, սննդի, մեքենաշինական ու փայտամշակման ճյուղերի ձեռնարկություններով։

Ենթաշրջանի տնտեսական կյանքում զգալի փոփոխություն կմտցնի Ստեփանավանի խոշոր հիդրոէլեկտրակայանի կառուցումը։

2. **Փամբակի ենթաշրջանը** ընկած է համանուն գետավազանում՝ ընդգրկելով Սպիտակի ու Գուգարքի վարչական շրջանները ու Կիրովական քաղաքը։ Ենթաշրջանի տնտեսության զարգացման որոշիչ գործոնը Կիրովականն է։ Նրանից ոչ հեռու զարգանում է ենթաշրջանի երկրորդ արդյունաբերական կենտրոն Սպիտակ քաղաքը (11 հազար բնակիչ), որը մասնագիտանում է շաքարի ճակնդեղի վերամշակման (շաքարավազի ու լիմոնաթթվի թողարկում) և մեքենաշինության (օդի կոնդիցիոներների, վերելակների) մեջ։

Գյուղատնտեսության մեջ ինքնուրույն նշանակություն ունեն ճակնդեղագործությունը, հնդավոր պաղաբուծությունն ու ցորենի մշակությունը։ Սակայն արդյունաբերությունը, հանձին Կիրովականի հանգույցի, վաղուց արդեն վճռական դիրք է գրավում ենթաշրջանի էկոնոմիկայում և սկսում է կանխորոշել գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը նույնպես։ Գնալով ավելի որոշակի է դառնում, որ Փամբակի ենթաշրջանում մոտ ապագայում արդեն ստեղծվելու է հանրապետության՝ իր հզորությամբ երրորդ մերձքաղաքային գյուղատնտեսությունը։

3. **Ստորինդերեղյան ենթաշրջանի** (Ալավերդու, Նոյեմբերյանի վարչական շրջաններն ու Ալավերդի քաղաքը) համար նույնպես բնորոշը արդյունաբերական արտադրանքի խիստ ընդգծված գերակշռությունն է գյուղա-

տնտեսության նկատմամբ։ Սակայն, ի տարբերություն նախորդ ենթաշրջանի, այստեղ վճռական դեր են խաղում լեռնահանքային արդյունաբերությունը և նրա վրա հիմնված պղնձի, ծծմբաթթվի ու հրակայուն նյութերի արտադրությունը։ Մասնագիտացման մյուս ճյուղը պահածոների ու գինեգործական արդյունաբերությունն է։ Ենթաշրջանի բնակչության և սննդի արդյունաբերության պահանջմունքներին համապատասխան, իբրև գյուղատնտեսության առաջատար ճյուղեր զարգանում են անասնաբուծությունը, պտղաբուծությունը, խաղողագործությունն ու հացահատիկային տնտեսությունը։

Սևան-Աղստևի տնտեսական շրջան (տարածությունը 7,14 հազ. կմ², բնակչությունը՝ 334 հազար մարդ)։ Այստեղ ընդգրկված են Հրազդանի, Սևանի, Իջևանի, Շամշադինի, Կրասնոսելսկի, Կամոյի, Մարտունու, Բասարգեչարի վարչական շրջանները և Դիլիջան, Կամո, Սևան ու Հրազդան հանրապետական ենթակայության քաղաքները։ Նա հանրապետության ամենաարդյունաբերական և բնական պայմանների տեսակետից ամենաբազմազան շրջանն է։ Տնտեսության մեջ տիրապետող ճյուղը գյուղատնտեսությունն է։ Բնակչության ընդհանուր թվի 72%-ը բնակվում է գյուղական վայրերում։ Արդյունաբերության զարգացման մակարդակով շրջանը հանրապետությունում վերջին տեղն է գրավում։

Սևան-Աղստևի տնտեսական շրջանի տեղը Հայկական ՍՍՀ-ում բնութագրվում է հետևյալ թվերով. նրան բաժին է ընկնում հանրապետության տերիտորիայի 27%-ը (առանց Սևանա լճի մակերեսի՝ 23%) և բնակչության թվի 15%-ը։ Այստեղ կենտրոնացված է ցանքատարածությունների ավելի քան 1/4-ը, արոտների ու խոտհարքների տարածության նույնպես 1/4-ը։ Շրջանը այդպիսի տեսակարար կշիռ ունի նաև անասունների գլխաքանակի գծով։ Բայց ըստ արդյունաբերական-արտադրական անձնակազմի թվի նրա բաժինը չի հասնում նույնիսկ 5%-ի, իսկ ըստ արդյունաբերության համախառն արտադրանքի՝ 2,5%։ Այս մակարդակի վրա է գտնվում նաև շրջանի բնակչության մեջ արդյունաբերական աշխատողների տեսակարար կշիռը բնութագրող ցուցանիշը։

Շրջանի տնտեսության համար արդյունաբերության նշանակությունը դնահատող այս թվերը ավելի կնվազեն, եթե անտեսենք նրա ծայրամասում գտնվող և նրա հետ օրգանապես չկապված Լուսավան կարևոր արդյունաբերական կենտրոնը[1]։

[1] Լուսավանը իբրև արդյունաբերական արագ զարգացող կենտրոն (հաստոցաշինություն, գործիքաշինություն, երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրություն, քիմիական արդյու-

Արդյունաբերության զարգացման բնագավառում Սևան-Աղստև շրջանի ևս մնալու օբյեկտիվ պատճառների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մինչև վերջին ժամանակներս երկաթուղիների լրիվ բացակայությունը, հանրապետության կենսական կենտրոններից հեռու գտնվելը և, վերջապես, նրա ընդերքի ընդհանուր առմամբ թույլ ուսումնասիրվածությունը։ Վերջին տարիներս Հրազդանի շրջանում և Սևանա լճի ավազանի արևելյան մասում մի շարք կարևոր հանքավայրեր հայտնաբերվեցին, բայց տնտեսական շրջանի հյուսիսային կեսը երկրաբանական իմաստով դեռևս անբավարար է ուսումնասիրված։

Հայկական ՍՍՀ-ում տեղի են ունենում պրոցեսներ, որոնք արմատական փոփոխություններ են մտցնում Սևան—Աղստևի շրջանի տնտեսական զարգացման պայմանների մեջ։ Նախկինում շրջանի ևս մնալու վերը նշված գլխավոր պատճառներից երկուսը՝ երկաթուղիների բացակայությունը և ընդերքի անբավարար ուսումնասիրվածությունը, ներկայումս աստիճանաբար վերանում են։ Ինչ վերաբերում է երրորդ պատճառին, ապա բացի այն, որ Երևանի արդյունաբերական հանգույցը մեծացնելով իր հզորությունն ու ընդարձակելով սահմանները, ավելի էական ազդեցություն է թողնում շրջանի վրա, ինքնուրույն արդյունաբերական կետրոններ են հիմնադրվում իր՝ շրջանի ներսում (Հրազդան—Սևան արդյունաբերական հանգույցը)։

Վերջերս հայտնաբերված ու հետախուզված օգտակար հանածոներից արդյունաբերական մեծ նշանակություն ունեն նեֆելինային սիենիտները, երկաթաքարը, ոսկին, ուլտրահիմքային հրակայուն ապառները, բենտոնիտային կավերը։ Այդ հանքատեսակները արդյունահանող ու վերամշակող հանրապետական ու միութենական նշանակության ձեռնարկություններ արդեն կառուցվում կամ նախագծվում են։

Շրջանի հանքային հարստությունների յուրացման աշխատանքներին խթանում է Երևան—Հրազդան—Սևան երկաթուղագիծը։ Նախագծվում է Սևանից սկսած շարունակել այն երկու ճյուղով՝ մեկը Փամբակի լեռնաշղթայի լանջերով դեպի Աղստև գետի հովիտը ու Իջևան (որտեղ կմիանա ներկայումս կառուցվող Իջևան—Աղստաֆա գծին) և մյուսը՝ Սևանա լճի արևելյան ափերով՝ դեպի Շորժա, իսկ հետագայում էլ Բասարգեչար ու Զանգեզուր։

Այս բոլորը, ինչ խոսք, շրջանի տնտեսա-աշխարհագրական դիրքի ար-

նաբերություն) ամբողջությամբ հարում է Արարատյան տնտեսական շրջանին և ըստ էության Երևանի արդյունաբերական հանգույցի բաղկացուցիչ մասն է կազմում։

մատական փոփոխություններ են իրենց հետ բերում։ Իսկ վերջիններս էլ իրենց հերթին նոր թափ են հաղորդում արդյունաբերության զարգացմանը։ Դրա լավագույն օրինակ է հանդիսանում Հրազդան—Սևան արդյունաբերական հանգույցը, որն իր զարգացման տեմպերով հանրապետությունում առաջնակարգ տեղ է գրավում՝ վերածվելով Սևան—Աղստևի տնտեսական շրջանի հիմնական կազմակերպիչ կորիզի։ Այսօր արդեն նա տալիս է շրջանի արդյունաբերության համախառն արտադրանքի 1/3-ը, ունենալով արդյունաբերական հիմնական ֆոնդերի 3/4-ը։ Ընթացիկ հնգամյակի վերջում շինարարության պրոցեսում գտնվող ձեռնարկությունների ավարտումից հետո երկու ցուցանիշների գծով էլ նա բացարձակ գերակշիռ դիրք կգրավի։

Մի կողմից հանգույցի արդյունաբերության զարգացումը և մյուս կողմից երկաթուղային ցանցի ընդլայնումը, որը մասնավորապես այդ հանգույցը միացնելու է շրջանի ծայրամասերին, անհամեմատ մեծացնելու է նրա՝ իբրև տնտեսական կազմակերպիչ կենտրոնի դերը Սևան—Աղստևի տնտեսական շրջանում։

Այս իմաստով Սևան—Աղստևի շրջանի՝ որպես տնտեսական մեկ ամբողջության մասին, կարելի է խոսել նկատի ունենալով ոչ թե նրա ներկա վիճակը, այլ զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները։ Նա պատկանում է այն տնտեսական շրջանների թվին, որոնք թևակոխել են ձևավորման սկզբնական փուլը միայն։

Այսօրվա վիճակով շրջանի տնտեսական կորիզի՝ Հրազդան—Սևան հանգույցի սահմաններից դուրս գոյություն ունի համեմատաբար բազմապիսի, բայց հզորությամբ թույլ արդյունաբերություն, որը ներկայացված է արդյունահանող (ոսկու հանքաքարի, խրոմիտների, ագաթի ու մարմարացված կոնգլոմերատի ու այլ հանքային շինանյութերի), գյուղատնտեսական հումքի վերամշակման (յուղա-պանրագործություն, ծխախոտի ֆերմենտացիա, մրգի ու բանջարեղենի պահածոների արտադրություն), տեքստիլ-տրիկոտաժեղենի (այդ թվում գորգագործական), փայտամշակման ու մեքենաշինական արդյունաբերության ձեռնարկություններով։ Ըստ որում շրջանի արդյունաբերության որոշ ճյուղեր հանրապետությունում բավականին բարձր տեսակարար կշիռ ունեն։ Այսպես, շրջանը տալիս է հանրապետությունում արտադրվող գորգերի հիմնական մասը, ֆերմենտացված ծխախոտի 60%-ից ավելին, յուղա-պանրագործական և անտառային ու փայտամշակման արդյունաբերության արտադրանքի շուրջ 1/6-ը։

Հրազդան—Սևան հանգույցից դուրս գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները ցրված են շրջանի երկու տասնյակ բնակավայրերում, բոլոր

վարչական շրջաններում, բայց նրանք դեռևս նկատելի հետք չեն թողնում բնական պայմանների արտադրական օգտագործման մեջ։ Շրջանի համար բնորոշը դեռևս մնում է այն, որ բնական պայմանների ու ռեսուրսների յուրացման գործում վճռական դերը առայսօր պատկանում է գյուղատնտեսությանը, որը սակայն շրջանի տարբեր մասերում տարբեր բնույթ ունի (տերիտորիայի առանձնահատկությունների և նրա յուրացման բնույթի մասին ընդհանուր գաղափար կարող է տալ № 23 աղյուսակը)։

Գյուղատնտեսության մասնագիտացման գլխավոր, ամենաբարձր ապրանքայնություն ունեցող ճյուղը ծխախոտագործությունն է, որը բոլոր վարչական շրջաններում շատ թե քիչ հավասարապես է ցրված և տնտեսական շրջանի ամբողջ տերիտորիային դաշտավարական ընդհանուր մասնագիտացում է հաղորդում։ Այստեղ կենտրոնացված է հանրապետության ծխախոտի ցանքսերի մինչև 56%-ը։

Երկրորդ տեղը գրավում է կարտոֆիլաբուծությունը, որը նույնպես միասնական մասնագիտացման ճյուղ է հանդիսանում ամբողջ շրջանի համար։ Կարտոֆիլի ցանքատարածությունների գծով շրջանի տեսակարար կշիռը հանրապետությունում կազմում է շուրջ 40%։

Շրջանի գյուղատնտեսության մասնագիտացման և դարձյալ համատարած մյուս ճյուղը անասնաբուծությունն է։ Նա տալիս է հանրապետությունում արտադրվող բրդի ավելի քան $^1/_4$-ը, մսի շուրջ $^1/_4$-ը և կաթի ավելի քան $^1/_5$-ը։

Ամբողջ շրջանով մեկ տարածված հացահատիկային տնտեսությունը Սևանի ավազանի հարավային մասի համար միայն կարելի է մասնագիտացման ճյուղ համարել, չնայած որ հացահատիկի արտադրության գծով շրջանը երկրորդ տեղն է գրավում հանրապետությունում։

Զգալի է շրջանի տեսակարար կշիռը այգեգործության գծով (խաղողի այգիների 3%-ը և պտղատու այգիների 11%-ը)։ Բայց այդ ճյուղը բնորոշ չէ ամբողջ տերիտորիայի համար և կենտրոնացված է Աղստևի ավազանի ցածրադիր գոտում։

Մասնագիտացման ճյուղերի մեջ, վերջապես, պետք է հիշատակել կուրորտային տնտեսությունն ու տուրիզմը, որոնք նոր միայն հանրապետական նշանակություն են ձեռք բերում և զարգացման բարենպաստ պայմաններ ունեն։ Որոշակի նախադրյալներ կան, որպեսզի Սևանա լճի ավազանը և Աղստև ու Մարմարիկ գետերի հովիտները միութենական նշանակության տուրիստական ու կուրորտային վայրեր դառնան։

Շրջանի ժողովրդատնտեսական պրոբլեմների շարքում առանձնահատուկ

նշանակություն ունի Սևանա լճի դարավոր ջրային պաշարների պահպանումը։ Հայկական ՍՍՀ-ի մյուս ռեգիոնալ պրոբլեմներից սա տարբերվում է նրանով, որ գլխավոր հարցերում անուղղակի կերպով է միայն կապվում տեղի տնտեսության հետ։ Նրա լուծումը ավելի խորն ու անմիջական ազդեցություն է թողնում հարևան շրջանների տնտեսության վրա, որով և նա վերածվում է միջշրջանային պրոբլեմի։

Սևանի պրոբլեմը իր ժամանակին դիտվել է իբրև ինդուստրացման ուղին բռնած Հայկական հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող էլեկտրաէներգետիկական բազայի ստեղծման պրոբլեմ։ Սակայն երկրի տնտեսական իրադրության որակական տեղաշարժերը հանգեցրել են ներկայումս այդ պրոբլեմի լուծման ու նրա հիդրոլոգիական էության փոփոխությանը։

Առանց մանրամասն վերլուծելու Սևանա լճի բնական պայմանները, նշենք միայն, որ երկարամյա ուսումնասիրությունների հետևանքով հաշվվել է նրա հետևյալ ջրային հաշվեկշիռը (մլն. մ³)[1]։

Մուտք		Ելք	
Մակերեսային ներհոսք		Գոլորշիացում	1212
դեպի լիճը.	770	Մակերեսային արտահոսք Հրազդանով.	50
Տեղումներ	552	Ստորերկրյա արտահոսք	60
Ընդամենը	1322	Ընդամենը	1322

Ինչպես տեսնում ենք, լիճ մտնող ջրի ավելի քան 92%-ը գոլորշիանում էր առանց որևէ տեղ օգտագործվելու։

Սևանի պրոբլեմի հիդրոլոգիական էությունը կայանում է նրանում, որ լճի մակարդակը արհեստականորեն իջեցնելու և ջրային հայելու մակերեսը կրճատելու միջոցով պակասեցվի գոլորշիացման քանակը, դրանով իսկ մեծացվի ջրի արտահոսքը Հրազդան գետով և օգտագործվի էլեկտրաէներգիա ստանալու, ինչպես և ոռոգման նպատակների համար։

Ենթադրվում էր այդ խնդիրը իրականացնել երկու էտապով։ Առաջին էտա-

[1] Տե՛ս Материалы по исследованию оз. Севан и его бассейна. Часть VI. Водный баланс оз. Севан. Гидрометеоиздат, 1938.

Սևան–Աղստևի տնտեսական շրջանի տերիտորիայի բաշխումը ըստ վարչական շրջանների, հողահանդակների ու բարձրության գոտիների

Բարձրության գոտիներ մետրերով՝ ծովի մակարդակից հաշված / Վարչական շրջաններ ու հողահանդակներ	500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր		Ընդամենը	
	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Բասարգեչարի շրջան														
Վարելահողեր	—	—	—	—	—	—	16300	78,0	18030	34,0	—	—	34330	30,0
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	247	1,2	—	—	—	—	247	0,2
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	3320	15,9	2726	5,1	—	—	6046	5,3
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	795	3,7	31000	58,3	39300	100,0	71095	63,0
Անտառներ	—	—	—	—	—	—	254	1,2	1440	2,6	—	—	1694	1,5
Ընդամենը	—	—	—	—	—	—	20916	100,0	53196	100,0	39300	100,0	113412	100,0
Իջևանի շրջան														
Վարելահողեր	4020	32,2	2150	14,7	2330	5,9	490	0,9	—	—	—	—	8990	6,6
Բազմամյա տնկարկներ	900	7,2	265	1,8	266	0,7	—	—	—	—	—	—	1431	1,1
Խոտհարքներ	—	—	1160	8,0	1280	3,2	3900	7,6	2000	12,4	465	43,7	8805	6,5
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	7000	56,0	6000	41,5	2709	6,9	17000	33,0	13420	83,3	600	56,3	46729	34,6
Անտառներ	600	4,6	5000	34,0	32904	83,3	30000	58,5	700	4,3	—	—	69204	51,2
Ընդամենը	12520	100,0	14575	100,0	394-9	100,0	51390	100,0	16120	100,0	1065	100,0	135159	100,0
Կամոյի շրջան														
Վարելահողեր	—	—	—	—	—	—	4100	33,0	10170	41,0	—	—	14270	25,8
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	193	1,5	—	—	—	—	193	0,3
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1945	15 5	2880	11,7	1545	8,5	6370	11,5
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	5090	41,0	11480	47,3	16715	91,5	33285	60,0
Անտառներ	—	—	—	—	—	—	1153	9,0	—	—	—	—	1153	2,4
Ընդամենը	—	—	—	—	—	—	12481	100,0	24530	100,0	18360	100,0	55271	100,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Սևանի շրջան														
Վարելահողեր	—	—	—	—	—	—	8000	35,0	4200	20,0	—	—	12200	26,6
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	2	0,0	—	—	—	—	2	0,0
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	391	1,7	3700	17,7	—	—	4091	8,8
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	14360	62,0	13000	62,3	1903	100,0	29263	64,0
Անտառներ	—	—	—	—	—	—	340	1,3	—	—	—	—	340	0,6
Ընդամենը	—	—	—	—	—	—	23093	100,0	20900	100,0	1903	100,0	45896	100,0
Սևան-Աղստևի տնտեսական շրջան														
Վարելահողեր	6720	35,8	5350	19,4	9850	12,3	46990	24,0	57580	23,7	—	—	126490	17,7
Բազմամյա տնկարկներ	1900	1.0	792	2,9	852	1,1	1252	0,6	—	—	—	—	4796	0,7
Խոտհարքներ	—	—	1160	4,2	2580	3,2	18693	9,5	22910	9,4	3490	2,0	48833	6,9
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	9520	51,0	10630	38,6	10724	13,4	69695	35,5	147000	60,5	144706	98,0	392275	55,0
Անտառներ	600	3,2	9600	34,9	55904	70,0	59821	30,4	15228	6,4	50	0,0	141203	19,7
Ընդամենը	18740	100,0	27532	100,0	79910	100,0	196451	100,0	242718	100,0	148246	100,0	713597	100,0

պում, որը տևելու էր 50 տարի, պետք է օգտագործվեին ջրի դարավոր (չվերականգնվող) պաշարները, որի հետևանքով լճի մակարդակը կիջներ 50 մետրով, և այսպես կոչված Մեծ Սևանը ամբողջովին կգամաքեր: Ջրի միջին տարեկան արտահոսքը պետք է կազմեր 1200 մլն. մ³, որը ապահովելու էր Հրազդանի վրա կառուցվելիք կասկադի 8 կայանների աշխատանքը և տարեկան 2,4 մլրդ. կվտ-ժ էլեկտրաէներգիայի արտադրությունը: Հիսուն տարի անց Սևանա լճի մնացորդում, որի մակերեսը պետք է 7 անգամ պակաս լիներ, հաստատվելու էր ջրի ելքի ու մուտքի կայուն հաշվեկշիռ՝ տարեկան 700 մլն. մ³ ազատ արտահոսքով: Վերջին թվի հիման վրա հաստատվել էր Արարատյան դոգավորության 100 հազար հեկտար նոր հողերի ոռոգման նախագիծ: Ենթադրվում էր միաժամանակ, որ Մեծ Սևանի ջրից ազատված հատակում հնարավոր կլինի գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավել շուրջ 118 հազար հեկտար լրացուցիչ հողատարածություններ:

Հարցի տեխնիկական լուծման պարզությունը, տնտեսական բարձր արդյունավետությունը, հանրապետության տնտեսության զարգացման համար ընձեռվող լայն հնարավորությունները՝ նկատի ունենալով էներգետիկական այլ աղբյուրների բացակայությունը տեղում, այս բոլորը բավարար հիմք էին տալիս Սևան-Հրազդան հիդրոէներգետիկական կոմպլեքսը դասելու 30-ական թվականների Սովետական Միության առաջնակարգ ջրատնտեսական կոմպլեքսային միջոցառումների շարքը:

Այլ հանգամանքների թվում կոմպլեքսի տնտեսական արդյունավետությունը ապահովվում էր նաև նրանով, որ էլեկտրակայանների կասկադի կառուցումը նախատեսվում էր ավարտել 13—14 տարվա ընթացքում՝ 1946—1947 թթ.: Հայրենական պատերազմի և այլ պատճառների հետևանքով նրա շինարարությունը ավարտվեց 15—16 տարի ուշացումով: Ձգձգվեց նաև նոր հողերի յուրացումը: Դա հանգեցրեց այն բանին, որ երկար տարիներ հսկայական քանակությամբ ջուր էր բաց թողնվում՝ լիարժեք օգուտ չբերելով հանրապետության ժողովրդական տնտեսությանը: Եթե կասկադի բոլոր կայանները աշխատեցնելու դեպքում մեկ մ³ ջուրը ի վիճակի էր արտադրել 2 կվտ-ժ էլեկտրաէներգիա, ապա մինչև 1953 թ., երբ շահագործման հանձնվեց Գյումուշգես-ը, նա արտադրում էր ընդամենը 0,5 կվտ-ժ:

Սևանա լճի մակարդակի իջեցման հետ մեկտեղ ավելի ու ավելի ակընհայտ էր դառնում լրացուցիչ, նախկինում չնախատեսված միջոցառումների

իրականացման անհրաժեշտությունը։ Հաշվումները ցույց էին տալիս, որ Սևանի օգտագործման առաջին էտապում ծագած լրացուցիչ բացասական երևույթները կանխելու համար կպահանջվի նախագծված ծախսերի քանակը կիսով չափ ավելացնել։

Նկատի ունենալով հանրապետության տնտեսական վիճակի մեջ կատարված տեղաշարժերը (տնտեսական պոտենցիալի ավելացումը, հարևան շրջաններից վառելիքա-էներգետիկական լրացուցիչ ռեսուրսների ստացման հնարավորությունների ի հայտ գալը), տնտեսապես նպատակահարմար համարվեց պահանջվող լրացուցիչ միջոցները օգտագործել ոչ թե հին սխեման իր ավարտին հասցնելու, այլ այն փոխելու, լճի մակարդակն ու ջրային պաշարները պահպանելու համար՝ չհրաժարվելով հին սխեմայով նախատեսված տնտեսական նպատակներից։

Սևանի օգտագործման նոր սխեմայի համաձայն, սկսած 1965 թ. Հրազդանի կասկադի հիդրոէլեկտրակայանները աշխատում են հիմնականում իրիգացիոն գրաֆիկով, որը հնարավորություն է տալիս ջրի տարեկան բացթողումները Սևանից պակասեցնել՝ հասցնելով մինչև 500 մլն. մ³։ Ջրի այդ քանակությամբ արտադրվում է միջին հաշվով 1 մլրդ. կվտ-ժ էլեկտրաէներգիա։ Հաստատված է, որ դա տնտեսապես նպատակահարմար այն նվազագույն սահմանն է, որն ապահովում է կասկադի՝ իբրև էներգասիստեմի կարգավորիչի ֆունկցիաների կատարումը։

Հինգ հարյուր միլիոն խորանարդ մետր արտահոսքի պայմաններում ջրի մակարդակը պահպանելու համար անհրաժեշտ է լճի մեջ ներկայումս լցվող ջրի քանակը ավելացնել առնվազն 300 մլն. մ³-ով։ Դրա իրականացման ուղիներից մեկը հարևան գետային ավազաններից դեպի Սևան ջրատարների կառուցումն է։ Տեխնիկապես այդպիսի հնարավորություն ընձեռում են Գեղարդի, Թարթառի (Ադրբեջանական ՍՍՀ), Որոտանի, Արփայի ավազանները։

Ներկայումս կառուցվող Արփա-Սևան թունելի միջոցով (48,5 կմ) շուրջ 300 մլն. մ³ ջուր շուտ կտրվի դեպի Սևան։ Դրա շնորհիվ ջրի մուտքը կհավասարակշռվի ելքի հետ և, ինչպես ծրագրված է, 1970 թվականից կդադարի լճի մակարդակի իջեցումը։ Լճի բացարձակ բարձրությունը կհավասարվի 1896 մ, նախկին 1916 մ-ի փոխարեն, մակերեսը՝ մոտավորապես 1225 կմ², նախկին 1416 կմ²-ի և ջրի ծավալը՝ 32—33 մլրդ. մ³, նախկին 58,5 մլրդ. մ³-ի փոխարեն։

Սևանա լճի ջրային նոր հաշվեկշիռը կունենա հետևյալ պատկերը (մլն մ³)[1]:

Մուտք		Ելք	
Մակերեսային ներհոսք	737	Գոլորշիացում	966
Տեղումներ	417	Ստորերկրյա արտահոսք	18
Ներհոսք Արփա-Սևան թունելով	300	Մակերեսային արտահոսք Հրազդանով	470
Ընդամենը	1454	Ընդամենը	1454

Սովետական Հայաստանի միակ խոշոր լճի պահպանումը բնականին մոտ վիճակում, հանրապետական մասշտաբի մի շարք հարցեր լուծելուց բացի, որոշակի ազդեցություն է ունենալու շրջապատի տերիտորիայի վրա: Լճի մակարդակի իջեցման և նրա հետ կապված՝ գետերի էրոզիայի բազիսի մեծացման հետևանքով անհամեմատ ինտենսիվ էին դարձել դենուդացիայի ու ջրային էրոզիայի պրոցեսները, որոնք մեծ վնաս էին հասցնում տեղի գյուղատնտեսությանը: Լճի մակարդակի պահպանումով կանխվում է այդ երևույթի հետագա զարգացումը: Կանխվում է նաև ավազանի կլիմայի հետագա չորացումն ու խստացումը, որն անհրաժեշտորեն պետք է հետևեր լճի ցամաքեցմանը: Վերջապես, Սևանի պրոբլեմի նոր լուծումով պահպանվում են լճի ձկնային պաշարները և Սևանի ավազանը շարունակում է մնալ Հանրապետության ձկնային տնտեսության կարևորագույն շրջանը:

Սևան-Ազատևի տնտեսական շրջանի բնական պայմանների ու արտադրողական ուժերի զարգացման հնարավորությունների տերիտորիալ տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այնտեղ որոշակիորեն առանձնանում են երեք ենթաշրջաններ:

1. Հյուսիսային ենթաշրջան (Իջևանի, Շամշադինի վարչական շրջանները և Հանրապետական ենթակայության Դիլիջան քաղաքը): Տնտեսության արտադրական մասնագիտացման իմաստով գործագործության, փայտամշակման արդյունաբերության, ծխախոտագործության ու այգեգործության շրջան է: Բնական պայմանների կոմպլեքսով խիստ կերպով տարբերվում է տնտեսական շրջանի մնացած տերիտորիաներից: Սա տիպիկ անտառային գոտի է, մեղմ ու խոնավ, իսկ ծայր հյուսիս-արևելյան ցածրադիր մասերում՝ չոր մերձարևադարձային կլիմայով: Այդ պատճառով էլ մյուս ենթա-

[1] Տե՛ս Результаты комплексных исследований по Севанской проблеме. Том 1. Метеорология и гидрология. Изд-во АН Армянской ССР, Ереван, 1961.

շրջանների հետ ունեցած մի շարք ընդհանուր գծերից բացի, գյուղատնտեսության որոշ ճյուղերով զգալիորեն տարբերվում է նրանցից։ Առաջին հերթին դա վերաբերում է պողպատագործությանն ու խաղողագործությանը։

Զարգացման հեռանկարները գլխավորապես կապվում են Սևան-Աղստև երկաթուղագծի կառուցման, ընդերքի հարստությունների յուրացման և նրանց շնորհիվ արդյունահանող ու վերամշակող արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման հետ։ Կարևոր նշանակություն է ունենալու կուրորտային հարուստ ռեսուրսների օգտագործումը, ինչպես նաև գյուղատնտեսական հողատարածությունների (հատկապես այգեգործության համար) որոշ ընդարձակումը։

Ամբողջ վերամշակող արդյունաբերությունը ընդամենը 5 կետում է կենտրոնացված, ըստ որում նրանցից երկուսը՝ Դիլիջանն ու Իջևանը արդյունաբերական արտադրանքի ծավալով գրեթե նույն մակարդակի վրա են գտնվում, մոտավորապես երկու անգամ նրանց զիջում է Բերդը։ Մնացած կետերը ավելի թույլ են։ Այս բոլորը արդյունաբերության համեմատաբար ցրված տեղաբաշխման մասին են վկայում։ Պետք է ենթադրել, որ առաջիկայում էլ մեկ տիրապետող կենտրոն ենթաշրջանում չի ստեղծվի, չնայած որ Իջևանը նկատելի կերպով առաջ կանցնի մյուս կենտրոններից։ Իսկ ներկայումս նա հանրապետության փոքր քաղաքների շարքին է դասվում (10 հազար բնակիչ)։ Այնտեղ գործում են հանրապետության խոշորագույն գորգագործական ֆաբրիկան, փայտամշակման կոմբինատը և մի քանի այլ մանր ձեռնարկություններ։ Քաղաքի զարգացման գլխավոր պլանի տեխնիկա-տնտեսական հիմնավորման համաձայն նրա բնակչությունը 1980 թ. հասնելու է շուրջ 25 հազար մարդու։

Դիլիջան քաղաքի (15 հազար մարդ) արդյունաբերական զարգացումը ենթարկվում է նրա՝ իբրև կուրորտային կարևոր կենտրոնի հեռանկարային զարգացման շահերին։ Այնտեղ ստեղծվում են միայն այնպիսի ձեռնարկություններ, որոնք անհրաժեշտ են կուրորտային տնտեսության կազմակերպման համար, ապահովելու են բնակչության զբաղվածությունը և միաժամանակ չեն աղտոտելու քաղաքի օդային ավազանը։

2. Կենտրոնական ենթաշրջանը ընդգրկում է այն տերիտորիան (Հրազդանի, Սևանի, Կրասնոսելսկի վարչական շրջանները և հանրապետական ենթակայության Հրազդան ու Սևան քաղաքները), որն աչքի է ընկնում արդյունաբերության զարգացման նպաստավոր պայմաններով։ Կրասնոսելսկի վարչական շրջանը սույն տնտեսական ենթաշրջանի մեջ մտցնելը հիմնավորվում է նրա ուղղորդիմքային ապառների բազայի վրա լեռնահանքային

խոշոր արդյունաբերության զարգացման, Սևան-Շորժա երկաթուղու կառուցման և կուրորտային տնտեսության զարգացման հեռանկարներով։

Այստեղ է գտնվում տնտեսական շրջանի կազմակերպիչ կորիզը՝ Հրազդան-Սևան արդյունաբերական հանգույցը։ Դա նշանակում է, որ նա մյուս ենթաշրջանների նկատմամբ կենտրոնական դիրք է գրավում ոչ միայն տերիտորիալ, այլև տնտեսական իմաստով։

Սևան-Ազատևի տնտեսական շրջանի և քննարկվող ենթաշրջանի ամենից խոշոր քաղաքային կենտրոնը Հրազդանն է, որի բնակչությունն արդեն շուրջ 20 հազար է։ Ըստ գլխավոր հատակագծի, այդ թիվը հասնելու է 80 հազարի։ Ներկայումս այնտեղ կառուցվում են մի քանի գործարաններից բաղկացած խոշորագույն լեռնա-քիմիական կոմբինատ և հանրապետության ամենահզոր ջերմաէլեկտրակայանը։ Դրանց ավարտումից հետո Հրազդանը դառնալու է Հայկական ՍՍՀ չորրորդ արդյունաբերական կենտրոնը։

Սևան քաղաքը բացառիկ տեղ է գրավում իբրև կարևոր տրանսպորտային հանգույց։ Արագ թափով զարգանում են նրա արդյունաբերական ֆունկցիաները։

Ենթաշրջանի մյուս բնորոշ գիծն այն է, որ նա կա և մնալու է էլեկտրաէներգիայի արտադրության հանրապետական մասշտաբի կենտրոն (Սևանի և Աթարբեկյանի ջրային և Հրազդանի ջերմային էլեկտրակայանները)։

3. Հարավային ենթաշրջանը ընդգրկում է ամենից ավելի գյուղատնտեսական ու բնական պայմաններով միատարր տերիտորիաները՝ Կամոյի, Մարտունու ու Բասարգեչարի վարչական շրջանները։ Այստեղ է գտնվում հանրապետական ենթակայության Կամո քաղաքը։

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտական ճյուղեր են հանդիսանում անասնաբուծությունը, հացահատիկային տնտեսությունն ու ծխախոտագործությունը։

Ամենախոշոր քաղաքային բնակավայրը (18 հազար բնակիչ) և արդյունաբերական կենտրոնը Կամո քաղաքն է։ Չնայած որ նա հանրապետության հնագույն (նախահեղափոխական) քաղաքների թվին է պատկանում, սովետական իշխանության տարիներին խիստ անբարենպաստ տնտեսա-աշխարհագրական դիրքի պատճառով չկարողացավ մյուսների հետ համաքայլ ընթանալ։ Նրա զարգացման մեջ որոշ աշխուժացում նկատվեց վերջին տարիների ընթացքում։ Եթե 1926—1959 թվականներին նրա բնակչության թիվը գործնականում նույնն է մնացել, ապա 1959—1966 թվականների ընթացքում այն ավելի քան կրկնապատկվել է՝ հասնելով շուրջ 18 հա-

զարի (այս աճը մասամբ գյուղական կից բնակավայրերը քաղաքի շրջագծի մեջ մտցնելու արդյունք է)։

Քաղաքի գլխավոր արդյունաբերական ձեռնարկություններն են՝ կաբելի գործարանը, տրիկոտաժի, կարի ու կահույքի ֆաբրիկաները։ Կան նաև ավտովերանորոգման, պանրագործական, հանքային ջրերի լցման և սննդի արդյունաբերության մի քանի այլ ձեռնարկություններ։

Ենթաշրջանի մնացած արդյունաբերությունը ներկայացված է Ջոդի ոսկու հանքերով, Մարտունու պահածոների գործարանով, գյուղական վայրերում տեղադրված մի քանի կաթնա-պանրագործական ձեռնարկություններով ու Բասարգեչարի տորֆի հանքերով։

Ենթաշրջանի ինդուստրիալ զարգացման հեռանկարները կապվում են ընդերքի նոր հարստությունների հայտնագործման և երկաթուղային շինարարության հետ։

Սյունիքի տնտեսական շրջանի մեջ միավորված են Մեղրու, Ղափանի, Կորիսի, Սիսիանի, Ագիզբեկովի, Եղեգնաձորի վարչական շրջանները և Հանրապետական ենթակայության Ղափան ու Ջերմուկ քաղաքները։ Տերիտորիայի մեծությամբ (6,81 հազար կմ²) զիջում է միայն Սևան-Աղստևի շրջանին, իսկ բնակչության թվով (185,4 հազար մարդ) վերջին տեղն է գրավում։

Սյունիքը Հայկական ՍՍՀ ամենից ավելի թույլ յուրացված շրջանն է, որը սակայն բնական հարուստ պոտենցիալ ունի։ Այստեղ է կենտրոնացված հանրապետության գունավոր մետաղների ընդհանուր պաշարների ավելի քան 90%-ը, երկաթաքարի պաշարների շուրջ կեսը, չյուրացված հիդրոէներգառեսուրսների կեսից ավելին, արոտների ու խոտհարքների տարածության, ինչպես և անասունների գլխաքանակի ավելի քան $^1/_5$-ը։ Այս թվերը բնութագրում են շրջանի բնական հնարավորությունները միայն։ Ինչ վերաբերում է բնական պայմանների ու ռեսուրսների արտադրական յուրացման աստիճանին, որը տնտեսական ցուցանիշներով է արտահայտվում, ապա այն շատ ավելի ցածր է։ Օրինակ, տերիտորիայի բնակեցվածության վիճակը՝ բնակչության միջին խտությունը (27 մարդ) շուրջ երեք անգամ ցածր է, քան ընդհանուր առմամբ Հանրապետությունում է։ Արդյունաբերության զարգացման մակարդակով նույնպես նկատելիորեն ետ է մնում մյուս շրջաններից։ Այստեղ բնակչության $^1/_3$-ն է միայն բնակվում քաղաքներում։

Սովետական իշխանության տարիներին Սյունիքում նույնպես խոշոր ծավալի արդյունաբերական շինարարություն է կատարվել։ Բավական է ասել, որ Հանրապետական նշանակության արդյունաբերական ձեռնարկությունների

ավելի քան 90 %-ը, թվով շուրջ 3 տասնյակ, կառուցվել է վերջին 35—40 տարիների ընթացքում։ Այնուամենայնիվ, շրջանի բաժինը Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ չի անցնում 4%-ից։ Շրջանի բնակչության միայն 5,2%-ն է զբաղված արդյունաբերության ոլորտում (Հանրապետության մասշտաբով այդ թիվը կազմում է 8%)։

Սյունիքի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը բնութագրող այս թվերը գաղափար չեն տալիս Հանրապետության ժողովրդատնտեսական կոմպլեքսում նրա գրաված տեղի մասին։ Սյունիքը Հայկական ՍՍՀ ու ամբողջ Անդրկովկասի լեռնահանքային արդյունաբերության կարևորագույն շրջաններից մեկն է։ Նա տալիս է Հանրապետության գունավոր մետալուրգիայի համախառն արտադրանքի կեսից ավելին, պղնձի հանքաքարի հիմնական մասը և Սովետական Միությունում արտադրվող մոլիբդենային կոնցենտրատի զգալի մասը։ Արտադրության այս ճյուղերն էլ հենց բնութագրում են տնտեսական շրջանի արդյունաբերական մասնագիտացումը։

Շրջանային ու հանրապետական նշանակություն ունեն յուղա-պանրագործությունը (Հանրապետության 11%-ը) և պահածոների արտադրությունը (շուրջ 9%-ը)։

Գյուղատնտեսական արտադրության բնագավառում նա հանդես է գալիս իբրև անասնապահական, բոժոժի արտադրության (Հանրապետության արտադրության մոտավորապես կեսը), ծխախոտագործության (Հանրապետության ծխախոտի ցանքատարածությունների շուրջ $^1/_6$-ը), այգեգործության (պտղատու այգիների տարածության 13%-ը) և խաղողագործության (5%) շրջան։ Նրան բաժին է ընկնում Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 10%-ը։

Արտադրության այս ճյուղը աչքի է ընկնում բազմազանությամբ ու տարածական խայտաբղետությամբ։ Նրա տեղաբաշխումը գլխավոր գծերով կրկնում է շրջանի հողակլիմայական պայմանների ուղղաձիգ գոտիները՝ սկսած չոր մերձարևադարձայինից, վերջացրած բարձրալեռնային ալպյանով։ Այդ բանը երևում է նաև № 24 աղյուսակից։

Սյունիքը տերիտորիայի ֆիզիկական հատկանիշների ու ամբողջ բնական կոմպլեքսի բազմազանությամբ ևս չի մնում նույնիսկ Սևան-Ազատևի տնտեսական շրջանից։ Բայց եթե նկատի ունենանք մակերևույթի ավելի խիստ կտրտվածությունը և այն, որ տարբեր բնական պայմաններն այստեղ ավելի փոքր տարածությունների վրա են իրար հաջորդում, ապա Սյունիքը կարելի է կնահատել իբրև մի շրջան, որտեղ խիստ անբարենպաստ են տերիտորիայի

Սյունիքի տնտեսական շրջանի տերիտորիայի բաշխումը ըստ վարչական շրջանների, հողահանդակների ու բարձրության գոտիների

Բարձրության գոտիներ մետրերով՝ ծովի մակարդակից հաշված / Վարչական շրջաններ ու հողահանդակներ	360—600		500—800		800—1000		1000—1500		1500—2000		2000—2500		2500-ից բարձր		Ընդամենը	
	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%	հեկտար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ազիզբեկովի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	1000	9,7	7000	19,8	1570	4,3	—	—	9570	8,2
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	150	1,2	295	0,8	—	—	—	—	445	0,4
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1027	9.9	270	0,8	270	0,7	—	—	1567	1,3
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	8050	78,0	25460	72,0	31200	85,0	34755	100,0	99465	85,0
Անտառներ	—	—	—	—	—	—	150	1,2	2280	6,6	3900	10.0	—	—	6330	5.1
Ընդամենը	—	—	—	—	—	—	10377	100,0	35305	100,0	36940	100,0	34755	100,0	117377	100,0
Գորիսի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	6920	25,6	11080	40,6	500	4,5	—	—	18500	24,8
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	108	6,9	700	2,6	100	0,4	—	—	—	—	908	1,2
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	1291	4,8	600	5,4	—	—	1891	2,6
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	743	50,5	16560	61,0	9640	35,6	8760	79,0	8450	100,0	44153	58,5
Անտառներ	—	—	—	—	620	42,6	2864	10,8	4960	18,6	1300	11,1	—	—	9744	12,9
Ընդամենը	—	—	—	—	1471	100,0	27044	100,0	27071	100,0	11160	100,0	8450	100,0	75196	100,0
Եղեգնաձորի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	120	32,4	4980	18,6	3300	9,6	4020	10,4	280	2,1	12700	11,2
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	60	16,2	1740	6,5	284	0,8	—	—	—	—	2084	1,8
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	267	0,8	1000	2,6	80	0,6	1347	1,0
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	190	51,4	20110	74,9	30000	87,0	31367	82,0	13000	97,3	94667	84,0
Անտառներ	—	—	—	—	—	—	—	—	628	1,8	1980	5,0	—	—	2608	2,0
Ընդամենը	—	—	—	—	370	100,0	26830	100,0	34479	100,0	38367	100,0	13360	100,0	113406	100,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դափանի շրջան																
Վարելահողեր	—	—	1000	35,3	1410	15,5	1500	5,4	950	3,1	2100	6,4	—	—	6960	5,1
Բազմամյա տնկարկներ	—	—	100	3,5	302	3,3	154	0,5	—	—	—	—	—	—	556	0,4
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	261	0,9	890	2,7	—	—	1151	0,8
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	1520	53,5	5319	58,2	7550	27,0	9061	30,0	18550	56,5	32500	98,0	74500	54,5
Անտառներ	—	—	220	7,7	2092	23,0	18880	67,1	20190	66,0	11360	34,4	1200	2,0	53942	39,2
Ընդամենը	—	—	2840	100,0	9123	100,0	28084	100,0	30462	100,0	32900	100,0	33700	100,0	137109	100,0
Մեղրու շրջան																
Վարելահողեր	—	—	150	2,1	100	1 4	440	3,2	750	5,2	680	5,2	—	—	2120	3,2
Բազմամյա տնկարկներ	70	7,5	560	7,6	100	1,4	92	0,6	—	—	—	—	—	—	822	1,2
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	222	1,5	—	—	—	—	222	0,3
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	820	92,5	6690	90,3	6300	89,0	6000	44,5	4360	30,0	6520	48,5	8444	87,5	39134	59,0
Անտառներ	—	—	—	—	600	8,2	7000	51,7	9080	63,3	6200	46,3	1181	12,5	24061	36,3
Ընդամենը	890	100,0	7400	100,0	7100	100,0	13532	100,0	14412	100,0	13400	100,0	9625	100,0	66359	100,0
Սիսիանի շրջան																
Վարելահողեր	—	—	—	—	—	—	700	26,2	22000	59,5	4700	7,6	—	—	27400	15,9
Բազմամյա տնկարկներ	—	—	—	—	—	—	340	12,8	300	0,7	—	—	—	—	640	0,3
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	—	—	1094	4,5	2680	4,3	—	—	4374	2,5
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	—	—	—	—	—	—	1629	61,0	11460	31,0	54220	87,5	70060	100,0	137369	80,0
Անտառներ	—	—	—	—	—	—	—	—	1655	4,3	440	0,6	—	—	2095	1,3
Ընդամենը	—	—	—	—	—	—	2669	100,0	37109	100,0	62040	100,0	70060	100,0	171878	100,0
Սյունիքի տնտեսական շրջան																
Վարելահողեր	—	—	1150	11,2	1630	9,6	15540	14,3	45080	25,2	13570	6,9	280	0,1	77950	11,4
Բազմամյա տնկարկներ	70	7,5	660	6,5	570	3,7	3176	2,9	979	0,5	—	—	—	—	5455	0,8
Խոտհարքներ	—	—	—	—	—	—	1027	0,9	4005	2,2	5440	2,8	80	0,0	10552	1,6
Արոտավայրեր և այլ օգտագործման հողատարածություններ	820	92,5	8210	79,8	12552	69,4	59899	55,2	89981	50,3	150617	77,5	167209	98,5	489288	71,7
Անտառներ	—	—	220	2,5	3312	17,3	28894	26,7	38793	21,8	25180	12,8	2381	1,4	98780	14,5
Ընդամենը	890	100,0	10240	100,0	18064	100,0	108536	100,0	178838	100,0	194807	100,0	169950	100,0	681325	100,0

ու նրա ընդերքի բազմազան հարստությունների յուրացման բնական պայմանները։

Անհրաժեշտ է նաև շրջանի տնտեսա-աշխարհագրական դիրքը։

Բնական ու տնտեսական այսպիսի անբարենպաստ պայմանների զուգորդումը իր որոշակի բացասական ազդեցությունն է թողել շրջանի արտադրողական ուժերի վրա։ Ձարգացել են արդյունաբերության այն ճյուղերը, որոնք կենսական անհրաժեշտություն են ներկայացնում հանրապետության ամբողջ տնտեսական կոմպլեքսի և Միության որոշ արտադրությունների համար։ Մյուս կողմից, անբավարար չափով են հաշվի առնվել իր՝ շրջանի իբրև հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ինքնուրույն օղակի կոմպլեքսային զարգացման շահերը։ Արդյունաբերության մեջ գերակշռել է «ընդլայնական» զարգացման ուղղությունը, քիչ ուշադրություն է դարձվել «ըստ խորության» զարգացմանը։ Այսպիսի միակողմանի մոտեցումը, բնական է, չէր կարող իր նկատելի հետքերը չթողնել շրջանի էկոնոմիկայի վրա։ Դժվար չէ նկատել, որ տուժել է հատկապես վերամշակող արդյունաբերության, նրա «վերին հարկերի» զարգացումը։ Այսօրվա վիճակով շրջանի արդյունաբերության համախառն արտադրանքի և արդյունաբերական-արտադրական անձնակազմի կեսից ավելին բաժին է ընկնում լեռնահանքային արդյունաբերությանը, որի արտադրանքը մոլիբդենի ու պղնձի կոնցենտրատների ձևով ամբողջությամբ արտահանվում է։

Գյուղատնտեսական հումքի վերամշակման կարողությունները նույնպես չեն համապատասխանում շրջանի հնարավորություններին։ Բավական է ասել, որ հազարավոր ցենտներ ծխախոտի արտադրության պայմաններում ամբողջ շրջանում չկա ֆերմենտացիոն և ոչ մի ֆաբրիկա։

Գորիսում և Ղափանում վերջին տարիներս ստեղծված մեքենաշինական ձեռնարկությունները իրենց փոքրության պատճառով ստեղծված վիճակի մեջ լական փոփոխություն մտցնել չեն կարող։

Վերամշակող արդյունաբերության ետ մնալով պետք է բացատրել այն հանգամանքը, որ աշխատունակ բնակչության մի զգալի մասը հեռանում է շրջանից և բնակչության ու հիմնական արտադրողական ուժի՝ աշխատանքային ռեսուրսների գծով շրջանի տեսակարար կշիռը հանրապետությունում վերջին տասնամյակների ընթացքում անընդհատ ընկնում է։ Օրինակ, 1939—1959 թվականների ընթացքում Սյունիքի բնակչության թիվը աճել է ընդամենը 10%-ով, այսինքն՝ մոտավորապես 4 անգամ ավելի դանդաղ, քան միջին հաշվով ամբողջ հանրապետությունում։

Ասվածի հիման վրա հասկանալի է դառնում, թե ինչու Սյունիքը արդյու-

նաբերական հնագույն օջախներ ունենալով հանդերձ, մինչև այսօր էլ մնում է հանրապետության թերձևավորված տնտեսական շրջաններից մեկը և նրա իրրև տնտեսական շրջանի մասին կարելի է խոսել միայն զարգացման օբյեկտիվ հնարավորություններից ու այդ հնարավորությունները նպատակասլաց օգտագործելու անհրաժեշտությունից ելնելով։

Բնական ու տնտեսական անբարենպաստ պայմանները ապագայում ևս իրենց որոշակի արգելակող դերը կպահպանեն, բայց ժամանակակից տեխնիկայի ու հանրապետության արտադրողական ուժերի բուռն վերելքի պայմաններում տնտեսական գործոնները ավելի են մղվում առաջին պլան և Սյունիքի տնտեսական զարգացման տեմպերի ու նրա՝ իրրև տնտեսական շրջանի ձևավորման գործում դառնում վճռական։

Առաջիկայում էլ վճռական նշանակություն է ունենալու այն հանգամանքը, որ թե՛ հանրապետության, թե՛ Սովետական Միության տնտեսությունը անընդհատ ավելացնելու է այնպիսի արտադրատեսակների պահանջը, որոնց թողարկումը ընդլայնելու կամ նոր կազմակերպելու լայն հնարավորություններ կան Սյունիքում։ Խոսքը, առաջին հերթին, բնական հարուստ ու բազմազան ռեսուրսների օգտագործման մասին է։ Օրինակ, միութենական նշանակություն ունեն մոլիբդենի ու պղնձի պաշարները (Քաջարանի, Ագարակի, Ղափանի, Լիճքի, Դաստակերտի հանքավայրերը), անդրկովկասյան նշանակություն՝ երկաթի պաշարները (Սվարանց), հանրապետական նշանակություն՝ հիդրոէներգառեսուրսները և բնական հարստությունների այլ տեսակներ։ Սյունիքի ընդերքը հեռանկարային է համարվում նաև ազնիվ մետաղների, բազմամետաղների և ցրված ու հազվագյուտ տարրերի, ինչպես նաև ալյումինի հումքի ու ոչ-մետաղային հանքատեսակների գծով։ Տնտեսական կարևոր, բայց ըստ արժանվույն չգնահատված նշանակություն ունեն հանքային ջրերը (Ջերմուկի, Տաթևի, Շամբի և այլն), որոնք աչքի են ընկնում ֆիզիկա-քիմիական բարձր հատկանիշներով։

Այս հնարավորությունների օգտագործումը, որն արդեն օրակարգի հարց է դարձել, զգալիորեն ընդլայնելու է շրջանի ներկայիս մասնագիտացման ճյուղերի արտադրանքի ծավալը, ինչպես նաև ստեղծելու է նոր ճյուղեր ու արտադրություններ։

Մյուս կարևորագույն մոմենտն այն է, որ այսօր արդեն տեղի լեռնահանքային արդյունաբերությունը այնպիսի ծավալ է ընդունել, որ օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել ճյուղի «ըստ խորության» զարգացումը՝ պղնձի ու պղնձա-մոլիբդենային հանքաքարի արդյունահանման ու հարստացման առկա բազայի վրա Սյունիքում հանքաքարի ձուլման ու մի շարք քի-

միական նյութերի արտադրության կազմակերպումը։ Սա կարևոր քայլ կլինի շրջանի տնտեսության «խորացման», կոմպլեքսային զարգացման ուղղությամբ։

Տնտեսական շրջանի վերջնական ձևավորման գործում կարևոր դեր է խաղալու Որոտան գետի վրա ստեղծվող հիդրոտեխնիկական կառուցումների կոմպլեքսը։ Նրա միայն էներգետիկական մասը ընդգրկում է երեք հիդրոէլեկտրակայան (Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի)՝ 405 հազ. կվտ նախագծային հզորությամբ ու շուրջ 1,2 մլրդ. կվտ-ժ էլեկտրաէներգիայի արտադրողականությամբ։

Որոտանի կասկադի շինարարության ավարտումը անհամեմատ կուժեղացնի տնտեսական շրջանի էլեկտրաէներգետիկական բազան՝ կատարելով միաժամանակ շրջանաստեղծ կարևոր գործոնի դեր։

Էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր աղբյուրի, շինարարական ու նյութա-տեխնիկական բազայի, մի քանի բանվորական ավանների ստեղծումը, ոռոգելի հողերի զգալի տարածությունների յուրացումը և վերջապես տեղի աշխատանքային ռեսուրսների առկայությունը բարենպաստ պայմաններ են ստեղծում նոր արդյունաբերական ձեռնարկություններ տեղադրելու և հատկապես վերամշակող արդյունաբերությունը զարգացնելու համար։ Այս բոլորը հիմք են տալիս ենթադրելու, որ Որոտանի ավազանի տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերը ոչ այլ ինչ են, եթե ոչ ապագա արդյունաբերական հանգույցի սկզբնավորման որոշակի նշաններ։

Սյունիքի արդյունաբերության տեղաբաշխման պատկերի մեջ էական լրացում կլինի Սվարանցի երկաթի հանքավայրի շահագործումը և նրա բազայի վրա սև մետալուրգիական կոմպլեքսի ստեղծումը[1]։ Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այդ հանքավայրը իր աշխարհագրական դիրքով (Ղափանի ու Գորիսի շրջանների սահմանագլխին) տերիտորիալ տեսակետից իրար է կապում Ղափան-Քաջարան ներկայումս գոյություն ունեցող և Որոտանի ապագա արդյունաբերական հանգույցները։ Բացառված չէ, որ ավելի հեռավոր ապագայում այդ հանգույցները նրա միջոցով միաձուլվելու են մեկ արդյունաբերական հանգույցի կամ արդյունաբերական շրջանի մեջ։ Այսպիսով, Ղափան-Քաջարանի ու Որոտանի արդյունաբերական հանգույցներն են տերիտորիայի այն կազմակերպիչ կորիզը, որը տնտեսական-արտադրական իմաստով մեկ ամբողջության մեջ է միավորելու Սյունիքի շրջանը։

---

[1] Տե՛ս Գ. Ալավերդյան, Սև մետալուրգիայի զարգացման հեռանկարները Հայկական ՍՍՌ-ում, «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1964, № 4։

Սյունիքի տնտեսական շրջանի տերիտորիան տակավին միասնական չէ նաև տրանսպորտային դիրքորոշման առումով։ Միակ երկաթուղին (Երևան-Ջուլֆա-Բաքու) անցնում է շրջանի ծայր հարավային մասով՝ իր տնտեսական անմիջական ոլորտում պահելով համեմատաբար սահմանափակ մի տերիտորիա (Մեղրու վարչական շրջանը), որտեղ բնակվում է տնտեսական շրջանի ամբողջ բնակչության 7%-ը միայն։ Երկաթուղու Մինջևան-Ղափան ճյուղավորությունը ընդամենը 5 կմ է թափանցում տնտեսական շրջանի տերիտորիայի մեջ, բայց սպասարկում է Ղափանի ու Գորիսի վարչական շրջանները։ Սիսիանի, Ազիզբեկովի ու Եղեգնաձորի շրջանները Սիսիան-Սովետաշեն-Արազդայան ավտոխճուղու միջոցով հարում են Արարատյան դաշտով անցնող երկաթուղագծին։

Սյունիքի տնտեսական շրջանի վերջնական ձևավորման ու հետագա զարգացման համար առաջնակարգ նշանակություն կունենա Սևանա լճի ավազան—Ղափան երկաթուղագծի կառուցումը, որը արմատական փոփոխություն կմտցնի ինչպես տնտեսական շրջանի տրանսպորտային դիրքի, այնպես էլ ներքին շրջանների տրանսպորտային ապահովվածության մեջ։ Իր լուծմանն է սպասում նաև ներշրջանային անուղիս ճանապարհների բարելավման, նրանք խճուղային ճանապարհների վիճակին բերելու և դրա շնորհիվ տրանսպորտային հաղորդակցության միասնական ժամանակակից ցանց ստեղծելու հարցը։

Սյունիքի տնտեսական շրջանում ևս ակնառու են արտադրողական ուժերի թե՛ արդի վիճակի և թե՛ զարգացման հեռանկարների այն տերիտորիալ նմանությունները ու տարբերությունները, որոնք հիմք են տալիս տրոհել այն Հարավային, Որոտանի ու Արփայի ենթաշրջանների։

1. Հարավային ենթաշրջանի մեջ մտնում է Բարգուշատի լեռնաշղթայից հարավ ընկած տերիտորիան՝ Ղափանի ու Մեղրու վարչական շրջանները։ Այստեղ է գտնվում Ղափանը՝ Սյունիքի հարավային մասի միակ հանրապետական ենթակայության քաղաքը։

Ենթաշրջանը աչքի է ընկնում ինդուստրիալ զարգացման համեմատաբար բարձր աստիճանով։ Նա տալիս է տնտեսական շրջանի արդյունաբերության համախառն արտադրանքի գերակշիռ մասը, իսկ գունավոր մետալուրգիայի արտադրանքի գծով առաջին տեղն է զբավում նաև հանրապետությունում։ Հայկական ՍՍՀ աշխատանքի հասարակական-տերիտորիալ բաժանման մեջ նա հանդես է գալիս իբրև մոլիբդենային և պղնձային կոնցենտրատների արտադրության խոշորագույն օջախ, անասնապահության, հարավային պտղաբուծության, խաղողագործության ու շերամապահության շրջան։

Ի տարբերություն հանրապետության շատ ենթաշրջանների, այստեղ դիտ-

վում է արդյունաբերական արտադրանքի համեմատաբար մեծ կենտրոնացում: Բացի երկու քաղաքից ու այդքան էլ քաղաքատիպ ավանից, մյուս բնակավայրերում արդյունաբերությունը ամբողջովին բացակայում է: Ամբողջ Հանրապետությունում ենթաշրջանը աչքի է ընկնում գյուղական բնակավայրերի փոքրությամբ: Շատ թե քիչ ընդարձակ տափարակ տարածությունների բացակայությունը ստիպել է նրանց կենտրոնանալ նեղ լեռնային գետահովիտներում և մասամբ միայն ցրվել լեռնալանջերին:

Ենթաշրջանի արդյունաբերական կենտրոնը Ղափանն է՝ բնակչության թվով (ավելի քան 25 հազար) 5-րդ քաղաքը Հանրապետությունում: Իբրև արդյունաբերական կենտրոն հայտնի է պղնձի կոնցենտրատի արտադրությամբ (Հանքեր ու Հարստացուցիչ ֆաբրիկա), մեքենաշինական, պահածոների, կահույքի ոչ մեծ գործարաններով, մսի կոմբինատով: Նրանից ոչ հեռու գտնվում են Ողջիի (Ջրախորի) փոքր հզորության երկու հիդրոէլեկտրակայանները (12,4 հազ. կՎտ):

Քաղաքի արդյունաբերական խոշոր նորակառույցը պղնձաքարի հարստացման նոր ֆաբրիկան է: Նրա և Քաջարանի կոմբինատի արտադրանքի մի մասի բազայի վրա ծրագրվում է Ղափանում ստեղծել Հանրապետության երկրորդ պղնձաքիմիական կոմպլեքսը:

Քաջարանը (ավելի քան 14 հազար բնակիչ) դեռևս միաճյուղ արտադրության լեռնահանքային տիպիկ կենտրոն է (պղնձա-մոլիբդենային կոմբինատ), ինչպիսին և մնալու է մոտ ապագայում (նախատեսվում է կոնցենտրատների արտադրության ծավալի աճ միայն), մի հանգամանք, որ զգալի դժվարություններ է ստեղծում կանացի աշխատուժի օգտագործման համար:

Ենթաշրջանի մնացած երկու արդյունաբերական կենտրոններից մեկը՝ Ագարակը իր ներկա վիճակով ու զարգացման հեռանկարներով Քաջարանի «կրկնօրինակն է»: Ավելի բազմաճյուղ է Մեղրին, որտեղ տիրապետող դիրք ունի բարձր որակի հարավային պտուղների ու խաղողի վերամշակման վրա հիմնվող սննդի արդյունաբերությունը:

2. Որոտանի ենթաշրջանը (համանուն գետի ավազանում) ընդգրկում է Սիսիանի ու Գորիսի վարչական շրջանները: Արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ կենտրոնացված է Գորիսում (տրիկոտաժի, էլեկտրատեխնիկական, սննդի), որն իր զարգացման առանձնահատկություններով որոշ չափով նմանվում է Կամո քաղաքին:

Հանրապետական նշանակություն ունի Դաստակերտը՝ իր պղնձա-մոլիբդենային կոմբինատով:

Կաթնա-պանրագործական ու փայտամշակման ձեռնարկություններ կան

Սիսիան քաղաքում (մոտ 8 հազար բնակիչ) ու մի քանի գյուղական վայրերում։

Չնայած Որոտանի ենթաշրջանի արդյունաբերության արդի ցածր մակարդակին, նա թևակոխել է զարգացման մի փուլ, որը ի վերջո հանգեցնելու է նոր արդյունաբերական հանգույցի՝ Սյունիքի տնտեսական շրջանի երկրորդ շրջանաստեղծ կորիզի ձևավորմանը։ Այստեղ է կենտրոնացած Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի ու նրա հետ կապված հիդրոտեխնիկական մի շարք բարդ կառույցների շինարարությունը։ Այդ առնչությամբ ստեղծվում են մի շարք բանվորական ավաններ, որոնք ապագայում, կասկադի շինարարության ավարտումից հետո, դեպի իրենց են ձգելու նոր արդյունաբերական ձեռնարկություններ, արագացնելով ամբողջ ենթաշրջանի ինդուստրիալ զարգացումը։

Իսկ առայժմ ենթաշրջանի բնութագրում գլխավորը անասնապահությունը, հացահատիկային տնտեսությունն ու ծխախոտագործությունն են։

3. Արփայի ենթաշրջանը տերիտորիալ իմաստով համընկնում է բնապատմական Վայք (Վայոցձոր) շրջանի հետ։ Նրա մեջ միավորված են Եղեգնաձորի ու Ապիպեկովի վարչական շրջանները և Ջերմուկ քաղաքը։

Ինդուստրիալ արդյունաբերության կենտրոններն այստեղ բացակայում են։ Գյուղատնտեսական հումքի վերամշակման մի քանի ձեռնարկություններ (կաթնա-պանրագործական, գինեգործական) կան համանուն շրջանային կենտրոններում և Գետափ գյուղում։

Ենթաշրջանի ամենախոշոր բնակավայրն ու հանրապետական ենթակայության միակ քաղաքը Ջերմուկն է (3400 բնակիչ), որը զարգանում է իբրև միութենական նշանակության կուրորտային կենտրոն։ Այստեղ գործում է հանրապետության հանքային ջրերի ամենախոշոր գործարանը։

Ենթաշրջանի տնտեսությունը ընդհանուր առմամբ մասնագիտանում է անասնապահության (ոչխարաբուծության գերակշռությամբ), պտղաբուծության ու սննդի արդյունաբերության մեջ։

Բնական անբարենպաստ պայմանները դժվարացնում են արտադրողական ուժերի զարգացումը։ Դաշտավարության համար չարիք են մակերևույթի խիստ արտահայտված մասնատվածությունը, մեծ թեքությունները, ինչպես նաև լայնորեն տարածված էրոզիան։ Վարելահարմար ընդարձակ հողատարածությունների բացակայության պատճառով ցանքսերը (հացահատիկ ու կերային կուլտուրաներ) փոքր կոնտուրներով ցրված են ենթաշրջանով մեկ։ Ոռոգման ջրի զգալի մասը ստացվում է Արփա գետից էլեկտրական պոմպակայանների միջոցով։

Գլուխ երրորդ

ՄԻՋՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Տնտեսական կապերը իբրև հասարակական վերարտադրության կատեգորիա ծագել ու զարգանում են աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով ու նրան համապատասխան։

Ինչքան ավելի կուռ ու ավարտուն է որևէ երկրի ժողովրդատնտեսական կոմպլեքսը, ինչքան խորն է աշխատանքի հասարակական բաժանումը այդ կոմպլեքսի ներսում ու բարձր է տարբեր ճյուղերի ու տերիտորիաների արտադրական մասնագիտացման մակարդակը, այնքան ավելի սերտ, բազմապիսի ու բովանդակալից են երկրի ներքին տնտեսական կապերը։

Սրանից բխում է, որ թե՛ արտաքին և թե՛ ներքին տնտեսական կապերը հանդես են գալիս իբրև տարբեր երկրների ու տերիտորիաների տընտեսական զարգացման մակարդակը ուղղակիորեն բնորոշող ցուցանիշ։

Այս դրույթը հաստատելու է գալիս Հայկական ՍՍՀ տնտեսության անընախընթաց վերելքին համապատասխան ու նրան համաքայլ ընթացող ներքին կապերի ըստ ամենայնի ծավալման ու սերտացման անընդհատ պրոցեսը։

Ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ Սովետական Հայաստանի տնտեսական կոմպլեքսի ամբողջությունը իրականացվում է երկու՝ տարբեր բնույթի տնտեսական կապերով։ Դրանցից մեկը, այսպես կոչված խորքային, ուղղաձիգ կապերն են, որոնք հայտնի են նաև ներճյուղային ու միջճյուղային կապեր անունով։ Մյուսը՝ հորիզոնական կամ, այլ կերպ ասած, ներշրջանային ու միջշրջանային տնտեսական կապերն են։

Այս երկուսն էլ, ի վերջո, արտադրողական ուժերի զարգացման կոմպլեքսայնության և նրանց ներսում աշխատանքի հասարակական բաժանման արտահայտություն են։ Դա հավասար չափով վերաբերում է թե՛ ճյուղային և թե՛ տերիտորիալ կոմպլեքսայնությանն ու մասնագիտացմանը, որովհետև նրանք սերտորեն կապված են միմյանց հետ և փոխադարձաբար լրացնում են իրար։ Ավելին, նրանք նույն երևույթի տարբեր դոյավիճակներն են։ Դրան համապատասխան էլ ամեն մի երկրի ներքին ուղղաձիգ ու հորիզոնական կապերը լայն իմաստով տնտեսական կապերի գոյության երկու ձևերն են արտահայտում։

Այս բոլորից հետևում է, որ նրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը առանց մյուսի կլինի թերի ու միակողմանի և լրիվ կերպով չի արտա-

հայտի տնտեսական կոմպլեքսի աշխարհագրական կառուցվածքի առանձնահատկությունները։

Ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի՝ գյուղատնտեսության և արդյունաբերության միջև եղած կապերը ամենից ավելի հին են։ Նրանք հանդես են եկել այդ ճյուղերի հետ միասին, չնայած որ հետագա զարգացման ընթացքում, հատկապես վերջին տասնամյակներին, անճանաչելիորեն վերափոխվել են։ Հարկ է նաև նշել, որ սովետական իշխանության տարիներին հանրապետության տնտեսական զարգացման գլխավոր ուղղությունը՝ սոցիալիստական ինդուստրացումը, բարձր աճի տեմպեր է հաղորդել արդյունաբերության ներքին կապերին, որի հետևանքով նրանք այսօր դարձել են տիրապետող։ Չնայած դրան, գյուղատնտեսության ու արդյունաբերության կապերը չեն կորցրել իրենց նշանակությունը։

Եթե նախասովետական շրջանում գյուղատնտեսության արտադրական կապերը արդյունաբերության հետ սահմանափակվում էին հիմնականում գինեգործության, պահածոների արտադրության ու բամբակաղտիչ գործարանների համար հումքի մատակարարումով, ապա ներկայումս նրանք անհամեմատ ավելի սերտ ու բովանդակալից են։ Բազմապատիկ անգամ ավելացել է հին կապերի կշիռը (բացառությամբ բամբակի)։ Բայց ավելի էականն այն է, որ հանդես են եկել մի շարք նոր կապեր, որոնք արտահայտում են հանրապետության հողագործության ճյուղային կառուցվածքի մեջ կատարված տեղաշարժերը։ Առաջին հերթին դա վերաբերում է տեխնիկական կուլտուրաներին, որոնց ամբողջ արտադրանքը ենթարկվում է արդյունաբերական վերամշակման և որոնց բազայի վրա հանրապետությունում ստեղծվել են արդյունաբերական նոր արտադրություններ։ Արտադրվող մոտավորապես 150 հազար ցենտներ ծխախոտի հումքի զգալի մասը վերամշակվում է հանրապետությունում գործող 5 հատուկ ձեռնարկություններում, որտեղ աշխատում են շուրջ 1200 մարդ և որոնք 1964 թվականին տվել են ավելի քան 35 մլն. ռուբլու արտադրանք։

Ամբողջությամբ գյուղատնտեսություն → արդյունաբերություն կապերի վրա են հիմնվում հանրապետության արդյունաբերության համապատասխան ճյուղերը ներկայացնող միակ ձեռնարկությունները՝ Սպիտակի շաքարի գործարանը և Հոկտեմբերյանի թեթևային յուղերի կոմբինատը, որոնք նույնպես սովետական իշխանության տարիների ծնունդ են։

Մեծ փոփոխություն է տեղի ունեցել խաղողագործությունն ու գինեկոնյակի արդյունաբերությունը իրար միացնող արտադրական կապերի մեջ։ Բավական է ասել, որ նրանց շնորհիվ ներկայումս հանրապետությունում

գործում են 2 տասնյակից ավելի ինքնուրույն արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց համախառն արտադրանքը հասնում է մոտավորապես 100 մլն. ռուբլու։ Այնտեղ զբաղված է շուրջ 2500 մարդ։ Այդ կապերի նշանակությունը մեծ է նաև իր իսկ գյուղատնտեսության համար։ Դրա մասին է վկայում հետևյալ փաստը։ 1965 թվականին հանրապետությունում մթերված 110 հազար տոննա խաղողից 13 հազար տոննան օգտագործվել է բնակչության կողմից թարմ վիճակում, իսկ 97 հազար տոննան, այսինքն՝ ավելի քան 88%-ը, առաքվել է արդյունաբերությանը։ Այս թվերն էլ հենց բնութագրում են այդ ճյուղերի միջև եղած տնտեսական կապերի քանակական կողմը։

Մոտավորապես նույն վիճակը գոյություն ունի նաև պտղա-բանջարաբուծության ու սննդի արդյունաբերության արտադրական կապերի ասպարեզում։ Պտուղների ու բանջարեղենի արդյունաբերական վերամշակումով, ներառյալ պահածոների արտադրությունը, զբաղվում են 4 տասնյակ ինքնուրույն ձեռնարկություններ՝ ավելի քան 3700 աշխատողներով։ Նրանք տարեկան թողարկում են 30 մլն. ռուբլու արտադրանք։ 1965 թվականին պտուղների պետական գնումների (30 հազար տոննա) կեսից ավելին հատկացվել է արդյունաբերությանը՝ վերամշակման համար։ Նույն նպատակի համար է օգտագործվել բանջարեղենի 61%-ը։

Գյուղատնտեսության հետ ունեցած կապերը վճռական դեր են խաղում նաև սննդարդյունաբերության մյուս ճյուղերի (մսի, յուղա-պանրագործական ու կաթի, ալրաղաց և այլն) զարգացման համար, չնայած որ նրանց մի մասի հումքային բազան ետ է մնում բնակչության պահանջի ու արդյունաբերական կարողությունների աճից։ Այդ պատճառով էլ նշված ճյուղերի համար տեղական հումքի մատակարարումը չի սպառում նրանց կապերը։ Վերջիններիս մի մասը ձգվում են հանրապետության սահմաններից դուրս։

Գյուղատնտեսություն ⟶ արդյունաբերություն կապերի ցանցի մեջ իր զգալի մասով ընդգրկված է նաև թեթև արդյունաբերությունը։ Սակայն, եթե սննդի արդյունաբերությունը, գրեթե ամբողջությամբ, կապված է հանրապետության գյուղատնտեսության հետ և այդ կապերի թիվն ու կշիռը հումքային բազայի մակարդակն են անմիջապես արտացոլում, ապա թեթև արդյունաբերության մեջ վիճակն այլ է։ Տեքստիլ արդյունաբերության ու գյուղատնտեսության կապը բամբակի մատակարարման գծով աստիճանաբար վերանում է։ Բուրդը (տարեկան 4 հազար տոննա) ոչ թե անմիջապես առաքվում է հանրապետության տեքստիլ արդյունաբերության ձեռնարկություններին, այլ ուղարկվում է նրա սահմաններից դուրս՝ լվացման համար։ Դրան հակառակ, սերտ կապեր են հաստատված կաշվի հումքի գծով, որը ամբողջու-

Թյամբ վերամշակվում է հանրապետությունում, հասնելով մինչև վերջնական արտադրանքի՝ կոշկեղենի թողարկմանը։

Վերջին տարիներս ավելի արագ թափով զարգանում են հակառակ ուղղության՝ արդյունաբերություն → գյուղատնտեսություն կապերը։ Դա բացատրվում է, մի կողմից, գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումների ծավալի մեծացումով, որը հնարավորություն է տալիս գյուղատնտեսական արտադրության մեջ ավելի մեծ չափով օգտագործել արդյունաբերությունից ստացվող արտադրատեսակները։ Մյուս կողմից, դա պայմանավորվում է հանրապետության արդյունաբերության ճյուղային կառուցվածքում կատարվող տեղաշարժերով, այնպիսի արտադրությունների երևան գալով, որոնց արտադրանքը հիմնականում գյուղատնտեսության կողմից է սպառվում։

Ներկայումս Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը գյուղատնտեսությանն է տալիս ազոտային պարարտանյութեր, պղնձարջասպ, կարբամիդ, գյուղատնտեսական կուլտուրաների ախտ խթանող ու մոլախոտերը ոչնչացնող քիմիական միջոցներ, գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման համար անհրաժեշտ բազմապիսի մեքենաներ ու սարքավորում, գյուղատնտեսական մեքենաների պահեստամասեր, խաղողի այգիների համար հենապյուներ, ջերմոցների ծածկի համար սինթետիկ թաղանթներ և գյուղատնտեսական արտադրության ու շինարարության մեջ օգտագործվող մի շարք այլ գործիքներ ու նյութեր։ Միաժամանակ պետք է նշել, որ հաստատված կապերը, չնայած նրան, որ գնալով ավելի սերտանում ու զարգանում են, դեռևս հեռու են գյուղատնտեսության պահանջները բավարարելուց։ Թույլ են հատկապես այն կապերը, որոնք առնչվում են գյուղատնտեսական մեքենաների առաքման հետ։

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության ու արդյունաբերության մեջ եղած կապերը բազմապիսի են։ Բնորոշ է, որ դրանք ոչ թե պատահական կամ ժամանակավոր, այլ արմատական, հիմնական կապեր են և բխում են այդ ճյուղերի զարգացման էությունից՝ արտացոլելով նրանց մի մասի արտադրական մասնագիտացումը և մյուս մասի հումքային բազան։

Բազմապիսի ու սերտ կապեր են հաստատվել արդյունաբերության ներսում։ Հատկանշական է, որ այստեղ արտադրական կապերը մեծ մասամբ չեն սահմանափակվում երկու ճյուղեր իրար միացնելով։ Սկսվելով մեկ ճյուղից, նրանք հաջորդաբար թափանցում են մի քանի ճյուղերի ու արտադրությունների մեջ, ստեղծելով յուրահատուկ արտադրական «հարկայնություն»։ Այս բանը բնորոշ է հատկապես այն կապերի համար, որոնք սկիզբ են առնում լեռնահանքային արդյունաբերությունից։ Մոլիբդենի ու բազմամետաղների գծով արտադրական կապերը առայժմ հանրապետության էկոնոմիկայի մեջ

չեն խորանում, նրանք միացնելով արտադրական երկու օղակ միայն (հանքաքարի հանույթ ու հարստացում), ընդհատվում են՝ հանրապետության սահմաններից դուրս շարունակվելու համար։

Ամբողջովին այլ է այն կապերի վիճակը, որոնք հաստատվել են պղնձի հանքաքարի օգտագործման շնորհիվ։ Այստեղ ստեղծվել է արտադրական մի ավարտուն հաջորդական շղթա, որն ընդգրկում է հանքաքարի արդյունահանումը, հարստացումը, ձուլումը, էլեկտրական զտումը, վայերբարսային պղնձի ու գլանվածքի ստացումը։ Այնուհետև այս կապը շարունակվում է մեքենաշինության մեջ, որտեղ անմիջապես պղնձից կամ նրա լայն կիրառմամբ արտադրվում են ամենաբազմապիսի կաբելային իրեր, էլեկտրական մեքենաներ, սարքեր և այլն։ Պղնձաձուլության ցիկլը ներկայացնող կապերը սրանով չեն ավարտվում։ Նրանք տալիս են ճյուղավորություններ, որոնք դունավոր մետալուրգիան կապում են քիմիական արդյունաբերության հետ (պղնձի ձուլումից անջատվող ծծմբային գազեր—ծծմբաթթու—պղնձարջասպ)։

Դունավոր մետալուրգիայի մյուս ենթաճյուղի՝ ալյումինի արդյունաբերության արտադրական կապերը, ի տարբերություն պղնձաձուլության կապերի, դեռևս միակողմանի են, շարունակվում են դեպի ալյումինի ձուլմանը հաջորդող արտադրությունները՝ թիթեղի գլանվածքի, փայլաթիթեղի (ֆոլգա), կաբելային իրերի արտադրությունը և, վերջապես, մեքենաշինության մեջ ամենատարբեր ու բազմապիսի կիրառումը։

Արտադրական հաջորդական կապեր են հաստատվել քիմիապես մաքուր կրաքարերի՝ տրավերտինների վերամշակման շնորհիվ ևս։ Նրանք առայժմ երեք ճյուղավորություն ունեն։ Դրանցից գլխավորը կապված է քիմիական արդյունաբերության հետ, որը մինչև վերջերս գրեթե ամբողջությամբ հենվում էր կրաքարի վերամշակման ու նրա ածանցյալ արտադրությունների վրա։ Տրավերտինից ստացվող կալցիումի կարբիդը ելակետ է ծառայում հանրապետության երկու խոշորագույն քիմիական կոմպլեքսի համար։ Դրանցից մեկը ացետիլենի արտադրությունն ու նրա բազայի վրա քլորոպրենային կաուչուկի ու բարձրմոլեկուլյար այլ միացությունների ստացումն է։ Բազմաթիվ հաջորդական արտադրական պրոցեսներ միացնող այս կապերը ընդգրկում են, կալցիումի կարբիդից, ացետիլենից, սինթետիկ կաուչուկից բացի, նաև տարբեր տեսակի լատեքսներ, կաուստիկ սոդա, աղաթթու, քացախաթթու, վինիլացետատ, պոլիմերիզացիոն պլաստիկներ, պոլիվինիլային սպիրտ, էլեկտրամեկուսիչ լաքեր, արհեստական խեժեր, ացետիլցելյուլոզա, ացետատային մետաքս, ավտոդողեր, ռետինա-տեխնիկական իրեր և այլն։

Ացետիլենային կոմպլեքսի ներկայումս ավարտվող վերակառուցումը

լուրջ փոփոխություններ է մտցնում արտադրական կապերի մեջ։ Հիմնական, սրմատական փոփոխությունն այն է, որ ամբողջ կոմպլեքսը կրաքարից ու կալցիումի կարբիդից անցնում է բնական գազի օգտագործմանը։ Դա կոմպլեքսի «վերին հարկերի» միջև հաստատված արտադրական կապերի մեջ որևէ էական լրացում չմտցնելով, վերացնում է այդպիսիք ցիկլի սկզբնական օղակներում։ Լեռնահանքային արդյունաբերության փոխարեն այդ կապերը ներկայումս սկսվում են ացետիլենի ստացումից։

Կալցիումի կարբիդից սկիզբ առնող արտադրական կապերի մյուս շղթայում մենք տեսնում ենք հիմնականում ազոտային խմբի արտադրանքը։

Կրաքարի օգտագործման վրա հիմնվող արտադրական կապերի մյուս ճյուղավորությունները վերաբերում են շինանյութերի արդյունաբերությանը, իսկ նրա միջոցով էլ շինարարական ինդուստրիային։ Մի դեպքում նրանք իրար են միացնում կրաքարի արդյունահանում—ցեմենտի արտադրություն—շիֆերի արտադրություն—երկաթբետոնե կոնստրուկցիաների ու բետոնե իրերի պատրաստման և այլ արտադրական օղակները, մյուս դեպքում կրաքարից շինարարական կիր է արտադրվում։ Կրաքարի արդյունաբերական օգտագործման վրա խարսխված արտադրական կապերի այս երկու ճյուղավորությունները կրկին հանդիպում են շինարարության մեջ։

Արտադրական կապերի շատ բարդ հյուսվածք է ստեղծվել մեքենաշինության ճյուղի շուրջը, ինչպես և նրա ներսում։ Մեքենաշինությունը իր բնույթով լինելով բազմաբովանդակ և թողարկելով մեծաքանակ նոմենկլատուրայի արտադրանք, աչքի է ընկնում միջճյուղային ու ներճյուղային արտադրական կապերի հատկապես մեծ բազմազանությամբ։

Մեքենաշինությունը, որը սև մետաղների հիմնական սպառողն է, սեփական հումքային բազա գեռևս չունի։ Այդ պատճառով էլ նրան սև մետալուրգիայի հետ միացնող կապերը հանրապետությունում բացակայում են։ Այդպիսիք ձգվում են դեպի Սովետական Միության մյուս հանրապետություններն ու տնտեսական շրջանները։ Բայց մեքենաշինությանը հատուկ մնացած բոլոր գլխավոր միջճյուղային արտադրական կապերը, ի տարբերություն առաջինի, զարգացման բարձր մակարդակի են հասել։ Հանրապետության մեքենաշինությունը սերտ կապերի մեջ է գտնվում հատկապես գունավոր մետալուրգիայի ու քիմիական արդյունաբերության հետ, որոնցից նա ստանում է պղնձի ու ալյումինի գլանվածք, ռետինա-տեխնիկական ու պլաստմասսայից պատրաստված իրեր և արտադրանքի այլ տեսակներ։

Շատ ավելի բարդ ու բազմաճյուղ են մեքենաշինության ներճյուղային կապերը, որոնք մեծ մասամբ արտադրական կոոպերացիայի բնույթ ունեն։

Այդ կապերի հանգուցակետում գտնվում են յուրաքանչյուր ենթաճյուղի գլխավոր ձեռնարկությունները, որոնք մասնագիտացել են պատրաստի արտադրանքի թողարկման մեջ: Գործարանների մի խումբ առաջինների նկատմամբ օժանդակ դեր է կատարում՝ մատակարարելով նրանց կոմպլեկտավորման համապատասխան նյութեր, դետալներ, գործիքային սարքավորում և այլն: Երրև գլխավոր ձեռնարկություններ են հանդես գալիս հաստոցաշինական, էլեկտրական մեքենաների (շարժական էլեկտրակայանների, գեներատորների, էլեկտրաշարժիչների, տրանսֆորմատորների), էլեկտրոնային ու այլ սարքերի արտադրության գործարանները: Ներհանրապետական արտադրական լայն կապեր ունի նորաստեղծ ավտոմոբիլային գործարանը:

Արտադրական կապերի իմաստով սրանց ենթակա ձեռնարկություններ են գործիքաշինական, հաստոցային նորմալներ, կիսահաղորդիչներ, մետաղային գլանվածք, կռանվածքներ ու դրոշմոցներ, պլաստմասսայե դետալներ, էլետրա- ու ջերմամեկուսիչ նյութեր, կաբելային իրեր, ավտոլամպեր, ավտոդողեր, ռետինա-տեխնիկական իրեր և արտադրանքի ուրիշ տեսակներ թողարկող գործարաններն ու արտադրամասերը:

Հայկական ՍՍՀ արդյունաբերության մնացած ճյուղերի համար ևս բնորոշ է արտադրական կապերի անընդհատ սերտացումն ու կատարելագործումը, թեև, իհարկե, նրանք ավելի թույլ են ու պակաս բազմազան:

Սովետական Հայաստանի արտադրական կապերի առանց այն էլ բավականին խիտ ցանցի լուրջ լրացում ու կատարելագործում է սպասվում առաջիկա հնգամյակում: Նպատակ չդնելով քննարկել բոլոր փոփոխությունները, հիշատակենք միայն ամենից ավելի կարևոր կապերի 3 նոր բազմաճյուղ հանգույցների ստեղծման մասին: Ամենահզորը վերջիններիս շարքում այն հանգույցն է, որն արդեն ձևավորվում է Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատի շուրջը: Հրազդանի արդյունաբերական կոմպլեքսի շնորհիվ իրար հետ սերտորեն կապվելու են այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են լեռնահանքային, շինանյութերի, քիմիական, ապակու արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան: Այդ միջճյուղային կապերի հետ միահյուսվելու է ներճյուղային կապերի բարդ ցանցը:

Արտադրական կապերի ինքնուրույն հանգույց է ձևավորվելու սև մետալուրգիա ստեղծելու շնորհիվ: Նա նույնպես օրգանապես կապվելու է հանրապետության բազմաճյուղ արդյունաբերության հետ, լրացնելով մեքենաշինության կապերի այն էական պակասը, որի մասին խոսվեց վերևում:

Արտադրական կապերի երրորդ հանգույցը երևան կգա մոլիբդենի կոնցենտրատները տեղում վերամշակելու և մետաղային մոլիբդենի արտադրու-

թյուն կազմակերպելու հետևանքով: Դա ոչ միայն ավելի ամբողջական կդարձնի հանրապետության գունավոր մետալուրգիայի ճյուղը, այլև նոր էական կապ կհաստատի վերջինիս ու քիմիական արդյունաբերության միջև:

Համատոտակի սրանք են Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի ուղղաձիգ, խորքային կապերը, որոնք ընդգծում են այդ կոմպլեքսի մեկ տնտեսական ամբողջություն լինելը:

Հորիզոնական տնտեսական կապերը, որոնք նյութական արտադրության ճյուղային կառուցվածքի բարդությունից բացի, նաև նույն այդ արտադրության բնական հիմքի՝ բնական պայմանների ու ռեսուրսների բազմազանության ու տերիտորիալ տարբերությունների արտահայտությունն են, նույնպես զարգացման բարձր մակարդակի են հասել:

Եթե Հայկական ՍՍՀ քարտեզի վրա մտովին տեղադրենք այդ բոլոր կապերը, ապա ամբողջ հանրապետությունը կծածկվի մի բարդ հյուսվածքով, որի ամենախիտ հատվածները կհամընկնեն արտադրության ամենամեծ կենտրոնացում ունեցող տերիտորիաների հետ: Հյուսվածքի ընդհանուր ֆոնի վրա կառանձնանան բազմաթիվ մանր ու խոշոր հանգույցներ, որոնք հիմնական գծերով կկրկնեն արդյունաբերության տեղաբաշխման պատկերը:

Ինչպես միջճյուղային, այնպես էլ միջշրջանային տնտեսական կապերի մեջ առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում այնպիսիները, որոնք չեն սահմանափակվում երկու կից օղակները իրար միացնելով, այլ թափանցելով նրանց միջով, մեկ ամբողջության մեջ են միացնում մի քանի օղակներ:

Հանրապետության տերիտորիան տնտեսական մեկ ամբողջության մեջ են միացնում այն կապերը, որոնք հաստատվել են էլեկտրաէներգիայի մատակարարման գծով: Ըստ որում, սա արտադրական կապերի միակ խումբն է, որն ընդգրկում է հանրապետության բոլոր տնտեսական շրջանները, ավելին՝ բոլոր քաղաքային ու գյուղական բնակավայրերը:

Հայկական ՍՍՀ ամբողջ տերիտորիային, որը ծածկված է բարձր լարվածության ու բաշխիչ գծերի միասնական ցանցով, էլեկտրաէներգիա են մատակարարում Արարատյան ու Սևան-Ազատևի տնտեսական շրջանները, որտեղ կենտրոնացված են հանրապետության էներգետիկական կարողությունների ավելի քան 99%-ը: Էլեկտրաէներգիայի ամենահզոր հոսանքը ուղղված է Մերձդեբեդյան շրջանը, երկրորդ տեղը գրավում է Շիրակը՝ նախորդին զիջելով մի քանի անգամ: Ավելի պակաս է Զանգեզուր հաղորդվող էլեկտրաէներգիայի քանակը, որը բացարձակ թվերով կազմում է մի քանի տասնյակ միլիոն կվտ-ժամ:

Չնայած այն հանգամանքին, որ էլեկտրաէներգիայի գծով հաստատված

միջշրջանային կապերը ամենից տարածվածն են, նրանք, այնուամենայնիվ, հանրապետության պահանջները լրիվ չափով չեն բավարարում: Պակասը լրացվում է արտաքին՝ միջհանրապետական կապերի միջոցով:

Հանրապետության տնտեսական շրջանների մեծ մասն ընդգրկող կապեր գոյություն ունեն գունավոր մետալուրգիայի գծով: Սյունիքի տնտեսական շրջանի ու տեղական հանքանյութի բազայի վրա Մերձդեբեդյան շրջանում ձուլվող պղինձը առաքվում է հանրապետության մյուս տնտեսական շրջաններին, առաջին հերթին Արարատյանի, մեքենաշինական գործարաններին:

Վերջին տարիներս նման բնույթի կապեր ստեղծվեցին նաև քիմիական արդյունաբերության մեջ: Խոսքը, մասնավորապես, Արարատյան տնտեսական շրջանում արտադրվող ացետիլցելյուլոզայի մասին է, որը առաքվելով Մերձդեբեդյան շրջան՝ Կիրովականում արհեստական մանվածքի է վերածվում և ապա ուղարկվում Շիրակի, Սևան-Ազատևի, Սյունիքի ու նույն Արարատյան շրջանները՝ գործվածքներ ու տրիկոտաժեղեն թողարկելու համար:

Հայկական ՍՍՀ մնացած բոլոր ներքին տերիտորիալ կապերի համար բնորոշն այն է, որ նրանք, իբրև կանոն, ոչ թե մի քանի շրջաններից բաղկացած հաջորդական շղթա են ստեղծում, այլ կապակցում են միայն երկու տնտեսական շրջան:

Որոշակի օրինաչափություն է նկատվում յուրաքանչյուր շրջանից արտահանվող ու այնտեղ ներմուծվող ապրանքների որակական կազմի մեջ: Օրինակ, Արարատյան շրջանի համար բնորոշ է պատրաստի արդյունաբերական արտադրանքի արտահանումը և գյուղատնտեսական հումքի ու արդյունաբերական կիսաֆաբրիկատների ներմուծումը: Նա բացառապես բոլոր շրջաններին առաքում է մետաղահատ հաստոցներ, էլեկտրատեխնիկական արտադրանք, տարբեր տեսակի սպասք, ալյումինի գլանվածք, գործիքային սարքավորում, ավտոպահեստամասեր, ավտոդողեր, ռետինա-տեխնիկական իրեր, ցեմենտ, շիֆեր, մարմար, պատրաստի երկաթբետոնե կոնստրուկցիաներ ու բազմապիսի այլ ապրանքներ, որոնք նյութական արտադրության մեջ անմիջական կիրառություն են գտնում: Ըստ որում, նրանց մի զգալի մասը թողարկվում է միայն Արարատյան շրջանում:

Արտադրական կապերից բացի, նա այլ բնույթի տնտեսական կապերի զարգացած ցանց ևս ունի: Հանրապետության ամենահեռավոր անկյուններն են հասնում այստեղ արտադրված ժողովրդական սպառման առարկաները՝ տեքստիլ գործվածքները, տրիկոտաժեղենը, պատրաստի հագուստեղենը, կոշկեղենը, կահույքը, կուլտուր-կենցաղային բազմապիսի իրերը, պահածոները, գինեգործական արտադրանքը, հրուշակեղենը, ծխախոտը:

Արարատյան շրջան ներմուծվում են պղինձ, հանքային պարարտանյութեր ու այլ քիմիկատներ, որմնաքար (տուֆ), որոշ լցանյութեր, ծխախոտի հումք, գինենյութեր, բնական մետաքսաթելի հումք (բոժոժ) և այլն։

Արդյունաբերական պատրաստի արտադրանքի ու հումքի ներմուծման ու արտահանման հարաբերակցության չափանիշով Արարատյան շրջանին ավելի մոտ վիճակում են գտնվում Մերձդեբեդյան ու Շիրակի տնտեսական շրջանները։

Մերձդեբեդյան շրջանը մեծ քանակությամբ ստանում է էլեկտրաէներգիա, պղնձի կոնցենտրատ, կրաքար՝ կալցիումի կարբիդի արտադրության համար, գունավոր մետաղների գլանվածք, ացետիլցելյուլոզա, որմնաքար, ցեմենտ ու այլ շինանյութեր, մանվածքի տարբեր տեսակներ, պատրաստի հագուստեղեն, ինչպես նաև մեքենաշինության ամենալայն նոմենկլատուրայի արտադրանք։ Նա հանրապետության մյուս շրջաններն է ուղարկում պղինձ, հրակայուն աղյուս, ազոտային ու ֆոսֆորային պարարտանյութեր, ծծմբաթթու, պղնձարջասպ ու այլ քիմիկատներ, կալցիումի կարբիդ, ճշգրիտ հաստոցներ, սարքեր ու ավտոմատացման միջոցներ, արհեստական կորունդ, շաքարավազ, լիմոնաթթու, ինչպես նաև ացետատային մետաքսաթել, գինենյութեր, պահածոներ, յուղա-պանրագործական արտադրանք։

Շիրակի արտահանման կառուցվածքում կարևորագույն տեղ են գրավում բամբակե գործվածքները, մանվածքը, պատրաստի տրիկոտաժեղենն ու գուլպեղենը։ Զգալի տեսակարար կշիռ ունեն տուֆաքարն ու շինարարական լցանյութերը, ինչպես նաև հաստոցները, էլեկտրատեխնիկական ու սարքաշինական և սննդի արդյունաբերության արտադրանքը։ Գյուղատնտեսության մասնագիտացումն ընդգծող արտադրական կապ Մերձդեբեդյան շրջանի հետ հաստատվել է Սպիտակի շաքարի գործարանին շաքարի ճակնդեղ մատակարարելու գծով։

Ներմուծվող ապրանքներից, որոնք արտադրական բնույթի տնտեսական կապեր են առաջացնում, հարկ է նշել մետաղային գլանվածքը, կռանվածքներն ու դրոշմոցները, գործիքային սարքավորումը, տարբեր մեքենաների կոմպլեկտավորման մասերը, հաստոցներն ու այլ արդյունաբերական սարքավորում, ցեմենտը, հանքային պարարտանյութերն ու այլ քիմիկատներ, արհեստական մետաքսաթելը, պատրաստի կաշին։

Սևան-Ազատ շրջանի տնտեսական կապերը դեռևս թույլ են զարգացած, որը համապատասխանում է նրա արտադրական կոմպլեքսի համեմատաբար պարզունակ վիճակին։ Արտահանման գծով այդ կապերը ներկայացված են էլեկտրաէներգիայով, մեքենաշինական որոշ արտադրանքով (նուրբ կաբելա-

յին իրեր, գործադիր սարքեր), ապակե թելերով ու գործվածքներով, շինարարական ու կահույքագործական փայտյա մասերով, ծխախոտի հումքով, գինենյութերով: Մոտ տարիներս այդ կապերի մեջ տեղի կունենան որակական ու քանակական էական փոփոխություններ: Հանրապետության մյուս տնտեսական շրջանները կառաքվեն արտադրանքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ոսկու հանքաքարը (Զոդից), հրակայուն նյութերը (Շորժայից), երկաթի հանքաքարը, կավահողը, բարձրորակ ապակու հումքը (Երևանից), կալցիումի ու նատրիումի մետասիլիկատը (Հրազդանից), բենտոնիտային կավերի վերամշակման արդյունք հանդիսացող նյութերը (Իջևանի շրջանից), նուրբ մեքենաշինության արտադրանքը (Դիլիջանից):

Սևան-Աղստև շրջանն են ներմուծվում շինանյութեր, տարբեր տեսակի մեքենաներ ու սարքավորում, մետաղային գլանվածք ու մեքենաշինության որոշ պատրաստի մասեր, հանքային պարարտանյութեր, տրիկոտաժի թել և այլն: Ապագայում ձևավորվող այս բնույթի կապերից ուշադրության արժանի է նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման համար պահանջվող մեծ քանակության կրաքարերի ներմուծումը:

Դժվար չէ կռահել, որ ներկայումս գոյություն ունեցող կապերի ամրապնդման ու ընդլայնման և նորերի հաստատման հետևանքով Սևան-Աղստև տնտեսական շրջանը ամենամոտ ապագայում՝ ընթացիկ հնգամյակի վերջին արդեն կդասվի Հայկական ՍՍՀ բարդ ու զարգացած արտադրական կապեր ունեցող շրջանների շարքը: Հանդես կգա եզակի բնույթի մի կապ ևս, որով շրջանը յուրահատուկ տեղ կգրավի ամբողջ հանրապետությունում: Նա Արփա գետ-Սևանա լիճ թունելի միջոցով մեկ միասնական ջրատնտեսական սիստեմի մեջ կշաղկապի նաև Սյունիքի ու Արարատյան տնտեսական շրջանները:

Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանների մեջ արտադրական կապերի զարգացման ամենացածր մակարդակով աչքի է ընկնում Սյունիքի շրջանը: Այս վիճակը ուղղակի արտահայտությունն է այն բանի, որ արդյունաբերությունը, որը սովորաբար հանդեցնում է բազմաստիճան ու բազմապիսի կապերի հաստատմանը, այստեղ ունի խիստ արտահայտված միակողմանի բնույթ: Նրա տիրապետող ճյուղի՝ լեռնահանքային արդյունաբերության տեխնոլոգիան իր էությամբ ավելի միասնական է: Նա տրոհված է շատ սահմանափակ թվով արտադրական պրոցեսների և պահանջ չի զգում այլ ճյուղերի հետ կոոպերացիայի մեջ մտնելու: Տնտեսական շրջանի՝ լեռնահանքային արդյունաբերության գծով հաստատված հիմնական ու գրեթե միակ կապն այն է, որ ամբողջ պղնձի կոնցենտրատը առաքվում է Մերձդեբեդյան տնտեսական շրջան: Արտահանումը ներկայացնող մնացած բոլոր կապերը անհամեմատ

ավելի թույլ են, չնայած որ շրջանի բնութագրում զգալի դեր են խաղում։ Դա վերաբերում է հիմնականում գյուղատնտեսությանն ու նրա վրա հիմնվող սննդի արդյունաբերությանը, իսկ ավելի կոնկրետ՝ ծխախոտի հումքին, բուժծխին, գինենյութերին։

Շրջանի ներմուծումը բնութագրող տնտեսական կապերը իրենց ծավալով ղիջում են արտահանման կապերին, բայց ավելի բազմազան են։ Ներմուծման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիան, շինարարական նյութերը (որմնաքար, ցեմենտ, երկաթբետոնե կոնստրուկցիաներ), հանքային պարարտանյութերն ու գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ այլ քիմիկատները։ Վերջին տարիներս շրջանում հիմնադրված վերամշակող արդյունաբերության համար ներմուծվում են սարքավորում, կաբելային իրեր, մետաղ, մեքենաշինական կոմպլեկտավորման մասեր, տրիկոտաժային մանվածք և այլն։

Սյունիքի տնտեսական շրջանի թե՛ ներքին և թե՛ արտաքին կապերի հետագա զարգացումը կապված է հանրապետությունում մոլիբդենի կոնցենտրատի ապագա վերամշակման և շրջանի սահմաններում պղնձաձուլական կոմպլեքսի ստեղծման հեռանկարների հետ։ Վերամշակող, մասնավորապես մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության համար բնորոշ արտադրական էական կապերի հաստատումը համեմատաբար հեռավոր ապագայի գործ է։

Ասվածից պարզորոշ կերպով հետևում է, որ Հայկական ՍՍՀ տնտեսական շրջաններն իրենց արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակով էականորեն տարբերվում են իրարից։ Այս փաստը ևս, իր հերթին, վկայում է արտադրողական ուժերի տեղաբաշխման մեջ գոյություն ունեցող անհամաչափության և հանրապետության շրջանների տնտեսական զարգացման մակարդակների անհավասարության մասին։ Դրանց հետագա նվազեցմանը և տնտեսական կապերի ռացիոնալացմանը ուղղված միջոցառումները կամրապնդեն հանրապետության տերիտորիալ-արտադրական կոմպլեքսը ու կբարելավեն արտադրության տերիտորիալ կազմակերպման վիճակը՝ այն-տեղից բխող տնտեսական բնույթի բոլոր դրական հետևանքներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Լ. Հ. Վալեսյան) 3

Մաս առաջին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլուխ առաջին. Աշխարհագրական միջավայրի բնութագիրը և բնական ռեսուրսների տնտեսական գնահատականը (Ս. Մ. Դուլյան, Լ. Հ. Վալեսյան) 7
Գլուխ երկրորդ. Տնտեսության զարգացման ու տեղաբաշխման պատմա-աշխարհագրական մի քանի հարցեր (Լ. Հ. Վալեսյան) 30
Գլուխ երրորդ. Բնակչությունը և նրա տեղաբաշխման բնորոշ գծերը (Ս. Մ. Դուլյան) . 39
Գլուխ չորրորդ. Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի հիմնական գծերը: Նրա տեղը Սովետական Միության աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման սիստեմում (Լ. Հ. Վալեսյան) 67

Մաս երկրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ առաջին. Արդյունաբերության տնտեսա-աշխարհագրական առանձնահատկությունները (Լ. Հ. Վալեսյան) 86

Գլուխ երկրորդ. Գյուղատնտեսությունը (Ս. Մ. Դուլյան) 113
Գլուխ երրորդ. Տրանսպորտը (Ս. Մ. Դուլյան) 138

Մաս երրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ

Գլուխ առաջին. Տնտեսական շրջանացումը իբրև տնտեսության տերիտորիալ կառուցվածքի ուսումնասիրման ու կատարելագործման մեթոդ: Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացման սկզբունքները (Լ. Հ. Վալեսյան) 147
Գլուխ երկրորդ. Տնտեսական շրջանների համառոտ բնութագիրը (Լ. Հ. Վալեսյան) . . 166
Գլուխ երրորդ. Միջշրջանային տնտեսական կապերը (Լ. Հ. Վալեսյան) 216

Դուլյան Սուրեն Մկրտչի
Վալեսյան Լեմվել Հակոբի

Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրության ակնարկ

Պատասխանատու խմբագիր՝ Ս. Ա. Միքայելյան
Հրատ. խմբագիր՝ Ռ. Գ. Գրիգորյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Կազմը նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունու
Տեխ. խմբագիր՝ Օճ. Ս. Փանիկյան
Վերատ. սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

Հանձնված է արտադրության 4/IV—1967 թ.։
Ստորագրված է տպագրության 27/X—1967 թ.։
Թուղթ՝ տպագրական № 2, 70×90 1/16, հրատ. 14,5 մամ.+4 ներդիր, տպ. 14,5 մամ.=16,96 պայմ. մամ.։
ՎՖ 07593 *Պատվեր 551* *Տիրաժ 4000*
Գինը՝ 97 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

ԳԻՆԸ 97 ԿՈՊ.

15956